ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՀԱՂԹԱԿԱՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԵՐ

ԿԱՏԱՐՈՂ՝ Ղազարյան Գրիշա Գրիգորի

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ Ռազմագիտության ուսուցիչ

ՂԵԿԱՎԱՐ՝ Սարգսյան Անդրանիկ

Վանաձոր 2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….. . 3

Գլուխ 1 Հայկական բանակը հին դարերում……6

Գլուխ 2 Հայկական բանակը միջին դարերում……...…12

Եզրակացություններ……..……20

Օգտագործված գրականության ցանկ……....21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց 5-հազարամյա պատմության մեջ պահպանվել են բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են, որ մեր նախնիները այլևայլ հավատամքների և փառաբանումների հետ միասին ունեցել են նաև զենքի պաշտամունք և մեծագույն հարգանք հայ զինվորականի հանդեպ: Հայ ժողովուրդը գիտակցել է՝ միայն զենքի և արհեստավարժ զինվորի օգնությամբ է հնարավոր իրականացնել օջախի, ժողովրդի և հայրենիքի պաշտպանությունը:

Հայոց պատմությունը վկայում է, որ այնքան ժամանակ, քանի դեռ մեր նախնիներն ապավինել են զենքի ուժին ու Ռազմի Աստծուն, պատմությունը բարյացակամ է եղել մեր հանդեպ, իսկ երբ ինքնահանգստացել ու հեռացել ենք զենքից, հատուցել ենք՝ կորցնելով մեր պատմական հայրենիքի տարածքների մեծ մասը:

Հայ ժովորդի կազմավորման համար մեծ նշանակություն ունեցավ Հայկի և Բելի ճակատամարտը Հայկի եւ Բելի ճակատամարտն ունի մեծ նախապատմություն, ու դրա արմատներն Աստվածաշնչում են։ Ըստ Սուրբ գրքի՝ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերին Նոյ նահապետի որդիներ Սեմի, Քամի եւ Հաբեթի ժառանգները Միջագետքում ձեռնամուխ են լինում Բաբելոնի աշտարակի կառուցմանը, եւ այդ «հանդուգն» շինարարների մեջ լինում է նաեւ Հայկը։ Նա Հաբեթի թոռան թոռն էր, Թորգոմի որդին, Թորգոմա տան գահակալը։ Թորգոմա տունը, այլ խոսքով՝ թագավորությունը, հենց Հայաստանն էր, եւ պատահական չէ, որ հայոց երկիրը հին սկզբնաղբյուրներում հաճախ հենց այդպես էլ կոչվել է՝ Թորգոմա տուն, հայերը՝ թորգոմյաններ։ Պատմականորեն այդ երկիրը Արարատի թագավորությունն էր, հայերի հայրենիքը։

Միջագետքի բռնակալը Բելն էր (Աստվածաշնչում՝ Նեբրովթ), Տիտանների ցեղից (այստեղից էլ՝ Տիտանյան Բել անունը)։ Նա Նոյ նահապետի որդի Քամի ժառանգներից էր։

Վերադառնալով նախնյաց երկիր՝ Հայկը նախ բնակություն է հաստատում Վանա լճից հարավ ընկած մի դաշտավայրում, ապա այդ ամբողջ տարածքը ժառանգություն թողնում իր թոռանը՝ Արամանյակի որդի Կադմոսին, ինքն իր գերդաստանի մյուս

անդամների հետ (այդ ժամանակ նա արդեն ուներ չորս որդի, վեց դուստր եւ շատ թոռներ) բնակություն հաստատում հյուսիս-արեւմուտք ընկած մի դաշտավայրում՝ տալով նրան Հարք անունը։ Հարք, այսինքն՝ հայրեր։ Նկատի է ունեցել այն, որ այդտեղ ապրելիս են եղել Թորգոմա տան կամ արքայատոհմի հայրերը։

Հարքում Հայկը մի մեծ բնակավայր է հիմնում եւ իր անունով կոչում Հայկաշեն։ Հայոց ազգային պատմության մեջ այն հայտնի է նաեւ Հայկաբերդ, Աստվածաշեն անուններով, գտնվել է Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Հայոց ձոր գավառում։ Ավերակներն այսօր էլ նշմարելի են։

Ստորև մանրամասն կանդրադառնանք այս և ժողովրդի համար համար նշանակալի ճակատամարտերին։

ԳԼՈՒԽ 1 ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՃՌՈՐՈՇ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԵՐԸ

1.1. ՀԱՅՈՑ ՁՈՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Հայ ժողովուրդն իր դասականացված պատմությունը սկսում է Հայոց Ձորի ճակատամարտում Բաբելոնի տիրակալ Տիտանյան Բելի զորքերի դեմ Հայկ Նահապետի տարած Հայթանակով: Այն մեզ հայտնի է պատմահայր Մովսես Խորենացու «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» «Հայկ և Բել» վիպասքից, որն այսօր էլ հայ ժողովրդի ինքնաճանաչման կարևոր խթաններից է: 2008 թվականի օոգոստոսի 11-ին հայ ժողովուրդը տոնեց այս հաղթական ճակատամարտի 4500-ամյակը: Այս պատկառելի տարեդարձը առիթ է վերաիմաստավորելու Հայոց Պատմության բազմաթիվ հարցեր, այդ թվում Հայոց Հաղթանակները:

Հայոց ձորի ճակատամարտը հայոց պատմության թերևս ամենակարևոր դրվագն է: Այս ճակատամարտում տապալվեց Տիտանյան Բելը, և Հայկ Աղեղնավորը փաստեց հայի հարատևելու իրավունքը: Բացի այդ, Հայոց ձորի ճակատամարտը համաշխարհային ռազմարվեստի պատմության մեջ հանդիպակաց մարտի առաջին նկարագրված օրինակն է: Այս ճակատամարտի մասին մեզ տեղեկացնում է պատմահայր Մովսես Խորենացին: Ցավոք, Հայկի և Բելի պատումի մասին աղավաղված տվյալներ են հասել:

Մեզ հասած Խորենացու ամենահին մատյանը վերագրվում է IX դարին, պատմահոր մահից կես հազարամյակ անց է արտագրվել: Եվ ո՞վ գիտի, թե քանի անգամ է այն խմբագրվել հայ կղերականների կողմից: Այն կղերականների, որոնք նախ թունավորելով սպանեցին պատմահայր Խորենացուն, ապա պղծեցին նրա շիրիմը՝ ոսկորները հանելով գերեզմանից և լցնելով Ողջի գետը… Բայց նախ՝ Բաբելոնյան աշտարակաշինության մասին: Ավանդույթի համաձայն՝ Բաբելոնի տիրակալը՝ Տիտանյան Բելը, իր մոտ է հրավիրում բոլոր ազգերի առաջնորդներին: Երբ հավաքվում են բոլորը, Բելը նրանց կարգադրում է բարձր աշտարակ սարքել: Բոլորը ենթարկվում են Բելին, բացի արի Հայկից, որ թողնում է Բաբելոնն ու իր զավակների հետ վերադառնում հայոց երկիր:

Սակայն, համաձայն ավանդապատումի, աստված, տեսնելով կառուցվող աշտարակը, խառնում է մարդկանց լեզուները, որպեսզի նրանք չհասկանան միմյանց, և աշտարակաշինությունը դադարում է: Բաբելոնյան աշտարակաշինության մասին բիբլիական ավանդապատումը փոքրիկ լրացումներով մեզ է ավանդել Մովսես Խորենացին[1]:

Սակայն այստեղ, այնուամենայնիվ, ինչ-որ բան այն չէ: Եթե Բելը Բաբելոն է հրավիրել աշխարհի ազգերի առաջնորդներին, ուրեմն արդեն լեզուները բաժանված էին: Չէ՞ որ ազգերը միմյանցից հենց լեզվով են տարբերվում: Ի՞նչ է ցանկացել մեզ հաղորդել քերթողահայրը: Գուցե խոսքը աստվածների՞ գոտեմարտի մասին է: Հին Արևելքում մարդիկ իրենց երկրպագած աստվածների արձանները դնում էին բարձր աշտարակների վրա: Եվ տվյալ դեպքում աշտարակ կառուցել հավանաբար նշանակում է երկրպագել որևէ աստծո: Գուցե սույն պատումի տակ թաքնված է այն իրողությունը, որ Բելը, հավաքելով աշխարհի բոլոր ազգերի ավագներին իր մոտ, նրանց կարգադրում է երկրպագել իր աստվածներին:

Եվ բոլոր ազգերի ավագները համաձայնում են, բացառությամբ Թորգոմի որդի արի Հայկի, որ իր զավակների հետ հեռանալով Բաբելոնից՝ գալիս հաստատվում է իր հայրենական երկրում՝ Արարատում: Բելն իր որդու գլխավորությամբ դեսպանություն է ուղարկում Արարատի երկիր՝ փորձելով համոզել Հայկին վերադառնալ: Սակայն Հայկը մերժում է: Տիտանյան Բելը տեսնելով, որ ապարդյուն է համոզել Հայկին, խրոխտ ու հպարտ արորդին չի ցանկանում հնազանդվել իրեն, պատրաստվում է ահեղ պատերազմի: Մարտի է պատրաստվում նաև Հայկը, որ հավաքում է իր ուստրերին, թոռներին, զենք բռնելու ունակ քաջ այրերին:

Մովսես Խորենացին Հայկ Աղեղնավորին նկարագրում է որպես գանգրահեր, վայելչակազմ, զվարթ աչքերով, ուշիմ ու խոհեմ, քաջ, երևելի և ազատասեր դյուցազն: Հայոց ավանդապատումների մեջ Հայկը հանդես է գալիս նաև որպես քաջագանգուր, խայտակն, վարսագեղ, գեղապատշաճ և այլ մակդիրներով: Եվ ահա այս դյուցազնը պետք է փրկեր արմենական ազգը Բելի ճիրաններից, պետք է

[1] http://archive3.ankakh.com/article/78000/hayvots-dzvori-tjakatamarte Հայոց ձորի ճակատամարտը: Հասանելի է 28.10.2021

պահեր հայոց աստվածների պատիվն ու հայի ապրելու իրավունքը: Բելը Հայաստան է մտնում Կորդվաց աշխարհով՝ Հայկի թոռ Կադմոսի տիրույթներով:

Կադմոսի ուժերը սակավ էին, և նա նահանջում է՝ միավորվելու հայոց հիմնական ուժերին, որ Հայկի հրամանատարությամբ ընդառաջ են շարժվում Բելին: Կադմոսը, բնականաբար, փախուստի չի դիմում, այլ մանր, պարտիզանական կռիվներով հյուծում է Բելի զորքը, նաև ժամանակ է շահում, որպեսզի Հայկը կարողանա համախմբել հիմնական ուժերը:

Հայկը, որպես պաշտպանվող կողմ, խնամքով ընտրում է ճակատամարտի վայրը՝ Վասպուրական աշխարհը՝ Խոշաբ գետի հովիտը՝ Վարագա (Վահագնա) լեռան և Վանա լճի մերձակայքում գտնվող բլրոտ մի դաշտ: Եվ մ.թ.ա. 2492 թվականի Նավասարդ ամսի առաջին օրը (օգոստոսի 11-ին):



Նկար 1

Հայոց ձորի ճակատամարտում պետք է վճռվեր աշխարհի բախտը (ճակատամարտի տարեթիվն ու օրը վիճահարույց են, ուստի և պայմանական)։ Մովսես Խորենացին, նկարագրելով Հայոց ձորի ճակատամարտը, իրար բախվող երկու բանակներում հեծելազոր չի հիշատակում։ Խոսքը միայն հետևակ զորքի մասին է։ Սա կարևոր վկայություն է փաստելու համար, որ ճակատամարտը վաղնջական շրջանում է եղել, երբ դեռևս ռազմի նպատակներով ձի չի գործածվել։ Չի եղել հեծելազոր, չեն եղել նաև մարտակառքեր։ Այսինքն՝ խոսքը մեր թվականությունից առաջ III հազարամյակի մասին է։

Հայոց ձորի ճակատամարտը համաշխարհային ռազմարվեստի պատմության մեջ հանդիպակաց մարտի առաջին նկարագրությունն է: Հայկ նահապետն իր զորքը դասավորեց սեպաձև՝ կենտրոնում անձամբ կանգնելով: Զորքերի այս դասավորությունը Հայկ նահապետին հնարավորություն տվեց զրկելու թշնամուն թվային առավելությունից, քանզի թշնամին որ կողմից էլ հարձակվեր՝ հանդիպելու էր ամուր սեպի: Ի դեպ, զորքերի այս մարտաշարքն ամենևին էլ սոսկ պաշտպանական չէր: Սեպաձև մարտակարգով կարելի էր մխրճվել թշնամու մեծաքանակ զորքի մեջ, երկու մասի բաժանել այն և բացելով սեպի թևերը՝ վերջնական ջախջախման ենթարկել ոսոխին: Զորքերի սեպաձև մարտակարգը միջնադարում շատ կիրառեցին ֆրանկները: Նրանք այդ մարտավարության շնորհիվ հսկայական հաջողությունների հասան և իրենց ենթարկեցին գրեթե ողջ Եվրոպան: Ֆրանկները զորքերի սեպաձև մարտակարգն անվանում էին «Խոզ»[2]:

Եվ այսպես, Հայկ նահապետը դասավորում է զորքը, ձախ թևի հրամանատարությունը հանձնում է իր թոռ Կադմոսին, աջ թևինը՝ իր որդի Արամանյակին, կենտրոնի հրամանատարությունը ստանձնում է անձամբ: Նա նաև հրամանատարների երկուական տեղակալներ է նշանակում մարտից առաջ: Հայոց զորքի դեմ կանգնած էր Տիտանյան Բելի զորքը՝ խառնիճաղանջ հսկաների ամբոխով, որ անվախ կանգնած էր՝ պատրաստ հոշոտելու և ոչնչացնելու հայոց զորությունը: Ըստ Խորենացու՝ «Բելը մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր ջրի (գետի) ձախ կողմում մի բլրակի վրա՝ իբրև դիտանոցում»: Բելի զորքերը նկարագրելիս Պատմահայրը, որպես քառսային ուժերի մարմնավորում, նրանց ներկայացնում է «անճոռնի ամբոխի զորությամբ» և «բազմություն անկարգ հրոսակի» արտահայտություններով: Պատմահայրը ընդգծում է, որ ոչ «հսկաները» և ոչ էլ նրանց «մեծ բազմությունը» չէին կարող Հայկին խուճապին մատնել:

Հայկի գործողությունները համապատասխանում էին մարտավարական իրավիճակին: Հայկն իր զորքի մարտակարգը շարում էր հակառակորդի թույլ կաղմերը հաշվի առնելով: Հայկական ուժերը կարգելով եռանկյունի ձևով՝ Հայկը իր վրա է վերցնում կենտրոնական անմիջական հրամանատարությունը, աջ զորաթևը հանձնում իր որդիներին՝ Արամանյակի գլխավորությամբ, ձախ թևը՝ թոռներին՝ Կադմոսի

[2] http://archive3.ankakh.com/article/78000/hayvots-dzvori-tjakatamarte Հայոց ձորի ճակատամարտը: Հասանելի է 28.10.2021

գլխավորությամբ, որովհետև «աղեղ ու սուր գործածելու մեջ կորովի մարդիկ էին»: Իսկ մյուս բազմությունները կանգնում էին հետևում՝ կազմելով սեպաձև մարտակարգերը:Ճակատամարտի միակ նկարագրողը՝ Մովսես Խորենացին, նշում է նաև հայոց բանակի հիմնական սպառազինությունը՝ սուրն ու աղեղը:

Բնականաբար, մարտակառքերի և հեծելազորի բացակայության պայմաններում սուրն ու աղեղը պետք է լինեին հիմնական զենքերը, սակայն չի բացառվում երկու բանակներում սպառազինության այլ տեսակի առկայության փաստը նույնպես: Սուրը մերձամարտի համար էր, իսկ նետուաղեղը, կարելի է ասել, այն ժամանակների հրետանին էր: Բելին նկարագրելիս պատմահայրը նրա սպառազինության մեջ նշում է նաև նիզակի առկայությունը: Հավանաբար, Բելի բանակը նետուաղեղով զինված չի եղել: Ինչպես կարգն էր հնում, Հայկ նահապետը ճակատամարտից առաջ ելույթ ունեցավ զորքի առջև ու ոգևորեց իր զինվորներին: Նրա ելույթի հիմքում անիմաստ նահատակության գաղափարը չէր, այլ թշնամուն ոչնչացնելու և ազատ ապրելու գաղափարը. «Կա՛մ կմեռնենք և մեր ազգը Բելի ծառայության տակ կընկնի, կա՛մ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց կտանք, նրա ամբոխը կցրվի, մենք հաղթություն կտոնենք»: Ահա՛ հեթանոս հայի հավատամքը., ոչ թե անիմաստ նահատակվել, այլ ոչնչացնել թշնամուն: Ցավոք, այս դասը չսերտեցին հետագա սերունդները: Ավելին, Ավարայրի օրինակը սերտելով՝ հայրենիք կորցրին: Հայկ Նահապետը լավ գիտեր արիների օրենքը. Հայրենիքը պահպանում են ոչ թե նրա համար զոհվելով, այլ թշնամուն հարկադրելով:

Ճակատամարտի սկզբում Բելը, հույսը դնելով իր մեծաքանակ զորքի վրա, լայն ճակատով հարձակման անցավ: Բելն անձամբ էր առաջնորդում զորքը: Չնայած թշնամու զորքի մեծ ճնշմանը՝ հայոց բանակն աներեր մնաց: Սեպաձև մարտակարգն արդարացրեց իրեն, ու Հայկն իր զորքով մխրճվեց Բելի բանակի մեջ՝ փաստացի երկու մասի բաժանելով այն: Անակնկալի գալով՝ Բելը նահանջի հրաման տվեց՝ փորձելով բարձրանալ մոտակա բլուրը, որ վերադասավորի իր ուժերը: Սակայն այդ պահին Հայկը վճռական է գործում: Դեմ դիմաց տեսնելով իր ոսոխին՝ նա առաջ է նետվում և իր լայնալիճ աղեղից արձակած եռաթև նետով ճեղքելով Բելի զրահը՝ տապալում է նրան: Բելը սպանվում է, իսկ նրա զորքը՝ խուճապահար փախչում: Ի պատիվ այս հաղթանակի, հայկական

Ամանորը՝ տարեսկիզբը, համարվել է ճակատամարտի օրը՝ Նավասարդ ամսվա առաջին օրը: Այնուհետև Հայկական օրացույցը կոչվել է Բուն Հայկա թվական, որտեղ ամսանունները կոչվել են Հայկի 12 ուստրերի և դուստրերի անուններով Մեր նախնիները Օրիոն համաստեղությունը կոչել են Հայկի անունով՝ Հայկի համաստեղություն: Ճակատամարտից հետո Հայկը ճակատամարտի տեղում կառուցել է Հայք դաստակերտը, որի անունով շրջակա գավառը կոչվել է Հայոց ձոր, իսկ այն բլուրը, որտեղ սպանվել է Բելը՝ Գերեզմանք: Ըստ էության՝ Հայք դաստակերտը՝ Հայկաբերդը, հայոց առաջին մայրաքաղաքն է, որի ավերակները մինչ օրս գտնվում են Վասպուրականում՝ ներկայիս Թուրքիայի Հանրապետության տարածքում և կոչվում են Չաուշ թեփե: Արմենական ազգը հետագայում Հայկ նահապետի պատվին կոչվեց հայ՝ հայկազուն, իսկ նրա կերպարը հետագա սերունդների կողմից անգամ աստվածացվեց:

1.2. ԱՐԱԾԱՆՈՒ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Հայոց հնագույն պատմության առաջին շրջանի հաղթական դրվագներից է Արածանու ճակատամարտը: Ուշագրավ է, որ այն տեղի է ունեցել Ք.ա. 68 թ.՝ Տիգրանակերտի ճակատամարտից ընդամենը մեկ տարի անց, երբ հայոց զորքը ցավալի պարտություն էր կրել հռոմեական բանակից՝ Լուկուլլոսի գլխավորությամբ: Հռոմեացի զորավարը հաղթանակից հետո մնացել էր հայոց հողում՝ ձմեռելով Տիգրան Մեծի դեմ ապստամբած Կորդուք գավառում:

Առանց ընկճվելու և շտապելու՝ հայոց զորքը պատրաստվում էր պատասխան ճակատամարտին:

Տիգրանակերտի անկումից հետո հայոց արքան, օգտվելով զինադադարից, ձմռանը նոր զորակոչ էր իրականացրել և վերակազմավորել բանակը՝ հարձակման հիմնական պարտականությունը թողնելով հեծելազորին՝ շուրջ 20 հազար մարտիկի[3]:

Ճակատամարտ տալու մտադրությամբ, մ.թ.ա. 68-ի գարնանը Լուկուլլոսն անցավ Հայկական Տավրոսի լեռները և վերսկսեց պատերազմը: Հայկական բանակը խույզ տվեց դաշտային ճակատամարտից՝ միաժամանակ հանկարծակի հակագրոհներով ու լեռնային փոքր կռիվներով խափանելով հակառակորդի մատակարարումը: Հայկական զորքը բաժանված էր երկու մասի. այրուձին գլխավորում էր Տիգրան Բ Մեծը, հետևազորը՝ Միհրդատ VI Պոնտացին: Հռոմեական զորքը պահվում էր հայակական հետևազերի և հեծելազորի արանքում, որոնցից մեկը մշտապես սպառնում էր նրան թիկունքից: Լուկուլլոսի բանակը ավելին քան երեք ամիս դեգերեց Տավրոսի լեռների և Արածանիի միջև ընկած տարածություններում: Հռոմեական լեգիոնները սեպտեմբերի կեսին փորձեցին անցնել Արածանին և շարժվել դեպի Արտաշատ մայրաքաղաքը, հայկական զորքին ճակատամարտի մեջ քաշել իրանց համար ձեռնտու վայրում: Սակայն հայկական հեծելազորը, Տիգրան Բ Մեծի առաջնորդությանբ, արագ երթով Արածանիի գետանցի մոտ

[3] https://krtaditak.am/%D5%A1%D6%80%D5%A1%D5%AE%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82-%D5%B3%D5%A1%D5%AF%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B4%D5%A1%D6%80%D5%BF%D5%A8/ Արածանու ճակատամարտը: Հասանելի է 28.10.2021

կանխեց հռոմեացիների առաջխաղացումը[4]: Կողմերն անհապաղ մարտի բռնվեցին: Հայկական հետելազորը նախ դիմեց խաբուսիկ փախուստի, բեկելով թշնամու մարտակարգը, ապա սկսեց հակագրոհը: Հայ թեթևազեն հեծյալները թունավոր ու ճանկավոր նետասլաքներով ծանր կորուստներ պատճառեցին հռոմեացիներին: Արածանիի ճակատամարտից հետո Լուկուլլոսի բանակի մնացորդները նահանջեցին հարավ և ապաստանեցին Մծբին քաղաքի պարիսպներին: Հռոմեական նվաճողներից ազատագրվեց ինչպես ամբողջ Հայաստանը, այնպես էլ Պոնտոսի թագավորության զգալի մասը: Հռոմեացի նշանավոր զորավար Լուկուլլոսը վարկազրկվեց՝ Արևելքի գործերը զիջելով Գնեոս Պոմպեոսին:

[4] https://www.dasaran.net/apps/wiki/view/id/7433 Արածանիի ճակատամարտ: Հասանելի է 28.10.2021

1.3 ՁԻՐԱՎԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Ձիրավի դաշտը գտնվում է Արածանի գետի ափին, որտեղ էլ 371 թվականին տեղի է ունեցել ճակատամարտ հայերի ու պարսիկների միջև: Ճակատամարտն ինչպես սովորաբար է արվում, անվանվում է ճակատամարտի վայրի անվամբ, տվյալ դեպքում՝ Ձիրավի ճակատամարտ: Թագավորը Պապն էր, ով դեռ մի տարի էլ չկար ինչ գահակալել էր:

Պարսից Շապուհ Երկրորդ արքան իր նվաճողական արշավանքը սկսել էր 370 թվականի գարնանը՝ Ատրպատականից Հայաստան ներխուժելով: Սկզբում հայոց զորքը Մուշեղ սպարապետի գլխավորությամբ դիմադրում և հակահարված է տալիս թշնամուն՝ վերցնելով մեծ քանակի ավար և գերիներ: Սակայն պարսից զորքը դեռ չի հեռանում հայոց սահմաններից: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում 371 թ.՝ Նպատ լեռան ստորոտում՝ Ձիրավի դաշտում (Բագրևանդ):

Հայոց բանակը (մոտ 90 հազար զինվոր)՝ սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի հրամանատարությամբ, հաղթանակ է տանում պարսկական 100-հազարանոց բանակի նկատմամբ:

Առաջինը գետին հասավ հայոց այրուձին, ու առանց կանգ առնելու, սկսեց, ջուրն սպիտակեցնելով, անցնել գետը: Պապին թվում էր, թե գետը լավ պատնեշ է, որի միջոցով կարելիէ թշնամուց պաշտպանվել, իսկ հայերը պարզապես վտանգում էին իրենց: Նա զարմանում էր, թե ինչպես է Մուշեղը թույլ տալիս այդպիսի բան: Դեռ մի նետընկեց տարածություն կար հայերի ու պարսիկների մեջ, երբ սկսվեց նետաձգությունը[5]: Վայրկյան առ վայրկյան հակառակորդներին բաժանով տարածությունը փոքրանում էր: Ընկավ առաջին զոհը, որը բոլորի առջևից վազող մի հայ զինվոր էր: Հետո ձիուց ընկան այլոք, սպանվում էին թե՛ հայեր, թե՛ պարսիկներ: Զինվորները վիրավորվում էին, ընկնում ձիուց, իսկ ձիերը շարունակում էին վազել, կարծես ցանկանում էին իրենք էլ կռվել:

[5] http://narekdaser.blogspot.com/2014/05/blog-post_28.html Ձիրավի ճակատամարտ: Հասանելի է 28.10.2021

Առաջին իսկ ժամին պարզվեց, որ պարսից ճնշումը ուժեղ է. Նրանք թե՛ մեծաթիվ են, թե՛ ավելի վարժ. Կռվում էին ավելի սառնասիրտ ու առաջանում էին հաստատուն[6]:

Հայերը սկսեցին նահանջել, շուտով անցան հետ անցան գետը: Պարսիկները տեսնելով հայերի նահանջը, գրոհեցին: Պապն ու մյուսները զարմանում էին, թե ինչպե՞ս Մուշեղը պարսիկների առաջին հարվածից հետո ցանկացավ հանձնվել: Սակայն դա այդպես չէր: Ըստ Մուշեղի ծրագրի, հայերը պետք է հետ նահանջեին, պարսից զորքին հնարավորինս քաշեն հայոց կողմը, որպեսզի հետո նորից հարձակվեին, իսկ Կամսարական իշխանի ու Սմբատ ասպետի զորքերը ետևից պետք է գրոհեին: Ծրագրի առաջին մասը արդեն իրականանում էր՝ պարսիկները ոգևորված գալիս էին առաջ: Հանկարծ, ամենաետևում գտնվող փղերը սկսեցին այս ու այն կողմ վազել, ապա գալ դեպի զորքը: Նրանք կատաղած տրորում էին այն, ինչ ճանապարհին հանդիպում էր նրանց: Պարսից զորքը փորձում էր խուսափել փղերի հարվածներից, բայց չէր ստացվում: Փղերը իրենց կնճիթներով շպրտում էին պարսից զինվորներին, նրանց ոտնատակ անում:

Փղերին պարսիկները չէին բաց թողել: Այդ արել էին հարյուր հայ երիտասարդները: Նրանք անձնազոհ երիտասարդներ էին, ովքեր ծպտյալ, պարսկական հագուստով անցել էին պարսից բանակի հետևը՝ սպարապետի առաջադրանքը կատարելու: Երբ նրանք տեսան, որ պարսից զորքի ուշքն ու միտքը հայոց բանակի կողմն է, բաժանվեցին խմբերի, մոտեցան փղերին ու սրածայր դանակներով կտրեցին նրանց ետին ոտքերի ջղերը: Այդ անելուց հետո փղերը կատաղած առաջ էին վազում, իսկ որոշներն էլ ուղղակի տրորում էին իրենց ոտքերը կտրողներին: Այդպիսիք, բարեբախտաբար, քիչ էին: Փղերը մի քանիսը չէին, այլ՝ հարյուրը, երկու հարյուրը, երեք կամ գուցե չորս հարյուրը:

[6] http://narekdaser.blogspot.com/2014/05/blog-post_28.html Ձիրավի ճակատամարտ: Հասանելի է 28.10.2021

Հանկարծ Պարսկաստանի լեռներից եկող զորքեր երևացին: Պապը անհանգստանու էր, որ դրանք պարսից օգնական զորքեր են: Սակայն իրականում Սմբատ Բագրատունու և Սպանդարատ Կամսարականի գնդերն էին: Շուտով այդ զորքերը իջան լեռներից: Պարսից զորքը շրջափակված էր:

Կատաղի մարտ էր ընթանում: Մուշեղը որոշեց ոգևորել իր զինվորներին ու գնաց մարտի դաշտ[7]:

Ճակատամարտն ի վերջո ավարտվում է հայերի հաղթնակով: Չնայած, որ Ձիրավի ճակատամարտի արդյունքում հազարավոր մարդիկ զոհվեցին, մեն մնացինք անկախ ու պահպանեցինք մեր ինք նուրույնությունը: Իսկ ի՞նչ կլիներ եթե պարսիկները հաղթեին ճակատամարտում, գերեվարեին հայոց թագավորին, իշխաններին ու այլոց, գային ու տիրեին Հայոց աշխարհին: Միգուցե հետագայում նորից կարողանայինք վերականգնել մեր պետականությունը, բայց գուցե չկարողանայինք ու վերջիվերջո վերանար «հայ» ասվածը: Միգուցե մենք էլ պարսիկ լինեինք ու հիմա մեր փոքրիկ հողակտորն էլ կազմեր Պարսկաստանի մի մաս: Բայց այնուամենայնիվ, մենք կանք, գոյություն ունենք, քանի որ քաջաբար կռվել ու հաղթել ենք:

[7] http://narekdaser.blogspot.com/2014/05/blog-post_28.html Ձիրավի ճակատամարտ: Հասանելի է 28.10.2021

1.4 ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Ավարայրի ճակատամարտը կանխորոշել է Սասանյան Պարսկաստանի դեմ 450–451 թթ-ին հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի ելքը: Այն հայ ժողովրդի հանուն հավատքի մղած առաջին ճակատամարտն է:

Վարդան Մամիկոնյանի հրամանով հայոց զորքը հավաքվեց Այրարատում և արագորեն շարժվեց թշնամուն ընդառաջ: Սպարապետը ցանկանում էր ճակատամարտ տալ հայ-պարսկական սահմանում և կանխել երկրի ավերումը: Սակայն Մուշկան Նյուսալավուրտի հրամանատարությամբ պարսկական զորքն արդեն անցել էր Հեր ու Զարևանդ գավառները և շարժվում էր դեպի երկրի խորքը: Պարսիկների հսկայական բանակն ուժեղացված էր ընտիր հեծելազորով՝ «Մատյան գնդով», ու մարտական փղերով: Պարսիկները շուտով մտան Վասպուրականի Արտազ գավառ և բանակ դրեցին Տղմուտ գետի աջ ափին՝ Ավարայրի դաշտում:

451 թվականի գարնանը պարսկական բանակը Փայտակարանից շարժվելով, սահմանամերձ Հեր և Զարևանդ գավառներով մտնում է Մարզպանական Հայաստան: Պարսկական զորքերի խնդիրն էր՝ ճնշել հայերի ապստամբությունը, գրավել նրանց ռազմաքաղաքական կենտրոն Արտաշատը:

Մայիսի 25-ին հայկական բանակը մոտենում է հակառակորդի ամրացված ճամբարին և կանգ առնում գետի ձախ ափին: Մայիսի 26-ին շաբաթ առավոտյան Ավարայրի դաշտում հակառակորդներն ընդունում են մարտական դրություն: Ճակատամարտի նախօրեին սպարապետն իր 66 հազարանոց բանակը բաժանել էր երեք մասի և դրանց հրամանատարներ նշանակել փորձված զորավարներ Ներշապուհ Արծրունուն, Խորեն Խորխոռունուն ու Թաթուլ Վանանդեցուն: Սպարապետն առանձնացրեց նաև պահեստազոր և իր եղբայր Համազասպ Մամիկոնյանի հետ միասին ստանձնեց նրա հրամանատարությունը: Թվապես հայերին եռապատիկ գերազանցող թշնամին իր գլխավոր ուժերը կենտրոնացրել էր աջ թևում, իսկ պահեստազորում կանգնած էր Մատյան

գունդը։ Վարդան Մամիկոնյանը, Հովսեփ Ա Վայոցձորցին և Ղևոնդ Երեցը քաջալերանքի խոսք են ասում հայոց զորքին՝ կոչ անելով արիաբար մարտնչելու թշնամու դեմ[8]։

Ճակատամարտը սկսում է նետաձգությամբ, նիզականետությամբ և փոխադարձ գրոհով։ Հասնելով գետին՝ պարսիկները կանգ են առնում, իսկ հայերը անցնում այն և ամբողջ ճակատով մարտի բռնվում։ Հայերի ճնշմամբ թշնամու բանակի ձախ թևն ու կենտրոնը նահանջում են։ Վարդան Մամիկոնյանը պահեստազորի մի մասը նետում է կենտրոն՝ այնտեղ ճնշումը ուժեղացնելու համար, մնացած մասով օգնության է շտապում ձախ թևին և ետ շպրտում թշնամուն։ Բայց հակառակորդի պահեստազորը՝ վերադասավորվելով, շրջապատում են իրենց թիկունքը թափանցած հայկական հեծելազնդին։

Անհավասար մարտում հերոսաբար զոհվում է նաև Վարդան Մամիկոնյանը։ Ճակատամարտը շարունակվում է մինչև օրվա վերջը։ Հայկական զորքերը երեկոյան քաշվում են Տղմուտի ձախ ափը և նահանջում երկրի խորքը՝ պայքարը շարունակելու նպատակով։ Երեկոյան մարտը դադարեց, և հայոց բանակը վերադարձավ իր դիրքերը։ Զոհվել էր սպարապետը, հայերը զգալի կորուստներ էին տվել։ Հայերի զոհերի թիվը հասնում էր 1036 հոգու, մարտի դաշտում ընկել էին ինը նախարարներ։ Շատ ավելի ծանր կորուստներ կրեցին նաև պարսիկները՝ 3544 մարդ։ Բացի այդ՝ թշնամին չէր հասել իր գլխավոր նպատակին։ Հայերը չէին ջախջախվել, պահպանել էին մարտական ոգին և լի էին պայքարը շարունակելու վճռականությամբ։

Ճակատամարտում հայերից սպանվում է 1036, իսկ պարսիկներից՝ ավելի քան 3500 մարդ։ Ավարայրի ճակատամարտը կանխորոշեց հայ ժողովրդի պայքարի ելքը։ Պարսկական արքունիքը ստիպված եղավ Մարզպանական Հայաստանից շուտով ետ կանչել իր զորքերին, հրաժարվել հավատափոխության միջոցով հայերին ձուլելու ծրագրից և ճանաչել նրանց ներքին ինքնավարությունը։

[8] http://tert.nla.am/archive/HAY%20GIRQ/Ardy/2012-2015/naxnakan%202015.pdf Ավարայրի ճակատամարտ։ Հասանելի է 28.10.2021

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով՝ ուսումնասիրելով հայ ժողովրդի կազմավորման ու գոյատևման հրամար մղվող ճակատամարտերը, կարելի է ասել, որ աս ամեն մեր ժողովրդին տրվել է մեծ դժվարությամբ ու միայն զենքին ու սեփական ուժին ապավինելու շնորհիվ:

Հայոց պատմության ողջ ընթացքում հայերը բազմաթիվ տառապանքների ու փորձությունների են ենթարկվել, սակայն մենք պատվով գոյություն ունենք մինչ օրս, և դա այն մարտերի ու պատերազմների արդյունքում է, որոնցից հաղթանակած ենք դուրս եկել: Հայերը մշտապես փոքրաթիվ ուժերով են դուրս եկել թշնամու դեմ:

Թեև ճակատամարտերի ժամանակ կրած մեծ կորուստներին, հայ ժողովուրդը շարունակեց պայքարել ու մաքառել իր գոյության համար և աշխատասիրության ու հավատքի շնորհիվ ձեռք բերեց անկախություն ու պետականություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. http://archive3.ankakh.com/article/78000/hayvots-dzvori-tjakatamarte
2. http://narekdaser.blogspot.com/2014/05/blog-post_28.html
3. http://tert.nla.am/archive/HAY%20GIRQ/Ardy/2012-2015/naxnakan%202015.pdf
4. https://krtaditak.am/%D5%A1%D6%80%D5%A1%D5%AE%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82-%D5%B3%D5%A1%D5%AF%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B4%D5%A1%D6%80%D5%BF%D5%A8/
5. https://www.dasaran.net/apps/wiki/lists/category-filter/225
6. https://www.mfa.am/hy/history/

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՆԶՊ առարկայի տեղն ու դերը հանրակրթական համակարգում

ԿԱՏԱՐՈՂ՝ Արշակ Սիմոնյան

ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ Զինղեկ

ՂԵԿԱՎԱՐ՝ Անդրանիկ Սարգսյան

Վանաձոր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Կազմ----------1

2. Բովանդակություն----------2

3. Ներածություն----------3

4. ՆԶՊ առարկայի տեղն ու դերը հանրակրթական համակարգում ----------4

5. Եզրակացություն----------13

6. Առաջարկություն----------15

7. Օգտագործած գրականություն----------10

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Սերը դեպի հայրենիքը քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է>>

Նապոլեոն Բոնապարտ

Երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը ներկայիս հրատապ խնդիրներից մեկն է: Դա բարոյական եւ հայրենասիրական կրթություն է, որը ամբողջ հանրային գիտակցության հիմնական բաղադրիչն է, որտեղ յուրաքանչյուր պետության կենսունակության հիմքը հիմնված է: Հայրենասիրական բնույթի զգացմունքները դրված են ողջ կյանքի եւ մարդկության առկայության վրա `որոշակի սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցության ներքո:

ՆԶՊ առարկայի նպատակն է ծառայել որպես նախապատրաստական ազդակ ռազմական ասպարեզ մուտք գործելու շեմին, որպես հիմնավորում այն իրողության, որ ազգապահպան այլևայլ խորհրդանիշներից ամենից առաջ ազգը պետք է ունենա ռազմական կարողություն և ռազմական հնարավորություններ՝ ազգային մնացած հատկանիշները պահելու և պահպանելու համար: Մեծ նշանակություն ունի բանակը, ռազմական ուժը պետության գոյապահպանման համար: Խիստ կարևոր է բանակի դերը ազգային խնդիրների իրագործման ճանապարհին :

ՆԶՊ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության առարկայի ու ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակն է պատրաստել Հայրենիքը պաշտպանելու պատրաստ, բազմակողմանի զարգացած պատանիներ, հնարավորություն ընձեռել պատանիներին բանակ զորակոչվելուց հետո կարճ ժամանակում տիրապետել ժամանակակից զենքին ու ռազմական տեխնիկային: Նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության առարկայի ծրագիրը մշակվել է առարկայական չափորոշիչներին համապատասխան:

Ռազմահայրենասիրական դաստիարակությանը մեր երկրում տարեցտարի ավելի մեծ ուշադրություն է հատկացվում: Կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, որոնց ընթացքում մատաղ սերունդը ծանոթանում է հայրենի պետության պատմությանը, հերոսական անցյալին, մշակույթին, հաղորդակցվում հայրենիքին իրենց կյանքն ու գործունեությունը նվիրաբերած անհատների ոգուն և պատգամներին: Իրավամբ, ուսումնական հաստատություններում այդպիսի ծրագրեր իրականացնելը, դեռ դպրոցական տարիքից տղաների և աղջիկների մեջ հայրենասիրական վեհ զգաստարներ սերմանելը առաջնահերթություն են: Կիրառվում են նոր մոտեցումներ և մեխանիզմներ, սակայն դրանց թվում առաջնային տեղ է զբաղեցնում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումը: Տարիներ առաջ առարկան կարծես երկրորդ շունչ առավ՝ վերածվելով պատանիների և աղջիկների ռազմահայրենասիրական դաստիարակության, նախազորակոչային տարիքի տղաներին զինծառայությանը նախապատրաստելու անգնահատելի գործընթացի(1)

Հայոց բանակի շարքերը համալրող զինվորն ու սպան, ինչպես նաև բանակի թիկունքն ապահովող քաղաքացին իրենց հիմնական գիտելիքներն ստանում են դպրոցում: Այնտեղ է նաև ձևավորվում ապագա քաղաքացու աշխարհայացքը, նախասիրությունները, բնավորությունը:
Հայաստանի Հանրապետության դպրոցներում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման տրամաբանությունը ժառանգվել է

Խորհրդային Միության ուսումնական ծրագրերից, սակայն ՀՀ զինված ուժերի զորամասերի կազմակերպչական մեխանիզմների և առաջադրված խնդիրների սկզբունքները տարբերվում են խորհրդայինից։ Նպատակ չունենալով վերլուծել խորհրդային ու ՀՀ զինված ուժերի կազմակերպչական առանձնահատկությունները՝ միայն նշենք, որ մեր երկրի դպրոցներում ուսումնական գործընթացը մշտապես պետք է կատարելագործվի և համապատասխանեցվի 21-րդ դարի մարտահրավերներին։ Դրանում պետք է արտացոլվեն երկրի անվտանգությանն սպառնացող բոլոր գործոններին դիմագրավելու, այդ թվում՝ մշակութային, տնտեսական, ֆինանսական, քաղաքակրթական, տարերային ու տեխնածին աղետներին մարտահրավերներին հակազդելու քաղաքակիրթ կանոնների ուսուցումը, ինչպես նաև զինված ուժերին առաջադրված խնդիրների հաջող կատարմանը նպատակաուղղված նախնական զինվորական պատրաստությունը։ Վերջինիս ուսուցման ծրագրերում պետք է ներառվեն ծառայության գործնական խնդիրներին նորակոչիկներին նախապատրաստելու հարցերը՝ հաշվի առնելով, որ զորամաս մտնելու առաջին օրվանից զինվորը ստորաբաժանման կազմում բնակվում է զորանոցում, խստորեն սահմանված օրվա կարգացուցակով։ Նրանք պետք է ենթարկվեն զինծառայողների, հրամանատարների ու պետերի փոխհարաբերությունների կանոնադրական կարգին։ Յուրաքանչյուր ստորաբաժանում ու զինծառայող ունեն առաջադրանքներ ու մարտական խնդիրներ, որոնց հստակ կատարումն է ապահովում երկրի անվտանգությունը։ Վերը նշվածից ենթադրվում է, որ նորակոչիկները պետք է բավարար գիտելիքներ ունենան.

-զորամասերի կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ շինությունների ու օբյեկտների, զորանոցների կառուցվածքի, դրանցում անձնակազմի տեղակայման ու կենցաղի ապահովման կարգի (նույն շինությունում մեծ թվով մարդկանց բնակվելու դեպքում համակեցության կանոնները ու դրանց պահպանման կարևորությունը), օրվա կարգացուցակի պահանջների ու նշանակության,

-զինծառայողների, հրամանատարների, պետերի իրավունքների,

պարտականությունների ու պատասխանատվության կանոնադրական ընդհանուր դրույթների,

-ծառայողական պարտականությունների և մարտական առաջադրանքի էության ու դրանց հաջող կատարման համար անհրաժեշտ հանգամանքների ու գործոնների, այդ թվում՝ մարտական պատրաստության պարապմունքների նշանակության մասին։

Դպրոցում ճիշտ, արհեստավարժ աշխատանքի պարագայում հնարավոր կլինի ոչ միայն դաստիարակել երկրի ապագա պաշտպանին, այլ նաև զինված ուժերի զորակոչային հանձնաժողովին ներկայացնել լիարժեք բնութագիր՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով առաջարկություն՝ նորակոչիկի ունակություններին համապատասխան զինվորական մասնագիտության ուսումնական զորամաս ուղարկելու վերաբերյալ։ Լիարժեք բնութագրերի կարևորությունը անվիճելի է, քանի որ նորակոչիկների նախապատրաստման և ուսումնական ստորաբաժանումներում գործնականում հնարավոր չէ յուրաքանչյուր նորակոչիկի համար կազմել լիարժեք ծառայողական բնութագիր։ Որպես կանոն, այդ ստորաբաժանումներում ծառայության ամիսներին հնարավոր չի լինում պարզել ծայրահեղ իրավիճակներում գործելու նրանց որակները, զինվորական անձնակազմում՝ առանձին իրավիճակների դեպքում ցուցաբերվող վարքականոնը, զինծառայողների փոխհարաբերություններում երբեմն առաջացող դժվարությունները հաղթահարելու ունակությունը և այլն։ Հետևաբար, հրամանատարի, առաջնորդի բնածին որակների ակնհայտ դրսևորումների բացակայության պարագայում կրտսեր հրամանատարների ուսումնական ստորաբաժանումները ավարտած անձանց ձեռք բերած հրամանատարական ունակություններին օբյեկտիվ գնահատական տալ հնարավոր չէ։

Այսպիսով, ժամկետային ծառայության զորակոչելիս նորակոչիկի փաստաթղթերում լիարժեք բնութագրի առկայության դեպքում հրամանատարի, առաջնորդի բնածին որակներով օժտված տղաները կդառնան կրտսեր հրամանատարներ, հակառակ դեպքում, երբեմն նրանք որպես շարքային ստորաբաժանումներում ձեռք են բերում հեղինակություն, դառնում ստվերային առաջնորդներ և կարգապահությանն սպառնացող խնդիրներ առաջացնում։ Վերը նշված խնդիրների համակողմանի

լուծման նպատակով դպրոցականներին պետք ներկայացվեն ծառայության ընթացքում կանոնադրական կարգի խախտման հետևանքով առաջացող սպառնալիքները, ինչպես նաև սեփական ունակությունները դրսևորելու միակ ընդունելի ուղին՝ կանոնադրական կարգի ու մեր երկրի օրենքների խստորեն պահպանումը։
Հաշվի առնելով երկրի պաշտպանի դաստիարակության գործի կարևորությունը ու բարդությունը, դպրոցներում միայն մեկ ուսուցչի ուժերով այն լիարժեք իրականացնելն անհնար է, ուստի մանկավարժական կոլեկտիվները, պետական ու հասարակական կազմակերպությունները պետք է ոչ միայն մասնակցեն, այլ նաև ունենան ուսուցման գործընթացի իրենց բաղադրիչը։

Ինչ նպատակ է հետապնդում ՆԶՊ առարկան

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի(3), ՀՀ այլ իրավական ակտերի, ինչպես նաև նախազորակոչային պատրաստության կարգի ու կանոնադրության համաձայն՝ ՀՀ զինված ուժերում ծառայության նախապատրաստելու նպատակով պատանիների շրջանում ՆԶՊ առարկան պետք է ապահովի հետևյալ դրույթների իրականացումը.

ա/ սովորողների կողմից ՆԶՊ առարկայի պետական ուսումնական ծրագրի յուրացումը,
բ/ ՀՀ զինված ուժերի խնդիրների, առանձնահատկությունների ու նշանակության իրազեկումը,
գ/ ազգային բանակում ծառայելու անհրաժեշտության գիտակցումը,
դ/ զինվորական երդման, համազորային կանոնադրությունների պահանջների ուսումնասիրման և դաստիարակության, դրանք անվերապահորեն կատարելու պատրաստակամության ձեւավորումը,
ե/ զորամասերի զինվորական անձնակազմերի կյանքի, կենցաղի, զենքի ու զինտեխնիկայի հետ ծանոթացումը,

զ/ տեսական և գործնական պարապմունքների միջոցով շարային և կրակային պատրաստության իրականացումը,
է/ անհրաժեշտ նվազագույն ռազմական գիտելիքների, մարտավարության և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերի հիմունքների յուրացումը,
ը/ ռազմակիրառական կարողությունների, կամային բարձր հատկանիշների, առաջին բուժօգնության, ինքնօգնության, փոխօգնության ունակությունների ձեւավորումը,
թ/ քաղաքացիական պաշտպանության ազդանշաններից, պաշտպանական կառույցներից և անհատական պաշտպանական միջոցներից օգտվելու ունակությունների, արտակարգ իրավիճակներում գործելու հմտությունների և անհրաժեշտ վարվելակերպի սերմանումը,
ժ/ հայոց բանակի ավանդույթների իմացությունը, ֆիզիկապես և բարոյապես առողջ, դիմացկուն, բազմակողմանի զարգացած, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ պատանիների և աղջիկների դաստիարակումը,
ի/ մասնագիտական ընտրության աջակցություն՝ ըստ նախասիրությունների(2)

ՆԶՊ կապված լինելով հանրակրթական շատ առարկաների հետ /պատմություն, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն/ աշակերտների գիտակցության մեջ խթանվում է տվյալ առարկաների դերն ու կարեւորությունը կյանքում և ռազմական գործում, ինչը նպաստում է նրանց բազմակողմանի զարգացմանը:
ՆԶՊ դասավանդումը՝ պարզից բարդին անցնելով, սկզբում վարժաձևերի ճիշտ, բայց դանդաղ կատարմամբ, այնուհետև կանոնադրական պահանջների համապատասխան, այնուհետև գիտելիքների կիրառման փորձառության ձեռքբերումը իրականացվում է հրաձգարաններում և զորամասերում գործնական պարապմունքների ժամանակ:
Ուսուցումը կազմակերպվում է ինտերակտիվ /փոխներգործուն/ մեթոդներով, սովորողները հնարավորություն ունեն արտահայտելու իրենց խոսքն ու կարծիքը, ստեղծագործելու, դրսևորելու իրենց գիտելիքներն ու ունակությունները երկխոսության, տարբեր վարժությունների միջոցով:
Ավագ դպրոցի յուրաքանչյուր պատանի շրջանավարտ պետք է իրեն նախօրոք պատրաստի այն մտքին, որ զինվորական ծառայությունը պարտադիր է բոլորի

համար, և ինքը պետք է լինի ֆիզիկապես կոփված, մտավոր ու հոգևոր ներուժով, բարոյական վեհ արժանիքներով օժտված անձնավորություն, ունենա անհրաժեշտ ռազմագիտական նվազագույն գիտելիքներ և ունակություններ:

ՆԶՊ-ի դասավանդումը հանրակրթական դպրոցներում

Հայաստանի Հանրապետության հանրակրթության բնագավառում առանձնահատուկ նշանակություն և կարևոր առաքելություն ունի «Նախնական զինվորական պատրաստություն» դասընթացը, որի նպատակն է՝ պատրաստել ռազմահայրենասիրական ոգով դաստիարակված, ռազմագիտական անհրաժեշտ գիտելիքներ և բարոյակամային բարձր հատկություններ ունեցող պատանիներ և աղջիկներ : Հանրակրթական «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկայի պլանավորումը և դասավանդումը կազմակերպվում և անցկացվում է համաձայն «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի չափորոշչի և ծրագրի: «ՆԶՊ» առարկայի դասընթացը բաղկացած է հետևյալ մասերից.

● ՀՀ զինված ուժերի և ռազմարվեստի պատմություն
● մարտավարական հիմունքներ
● կրակային պատրաստություն
● համազորային կանոնադրություններ
● շարային պատրաստություն
● ռազմական տեղագրություն
● միջազգային մարդասիրական իրավունք
● առաջին բուժօգնություն Հանրակրթական դպրոցներում ՆԶՊ առարկայի դասավանդումը պատանիներին հնարավորություն է տալիս ստանալ նախնական ռազմական գիտելիքներ և դրանք լավագունս կիրառել զինվորական ծառայության ժամանակ:ՆԶՊ առարկայի դասավանդումը համապետական կարևորագույն խնդիր է լուծում՝ նախազորակոչային տարիքի պատանիներին նախապատրաստելով

զինվորական ծառայության, ինչպես նաև նպաստելով ֆիզիկապես և բարոյապես առողջ, բազմակողմանի զարգացած երիտասարդներ դաստիարակելուն: Յուրաքանչյուր պատանի պետք է իրեն նախօրոք պատրաստի այն մտքին, որ զինվորական ծառայությունը պարտադիր է բոլորի համար, և ինքը պետք է լինի ֆիզիկապես կոփված, մտավոր ու հոգևոր ներուժով բարոյական վեհ արժանիքներով օժտված անձնավորություն, ծանոթ լինի զինվորական ծառայության առանձնահատկություններին, ունենա ռազմագիտական նվազագույն անհրաժեշտ գիտելիքներ և ունակություններ: Սկզբունքներն են՝

● ազգային լավագույն ավանդույթների պահպանում և խորացում,

● ՆԶՊ զուգակցում միջազգայնորեն ընդունված զինված ընդհարումների իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի նորմերին,

● հայոց բանակի պատմության և ավանդույթների պահպանման ու զարգացման նպատակաուղղվածություն,

● ՆԶՊ դասավանդումը պարզից բարդին անցնելով՝ սկզբում վարժաձևերի կատարումը ըստ տարրերի, այնուհետև՝ դրանց ամբողջական կատարման,

● ՆԶՊ գիտելիքների կիրառական փորձառության ձեռքբերում զործնական պարապմունքների ժամանակ հրաձգարաններում և զորամասերում,

● դասավանդման մեթոդական բազմազանություն՝ ուսումնական զենքի, սարքերի, պաստառների առավելագույն օգտագործմամբ,

● ՆԶՊ միջառարկայական կապերի օգտագործում:

● Ուսուցումը կազմակերպվում է ինտերակտիվ՝ փոխներգործուն մեթոդներով, սովորողը հնարավորություն ունի արտահայտել իր խոսքն ու կարծիքը ստեղծագործել, դրսևորել իր գիտելիքներն ու ունակությունները երկխոսության, տարբեր վարժությունների միջոցով: Խնդիրներն են՝

● ապահովել սովորողների կողմից «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի պետական ուսումնական ծրագրի յուրացումը,

● սովորողներին պարզաբանել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի խնդիրները, առանձնահատկություններն ու նշանակությունը,

● սովորողների մեջ դաստիարակել ազգային բանակում ծառայելու անհրաժեշտության զգացում,
● կազմակերպել զինվորական երդման, համազորային կանոնադրությունների պահանջների ուսումնասիրում և սովորողների մեջ դաստիարակել դրանք անվերապահորեն կատարելու պատրաստակամություն,
● պատանիներին ծանոթացնել զորամասերի զինվորական անձնակազմի կյանքին ու կենցաղին, զենքին ու զինտեխնիկային,
● տեսական և գործնական պատրաստության միջոցով սովորողներին ծանոթացնել շարային և կրակային պատրաստության հիմունքներին,
● սովորողներին զինել անհրաժեշտ նվազագույն ռազմական գիտելիքներով, ապահովել անվտանգ կենսագործունեության հիմունքների յուրացումը,
● դասավանդման ընթացքում սովորողների մեջ ներարկել ռազմարվեստի յուրացման կարողություններ, դրանց կիրառման հմտություն և կամային բարձր հատկանիշներ,
● սովորողների մեջ ձևավորել քաղաքացիական պաշտպանության ազդանշաններով գործելու, անհատական պաշտպանական միջոցներից օգտվելու ունակություն,
● դաստիարակել հայոց բանակի պատմական ավանդույթներին ծանոթ, ֆիզիկապես և բարոյապես առողջ, դիմացկուն, բազմակողմանի զարգացած, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ պատանիներ,
● սովորողների շրջանում իրականացնել մասնագիտական կողմնորոշման աշխատանք՝ ըստ նախասիրությունների ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու նպատակով,
● զարգացնել արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու, գործելու կարողություն և կամային հատկանիշներ,
● նրանց ուսուցանել առաջին օգնություն ցույց տալու հմտություն:

Ռազմահայրենասիրական դաստիարակության ուսուցման մեթոդները

Հանրակրթական համակարգում անհնար է պատկերացնել աշակերտության ռազմահայրենասիրական դաստիարակությունը առանց ՆԶՊ առարկայի ուսուցման:

Հենց ՆԶՊ առարկայի միջոցով պետք է աշակերտներին դաստիարակել ռազմահայրենասիրական ոգով: Իսկ գաղտնիք չէ, որ ռազմահայրենասիրական դաստիարակությունը նույնպես ուսուցման պրոցես է, որի ընթացքում պետք է օգտվել ուսուցման հետևյալ մեթոդներից՝ բանավոր շարադրանք, զրույց, վարժություններ /մարզումներ/, ինքնուրույն աշխատանք:

Բանավոր շարադրանք

ա/ Դասախոսությունը շարադրվող նյութի գիտա-տեսական վերլուծության ծավալուն հաղորդումն է: Դասախոսության հիմնական նպատակն է օգնել սովորողներին, նրանց հետագա ստեղծագործական աշխատանքին: Դասախոսության մեջ շարադրվում են թեմայի առավել բարդ դրույթները, վերլուծվում են գրական աղբյուրները, տրվում են խորհուրդներ հետագայում նպատակասլաց թեմայի հետ աշխատելու համար: Դասախոսություններում լայնորեն կիրառվում են ընդհանրացումներ, նկարագրութ - յուններ, օրինակներ, փաստերի վերլուծություններ:

բ/ Բացատրությունները դրանք երևույթների իմաստնե իբացահայտումն են: Դրանցում մեծ տեղ ունեն ապացույցները, հետևությունները, դատողությունները: Բացատրություններն ուղեկցվում են սպառազինության ու տեխնիկայի ցուցադրմամբ, դիդակտիկ պարագաների, գործողությունների ու հնարքների ցուցադրմամբ:

գ/ Պատմումը ուսումնական նյութի կարճ ու պատկերավոր շարադրումն է, առավելապես փաստացի տվյալների հիման վրա: Պատմելու ընթացքում կիրառվում են նկարագրության, դատողությունների, եզրահանգումների ձևերը: Սովորաբար տևողությունները լինում է 20-30 րոպեից ոչ ավել, ուղեկցվում է բացատրություններով, դիդակտիկ նյութերի ցուցադրումով:

Զրույցը սովորողներին նոր գիտելիքներով հարստացնելու պարզ ու մատչելի մեթոդներից է: Այն հնարավորություն է ընձեռնում ուսումնական նյութի քննարկման համար, թույլ է տալիս ստուգել նախկինում ձեռք բերած գիտելիքները, դրանք սիստեմավորել և խորացնել: Ուսուցման նպատակից կախված զրույցը կարող է լինել ծավալուն, ստուգողական, նոր գիտելիքների հաղորդման: Այն պետք է նախօրոք նախապատրաստել, որոշել նպատակը, խնդիրները բովանդակությունը:

Վարժությունները /մարզումներ/ գիտակցաբար, աստիճանաբար դժվարացող որոշակի գործողությունների, հնարքների կրկնությունն է, սովորողների մոտ հմտություններ և ունակություններ ձեռք բերելու նպատակով: Վարժություններ կատարելիս սովորողները ձեռք են բերում գործնական ունակություններ զենքի, սապառազինության, մարտական տեխնիկայի հետ վերաբերվելու: Գործնական աշխատանքը տեխնիկայի, սպառազինության, զենքի հետ վարվելու, սպասարկելու, խնամելու և պահպանելու կոնկրետ և կարևոր աշխատանք է:

Ինքնուրույն աշխատանքը ուղեկցվումէ հրահանգների, ուղեցույցների, տեղեկատու գրականության կրկնությամբ: Ինքնուրույն աշխատանքի արդյունավետությունը մեծ չափով կախված է զինղեկի կողմից այն նախապատրաստելու մակարդակից, դրված խնդիրների ծավալից և նրա կողմից իրականացվող հսկողությունից: Գործնականում ավելի հաճախ օգտագործվում են ուսուցման մեթոդները զուգորդված, որի ժամանակ կիրառվում են մի քանի մեթոդներ:

Եզրակացություն

Ինչպես հայտնի է, ՀՀ ԶՈՒ շարքերը համալրվում են պայմանագրային և պարտադիր ժամկետային զինծառայության հիմունքներով: Քանի որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված է, որ 18 տարին լրացած ՀՀ արական սեռի քաղաքացիները պետք է զորակոչվեն պարտադիր ժամկետային զինծառայության(3), ուստի առավել քան ակտուալ է դառնում ՆԶՊ առարկայի դերն ու նշանակությունը ՀՀ հանրակրթական համակարգում: Միջնակարգ կամ ավագ դպրոցների ավարտական դասարանների աշակերտները, եթե ՆԶՊ առարկայից ունենում են բավարար գիտելիքներ, ծառայության ժամանակ կարողանում են արագորեն յուրացնել մարտավարական զինանոցը: 44-օրյա պատերազմի ժամանակ այն զինծառայողները, որոնց դպրոցներում բարձր մակարդակի վրա է եղել ՆԶՊ առարկայի դասավանդումը, մարտական գործողությունների ընթացքում կարողացել են արագորեն կողմնորոշվել և գրագետ մարտ վարել: ՆԶՊ առարկան , որը ուսուցանում է նաև արտակարգ

իրավիճակներում գործողությունների կարգ, յուրացրած դպրոցականները մեր սեյսմիկ տարածշրջանում առաջացած բնական աղետի(երկրաշարժի) հետևանքների վերացման և ազգաբնակչությանը օգնելու գործում կարող են շոշափելի դեր խաղալ: Սակայն սխալ եմ համարում դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության ողջ բեռը դնել միայն զինղեկների ուսերին: Աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետք է լինի բոլորիս ուշադրության կենտրոնում:

ՆԶՊ առարկան յուրացրած դպրոցականը հետագայում դառնալու է իր ուժերի վրա վստահ զինվոր, որովհետև նա զինված է լինելու զինվորին անհրաժեշտ գիտելիքներով: Զինղեկը պետք է կարողանա դպրոցականին ապացուցել, որ զինվորի ամենամեծ զենքը գիտելիքն է: Այն զինվորը, որը զինված կլինի մարտավարական գիտելիքներով, մարտադաշտում նրա գործողությունները կլինի առավել արդյունավետ, զգալիորեն կնվազեն նրա շարքից դուրս գալու հավանականությունը: Զինղեկը պետք է կարողանա աշակերտներին հասցնել այն գաղափարը, որ մարտադաշտում միայն համարձակության շնորհիվ անհնար է կատարել իրեն հանձնարարված մարտական առաջադրանքը, զինվորը առավել արդյունավետ կարող է գործել միայն համապատասխան գիտելիքներ ունենալու դեպքում :

Պակաս կարևոր չի նաև ՆԶՊ առարկայի կազմում դասավանդվող առաջին բուժօգնության հիմունքները: Դպրոցականը և դպրոցը ավարտած աշակերտը պետք է կարողանան արտակարգ իրավիճակներում հայտնված քաղաքացիներին ցուցաբերել համապատասխան օգնություն: Զինղեկը պարտավոր է առաջին պլանում պահել նաև քաղպաշտպանության հիմունքները, աշակերտներին սովորեցնել բնակչության քաղպաշտպանության ժամանակ ցուցաբերել ակտիվություն և լինել նախաձեռնող: Զինղեկը պետք է դպրոցում քարոզի ազգային արժեքների պահպանման կարևորությունը, բայց չպետք է հայտնվի ծայրահեղությունների մեջ: Հանրակրթական համակարգում ՆԶՊ առարկայի դերն ու նշանակությունը կայանում է նրանում, որ մեր անհանգիստ տարածաշրջանում դաստիարակենք ցանկացած մարտահրավերների դիմակայելու ընդունակ հասարակություն:

Առաջարկություն

Ուսումնական հաստատություններում հաճախ է առաջանում խնդիր ՆԶՊ առարկայի լիարժեք ուսուցման համար, որը զուտ ֆինանսական է: Հնարավորության դեպքում խիստ ցանկանալի կլիներ կազմակերպել արշավներ, էքսկուրսիաներ , որը ֆինանսական սղության պատճառով չի իրականանում: Ցանկանալի կլիներ հարստացնել ուսումնանյութական բազան, դպրոցներին տրամադրել ուսումնական զինամթերքներ(ականներ, տարբեր տրամաչափի փամփուշտներ, նռնակներ, ինքնաձիգներ և այլն): Ցանկալի կլիներ դաշտային պարապմունքների անցկացումը հրաձգարաններում ու զորավարժարաններում, որ դպրոցների ֆինանսական հնարավորությունները թույլ չեն տալիս: Պետք է անմիջապես կազմել 12-րդ դասարանի ՆԶՊ դասագիրք, որը պետք է լինի ոչ թէ անցած տարիների թեմաների կրկնություն, այլ միայն գործնական պարապմունքներ:

Պետք է հնարավորություն ստեղծել բարձր դասարանցիների այցելություններ կազմակերպել առողջապահական կենտրոններ(հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, հոսպիտալներ և այլն), որտեղ պետք է անցկացվեն առաջին բուժօգնության գործնական պարապմունքներ:

Ցանկալի են այցելությունները տարբեր տեսակի զորամասեր(ավիացիոն, ՀՕՊ, հրթիռահրետանային, տանկային, քիմիական, սակրավորային և այլն), որտեղ մասնագետ սպաներ կանցկացնեն գործնական ու տեսական պարապմունքներ՝ ներկայացնելով իրեն զինատեսակների կարողություններն ու հնարավորությունները:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայ զինվոր (hayzinvor.am)
2. Հայ զինվոր (hayzinvor.am)
3. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=117633

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Առաջին բուժօգնությունը արտակարգ իրավիճակներում

ԿԱՏԱՐՈՂ՝ Գուրգեն Հովսեփյան

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ՆԶՊ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ադրանիկ Սարգսյան

Վանաձոր 2022

Առաջին բուժօգնությունը արտակարգ իրավիճակներում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն _____3
Առաջին բուժօգնության էությունը, նպատակները և ընդգրկող միջոցառումները _____5
Առաջին բուժօգնություն ցուցաբերողի պարտականությունները _____10
Անվտանգության ապահովում տարբեր արտակարգ իրավիճակներում _____12
Առաջին բուժօգնությունը առավել հաճախ հանդիպող արտակարգ իրավիճակներում __15
Եզրակացություն _____19
Օգտագործված գրականության ցանկ _____20

Ներածություն

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից աշխարհում՝ կապված մի շարք գործոնների և անընդհատ փոփոխվող պայմանների հետ աճել են արտակարգ իրավիճակների և դժբախտ պատահարների թվերը: Այդպիսի իրավիճակները անկանխատեսելի են և կարող են հանգեցնել մարդկային բազմաթիվ զոհերի: Դժբախտ պատահարը կամ հանկարծահաս հիվանդությունը կարող է ծա գել ցանկացած վայրում և պատահել յուրաքանչյուրի հետ: Յուրաքանչյուր մարդ կարող է նաև պատահականորեն ներկա գտնվել դեպքի վայրում, ուստի ականատեսների կողմից ցուցաբերվող առաջին բուժօգնության որակից հաճախ կախված է լինում տուժածի կյանքը: Առողջապահության համակարգում վաղուց ի վեր ձևավորվել է այն կարծիքը, որ անհետաձգելի օգնությունը, որը իրականացվում է առաջին բուժօգնության կանոնները յուրացրած ոչ մասնագետների կողմից, հնարավորություն է ընձեռնում փրկելու մարդկային հազարավոր կյանքեր: ժամանակակից գիտական հետազոտությունները վկայում են, որ բնակչության լայն խավերի շրջանում նախահիվանդանոցային անհետաձգելի բուժօգնության գիտելիքներ սերմանելը և առաջին օգնության հմտությունների կատարելագործումը հանգեցնում է կենսապահովման ցուցանիշների զգալի բարձրացմանը: Այս պայմաններում անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր քաղաքացի տեղյակ լինի առաջին բուժօգնություն ցուցաբերելու կանոններին, քայլերին և ցուցումներին, կարողանա ճիշտ և ճկուն կողմնորովել առաջացած իրադրության մեջ:

Աշխատանքի նպատակն է անդրադարձ կատարել առաջին բուժօգնության քայլերի հստակ հաջորդականությանը տարբեր արտակարգ իրավիճակներում, որոնք առաջացել են տարբեր գործոնների և պայմանների ազդեցության արդյունքում, առաջին բուժօգնություն ցուցաբերելու ընթացում առաջացած խոչընդոտներին և առանձնացնել այն գործոնները, որոնք նպաստում են առաջին բուժօգնություն ցուցաբերելու արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության օբյեկտը անվտանգության ապահովումն է տարբեր արտակարգ իրավիճակներում:

Հետազոտության սուբյեկտը առաջին բուժօգնությունն ընդգրկող միջոցառումների ուսումնասիրությունն է:

Հետազոտության խնդիրներն են.

- ուսումնասիրել առաջին բուժօգնության նպատակներն ու ընդգրկող միջոցառումները
- ուսումնասիրել տուժածի վերաբերմունքն արտակարգ իրավիճակներին և իրեն օգնություն ցուցաբերելուն
- ուսումնասիրել անվտագության ապահովումը տարբեր արտակարգ իրավիճակներում
- ներկայացնել տարբեր արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնություն ցուցաբերելու առանձնահատկությունները

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը. Աշխատանքը կազմված է ներածությունից, չորս կետերից, եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը 20 էջ է:

Առաջին բուժօգնության նպատակները և ընդգրկող միջոցառումները

Առաջին բուժօգնությունը տուժածին կամ հիվանդին ցուցաբերվող անհետաձգելի բուժօգնության այն համակարգն է, որը կատարվում է դժբախտ պատահարի, հանկարծահաս հիվանդագին վիճակների ժամանակ կամ արտակարգ իրավիճակներում նախահիվանդանոցային փուլում մինչև մասնագիտական բժշկական օգնությունը:

Արտակարգ իրավիճակը վթարի, բնական, տարերային կամ այլ բնույթի աղետի հետևանքով որոշակի տարածքում առաջ եկած իրավիճակն է, որի հետևանքով մարդկային զոհեր են լինում, վնասվում է մարդկային առողջությունը, խանգարվում նրանց կենսագործունեության պայմանները, և նրանք զանազան զրկանքներ են կրում: (1)

Այդ պայմաններում իրականացվող առաջին օգնության միջոցառումներով է պայմանավորվում իրավիճակի ելքը, ուստի դրանք պետք է հնարավորինս ժամանակին կատարվեն: Ցուցաբերվող օգնությունը պետք է լինի նպատակային, մտածված և որոշակի:

Առաջին բուժօգնության նպատակներն են՝

- պահպանել տուժածի կյանքը՝ ապահովելով կենսական կարևոր օրգանների ֆունկցիան,
- կայունացնել տուժածի վիճակը և կանխել վիճակի վատթարացումը, մեղմել ցավը,
- նպաստել տուժածի վիճակի բարելավմանը, պատրաստել հիվանդանոց տեղափոխելուն: (6)

Ինչպես ասվել է, մեծ մասամբ առաջին օգնությունը ցուցաբերում են դեպքի վայրում պատահականորեն հայտնված մարդիկ՝ ականա-տեսները: Խոշոր քաղաքների փրկարարական ծառայությունների վիճակագրությունը վկայում է, որ ականատեսներից շատերը գերա-դասում են չմիջամտել նման իրավիճակներում, քանի որ իրենց ուժերին վստահ չեն: Մարդիկ սովորաբար խուսափում են օգնություն ցուցաբերելուց՝ ելնելով հետևյալ հանգամանքներից՝

- առաջին բուժօգնության գիտելիքների բացակայություն,
- գիտելիքների առկայության պայմաններում փորձի, գործելու հմտության բացակայություն (սխալվելու վախ),

- հավաքված բազմության ներկայությունը, նրանց ուշադրության կենտրոնում հայտնվելու փաստը,

- տուժածի վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը (անծանոթին մոտենալը և օգնություն ցուցաբերելն ավելի դժվար է, քան մտերիմներին, ծանոթներին),

- հոգեբանորեն անպատրաստ լինելը (տհաճության զգացումը արյան առկայությունից կամ վնասվածքից, փսխուքից, տհաճ հոտերից),

- որևէ հիվանդությամբ վարակվելու վախը,

- օգնություն ցուցաբերողի ֆիզիկապես թույլ, անառողջ կամ տկար լինելը, - իրավական հարցերը («Արդյոք ինձ չե՞ն մեղադրի):

Արտակարգ իրավիճակում հայտնված մարդը պետք է կարողանա արագ կողմնորոշվել և խուճապի չմատնվել:

Անհրաժեշտ է հիշել, որ

- Դժբախտ պատահարի դեպքում տուժածը կարող է ունենալ ոչ նորմալ վարքագիծ, այն չպետք է վանի Ձեզ:

- Նույնիսկ անմիջական օգնություն ցուցաբերելու անհնարինության պայմաններում կարելի է՝

- առաջարկել ներկաներին հեռանալ և ազատ տեղ բացել տուժածի շուրջը,

- ահազանգել շտապօգնություն,

- օգնել փրկարարներին:

Անտարբերությունը տուժածի նկատմամբ առավել անթույլատրելիին է:

Դեպքի վայրում ականատեսի առաջին քայլը պետք է լինի տեղանքի զննումը, զարգացող իրավիճակի ճանաչումը և գնահա-տումը, որի համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել որոշակի նշանների:

Արտակարգ իրավիճակին բնորոշ հիմնական նշաններն են.

1. Տարօրինակ ձայները՝

- գոռոց, ճիչ, աղաղակ,

- ապակու կոտրվելու ձայն, մետաղի դղրդոց, ավտոդողերի ճռռոց, շինության փլուզման աղմուկ,

- աշխատող սարքավորումների ձայների փոփոխություն:

2. Տարօրինակ տեսարանները՝

- ճանապարհից անբնական շեղված ավտոմեքենա,

- հատակին թափված իրեր, կոտրված ապակեղեն,

- թափված դեղեր:

3. Սովորականից ուժեղ կամ անծանոթ արտասովոր հոտերը:

4. Անսովոր նշանները կամ տարօրինակ վարքագիծը՝

- տուժածի անսովոր դիրքը՝ սեղմած կոկորդը, կրծքավանդակը, որովայնը,

- շփոթվածությունը, վախեցած լինելը, մաշկի գունատությունը:

Ցանկացած արտակարգ դեպքի վայրում ձեռնարկվող գործողությունների ծրագիրը կոչվում է հրատապ գործողությունների փուլեր: Այդ փուլերի իմացությունը և հստակ կատարումը առաջին օգնությունը կդարձնի առավել արդյունավետ: (6)

Երբեմն մարդիկ դժբախտ պատահարի ժամանակ խուսափում են որեւէ գործողության դիմելուց: Կան հանգամանքներ, որոնք խանգարում են մարդկանց ցուցաբերել առաջին օգնություն, նրանք վարանում են, տատանվում եւ գործողություններ չեն ձեռնարկում: Խոսենք առավել հաճախ հանդիպող խանգարող հանգամանքների եւ դրանց հաղթահարման ուղիների մասին:

1. Նախ պետք է նշել առաջին օգնություն ցուցաբերելու գիտելիքների բացակայությունը եւ սխալվելու վախը:

Դժբախտ պատահարի ժամանակ հնարավոր է, որ առաջին բուժօգնություն ցուցաբերողը չիմանա ինչ անել կամ վախենա սխալվել և էլ ավելի վատացնել տուժածի վիճակը: Եթե նման դեպքերում կա երկմտանք, թե ինչպես գործել, ավելի լավ է ահազանգել շտապօգնություն: Եթե դեպքի վայրում կան օգնություն ցուցաբերող մասնագետներ, պետք է կատարել նրանց հրահանգները: Պետք է հիշել, որ ոչինչ չանելն ավելի վատ է:

2. Շատերին կարող են շփոթեցնել անծանոթ մարդիկ, որոնք հաճախ խմբվում են դեպքի վայրում: Չէ՞ որ ոչ բոլորը կարող են անկաշկանդ գործել ցանկացած իրավիճակում: Նման դեպքերում պետք է մոտենալ, ներկայացնել, ասել, թե ինչ են պատրաստվում անել: Դրանից հետո ներկաներից շատերը կդառնան առաջին օգնություն ցուցաբերողի օգնականները: Կարելի է նրանց ուղարկել ահազանգելու, օգնության համար անհրաժեշտ նյութեր բերելու եւ այլն:

3. Օգնություն ցուցաբերելիս շատերին կարող է խանգարել տուժածի վնասվածքի բնույթը: Արյունը, փսխուքը, պատառոտված կամ այրված մաշկը կարող են վանել գրեթե յուրաքանչյուրին: Նման դեպքերում, մինչեւ տուժածին օգնելը, պետք է մի պահ շրջվել եւ մի քանի անգամ խորը շունչ քաշել եւ կրկին փորձել օգնություն ցուցաբերել: Եթե վնասվածքի կամ հիվանդության բնույթը վանում է այնքան, որ հնարավոր չի լինում մոտենալ նրան, ապա պետք է փորձել օգնությունը կազմակերպել՝ ներկաներից ավելի

համարձակին հրահանգներ տալով:
4. Շատ մարդիկ խուսափում են առաջին օգնություն ցուցաբերել՝ վախենալով վարակվելուց: Շատերը հատկապես վախենում են վարակիչ հիվանդություններից՝ ՄԻԱՎ, ՁԻԱՀ-ից: Իհարկե, վարակվելու վտանգ կա, սակայն այն շատ ավելի փոքր է, քան ենթադրվում է: Ստորեւ բերված տարրական կանոններին հետեւելը գրեթե անհնարին է դարձնում այդ հիվանդությամբ վարակվելը:
Անհրաժեշտ է

- լվանալ ձեռքերն օճառով եւ ջրով օգնություն ցուցաբերելուց առաջ եւ հետո:
- խուսափել արյան կամ մարմնի այլ հեղուկների հետ անմիջական շփումից:
- աշխատել օգնություն ցուցաբերել ռետինե ձեռնոցներով:

Բացի թվարկածը՝ ամեն ոք կարող է ունենալ իրեն յուրահատուկ խանգարող հանգամանք: Նման հարցերի մասին նախապես մտածելը, ինքներդ ձեզ զանազան պատահարների դեպքում գործելուն մտովի նախապատրաստելը հնարավորություն կտան ավելի լավ կողմնորոշվելու եւ դժբախտ պատահարի դեպքում ճիշտ գործելու: Անհրաժեշտ է հիշել, որ տուժածների մեծամասնությունը փրկվում է պատահարի պահին դեպքի վայրում գտնվող անձանց առաջին օգնության հմուտ գործողությունների շնորհիվ: (5)

Դժբախտ պատահարի արդյունքում տուժածը կարող է լինել նյարդային, գրգռված եւ անհանգիստ վիճակում: Նա կարող է բացասաբար վերաբերվել օգնություն ցուցաբերող անձանց, որը, թերեւս, էլ ավելի կծանրացնի տուժածի վիճակը: Նա իրավունք ունի մերժելու կամ ընդունելու օգնությունը: Տուժածի համաձայնությունը ստանալու համար պետք է հայտնել նրան, թե ո՞վ եք դուք, ի՞նչ գիտելիքներ ունեք առաջին օգնություն ցուցաբերելու համար եւ ի՞նչ եք պատրաստվում անել: Ապա, եթե դեմ չէ, գործի անցեք: Երբ մոտենում եք տուժածին, աշխատեք գրավել այնպիսի դիրք, որ նա ձեզ տեսնի: Խոսեք հանգիստ, վստահ: Եթե տուժածը ձեզ թշնամաբար է վերաբերվում, մնացեք հանգիստ եւ փորձեք նրան բացատրել, որ պարզապես ցանկանում եք օգնել իրեն: Սակայն, եթե տուժածը թշնամական վերաբերմունքը չի փոխում, մի վիճեք նրա հետ եւ մի փորձեք ստիպելով օգնություն ցուցաբերել: Նրա ընկերը կամ ընտանիքի անդամը կարող են հանգստացնել նրան եւ համոզել, որ նա ընդունի ձեր օգնությունը: Հիշեք, առանց տուժածի համաձայնության չեք կարող նրան օգնել: Նման իրավիճակում ահազանգեք եւ հետեւեք դեպքերի հետագա ընթացքին՝ հնարավոր վտանգը կանխելու նպատակով:
Եթե տուժածը երեխա է, ապա նրան օգնություն ցուցաբերելու համաձայնությունը պետք է

ստանալ երեխային ուղեկցող չափահասից:
Համաձայնություն ստանալը պարտադիր չէ, եթե տուժածը՝
-անգիտակից է.
- հիվանդության կամ վնասվածքի պատճառով ի վիճակի չէ պատասխանելու.
- երեխա է՝ առանց չափահաս ուղեկցողի: (5)

Խուսափեք տուժածից թույլտվությունը ստանալու խիստ պաշտոնական ոճից. դա կարող է նրան անհասկանալի լինել: Ինքներդ կողմնորոշվեք յուրաքանչյուր դժբախտ պատահարի դեպքում տուժածից թույլտվություն ստանալու հարցում, սակայն միշտ անհրաժեշտ է խոսել տուժածի հետ եւ բացատրել, թե ինչ եք պատրաստվում անել:

Առաջին բուժօգնություն ցուցաբերողի պարտականությունները

Առաջին բուժօգնություն ցուցաբերողը պարտավոր է առաջին բուժօգնություն ցուցաբերելուց հետո տուժածին արագորեն հասցնել բուժհաստատություն:

Նա պետք է լինի արագաշարժ, սառնասիրտ, քաջ և ինքնավստահ, ինչպես նաև ունենա գիտելիք և հմտություններ:

Տուժածի հետ շփման «ոսկի կանոններից» են.

- Նախ գնահատի՛ր և համոզվի՛ր, որ դեպքի վայրը վտանգավոր չէ և կարելի է մոտենալ տուժածին: Եթե վտանգավոր է քո կյանքի համար, փորձի՞ր քայլեր ձեռնարկել վայրն անվտանգ դարձնելու համար:
- Տուժածին տեղափոխի՛ր ապահով վայր (հանի՛ր ջրից, այրվող շինությունից, հակառակորդի կրակի տակից և այլն):
- Կանչի՛ր օգնություն կամ որևէ մեկին ուղարկի՛ր օգնություն կանչելու: Շրջապատի մարդկանց խնդր՛ր օգնել քեզ:
- Հանգստացրու՛ տուժածին, քաջալերի՛ր նրան:
- Սկզբից հոգա՛ ամենալուրջ՝ կյանքին վտանգ սպառնացող վնասվածքների մասին:
- Մտածի՛ր, որ երևացող վնասվածքները միակը չեն, հնարավոր են նաև այլ թաքնված վնասվածքներ:
- Տուժածին նոր վնաս մի՛ հասցրու: Միջամտել՝ նշանակում է նրա համար որևէ օգտակար բան կատարել: Մի դեպքում դա կարող է լինել միայն օգնություն կանչելը, մեկ այլ դեպքում՝ առաջին բուժօգնություն ցուցաբերելը, երրորդ դեպքում՝ քաջալերելը:
- Մի՛ թող տուժածին միայնակ, բացառությամբ այն դեպքերի, երբ գնում ես օգնություն կանչելու:
- Մինչև օգնության հասնելը (կամ տեղափոխման ընթացքում) վերահսկի՛ր տուժածի վիճակը՝ մշտապես պատրաստ լինելով օգնության: (3, էջ 96)

Առաջին բուժօգնություն ցուցաբերելիս խանգարող հանգամանքներից է վախի զգացումը:

Որպեսզի մարդը կարողանա հաղթահարել վախը, նա պետք է ունենա գիտելիքների պաշար, վստահ լինի իր գործողություններում, խուճապի չմատնվի, կենտրոնանա և ընդունի առավել նպատակահարմար գործողություններ:

Անվտանգության ապահովում տարբեր արտակարգ իրավիճակներում

Արդյունավետ առաջին օգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ է կարողանալ կողմնորոշվել տարբեր արտակարգ իրավիճակներում: Ժամանակին եւ ճիշտ ձեռնարկված առաջին օգնության քայլերը տուժածի կյանքի համար կարեւոր նշանակություն ունեն:

Ցանկացած արտակարգ իրավիճակում, մինչեւ որեւէ գործողության դիմելը, անհրաժեշտէ մի պահ կանգ առնել, սառնասրտորեն մտածել կատարվածի մասին, գնահատել իրավիճակը, ապա ծրագրել հետագա գործողությունները՝ դրանք համապատասխանեցնելով առկա պայմաններին եւ հնարավորություններին:

Առաջին հերթին ուշադիր պետք է զննել դեպքի վայրը՝ դա կօգնի գնահատել իրավիճակը եւ հասկանալո, թե ինչ է պատահել: Պետք է պարզել տվյալ դժբախտ պատահարի պատճառները, փորձել գտնել հետեւյալ հարցերի պատասխանները.

- Ի՞նչ է պատահել:
- Ի՞նչ վտանգ կա:
- Քանի՞ տուժած կա:
- Կարո՞ղ են դեպքի վայրում ներկա գտնվող մարդիկ օգտակար լինել: (2, էջ 12)

Մոտենալով դեպքի վայրին՝ պետք է վստահ լինել, որ այն անվտանգ է ուշադիր փնտրել այն ամենն, ինչը կարող է վտանգավոր լինել տուժածի եւ ներկաների համար: Վտանգ են ներկայացնում ընկած հաղորդալարերը, փլուզման ենթակա շինությունները, երթեւեկող մեքենաները, հրդեհը, ծուխը, թունավոր նյութերը եւ գազերը, անբարենպաստ եղանակային պայմանները, արագ հոսող կամ խորը ջրերը եւ այլն:

Տարբեր պատահարների դեպքում անվտանգության ապահովումը տարբեր է լինում: Անհրաժեշտ է քննարկենլ, թե ինչպես է պետք ապահովել անվտանգությունն ավելի հաճախ հանդիպող վտանգավոր իրավիճակներում:

Եթե առաջին բուժօգնություն ցուցաբերող անձը մեքենայով է, ապա պետք է մեքենան կանգնեցնի վթարից առնվազն 10 մետր հեռավորության վրա, մեքենաների հետագա բախման վտանգը նվազեցնելու նպատակով վթարից որոշ հեռավորության վրա տեղադրի նախազգուշացնող նշաններ կամ խնդրի շրջապատող անձանց փակել կամ փոխել երթեւեկության ուղղությունը: Ավտովթարի ժամանակ կարող է պայթունավտանգ իրավիճակ ստեղծվել, պետք է առանց ժամանակ կորցնելու կողմնորոշվել եւ

տուժածներին շտապ տեղափոխել դեպքի վայրից, արգելեք ծխել կամ կրակ վառել դեպքի վայրում, քանի որ դրանք կարող են հրդեհի կամ պայթյունի պատճառ դառնալ:

Մեկ այլ իրավիճակում մարդը կարող է հոսանքից հարված ստանալ՝ դիպչելով հոսանքի վնասված լարերին կամ անսարք էլեկտրասարքերին: Մինչեւ տուժածին մոտենալն անհրաժեշտ է անջատել հոսանքի աղբյուրը (հոսանքազրկել էլեկտրասարքը, անջատել հիմնական անջատիչը եւ այլն), իսկ եթե դա անհնար է, ապա լարը կամ սարքը տուժածից հեռացնել որեւէ մեկուսիչ նյութից պատրաստված հարմարանքի օգնությամբ: Բարձր լարման հոսանքի դեպքում, եթե կա կտրված, ընկած բարձր լարման հաղորդալարեր, ապա անհրաժեշտ է հեռացնել շրջապատող մարդկանց ընկած հաղորդալարից առնվազն 6 մետր հեռավորության վրա, քանի որ բարձր լարման աղեղը կարող է ազդել մինչեւ այդ հեռավորությունը: Տուժածին կարելի է մոտենալ միայն այն դեպքում, երբ կա վստահություն, որ վթարային ծառայությունները հոսանքազրկել են տվյալ հատվածը:

Եթե հաղորդալարն ընկած է մեքենայի վրա, ապա մեքենայում գտնվող անձանց անհրաժեշտ է խնդրել դուրս չգալ, քանի որ նրանք մեքենայի անվադողերի շնորհիվ հուսալի մեկուսացված են: Պետք չէ մոտենալ կամ տուժածներին դուրս բերել մեքենայից, հեռացնել հաղորդալարը, նույնիսկ մեկուսիչ նյութից պատրաստված հարմարանքի միջոցով, քանի որ առաձգականության պատճառով հոսանքալարը կարող է շպրտվել անցանկալի ուղղությամբ՝ առաջացնելով լրացուցիչ դժվարություններ:

Յուրաքանչյուր իրավիճակում դեպքի վայրի զննման ժամանակ անհրաժեշտ է ստուգել վտանգավոր նյութերի առկայությունը, ուշադրություն դարձնել այդտեղ գոլորշու քուլաների, թափված հեղուկի կամ այլ նյութերի, շշերի ու գազի բալոնների եւ արտասովոր հոտերի վրա, հնարավորության դեպքում հեռացնել վտանգավոր նյութերը տուժածից, ինչպես նաեւ՝ շրջապատի հետաքրքրասերներից, հատկապես երեխաներից:

Վտանգավոր նյութեր տեղափոխող մեքենաների կամ բեռնարկղերի վրա փակցված են լինում նյութի թունավորության եւ վտանգավորության մասին տեղեկացնող վահանակներ: Նման մեքենաների վթարի դեպքում անհրաժեշտ է ահազանգել եւ մանրամասն տեղեկացնել վահանակի վրա գրված ցուցանշանների մասին:

Եթե ենթադրվում է, որ դեպքի վայրում առկա են թունավոր գոլորշիներ, ապա պետք է կանգնել այնպես, որ քամին փչի օգնողի կողմից: Եթե դեպքը տեղի է ունեցել շինությունում, եւ ենթադրվում է, որ այնտեղ կարող են լինել վտանգավոր գազեր, ապա պետք է խուսափել ներս մտնելուց:

Հրդեհի դեպքում անհրաժեշտ է անմիջապես ահազանգել հրշեջ ծառայություն:
Հրդեհի ժամանակ վտանգավոր են եւ՛ բոցը, եւ՛ ծուխը, եւ՛ թունավոր գազերը:
Եթե ենթադրվում է, որ շինությունում հրդեհ է, դուռը բացելուց առաջ ափով զգուշությամբ պետք է հպվել դռանը եւ ստուգել ջերմաստիճանը: Դուռը պետք չէ բացել, եթե այն տաք է, անհրաժեշտության դեպքում դուռը բացելիս անմիջապես մի կողմ քաշվել եւ շրջել դեմքը, որպեսզի հնարավոր լինի պաշտպանվել ճնշման տակ դուրս եկող տաք օդի հարվածային ալիքից կամ բոցից: Եթե սենյակում ծուխ կա, ապա քթի եւ բերանի մոտ պետք է պահել խոնավ գործվածք եւ աշխատել հնարավորին չափ մոտ գտնվել հատակին, քանի որ տաք օդը եւ ծուխը թեթեւ են ու վեր են բարձրանում:

Առաջին բուժօգնություն ցուցաբերող անձը չպետք է փորձի ջրում տուժածին փրկել՝ վտանգի ենթարկելով իր կյանքը: Կարելի է հանել տուժածին՝ ջրից նրան որեւէ իր նետելով կամ մեկնելով: Դա կարող է լինել ձող, կամ պարանին կապած փրկարար օղակ, պլաստիկ տարա եւ այլն:

Գտնվելով բռնության հետեւանքով ստեղծված արտակարգ իրավիճակում՝ պետք է գործել այնպես, որ ապահովի տուժածի եւ մյուս անձանց անվտանգությունը: Պետք չէ մոտենալ, եթե դեպքի վայրը վտանգավոր է: Իսկ եթե այն անվտանգ է, անհրաժեշտ է ցուցաբերել համապատասխան օգնություն, սակայն առանց անհրաժեշտության ձեռք չտալ իրերին: Հետաքննության համար այդ իրերը կարեւոր նշանակություն ունեն:
Եթե դեպքի վայրում գտնվող անձը զինված է, պետք չէ մոտենալ նրան, պետք է մնալ հանգիստ, չվիճել նրա հետ, աշխատել լսել, թե ինչ է ասում նա, փորձել հանգստացնել նրան: Վտանգավոր է ուժով զանքը խլել փորձելը, դրանով հնարավոր է միայն վնաս հասցնել:
Եթե չի ստացվում ապահովել անվտանգությունը, դեպքի վայր դեպքի վայր մտնել չի կարելի: Նման իրավիճակներում գործելը պետք է թողնել մասնագիտացված փրկարարներին, որոնք ունեն համապատասխան փորձ, գիտելիքներ, հմտություններ եւ սարքավորումներ՝ վտանգին դիմակայելու, այն վերացնելու եւ տուժածին փրկելու համար: Մինչեւ մասնագիտացված օգնության ժամանումը անհրաժեշտ է մնալ անվտանգ հեռավորության վրա եւ չթողնել կողմնակի անձանց մոտենալ դեպքի վայրին: Եթե իրավիճակը փոխվի, եւ պայմանները դառնան անվտանգ, կարելի է գործել ըստ իրավիճակի:

Առաջին բուժօգնությունը առավել հաճախ հանդիպող արտակարգ իրավիճակներում

Առավել հաճախ հանդիպող արտակարգ իրավիճակներում ցուցաբերվող առաջին բուժօգնության քայլերն են.

Արյունահոսություն

1. Մազանոթային արյունահոսություն

Արյունահոսող շրջանը լվանալ մաքուր ջրով, ջրածնի պերօքսիդով և ամուր սեխմել, որպեսզի արյունահոսությունը դադարի:

2. Երակային արյունահոսություն

Երակային արյունահոսությունը տարբերվում է արյան մուգ գույնով և հոսքով:

Անհրաժեշտ է վնասված վերջույթըբարձրացնել վեր՝պահել բարձր դիրքում:Բացի այդ վերքին դնել սեղմիչ վիրակապ:

3. Զարկերակային արյունահոսություն

Երակայինից տարբերվում է վառ կարմիր գույնով և դուրս է գալիս շիթով:

Ձեռքի կամ ոտքի զարկերակներ արյունահոսության դեպքում անհրաժեշտ է վերջույթը ծալել և անշարժ պահել այդ դիրքով: Բացի, այդ վերքից վեր պետք է դնել կտորից կամ այլ նյութից պատրաստված սեղմիչ վիրևակապ՝ոլորելով: Ոլորիչ դնելու ժամանակը պետք է լավ ֆիքսել, որովհետև երկու ժամ անց հյուսվածքները կարող են սկսել մահանալ արյան մատակարարման խանգարման հետևանքով:

4. Քթի արյունահոսություն

Քթային արյունահոսությունների պատճառ կարող են լինել գլխի վնասվածքը, արյան ճնշման բարձրացումը, մարմնի գերտաքացումը: Քթի արյունահոսության

դեպքում արյունը կարող է լցվել խոռոչ, որից առաջանում է հազ, երբեմն՝փսխումներ:

Այդ պատճառով անհրաժեշտ է գլուխը պահել առաջ և կախել, քթարմատին դնել սառը և դնել ջրածնի պերօքսիդի տամպոն:

Կոտրվածքներ

Կոտրվածքը ոսկրի անատոմիական ամբողջականության խախտում է, կամ, ավելի պարզ ասած՝ ոսկրի կոտրվածք:

Բժիշկները տարբերում են բաց (երբ մաշկի ամբողջականությունը վնասել է) և փակ, լրիվ և ոչ լրիվ (ճեղքվածք):



- Անշարժացնել վնասված շրջանը. չի կարելի ուղղել վնասված վերջույթը կամ մաշկից դուրս ցցված ոսկորը ներս մտցնել: Պարզապես մեկական շինա (կամ շինային փոխարինող որևէ առարկա, օրինակ՝ փայտի կտոր) դնել վնասված շրջանից վերև ու ներքև այնպես, որ հնարավորինս սահմանափակվի տվյալ շրջանի շարժունակությունը:
- Եթե կա նաև վնասված անոթ և արյունահոսություն՝դադարեցնել արյունահոսորթյունը և սպասել շտապօգնությանը: (4)

Այրվածքներ

Այրվածքները մաշկի ամենահաճախ հանդիպող վնասվածքներից մեկն են: Կարող են առաջանալ՝

• տաք հեղուկներից

• արևայրուքից

• քիմիական նյութերից

• էլեկտրական այրվածքներ

• կրակից, օրինակ՝մոմերից, կրակայրիչից և այլն

Գոյություն ունի 4 աստիճանի այրվածք՝

✓ 1-ին աստիճանի այրվածք՝ մաշկի կարմրութուն, բորբոքվածություն, թեփոտում

✓ 2-րդ աստիճանի այրվածք՝ բշտեր, ցավ, մաշկը լավանում է առանց սպիացման

✓ 3-րդ աստիճանի այրվածք՝ մաշկի խորը վնասում, բշտեր, նեկրոզ, մաշկը լավանում է սպիացմամբ

✓ 4-րդ աստիճանի այրվածք՝ ծանր այրվածքներ, որոնք ընդգրկում են ջլերը, մկաններն ու ոսկորները, կարող են ավարտվել վերջույթի անդամահատումով

Ինչ անել այրվածների ժամանակ

1. Սառեցնել մաշկը: Սառը հոսող ջուրը կօգնի նվազեցնել մաշկի բորբոքվածությունն ու ցավը:

2. Օգտագործել պանտենոլ և հակաբիոտիկային քսուք: Դրանք կօգնեն նվազեցնել քորը, բորբոքումը և կպաշտպանեն վերքն ինֆեկցիայից:



3. Ծածկել այրվածքը ստերիլ թանզիֆով: Ծանր աստիճանի այրվածքների դեպքում հարկավոր է դիմել մաշկաբանի կամ համապատասխան ոլորտի մասնագետի՝ որակավորված բուժում ստանալու համար:

Խորը այրվածքների բարդութուններն են՝

•բակտերիալ վարակ

•սպիացում

•օրգանիզմում շրջանառվող հեղուկի կորուստ
•մարմնի ջերմաստիճանի կրիտիկական անկում
•ներքին օրգանների խնդիրներ
•հոդերի, մկանների և ոսկորների խնդիրներ
•վերջույթների ամպուտացիա

Ինչ չի կարելի անել այրվածքների դեպքում

Երբեք չի կարելի փորձել այրվածքի վրա քսել ձեթ, յուղ կամ նման այլ միջոցներ: Դրանք, պատելով այրված մակերեսը, խանգարում են ջերմատվությանը: Արդյունքում այրվածքը ծանրանում է: Այս միջոցները կարող են նաեւ վարակի աղբյուր հանդիսանալ: Բացի այդ, պատելով այրված մակերեսը, դրանք փոխում են այրվածքի տեսքը, դժվարացնում ախտորոշումը եւ բուժումը:

Եզրակացություն

Հետազոտության հիմնախնդիրների հանգամանալից ուսումնասիրության արդյունքում եկանք այն եզրակացության, որ առաջին բուժօգնությունը իրականացվում է դեպքի վայրում՝ ինքնաօգնության և փոխօգնության կարգով՝ հիմնականում օգտագործելով ձեռքի տակ եղած միջոցներ և նպատակ ունենալով պահպանել տուժածների կյանքն ու կենսագործունեությունը:

Տիրապետելով տարբեր արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնության հիմունքներին, յուրաքանչյուր մարդ կկարողանա ստացած գիտելիքները ոչ միայն կիրառել շրջապատում՝ նվազեցնելով դժբախտ պատահարների հետևանքները, այլև դրանով իսկ կնպաստի բարության և մարդասիրական հատկանիշների ձևավորմանը, կոլեկտիվում առողջ մթնոլորտի ամրապնդմանը:

Մարդու կյանքին և առողջությանը վնասող հիմնական գործոններն են՝

- ֆիզիկական գործոններ
- ջերմային գործոններ
- ռադիոակտիվ ճառագայթում
- քիմիական վնասակար նյութեր
- կենսաբանական միջոցներ:

Այս գործոնները կարող են ազդել կամ միաժամանակ, կամ էլ հաջորդաբար՝ առաջ բերելով տարբեր աստիճանի համակցված և բազմակի վնասվածքներ:

Մարդու կյանքին և առողջությանը կարող են վտանգ սպառնալ նաև մի շարք հիվանդություններ, որոնցից առավել տարածված են սիրտանոթային հիվանդությունները: Դրանց հետևանքով մահացությունն ամբողջ աշխարհում գրավում է առաջին տեղը և հանդիսանում է սրտի հանկարծակի կանգի հիմանական պատճառներից մեկը:

Արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնության կոնկրետ միջոցառումները կախված են վնասող գործոնից և վնասվածքների բնույթից:

Ելնելով կեսական ցուցման անհրաժեշտությունից, հարկ է լինում կատարել հետևյալ գործողությունները՝ սիրտ-անոթային վերակենդանացում, շնչուղիներից օտար մարմինների հեռացում, արյունահոսության դադարեցում և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ի. Է. Դանիելյան, Մ. Զ. Նարիմանյան, Առաջին բուժօգնություն, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան
2. Հ. Մ. Գրիգորյան, «Առաջին բուժօգնություն: Ուսումնական ձեռնարկ մանկավաժական բուհերի համար», Երևան, հեղինակային հրատարակություն, 2013-224 էջ
3. Վ. Օհանյան, Ս. Մարգարյան, Վ. Առաքելյան, Հ. Գաբրիելյան, Լ. Ղազարյան, Վ. Աստանյան, Ռ. Ալավերդյան, Հ. Մաթևոսյան, Ա. Վիրաբյան, Ս. Հովհաննիսյան «Նախնական զինվորական պատրաստություն» դասագիրք, Երևան 2014, 122 էջ
4. https://adme.media/zhizn-nauka/gid-po-okazaniyu-pervoj-pomoschi-952310/#image31649815
5. http://www.emergency.am/am/Arajin_ognutyun?id=641
6. http://www.medichealthnetwork.com/Arajin-Bujognutyun.html

ՀՀԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ֆիդայական շարժում

Կատարող՝ Գագիկ Քարհանյան
Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոցի
ռազմագիտության ուսուցիչ

Մասնագիտություն՝ Ռազմագիտություն

Ղեկավար՝ Վաղինակ Նազարյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
2. ՄԱՍԵՐ
3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
4. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ֆիդայական ազգային-ազատագրական, հակաավատատիրական, ժողովրդավարական շարժումն իր բնույթով պարտիզանական էր՝ նման XV–XIX դարերում թուրքական նվաճողների դեմ բալկանյան ժողովուրդների հայդուկային պայքարին: Առաջացել է Արևմտյան Հայաստանում, տարերայնորեն, 1880-ական թվականների կեսին՝ հայ ազգային կուսակցությունների հրապարակ գալուց առաջ: Առաջին խմբերն ստեղծվել են Տարոնում, Վասպուրականում, Կեսարիայում և այլ վայրերում: Առավել հայտնի են Մարգար Վարժապետի (Մարգար Ամիրյան), Արաբոյի (Առաքել, Ստեփան Մխիթարյան), Ռուբեն Շիշմանյանի (Դերսիմի Քեռի), Գալուստ Արխանյանի (Մնձուրի Առյուծ), Արամ Աչըքպաշյանի (Գրիգոր Կարապետյան), Մինասօղլու (Հովհաննես Մինասյան) խմբերը, հայդուկապետ Մեծ Չելլոն (Թորոս Ծառուկյան) և ուրիշներ: Այս շրջանում ֆիդայիների որոշ ղեկավարներ (Արամ Աչըքպաշյան և ուրիշներ) փորձել են համաձայնեցնել կամ նույնիսկ միավորել անջատ-անջատ հայդուկային խմբերի գործողությունները: Սակայն շոշափելի արդյունքի չեն հասել: Չի իրականացել որոշ հայ գործիչների գաղափարը՝ Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների, մասնավորապես քրդերի ազգային-ազատագրական շարժման հետ դաշինք ստեղծելը:

Ֆիդայիներն զգալի աշխատանք են կատարել հայ ժողովրդի 2 հատվածների միջև կապերն ամրապնդելու համար. Այցելել են Թիֆլիս, տեսակցել արևելահայ նշանավոր գործիչների հետ, նրանց օգնությամբ զենք ու զինամթերք ձեռք բերել, կամավորներ հավաքագրել Արևմտյան Հայաստան ուղարկելու համար:

1880–90-ական թվականներին կովկասաբնակ և ռուսաստանաբնակ հայերի շրջանում մեծացել է հետաքրքրությունն արևմտահայերի ազատագրական պայքարի նկատմամբ, և ծավալվել է օգնության շարժումը: Հայ երիտասարդները (հիմնականում՝ ուսանողներ) Թուրքիային սահմանակից շրջաններում (Ալեքսանդրապոլ, Կարս, Երևան, Իգդիր, Ախալցխա և այլն) կազմել են հայդուկային խմբեր և, զենք ու զինամթերքով զինված, փորձել են անցնել Արևմտյան Հայաստան. Հայտնի են Վարդան Գոլոշյանի, Սարգիս Կուկունյանի նախաձեռնությունները: Կազմակերպվել են նաև զինատար խմբեր, որոնք զենք են փոխադրել Ռուսաստանից, Այսրկովկասից, Իրանից:

2. ՖԻԴԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Հայ ազգազատագրական պայքարին բնորոշ է նաև ֆիդայական կամ հայդուկային շարժումը (անունը ծագել է բալկանյան ժողովուրդների հակաթուրքական պարտիզանական՝ հայդուկային պայքարի անվանումից, իսկ «ֆիդայի» կամ «ֆեդայի» արաբերեն բառ է, նշանակում է «զոհ», բայց ընկալվում է «անձնազոհ» իմաստով)։ Շարժումն առաջացել է Արևմտյան Հայաստանում՝ տարերայնորեն (թելադրված էր հայ ժողովրդի քաղաքական և տնտեսական ծանր ու օրհասական վիճակով) 1880-ական թվականների կեսերին՝ հայ ազգային կուսակցությունների հրապարակ գալուց առաջ։ Զինվորագրվելով հայրենիքի ազատագրությանը՝ ֆիդայիները երդվել են. «Այսուհետև իմ բարձը լինելու է Հայաստանի լեռները, իսկ բաղձալի երազանքը՝ հայրենիքի համար մեռնելը»։ Ռաֆֆին նրանց անվանել է ժողովրդական վրիժառուներ ու հեղափոխականներ։ Հայ առաջին ֆիդայիներից էին Կարապետը՝ Սեբաստիայում, և ֆիդայական շարժման ռահվիրա Արաբոն (Առաքել, Ստեփանոս Մխիթարյան)՝ Սասունում։ Առաջին հայդուկային խմբերն ստեղծվել են Տարոնում, Սասունում, Վասպուրականում, Կեսարիայում։

Առավել հայտնի են Մարգար Վարժապետի (Մարգար Ամիրյան), Արաբոյի, Ռուբեն Շիշմանյանի (Դերսիմի քեռի), Գալուստ Արխանյանի (Մնձուրի առյուծ), Արամ Աչըքպաշյանի (Գրիգոր Կարապետյան), Մինասօղլու (Հովհաննես Մինասյան) խմբերը։ 1880-ական թվականների վերջին Սեբաստիայի վիլայեթում կազմավորվել են զինված ջոկատներ՝ չելլոներ, որոնք ներկայացել են իբրև քրդեր (թուրքերի վրեժխնդրությունը հայերի նկատմամբ չսրելու համար)։ Այս շրջանում որոշ ֆիդայապետներ (Արամ Աչըքպաշյան և ուրիշներ) փորձել են համաձայնեցնել կամ նույնիսկ միավորել անջատ գործող հայդուկային խմբերի գործողությունները։ Սակայն շոշափելի արդյունքի չեն հասել։ Չի իրականացել որոշ հայ գործիչների գաղափարը՝ օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների, մասնավորապես քրդերի ազգազատագրական շարժման հետ դաշինք ստեղծելը։

Ֆիդայիների՝ ժողովրդին միավորելու փորձերը

Ֆիդայիներն զգալի աշխատանք են կատարել հայ ժողովրդի 2 հատվածների միջև կապերն ամրապնդելու համար, այցելել են Թիֆլիս, տեսակցել արևելահայ նշանավոր գործիչների հետ, նրանց օգնությամբ զենք ու զինամթերք ձեռք բերել, կամավորներ

հավաքագրել Արևմտյան Հայաստան ուղարկելու համար։ 1880-90-ական թվականներին կովկասաբնակ և ռուսաստանաբնակ հայերի շրջանում մեծացել է հետաքրքրությունն արևմտահայերի ազատագրական պայքարի նկատմամբ, և ծավալվել է օգնության շարժում։ Հայ երիտասարդները (հիմնականում՝ ուսանողներ) Թուրքիային սահմանակից շրջաններում (Ալեքսանդրապոլ, Կարս, Երևան, Իգդիր, Ախալցխա և այլն) կազմել են հայդուկային խմբեր և զենք ու զինամթերքով զինված փորձել են անցնել Արևմտյան Հայաստան, հայտնի են Սարգիս Կուկունյանի, Վարդան Գոլոշյանի նախաձեռնությունները։ Կազմակերպվել են նաև զինատար խմբեր, որոնք զենք են փոխադրել Ռուսաստանից, Այսրկովկասից, Իրանից։

Արևմտյան Հայաստանի ազատագրումը

1890-ական թվականների սկզբից Արևմտյան Հայաստանում նոր թափ են ստացել ազատագրական շարժումը, զինված ելույթներն ու ինքնապաշտպանական մարտերը՝ պայմանավորված հնչակյան և դաշնակցություն կուսակցությունների ստեղծումով ու Արևմտյան Հայաստանում նրանց տեղական կազմակերպությունների տարածմամբ։ Ազգային կուսակցությունների հիմնական, նպատակը Հայկական հարցի լուծումն էր՝ Արևմտյան Հայաստանի ազատագրումը, հետևաբար նրանք տեղերում համագործակցել են հայդուկային խմբերի հետ՝ շարժմանը տալով համազգային բնույթ։ Կուսակցությունները ֆիդայիներին նախապես համարել են իրենց մարտական, ուժը, իսկ ֆիդայիները պատրաստ էին ընդունելու նրանց գաղափար, ղեկավարությունը։ Ֆիդայիների՝ հնչակյաններին կամ դաշնակցականներին հարելը սկզբնական շրջանում պայմանավորված էր նրանով, թե այդ կուսակցություններից որն էր ազդեցիկ Արևմտյան Հայաստանի այս կամ այն շրջանում։

1890-ական թվականների 2-րդ կեսից ՀՅԴ-ն, հասարակականքաղաքական կյանքում դառնալով ամենաազդեցիկը, ղեկավարել է հայդուկային շարժումը, և բազմաթիվ ֆիդայիներ դարձել են դաշնակցության անդամներ։ Շարժումը ծավալվել էր նաև Կիլիկյան Հայաստանում։ Աբդուլ Համիդյան ջարդերի ժամանակ (մեծ չափերի է հասել Արաբո (Առաքել, Ստեփանոս Մխիթարյան, 1863-1893) Աղբյուր Սերոբ (Վարդանյան, 1864-1899) Սոսե Մայրիկ (Վարդանյան, 1868-1953)։

Քրդական ցեղերն ու ցեղապետերն ընդդեմ հայերի

1894-96 թվականին ֆիդայիները գործուն մասնակցություն են ունեցել հայերի ինքնապաշտպանությանը Խլաթում, Սասունում, Վանում, Շապին-Գարահիսարում և այլուր։ Ֆիդայիների հաջող գործողությունները նորից հույս են ներշնչել Արևմտյան Հայաստանում ընդհանուր ապստամբություն նախապատրաստելու և սկսելու, ինչպես նաև սուլթանական բռնության դեմ կայսրության բոլոր ճնշված ժողովուրդների միացյալ ճակատ ստեղծելու համար։ Սակայն քրդերի հետ միություն կազմելու փորձն արդյունք չի տվել։ Ավելին, Թուրքիայի կառավարող շրջաններին հաջողվել է իրենց կողմը գրավել քրդական ցեղերին ու ցեղապետներին՝ ընդդեմ հայերի։

Հայտնի են Բաբշենի (1898), Խաստուրի (1899), Սպաղանքի (1899 և 1900), Ցրոնքի (1899), Բերդակի, Նորշենի, Առաքելոց վանքի (Երեքն էլ՝ 1901) կռիվները։ Ֆիդայական շարժման նշանավոր դեմքերից են Աղբյուր Սերոբը (Սերոբ Վարդանյան), Անդրանիկ Օզանյանը, Գևորգ Չավուշը (Գևորգ Ղազարյան), Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան), Ժիրայրը (Հարություն-Մարտիրոս Պոյաճյան), Հրայր Դժոխքը (Արմենակ Ղազարյան), Սպաղանաց Մակարը (Մակար Տոնոյան), Վազգենը (Տիգրան Տերոյան), Գուրգենը (Բաղդասար Մալյան), Քեռին (Արշակ Գավաֆյան), Իշխանը (Հովսեփ Արղության) և ուրիշներ։

1904 թվականի Սասունի ապստամբություն

Ֆիդայական շարժման պոռթկում էր 1904 թվականի Սասունի ապստամբությունը, որի ընտրված ղեկավար մարմնի՝ զինվորական խորհրդի կազմում էին Անդրանիկը (ղեկավար), Գևորգ Չավուշը, Սեպուհը (Արշակ Ներսիսյան), Սեբաստացի Մուրադը (Մուրադ Խրիմյան), Կայծակ Առաքելը (Տիգրան Աբաջյան) և ուրիշներ։ 20 դարի սկզբին դաշնակցականները և հնչակյանները շարունակել են կազմակերպել հայդուկային ու զինատար խմբեր և տեղափոխել Արևմտյան Հայաստան՝ Այսրկովկասից ու Իրանից։ Սակայն ճանապարհին նրանց խոչընդոտել են ինչպես թուրքերը, այնպես էլ ռուս սահմանապահները և հաճախ ձախողել այդ ձեռնարկումները։

1903 թվական

1903 թվականի գարնանը սահմանն անցած դաշնակցական ջոկատներից միայն Թորգոմի (Թուման Թումյանց) և Մենակի (Եգոր Առուստամյան) «Մրրիկ» հեծելախմբին (33 մարդ) է հաջողվել մայիսի վերջին հասնել Սասուն։ Սեպտբերի

սկզբին Գերմանիայում սովորող Աբրահամյանը 50-հոգանոց զինված խմբով փորձել է անցնել սահմանը, սակայն ձերբակալվել է։ Սեպտեմբերի 30-ին «Կայծակ» հեծելախումբը (53 մարդ) Բասենում ընդհարվել է թուրքական ջոկատների հետ։

1904 թվական մայիսի վերջ

1904 թվականի մայիսի վերջին Աշոտ Երկաթի (Արմենակ Լևոնյան) և քղեցի Պողոսի (Թոխմախ) խումբը (35 մարդ) Իգդիրից Սասուն գնալիս Արճեշի Սոսկուն գյուղի մոտ ընդհարվել է քրդերի հետ, ընկել թուրք, բանակի շրջափակման մեջ և զոհվել։ Հունիսին Կայծակի (Վաղարշակ Բաղդասարյան) «Դժոխք» հեծելախումբը (29 մարդ) Արևմտյան Հայաստան անցնելիս Զևինի մոտ կռվի է բռնվել թուրք զինվորների ու քրդերի հետ և պարտվել։ Նույն ամսին Նիկոլ Դումանի հեծելախումբը (18 մարդ), սահմանագլխին բախվելով թուրք, զինված ուժի հետ, ցրվել է և վերադարձել Իրան։ Հուլիսի 24-ին 102-հոգանոց մի խումբ Գայլ Վահանի (Մինաս Տոլպաշյան) և Կապիտան Բաբկենի (Նիկողայոս Տեր-Խաչատրյան) ղեկավարությամբ անցել է սահմանը։ «Սրտավազդ» խումբը Գայլ Վահանի գլխավորությամբ շարժվել է դեպի Մոսուն գյուղ, իսկ «Մասիսը» Միհրանի (Գաբրիել Քեշիշյան) գլխավորությամբ՝ դեպի Զոր։ Թշնամու հետ ընդհարվելով՝ խումբը հետ է դարձել, անցել սահմանը և ցրվել։

Խանասորյան սերունդ

Արևմտահայերին օգնության շտապող խմբերը կազմակերպվել են հապճեպ՝ առանց գործողությունների մշակված ծրագրերի, հաշվի չեն առնվել առկա պայմաններն ու հնարավորությունները, որոնք էլ դարձել են անհաջողությունների պատճառ։ Եղել են նաև վրեժխնդրության և առանձին թուրքական ու քրդական խմբեր ոչնչացնելու նպատակով կազմակերպված հայդուկային արշավանքներ, առավել հայտնի է Խանասորի արշավանքը (1897), որի մասնակիցները հայտնի են «խանասորյան սերունդ», իսկ ընդհանուր հրամանատար Վարդանը (Սարգիս Մեհրաբյան)՝ Խանասորի Վարդան անուններով։

1904 թվական ֆիդայական շարժում

1904 թվականի Սասունի ապստամբությունից հետո ֆիդայական շարժումն սկսել է թուլանալ։ Մնալով հիմնականում որպես առանձին խմբերի գործողություններ (1905 թվականի Ալվառինջի, 1907 թվականի Մուլուխի կռիվներ)՝ հայդուկային շարժումն անկում է ապրել։ Շարժման ելքը կանխորոշել են գործող պատմության ուղղությունների

միասնական ծրագրի բացակայությունը, ուժերը միավորելու ապարդյուն փորձերը, ինչպես նաև թշնամու ուժերի գերակշռությունը: Այդուհանդերձ, ֆիդայական շարժումը ժողովրդին նախապատրաստել է ազատագրական պայքարի, զսպել է թուրք պաշտոնյաներին ու քուրդ աղաներին, մեղմել և նույնիսկ վերացրել է նրանց գործադրած բռնությունները:

Երիտթուրքական հեղաշրջումից (1908) հետո ֆիդայիներին ներում է շնորհվել, և նրանց մի մասն իջել է լեռներից ու անցել խաղաղ աշխատանքի: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին ֆիդայիների զգալի մասը մտել է հայկական կամավոր, ջոկատների մեջ, իսկ մեծ եղեռնի օրերին մասնակցել է հայերի ինքնապաշտպան, մարտերին:

1895 թվական Արևմտյան Հայաստանում գործող ֆիդայական ջոկատների հրամանատարություն

Աղբյուր Սերոբ 1864, գ. Սոխորդ (Բիթլիսի նահանգ, Խլաթ գավառ)- 1899], 1895 թվականից ստանձնել է Արևմտյան Հայաստանում գործող ֆիդայական ջոկատների ընդհանուր հրամանատարությունը: Բազմաթիվ մարտերում տարած հաղթանակների համար նրան անվանել են «Նեմրութի հսկա» կամ «Ասլան»: 1899 թվականին Սասունի Գելիեգուզան գյուղում քուրդ ցեղապետ Բշարե Խալխը Գեղաշենի գյուղապետի՝ Ավեի միջոցով թունավորել է Սերոբին, ապա թուրքական զորքերը պաշարել են Սերոբի տունը, սպանել մահամերձ ֆիդայապետին, նրա թիկնապահներ Մխեին, Զաքարին ու 12-ամյա որդուն՝ Հակոբին: Հայերի շրջանում սարսափ տարածելու նպատակով թուրքերը կտրել են Սերոբի գուխը և այն շրջել Սասունի գյուղերով: Սերոբի կինը՝ խմբի միակ կին հայդուկ Սոսեն (ժողովուրդը նրան օծել է Մայրիկ պատվանունով), շարունակել է ամուսնու հայրենանվեր գործը: 1900 թվականին Աղբյուր Սերոբի զինվորներ Գևորգ Չաուշ ու Անդրանիկը ոչնչացրել են դավաճան Ավեի ողջ գերդաստանը և սպանել Բշարե Խալխին:

Գևորգ Չավուշ [1870, գ. Մկթնեք (Սասունի գավառ) - 1907, արդեն 1894 թվականին ճանաչված ֆիդայի էր և Սասունի ինքնապաշտպանության ղեկավարներից: 1896 թվականին փախչելով բանտից՝ միացել է Աղբյուր Սերոբի և Հրայր Դժոխքի ջոկատներին: 1901 թվականին մասնակցել է Առաքելոց վանքի

կռվին, 1904 թվականին՝ Սասունի ապստամբությանը: Զոհվել է 1907 թվականի մայիսի 27-ին՝ Սոզուխի (Մշո գավառ) կռվում:

Անդրանիկ Օզանյան. փառաբանված հայդուկապետն ու զորավարը

Անդրանիկ Օզանյան (1865, քաղաք Շապին- Գարահիսար (Սեբաստիայի նահանգ)- 1927, քաղաք Ֆրեզնո (Կալիֆոռնիայի Նահանգ, ԱՄՆ), 1928 թվականին աճյունը տեղափոխվել է Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատուն, 2000-ին՝ Երևան, ամփոփված է Եռաբլուրում), փառաբանված հայդուկապետն ու զորավարն սկզբում կռվել է Վազգենի ու Գուրգենի խմբերում, ապա նրանց հետ միացել Աղբյուր Սերոբին: Մեծ համբավ է ձեռք բերել 1900 թվականին՝ հայ բնակչության պատուհասին՝ Բշարե Խալխին սպանելուց հետո: 1901 թվականին ղեկավարել է Առաքելոց վանքի կռիվը, 1904 թվականին՝ Սասունի ապստամբությունը: 1912-13-ի Բալկանյան պատերազմի ժամանակ բուլղարական բանակի կազմում կռվել է Թուրքիայի դեմ, առաջին համաշխարհային պատերազմում (1914-18) գլխավորել է հայկական առաջին կամավոր, ջոկատը Կովկասյան բանակի կազմում:

Աղբյուր Սերոբ

Հիմնական հոդված՝ Աղբյուր Սերոբ

Աղբյուր Սերոբ (իսկական անունը՝ Սերոբ Վարդանյան, 1864, Սողորդ, Խլաթ - 1 նոյեմբերի, 1899), հայ ազգային ազատագրական շարժման հերոս, ֆիդայի: Հայոց հինավուրց Տարոնո աշխարհի Ախլաթ (Խլաթ) գավառի Սողորդ գյուղի համբավավոր, հարուստ Խչեի տոհմից էր Սերոբը (Սերոբ Վարդանյան), ծնված 1864 թվականին: Սերոբը Վարդանյանների գերդաստանի չորս որդիներից կրտսերն էր: Մանուկ հասակից սիրում էր շրջել հայրենի Նեմրութի լանջերին, ապրել սարերի ու լեռների շնորհած ազատությամբ:

Բնատուր որսորդ էր. 18 տարեկանում ավագ եղբայրը՝ գյուղի ռես Մխեն, Սերոբին նվիրում է հրացան և դաշույն, և նա ամբողջությամբ նվիրվում է որսորդությանը, ամեն օր սարերից վերադառնում հարուստ որսով: Նա բարձրահասակ էր, բնականից օժտված ֆիզիկական հրաշալի տվյալներով, իսկ լեռներում անցկացրած ազատ կյանքը, որսորդությունն ու ձիավարժությունը մեծապես նպաստեցին մեծ ռազմիկին բնորոշ ֆիզիկական հզոր կոփվածքի ձևավորմանը:

Երբ բոլորում է Սերոբի 21 տարին, Պոլսից գյուղ է վերադառնում ազգային կյանքով տարված, ուսյալ հորեղբայրը՝ Առաքելը։ Հորեղբայրը հայրենասիրական գաղափարներ ու պայքարի ոգի է սերմանում նրա հոգում։ Եվ մի օր էլ, երբ Սերոբը վերադառնում էր սարերից՝ որսի հերթական զոհը շալակին, հորեղբայրը դիմում է նրան.

«Սերոբ, իրաւ դուն լաւ, կտրիչ որսորդ ես, նշան բռնած տեղը կը գամես, բայց բաւական չէ վայրի գազաններ որսալ, ատիկա հեշտ է, երբեմն մարդ գազաններ ալ որսալու է»։

Հետագայում արդեն ֆիդայապետ Սերոբը բազմիցս խոստովանել է, որ «իր յեղափոխական մտքերու մեծագույն մասը պարտական է մեռած հորեղբորը՝ Առաքելին»։ Հաշվի առնելով նրա անսանձ, ըմբոստ խառնվածքը՝ որոշում են ամուսնացնել։ Սակայն ամուսնությունը երբեք չի խոչընդոտում Սերոբին՝ ժամանակի զգալի մասն անցկացնել Նեմրութի լանջերին, մանավանդ որ կինը՝ Սոսեն, ըմբոստ բնավորությամբ հրաշալիորեն ներդաշնակում էր ամուսնուն։ Մի օր, երբ սովորության համաձայն լեռներում զբաղվում էր որսորդությամբ, երկու քրդեր նկատելով նրան, տուրք տալով հային թալանելու հարազատ ավանդույթին՝ փորձում են խլել Սերոբի ձին, հագուստներն ու զենքերը։ Սերոբը համարձակորեն կռվի է բռնվում և հրացանի առաջին իսկ հարվածով տապալում է մեկին, իսկ մյուսին հաջողվում է փախչել։ Այդ ժամանակներում հայի կողմից քուրդ սպանելը անօրինակ երևույթ էր։ Թուրքական իշխանությունների դատաստանից խուսափելու համար 1891 թվականին Սերոբին գաղտնի ուղարկում են Պոլիս։ Մի քանի ամիս Պոլսում անցկացնելուց հետո Սերոբը տեղափոխվում է Ռումինիայի Սուլինա քաղաք, ուր բնակություն էին հաստատել Հայաստանի տարբեր շրջաններից տարագրված պանդուխտ հայեր։ Հայրենակիցների օգնությամբ Սուլինայում բացում է մի փոքրիկ սրճարան, որը դառնում է պանդխտության գիրկն ընկած տեղի հայության մշտական հավաքատեղի։

Սերոբի ապագա գործունեության վրա մեծ ազդեցություն է գործում Հրայր Դժոխքը, որն այդ օրերին գտնվում էր Սուլինա քաղաքում։ Հրայրի կոչը նոր ուժով է բորբոքում դեռ պատանեկան տարիներին ազատագրական պայքարի գաղափարներին հաղորդակից Սերոբին։ 1893 թվականի վերջին հայրենիք մեկնելու հաստատ վճռականությամբ Սերոբը թողնում է Սուլինան և մեկնում Բաթում, ապա՝ Թիֆլիս։ Թիֆլիսում ծանոթանում է Քրիստափորի և Ռոստոմի հետ, որոնց խորհրդով և

օգնությամբ 1894 թվականի սկզբներին երեք ընկերներով վերադառնում է հայրենի Ախլաթ։ Ախլաթի շրջանում ժողովրդին կոչելով ինքնապաշտպանության՝ Սերոբն ասում էր. «… տղաք, առանց հացի մնացէք, առանց զէնքի մի մնաք»։ 1895 թվականի դաժան օրերին, երբ ողջ հայության գլխին ծառացել էր համիդյան ջարդարար սուրը, Սերոբը մարտական խմբով հասնում է Ախլաթ և անմիջապես հայտնվում մարտերի հնոցում։ Թշնամին ուշադրությունն առավելապես կենտրոնացրել էր Սողորդ գյուղի վրա, որը շնորհիվ աշխարհագրական ամուր դիրքի, քաջակորով զավակների և հատկապես Խչենց անվանի գերդաստանի՝ Ախլաթի ինքնապաշտպանության ոգին էր։ Սերոբը հայրենի շրջանը կոտորածից փրկելու, ժողովրդին ոգեկոչելու, մարտական ինքնապաշտպանական խմբեր ստեղծելու նպատակով զինակիցներին ուղարկում է թշնամու կողմից սպասվող հարձակման առավել վտանգավոր ուղղությունները, իսկ ինքը 10 ֆիդայիներով մնում է Սողորդում։ «Բոլոր գիւղերում, Սերոբի հայդուկների շուրջը համախմբուեցան տեղական, երիտասարդութիւնը, իսկ ինքը Սերոբը մի քանի ընկերներու հետ շրջում էր գիւղից գիւղ՝ հսկելու ապահովութեան վրայ»։ Սերոբի զինվորները, քաջածանոթ լինելով գավառին, կարողացան կարճ ժամանակամիջոցում գյուղերում կազմակերպել մարտունակ ինքնապաշտպանական խմբեր։ Բաղեշի կոտորածից մի քանի օր անց թուրք զինվորների աջակցությամբ հասնանցի քրդերն ու Դիարբեքիրի չերքեզները հարձակվում են Սողորդի վրա։ Գյուղացիների կազմած մարտական խումբը դիրքեր է գրավում գերեզմանոցի մոտակայքում, իսկ ինքը ֆիդայիներով դարանակալվում է գյուղից գետով բաժանվող ձորերում, որպեսզի վճռական պահին թիկունքից հարվածի թշնամուն։ Քրդերը հայերի նախապատրաստությունից անտեղյակ, համարձակորեն անցնելով ձորն ու գերեզմանոցը՝ մոտենում են սողորդցիների դիրքերին։ Սկսվում է մարտը, 600 զինված քրդերի ու չերքեզներ գերակշռությունն ակնհայտ էր։ Գյուղացիների մարտական խումբը մի փոքր դիմադրելուց հետո սկսում է նահանջել, և այդ վճռական պահին թշնամու թիկունքից հարվածում է Սերոբի խումբը։ «Ու Սերոբ կընտրէ վճռական անձնազոհաթիւնը։ Իր հետ եղող տասը մարտիկներով կատաղի յարձակումը կը գործէ թշնամիին վրայ, դիակներ կիյնան և խուճապ կառաջանայ»։ Ոգևորված ֆիդայիների հուժկու գրոհից՝ գյուղացիները համարձակորեն նետվում են թշնամու վրա։ Անակնկալի եկած քրդերը՝ մարտադաշտում թողնելով սպանվածներին և 40 գերի, խուճապահար

փախչում են։ Հետաքրքիր է, երբ գավառապետի միջնորդությամբ գերվածները ազատ են արձակվում, նրանք չհավատալով, որ հայերը ընդունակ են նման հանդգնության, գավառապետին ասում են. «Էֆենտիմ, այս կեավարները չէին որ մէզի յաղթեցին, այլ Մոսկովին կեավուրները բռնեցին մեր ետևէն և երկնքէն կրակ կը թափէին մեզ վրայ, մեր գնդակները անոնց չէին հասներ, իսկ անոնցները մեզմէն մարդ չը թողացին վար գլորեցին»։ Թուրքերը ի դեմս ֆիդայիների սկսում են կասկածել, որ գործ ունեն առավել կատարելագործված զենքերով զինված մարտական հատուկ խմբերի հետ։ Ախլաթի ինքնապաշտպանական կռիվները Սերոբի ֆիդայական կյանքում առաջին մարտական գործողություններն էին։ 1895 թվականին Սերոբի խմբի առաջնորդությամբ Ախլաթի հայության մղած պայքարը մեկ անգամ ևս հավաստեց, որ ջարդերի արհավիրքները կարելի է կանխել միմիայն ընդհանուր ինքնապաշտպանության կազմակերպմամբ։ Համիդյան արյունոտ տարիներին, երբ թուրքական ջարդարարների վայրագություններին զոհ գնացին 300.000 հայեր, Տարոնը Արևմտահայաստանի այն եզակի շրջանն էր, որը զերծ մնաց կոտորածներից Աղբյուր Սերոբի շնորհիվ։ Թուրքական իշխանություններին հաջողվում է տեղեկանալ նահանգում հայերի կողմից իրականացվող աշխատանքներին։ Հեղափոխական շարժումները բացահայտելու և այն ոչնչացնելու նպատակով, թուրքական կառավարությունը ստեղծում է լրտեսների ու մատնիչների լայն ցանց, որի հաղորդած գաղտնի տեղեկություններից Բաղեշի թուրքական ոստիկանությունը քաջատեղյակ էր, որ Ախլաթում գործող մարտական կազմակերպությունների գլխավոր դեմքը Սերոբն է։ Թուրք իշխանությունները Սերոբին վերացնելու համար կենտրոնացնելով զինվորական ու ոստիկանական մեծաքանակ ուժեր, քրդական զինված խմբեր և քաջ գիտենալով նրա տեղը՝ այնուամենայնիվ չհամարձակվեցին առճակատ փորձ անել նրան գերեվարելու, նրան վերացնելու համար դիմեցին թունավորելու զազրելի միջոցին։ Սերոբին թունավորելու հայրենադավ գործը հանձն է առնում Խալիլի ոսկիների փայլից շլացած Գեղաշենցի Ավեն։ Հայդուկների վստահությունը շահելու դիտավորությամբ նա մի քանի անգամ գալիս է Գելիեզուզան և հանդիպում գյուղի քահանա Տեր Քաջի տանը ապաստանած Սերոբին։ Շողոքորթությունն ու ֆիդայիներին բազմիցս բերած ուտելիքը կատարում են իրենց սև գործը։ Սերոբը չկասկածելով Ավեին՝ բարեկամաբար ընդունում է դավաճանի թունավորած ծխախոտը։ Իսկ մինչ այդ հայերի ուշադրությունը շեղելու նպատակով

թուրքերը լուրեր են տարածում, թե Թահսի փաշայի զորագունդը պատրաստվում է արշավել Խութ–Բոնաշեն՝ տեղի քրդական ցեղերի ապստամբությունը ճնշելու։ Բայց իրականում թուրքական զորախումբը Խալիլի հրոսակախմբին միացած արշավում է Գելիեգուզան, ուր ապաստանել էր Սերոբն իր 12 ֆիդայիներով ու ընտանիքով։ Գեղաշենցի Ավեն արդեն հասցրել էր կատարել իր սև գործը և անհապաղ տեղեկացնել Բշարե Խալխին։ 2000 թուրք զինվորներ ու քրդեր պաշարում են գյուղը։ Նկատելով թշնամու բազմությանը։ Այդ օրհասական պահին մրրիկի արագությամբ հայտնվում են Սերոբի չորս զինվորները և վերցնելով կիսամեռ հայդուկապետին՝ գյուղից դուրս են տանում։ «Սերոբը կարծես յոգնած խնդրեց իր հաւատարիմ հայդուկներէն. «Դրէք ինձ այս քարին առջև՝ իմ վերջին օրն է, և ջանացեք գէթ ձեր կեանքն ազատել, մնաք բարեաւ»։ Տեսնելով Սերոբի անկարող վիճակը՝ թշնամին համարձակորեն նետվում է գրոհի։ Մի բուռ քաջեր հայդուկապետին փրկելու վճռականությամբ դիմադրում են թշնամու մեծաթիվ ուժերին։ Անհավասար կռվում զոհվում են Սերոբը, որդին՝ Հակոբը, եղբայրները՝ Մխեն և Զաքարը։ Քաջարի ֆիդայուհի Սոսեն, վերցնելով ամուսնու հրացանը, շարունակում է քաջաբար մարտնչել։ Թշնամու գնդակներից վիրավորված՝ Սոսեն այլևս անկարող է լինում շարունակել մարտը, իսկ թշնամին արդեն հասել էր։ Բշարե Խալիլը կտրում է հերոսի գլուխը և գերեվարում ուժակորույս Սոսեին։ Թուրքերը հայերին ահաբեկելու նպատակով Սերոբի գլուխը ձողին Սասունի լեռներից հասցնում են մինչև Բաղեշ։

Հրայր Դժոխք

Հիմնական հոդված՝ Հրայր Դժոխք

Հրայր Դժոխք

Հրայր Դժոխք (Ուրվական, Արմենակ Մամբրեի Ղազարյան, 1864 - 1904, ապրիլի 13), հայդուկապետ, Ազատագրական Շարժման խորհրդանիշներից և Հայ Յեղափոխական Դաշնակցության հիմնադիրներից։

Ծնվել է Սասունի Խուլփ գավառակի Ահարոնք գյուղում։ Սովորել է Տարոնի Ղզլաղաճ գյուղի, Մշո Ս.

Կարապետ վանքի դպրոցներում և Մշո Կեդրոնական վարժարանում: Եղել է ուսուցիչ, ծանոթացել Սասունի ու Տարոնի հայերի վիճակին, քարոզել հայ ազատագրական պայքարի գաղափարը: 1891-94 թվականին՝ Սասունի ինքնապաշտպանական մարտերի ղեկավարներից, աչքի է ընկել Տալվորիկի կռվում (1893): 1894 թվականի գարնանը մեկնել է Կովկաս՝ կամավորներ հավաքագրելու և զենք հայթայթելու: 1895 թվականին եղել է նաև Ռումինիայում և 50 հայ երիտասարդների հետ (նրանց թվում՝ Անդրանիկ Օզանյանը և Աղբյուր Սերոբը) վերադարձել Հայաստան: 1896 թվականին Բասենի Իշխու գյուղում ձերբակալվել է, տարվել Կարնի բանտ. ազատվել է ընդհանուր ներմամբ: Վերադարձել է Ղզլաղաճ և ձեռնամուխ եղել ընդհանուր ապստամբության կազմակերպմանը: 1903-04 թվականներին մասնակցել է Սասունի ինքնապաշտպանական կռիվներին: 1904 թվականի ապրիլի 13-ին, երբ թուրքերի գերակշիռ ուժերը հարձակվել են Գելիգուզանի ուղղությամբ, Հրայրը ընկերներով փորձել է փակել նրանց ճանապարհը, բայց զոհվել է մարտում: Օգնության հասած Անդրանիկի զինվորները Հրայրին և մյուս զոհվածներին թաղել են Գելիեգուզանում: Ժողովուրդը երգեր է հյուսել Հրայրի մասին:

Անդրանիկ Օզանյան

Հիմնական հոդված՝ Անդրանիկ Օզանյան

Անդրանիկ Թորոսի Օզանյանը ծնվել է 1865 թվականին Արևմտյան Հայաստանի Շապին Գարահիսար քաղաքում: 1892 թվականին անդամագրվել է Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությանը, որից հեռացել է 1917 թվականին: Տեղի Մուշեղյան վարժարանն ավարտելուց 1 տարի անց բանտարկվում է հայ բնակչությանը ահաբեկող ժանդարմին ծեծի ենթարկելու համար: Բանտից հաջող փախուստ իրականացնելով՝ Անդրանիկը տեղափոխվում է Կոստանդնուպոլիս, բայց շուտով վերադառնում է Արևմտյան Հայաստան, իսկ հետո էլ ուղևորվում է Ղրիմ ու Կովկաս՝ հայկական մարտական ջոկատներին զենք հասցնելու համար:

Արևմտյան Հայաստանում Անդրանիկը մտնում է հայտնի ֆիդայի Սերոբ Վարդանյանի (Աղբյուր Սերոբ) պարտիզանական ջոկատը և դառնում թուրքական ջարդարարների ու կանոնավոր բանակային զորամասերի դեմ պայքար մղող մի քանի պարտիզանական խմբերի ճանաչված ղեկավարը: Գլխավորել է Սերոբին սպանող Բշարե Խալիլի սպանությունը, 1901 թվականի Առաքելոց վանքի կռիվները: 1902-1904 թվականներին Անդրանիկի ջոկատները թուրքերի և քուրդ մուսուլմանների դեմ մարտեր էին մղում Սասունում, Տարոնում և Վասպուրականում: 1905 թվականին Անդրանիկն անցավ Կովկաս, որտեղ հայկական ազգային շարժման երևելի գործիչների հետ քննարկում էր օսմանյան լծի դեմ հետագա պայքարի հարցերը: Դրանից հետո Անդրանիկը մեկնեց երկարատև ճանապարհորդության, որի ընթացքում այցելեց Ֆրանսիա, Շվեյցարիա, Բելգիա, Անգլիա, Բուլղարիա և Իրան՝ հանրությանը տեղեկացնելով Արևմտահայաստանի հայերի ազգային-ազատագրական պայքարի ու դրա հետ կապված զենքի ձեռք բերման անհրաժեշտության մասին: Բուլղարիայում Անդրանիկը գրեց իր «Մարտական հրահանգները»՝ ընդհանրացնելով պարտիզանական պայքարի փորձը: Հետագայում այդ փորձը լավ ծառայեց բուլղարացիներին՝ Առաջին Բալկանյան պատերազմի ժամանակ: 1912 թվականին Անդրանիկը հայ կամավորներից կազմակերպեց վաշտ, որը մտավ բուլղարական բանակի աշխարհազորի կազմի մեջ: Հայ ռազմիկները հերոսություն ցուցաբերեցին Միսթանլի, Ուզուն, Մերեֆտե, Շար-Կիո և այլ քաղաքների համար մղված մարտերում: Անդրանիկը մասնակցում էր գեներալ Յավեր փաշայի թուրքական կորպուսի ջախջախմանը: Բուլղարական հրամանատարությունը բարձր գնահատեց հայկական վաշտի մասնակցությունը Առաջին Բալկանյան պատերազմին: Առաջին Աշխարհամարտը սկսվելուն պես Անդրանիկը շտապում է Կովկաս: 1914 թվականի օգոստոսի 12-ին Թիֆլիսում նա հանդիպում է Կովկասյան ռազմական շրջանի զորքերի գերագույն հրամանատար Միշլաևսկուն ու հայտնում է Թուրքիայի դեմ պատերազմին մասնակցելու պատրաստակամության մասին: Անդրանիկին հանձնարարվեց ձևավորել և գլխավորել առաջին հայկական կամավորական գունդը: Այդ գնդին գլուխ կանգնած՝ Անդրանիկը անհավասար մարտեր է մղում թուրքական զորքերի դեմ ու հեղինակություն է նվաճում ռուսական ռազմական հրամանատարության շրջանում: գեներալ-լեյտենանտ Չերնոզուբովը, մասնավորապես,

գրում էր. «Ես միշտ հանձին Անդրանիկի՝ տեսնում էի ջերմ հայրենասերին, Հայաստանի ազատության մարտիկին, որ խորապես սիրում է իր հայրենիքը։ Ես առանձնակի հաճույքով էի միշտ կարդում ռուսերեն թարգմանությամբ քաղվածքները հայկական թերթերի հոդվածներից, որտեղ Անդրանիկին հարգանք էր մատուցվում՝ իբրև ազգային հերոսի, որն իր գլուխը միշտ քաջաբար պահեց Հայաստանի դարավոր թշնամու դեմ պայքարում ազգային իդեալները իրագործելու համար»։ Մյուս, ոչ պակաս հայտնի ռուս զորավար Յուդենիչը Անդրանիկի մասին ասաց, որ նա «խենթի պես քաջ է»։ 1915-1916 թվականներին Կովկասյան ճակատի մարտերում ցուցաբերած անձնական արիության և հայկական գնդի հաջողությունների համար Սասունցի Անդրանիկը պարգևատրվեց Գեորգիևյան 4-րդ աստիճանի մեդալով, Գեորգիևյան 4-րդ և 3-րդ աստիճանի խաչերով, Սբ. Ստանիսլավի 2-րդ աստիճանի սրի և Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշաններով։ Գունդը Անդրանիկի գլխավորությամբ քաջաբար մասնակցեց Մուղանջուղի (Դիլման) տակ մղված մարտին՝ 1915 թվականի ապրիլի15-18-ին, որում Կովկասը փրկվեց թշնամու ներխուժումից։ 1918 թվականի հունվարի 30-ին թուրքական զորքերը, Մեհմեդ Վեհիբ փաշայի հրամանատարությամբ, Էրզրումի, Վանի և Մերձծովյան ուղղություններով անցան մեծամասշտաբ գործողությունների. հունվարի 30-ին նրանք գրավեցին Երզնկան, փետրվարի 11-ին՝ Տրապիզոնը, ապրիլի 14-ին առանց կռվի մտան Բաթում և սկսեցին շարժվել դեպի Սուխում։ Ապրիլի 25-ին ընկավ Կարսը, մայիսի 15-ին՝ Ալեքսանդրապոլը։

Անդրանիկի գունդը զրկվել էր մանևրելու հնարավորությունից, որովհետև վարելով ծանր պաշտպանական մարտեր Էրզրումի ուղղությամբ, ծածկում էր 1915 թվականին փրկված հարյուր հազարավոր հայ, հույն ու ասորի գաղթականների նահանջը, որոնց վրա ռուսների նահանջից հետո նորից սարսափելի վտանգ էր կախված։ Թուրքիայի կողմից Կովկասի մեծ մասի զավթման ու Արևելյան Հայաստանում ցեղասպանության կրկնության վտանգը թվում էր գրեթե անխուսափելի։ Սակայն 1918 թվականի մայիսի 16-18 թվականին Վորոնցովկա ավանի մոտակայքում գեներալ-մայորի կոչման արժանացած Անդրանիկի դիվիզիան անպատմելի ջանքերով զսպեց օսմանյան զորքերին և նրանց արբանյակներին։ Ու չնայած թշնամու որոշ խմբերի հաջողվեց մինչև 20-25 կմ մոտենալ Թիֆլիսին, նրանց հիմնական զանգվածը կանգնեցվեց և ետ շպրտվեց։ Թշնամուց նախաձեռնությունը վերցնելով՝ զորավարը մարտեր է մղում Ղարաքիլիսայի

ուղղությամբ։ 1918 թվականի մայիսի 25-28 թվականին ծավալված Լոռու ճակատամարտում, որ մեծապես ճակատագրական եղավ ոչ միայն Հայաստանի համար, այլև ամբողջ Կովկասի, Անդրանիկը վիժեցրեց Դիլիջանի ուղղությամբ թուրքական զորքերի գլխավոր հարձակումը, որոնք ջանում էին Դիլիջանով դուրս գալ դեպի Բաքու։ Կրած պարտության հետևանքով թուրքական հրամանատարությունը ստիպված եղավ Լեռնային Լոռու մարզի մեծ մասը թողնելու հրաման տալ։

1918 թվականի հունիսի սկզբին հայկական դիվիզիան մտավ Նոր-Բայազետ, այնուհետև Սելիմի լեռնանցքից Շարուր-Դարալագյազով դեպի Նախիջևան։ Շուտով զբաղեցվեցին Ջուլֆան և Բիթլիսը։ Հունիսի 14-ին Անդրանիկը հրաման տվեց, որում նշվում էր, թե իր զորքերը ենթարկվում են կենտրոնական Ռուսական կառավարությանը, իսկ Նախիջևանը հայտարարվում էր Ռուսաստանի անբաժանելի մասը։ Զորավար Անդրանիկը նաև հեռագիր ուղարկեց Կովկասի հարցերով արտակարգ կոմիսար և Բաքվի Սովնարկոմի նախագահ Ստեփան Շահումյանին, որում պատրաստակամություն հայտնեց օգնություն ցուցաբերելու Բաքվի վրա հարձակվող թուրքական զորքերից պաշտպանվող Բաքվի կոմունային։ Դեռևս 1918 թվականի ամռանը թուրքական զորքերը բռնագրավեցին պարսկական տարածքի հյուսիսային մասը՝ դեպի Բաքու առաջխաղացումը ծավալելու համար հենադաշտ ստեղծելով։ Գրավելով, մասնավորապես, Մակու, Սալմաստ, Թավրիզ, Սերաբ, Արդաբիլ և Խոյ իրանական քաղաքները, թուրքերը մտադրված էին Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծի միջոցով նոր զորքեր անցկացնել Պարսկաստան՝ Բաքվի վրա հարձակվելու համար։ Բայց Նախիջևանում Անդրանիկի ջոկատները կտրեցին երկաթուղային ճանապարհը, իսկ Ջուլֆայում՝ գրավեցին թուրքական կայազորը։ Խոյի շրջանում հայկական կազմավորումները անսպասելի հարված հասցրին Հյուսիս-արևմտյան Իրանում տեղաբաշխված թուրքական բանակին, ինչը ստիպեց թուրքերին՝ կանգնեցնել հարձակումը Բաքվի վրա և Անդրանիկի դեմ ուղարկել նշանակալի ուժեր։ Խոյում մարտերը տևեցին մի քանի օր։ Թուրքերը կրեցին մեծ կորուստներ, սակայն անընդհատ ժամանող լրացուցիչ ուժերը հայկական դիվիզիայի համար գրավման վտանգ առաջ բերին։ Այդ պայմաններում Անդրանիկը ստիպված եղավ թողնել Խոյը, և, ճեղքելով շրջափակման օղակը, նահանջել Ջուլֆա-Բաքվի շրջանը։ Այնուհետև, թվով գերակշիռ թուրքական զորքերի ճնշմամբ՝ զորավար Անդրանիկը ստիպված եղավ

թողնել Նախիջևանը ու անցնել Լեռնային Զանգեզուր՝ նպատակ ունենալով Լեռնային Ղարաբաղի միջոցով ճեղքել-հասնել Բաքու և փակել նահանջող թուրքական բանակի ճանապարհը։

Անդրանիկը վիթխարի դեր խաղաց Զանգեզուրի պաշտպանությունում։ Մարտերի ընթացքում թուրքական զորքերի մինչև 40 տոկոսը ուղղվեց Զանգեզուր՝ Անդրանիկի դեմ։ Երբ նորակազմ կովկասյան հանրապետությունների ղեկավարները, դեռևս 1918 թվականի հունվարին դիմեցին թուրքական կառավարությանը՝ պատրաստակամություն հայտնելով նստել բանակցությունների սեղանի շուրջ, ի պատասխան լսեցին, որ Թուրքիային իրենց կարծիքը չի հետաքրքրում, նրան հուզում է միայն այն, թե այդ առիթով ինչ է մտածում զորավար Անդրանիկը, ինչը լիովին տրամաբանական էր, քանզի հենց Անդրանիկի զորքերն էին մնում թուրքերի կողմից Կովկասի գրավման հիմնական խոչընդոտը։ Բախվելով Անտանտի դաշնակիցների, Հայաստանի հանրապետության որոշ ղեկավարների և բոլշևիկների դավաճանությանը, զորավարը ստիպված եղավ հեռանալ արտասահման։ Ճանապարհին, երբ նա անցնում էր Թիֆլիսով, ասաց. «Ես իմ կյանքում երբեք չեմ ձգտել անձնական երջանկության ու բարօրության։ Ես մշտապես ձգտել եմ միայն մի բանի և պայքարել եմ միայն մի բանի՝ իմ հարազատ ժողովրդի ազատության և բարեկեցության համար։ Ես չեմ փնտրում իմ վաստակի գնահատականը և ցանկանում եմ միայն այն, որ երջանիկ լինի այն ժողովուրդը, որին ես ծառայում եմ ամբողջ կյանքում»։ Այդ ծառայությունն Անդրանիկը շարունակեց նաև տարագրության մեջ։ 1919 թվականի դեկտեմբերին «Վաշինգտոն Փոսթ» ամերիկյան թերթը գրում էր. «Զորավար Անդրանիկը կանգնած է հայկական հերոսականության գագաթին։ Հայերն ամենուր նրան ցնծությամբ են դիմավորում։ Նրանք մեծ ուշադրությամբ ու հիացմունքով են ունկնդրում նրա յուրաքանչյուր խոսքը։ Իսկ նա՝ այդ զինվորը, որը ցարական Ռուսաստանի կործանումից հետո անհավասար մարտեր էր վարում թուրքական բանակի դեմ, ունի ասելիք։ Այժմ նրա խոսքերը նույնքան հատու են, որքան՝ նրա սուրը»։

Անդրանիկը մահացավ 1927 թվականի օգոստոսի 30/31-ին, Չիքո (Սակրամենտոյի մոտ) քաղաքի Ռիչարդսոն Սփրինգս հանքային ջրերի առողջարանային համալիրում՝ սրտի կաթվածից (ԱՄՆ) և սեպտեմբերին թաղվեց Ֆրեզնոյի «Արարատ» գերեզմանատանը։ 1928 թվականի հունվարին նրա

աճյունը փոխադրվեց Փարիզ և վերաթաղվեց Պեր-Լաշեզ գերեզմանոցում, իսկ տարիներ անց (2000) այն տեղափոխվեց Հայրենիք՝ Երևանի Եռաբլուր պանթեոն: Անդրանիկի անունով են կոչվում հրապարակներ, փողոցներ, դպրոցներ, նրա պատվին տեղադրված են արձաններ և հուշատախտակներ աշխարհի մի շարք երկրներում (Հայաստան, Բուլղարիա, Ֆրանսիա, Ռումինիա): Նրան են նվիրված մեծ թվով ժողովրդական ստեղծագործություններ, գրքեր և հոդվածներ տարբեր լեզուներով:

1990 թվականին նկարահանված Զորավար Անդրանիկ (ԱրմենՖիլմ) վավերագրական ֆիլմը նվիրված է Զորավար Անդրանիկի ծննդյան 125-ամյակին, ֆիլմի տեքստը կարդում է անվանի դերասան Խորեն Աբրահամյանը:

Արաբո

Հիմնական հոդված՝ Արաբո

Արաբո (Առաքել, Ստեփանոս Մխիթարյան, 1863 - 1895), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, առաջին ֆիդայիներից (1880-ականներին):

Ծնվել է Բիթլիսի նահանգի Կուռթեր գյուղում: Սովորել է Մուշի Առաքելոց վանքի դպրանոցում: Գործել է Սասունի, Տարոնի գյուղերում: Ինքնապաշտպանության նպատակով կազմակերպել է զինված խումբ: 1882 թվականին թուրք իշխանությունները Բերդակ գյուղում ձերբակալել են Արաբոյին, դատապարտել 15 տարվա բանտարկության, սակայն փախել է բանտից, շարունակել իր գործունեությունը: 1889 թվականից սկսած՝ քանիցս այցելել է Կովկաս, 1892 թվականին Թիֆլիսում մասնակցել է ՀՅԴ կուսակցության 1-ին ընդհանուր ժողովին: Գյալառաշ (Սև բերդ) կոչվող ձորում ընդհարվել է քրդերի հետ և զոհվել իր հինգ ընկերների հետ:

Հյուսվել են Արաբոյի խիզախությունը գովերգող երգեր:



Սողոմոն Թեիլերյան(աջինը) եղբոր եւ հայրիկի հետ:

Լուսանկարներում՝ Սոս մայրիկ, Գևորգ Չավուշ, Գուրգեն, Վազգեն, Փարամազ, Մուրադ Սեբաստացի







Լուսանկարներում՝ Անդրանիկ, Աղբյուր Մերոբ, Նիկոլ Դուման, Արտաշես Սուքիասյան,
Գրիգոր Թումյանց, Արշակ Սաղումյան,
Վերջին նկարում ձախից՝ Ալեքսո Անտինյան

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայոց պատմությունը շատ փառահեղ ու հերոսական էջեր ունի, որի մեջ իր ուրույն տեղը հայ ֆիդայիների՝ հայդուկների շարժումն էր՝ հանուն հայրենի հողի, հայրենիքի պաշտպանության ու միասնության, որին նվիրվեցին Արևմտյան Հայաստանի տարբեր տարածքների ու բնակավայրերի հերոս ու նվիրյալ զավակները։

Ֆիդայական շարժումն էր, որ մեր դարավոր ոխերիմ թշնամուն ցույց տվեց, որ ազգի զավակները պատրաստ են հայրենի հողի համար պայքարել ցանկացած թշնամու դեմ, թեկուզ անհավասար ուժերով և նույնիսկ անզեն։

Այդ փառահեղ շարժման շունչը դարերով հասել է մեզ ու շարունակում է դրսևորվել մերօրյա հերոսների հոգիներում ու մտքում։ Դրա վառ օրինակն էր 80-ականների վերջերին, 90-ականների սկզբների ծագած ազգային-ազատագրական պայքարը հանուն Արցախի, որը զձվեց մինչև 2022 թվականը, որոնց անդամագրվեցին հայ ազգի նվիրյալ զավակները, ովքեր կրեցին ֆիդայական շարժման նորօրյա ջահը և ֆիդայու փառահեղ անունը։

4. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆՑԱՆԿ

1. Հայժողովրդիպատմություն, հատոր 6, Երևան, 1981 թ. :
2. https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5_%D6%86%D5%AB%D5%A4%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%D5%A5%D6%80
3. https://www.google.com/search?q=%D6%86%D5%AB%D5%A4%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80&source=lnms&tbm=isch&sa=X&ved=2ahUKEwj3kYqHhu_5AhXKYPEDHdjSBucQ_AUoAXoECAIQAw&biw=1360&bih=635&dpr=1
4. https://manehovhannisyanblog.wordpress.com/2021/12/09/%D6%86%D5%AB%D5%A4%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80-%D5%B0%D5%A5%D5%BF%D5%A1%D5%A6%D5%B8%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84/

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝	Առաջին բուժօգնությունը շնչառական խանգարումների ժամանակ
Կատարող՝	Գալուստ Հայրապետյան Լերմոնտովոյի միջնակարգ դպրոցի ռազմագիտության ուսուցիչ
Մասնագիտություն՝	Ռազմագիտություն
Ղեկավար՝	Վաղինակ Նազարյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
2. ՄԱՍԵՐ
3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
4. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու մարմնի նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ է թթվածնի անընդհատ մատակարարում։ Շնչառական համակարգը շնչառության միջոցով մարմինն ապահովում է թթվածնի անհրաժեշտ քանակով եւ հեռացնում ածխաթթու գազը։

Շնչառությունը կատարվում է շնչառական, սրտանոթային, նյարդային եւ հենաշարժիչ համակարգերի համատեղ գործունեության շնորհիվ։ Այս համակարգերից յուրաքանչյուրի գործունեության խաթարումը, որը լինում է որոշ վնասվածքների եւ հիվանդությունների դեպքում, կարող է բերել շնչառության խանգարումների եւ դժվարացնել շնչառությունը։ Իսկ շնչառության խանգարումները շատ հաճախ կյանքին անմիջական վտանգ են սպառնում, քանի որ խախտվում է թթվածնի մատակարարումը հյուսվածքներին, մասնավորապես դա խիստ է անդրադառնում նյարդային համակարգի գործունեության վրա։ Շնչառության խանգարման արագ հայտնաբերումն ու ժամանակին ցուցաբերած առաջին օգնությունը կարող են թեթեւացնել տուժածի վիճակը եւ կանխել հետագա բարդությունները։

Շնչառության կանգ կարող է առաջանալ տարբեր վնասվածքների, հիվանդությունների կամ շնչուղիների անցանելիության խանգարման հետևանքով։ Շնչառության կանգը վիճակ է, երբ տուժածը դադարում է ինքնուրույն շնչել։ Շնչառության կանգի դեպքում, արյան մեջ թթվածնի կտրուկ նվազման հետևանքով, վնասվում են բոլոր հյուսվածքները, խաթարվում է մարմնի բոլոր համակարգերի գործունեությունը, ինչը շատ կարճ ժամանակահատվածում կարող է բերել սրտի կանգի և մահվան։ Ուստի, տուժածի կյանքը փրկելու նպատակով, պետք է անհապաղ սկսել կատարել արհեստական շնչառություն։

ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

ՇՆՉԱՌԱԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Շնչառական համակարգ



Շնչառություն, դա մարմնի և միջավայրի միջև տեղի ունեցող գազափոխանակությունն է: Նորմալ կենսագործունեության համար մարմնին անհրաժեշտ է էներգիա: Սննդանյութերից էներգիայի ստացումն ընթանում է թթվածնի կլանմամբ և ածխաթթու գազի անջատմամբ: Քանի որ մարմնում չկա թթվածնի պաշար և առանց որի բջիջները մահանում են, ապա անհրաժեշտ է թթվածնի անընդհատ մուտք դեպի օրգանիզմ: Մյուս կողմից ածխաթթու գազը պետք է հեռացվի մարմնից, քանի որ նրա զգալի քանակության կուտակումը վտանգավոր է կյանքի համար: Օդից թթվածնի կլանումը և ածխաթթու գազի արտազատումը իրագործվում է շնչառական համակարգի միջոցով: Շնչառական համակարգը կազմում են շնչուղիները (քթի խոռոչ, քթաբմպան, ըմպան, կոկորդ, շնչափող, բրոնխներ) և թոքերը: Շնչուղիներով օդը հասնում է թոքեր, որտեղ իրականանում է գազափոխանակությունը:

Քթի խոռոչ

Քթի խոռոչի ներքին մակերեսը պատված է արյունատար անոթներով հարուստ լորձաթաղանթով: Ներշնչվող օդը քթի խոռոչում տաքանում է, խոնավանում, մաքրվում փոշուց և մասամբ վարակազերծվում: Ապա այն անցնում է քթաբմպան, ըմպան, իսկ հետո՝ կոկորդ: Կոկորդում գտնվում են ձայնալարերը, որոնք թրթռում են իրենց միջով օդ անցնելիս և առաջացնում ձայն (արտաշնչման ժամանակ): Կոկորդով օդն անցնում է շնչափող, որը գտնվում է կերակրափողի առջևում: Կլման ժամանակ մակկոկորդը կափույրի նման փակում է կոկորդի մուտքը և խոչընդոտում շնչառական ուղիների մեջ օտար մասնիկների ու հեղուկների թափանցմանը: Կրծքավանդակի խոռոչում շնչափողը բաժանվում է երկու՝ աջ և ձախ բրոնխների: Բրոնխները ճյուղավորվում են՝ առաջացնելով բրոնխիալ ծառ, որի ծայրամասային օդատար խողովակները վերածվում են թոքաբշտերի (ալվեոլների): Թոքաբշտերը (ալվեոլները) մանրագույն բրոնխների

ողկույզանման վերջավորություններն են, որտեղ կատարվում է գազափոխանակություն։ Թոքաբշտերը պատված են արյունատար անոթների խիտ ցանցով։

Կոկորդ

Կոկորդը տեղավորվում է չորրորդ, հինգերորդ և վեցերորդ վզային ողերի մակարդակի վրա, պարանոցի առաջնային երեսին, գոյացնելով այնտեղ մի բարձրություն, որը պարզ նկատելի է մաշկի տակից։ Նրա ետևում ընկած է ըմպանը, որի հետ նա կոկորդի միի բացվածքի՝ կոկորդամուտքի միջոցով անմիջապես հաղորդակցության մեջ է։ Կոկորդի կողքերով անցնում են պարանոցի արյան խոշոր անոթները, իսկ առջևից կոկորդը պատված է ստոր-կորճային մկաններով։ Դեպի վեր կոկորդը վերածվում է շնչափողի։ Կոկորդը բաղկացած է մի քանի շարժուն աճառներից, կապված միմյանց կապանների միջոցով։ Բացի այդ կոկորդն ունի փոքր մկաններ, որոնք շարժում են աճառիկները մեկը մյուսի նկատմամբ։ Ներքին կոկորդուն են գտնվում ձայնալարերը։ Կոկորդի ներքին խոռոչը ծածկված է լորձաթաղանթով։ Նրա երկարությունը վահանաճառի վերին եզրից մինչև մատանիաձևի ստորին եզրը հավասար է 44 մմ-ի տղամարդու և 36 մմ-ի կնոջ մոտ։

Շնչափող

Շնչափողը սկսվում է 6-րդ պարանոցային ողի ստորին ողի մակարդակի վրա և վերջանում է 5-րդ կրծքային ողի վերին ողի բարձրության վրա։ Այստեղ նա բաժանվում է իր երկու՝ աջ և ձախ բրոնխներին։ Շնչափողի երկարությունը տատանվում է 9-ից մինչև 10 սմ, լայնական տրամագիծը միջին թվով 15-18 մմ։ Պարանոցային հատվածը ծածկված է վահանագեղձով, որի նեղուցը տեղավորվում է 2-4 ողերի վրա, այնինչ գեղձի կողմնային բլթերը իջնում են մինչև 5-րդ կամ 6-րդ ողը։

Շնչափողի կառուցվածքը

Շնչափողի պատերը բաղկացած են 16-20 աճառային ոչ լրիվ օղերից, միացած են նյարդակազմ օղակաձև կապաններով։ Առաջին աճառային օղը սովորաբար քիչ ավելի լայն է մյուսներից։ Օղի միջին լայնությունը 3-4 մմ է։ Շնչափողի ետին նյարդակազմ պատը տափակ է և պարունակում է հարթ մսաթելեր, որոնք գլխավորապես լայնական ուղղություն ունեն։ Նրանք ոչ միայն միացնում են օղերի ծայրերը միմյանց այլ ման ընդգրկում են միջօղային տարածությունները։ Լորձաթաղանթը վարդագույն է, ծածկված է թարթչավոր էպիթելով ր հարուստ է լիմֆոիդ հյուսվածքով ու լորձային գեղձիկներով։

Խոշոր գեղձիկները գտնվում են շնչափողի ետին պատին, սրանք դասավորված են ոչ միայն ենթալորձային հյուսվածքի մեջ, այլև մասամբ թափանցում են մինչև շարակցանյարդային շերտի արտաքին երեսը:

Բրոնխներ

Շնչափողը վերջանալով երկատվում է առաջացնելով զույգ բրոնխներ: Նրանք հեռանում են իրարից համարյա 90 աստիճանի անկյան տակ և ուղղվում են դեպի համապատասխան թոքերը: Աջ բրոնխը ձախից ավելի լայն է համապատասխան աջ թոքին, որն ավելի մեծ է, քան ձախը: Միևնույն ժամանակ ձախ բրոնխը համարյա 2 անգամ երկար է աջից: Աջ բրոնխի աճառային օղերի թիվը 6-8 է, իսկ ձախինը՝ 9-12: Աջ բրոնխը նույնիսկ կարելի է համարել շնչափողի շարունակություն:

Թոքեր

Թոքերը կրծքավանդակում տեղակայված սպունգանման, զույգ օրգաններ են, որոնք շնչառության միջոցով մարմինն ապահովում են թթվածնով և մարմնից դուրս են բերում ածխաթթու գազը: Թոքերը պատված են թաղանթով՝ թոքամզով (պլևրա): Թոքամիզը, պատելով յուրաքանչյուր թոքը, անցնում է կրծքավանդակի ներքին պատերի վրա և թոքի շուրջն առաջացնում փակ թոքամզային խոռոչ: Թոքամզային խոռոչում ճնշումը մթնոլորտայինից ցածր է: Ճնշումների տարբերության շնորհիվ ապահովվում է օդի անցումը թոքեր: Աջ թոքը կազմված է 3, իսկ ձախը՝ 2 բլթից:

Ներշնչման Ժամանակ կրծքավանդակի մկանները և ստոծանին կծկվում են՝ մեծացնելով կրծքավանդակի ծավալը: Քանի որ թոքամզային խոռոչում ճնշումը մթնոլորտայինից ցածր է, կրծքավանդակի ծավալի մեծացման հետ մեկտեղ, լայնանում են նաև թոքերը, որի հետևանքով օդն անցնում է այնտեղ: Արտաշնչման ժամանակ վերոհիշյալ մկանը թուլանում է, և օդը դուրս է գալիս թոքերից: Թթվածինը՝ անցնելով ալվեոլի և արյունատար անոթի բարակ պատի միջով, ներթափանցում է օդից արյուն, իսկ ածխաթթու գազը՝ հակառակ ուղղությամբ:

Հեմոգլոբինը, որի ֆունկցիան է թթվածնի մատակարարումը բջիջներին և այնտեղից ածխաթթու գազի հեռացումն է, իրականանում է համապատասխանաբար օքսիհեմոգլոբին և կարբօքսիհեոգլոբին անկայուն միացությունների շնորհիվ: Շնչառության ժամանակ հնարավոր է ներշնչել նաև թերայրումից առաջացած շմոլ գազ,

որը հեմոգլոբինի հետ կազմում է կայուն կարբոքսիհեմոգլոբին կայուն միացությունը, որը վտանգավոր է կյանքի համար:

Մարդու շնչառության հաճախությունը և ծավալը կախված է մարմնի թթվածնի պահանջից: Չափահաս մարդը հանգիստ վիճակում մեկ ներշնչման ընթացքում ներշնչում է մոտավորապես 500 մլ օդ: Շնչառության հաճախությունը կախված է տարիքից.

- ծծկեր երեխաների մոտ՝ րոպեում 40-60 շնչառական շարժում,
- 1-8 տարեկան երեխաների մոտ՝ րոպեում 20-25 շնչառական շարժում,
- 8 տարեկանից բարձր երեխաների և չափահաս մարդկանց մոտ՝ րոպեում 14-18 շնչառական շարժում:

Շնչառությունն անընդհատ է և կառավարվում է նյարդային համակարգի կողմից: Մարդու շնչառությունը կարող է դժվարանալ կրծքավանդակի վնասվածքների, շնչառական հիվանդությունների, ալերգիկ վիճակների, շնչուղիների խցանման և այլ պատճառներով: Այս պատճառները կարող են հանգեցնել շնչառության կանգի, որը կյանքին անմիջական վտանգ սպառնացող իրավիճակ է:

Շնչառությաննշանակությունը

Բոլոր կենդանի օրգանիզմները, նաև մարդը, նյութափոխանակության իրականացման համար մշտապես թթվածնի կարիք են զգում: Թթվածինը օրգանիզմ է մտնում շնչառության միջոցով:

Շնչառությունը գործընթացների համալիր է, որն ապահովում է օրգանիզմի կողմից թթվածնի յուրացումը, նրա օգտագործումը օրգանական նյութերի օքսիդացման համար և նյութափոխանակության արգասիք ածխաթթու գազի հեռացումը:

Արդեն գիտեք, որ բջիջներին թթվածնի մատակարարումը և նրանցից ածխաթթու գազի հեռացումն իրականացնում է արյունը: Գազափոխանակությունն արյան և մթնոլորտային օդի միջև իրականացնում են շնչառության օրգանները: Շնչառությունը կարևորագույն կենսական գործընթաց է, որի դադարը կործանարար է օրգանիզմի համար:

Շնչառական օրգանների կառուցվածքը և գործառույթները

Շնչառական համակարգը կազմված է օդատարուղիներից (քթիխոռոչ, քթըմպան, կոկորդ, շնչափող և բրոնխներ) և գազափոխանակության օրգաններից՝ թոքերից:

Օդատար ուղիներից առաջինը, որը շփվում է մթնոլորտային օդի հետ, քթի խոռոչն է:

Քթի խոռոչը ոսկրաաճառային միջնորմով բաժանվում է երկու խոռոչների: Յուրաքանչյուր խոռոչ ունի ոլորապտույտ անցուղիներ, որոնք մեծացնում են նրա ներքին մակերեսը: Այդ ամբողջ մակերեսը պատված է լորձաթաղանթով, որը կազմված է թարթիչավոր էպիթելային հյուսվածքից: Թարթիչների թարթման, շարժման օգնությամբ քթի խոռոչից հեռացվում է լորձը՝ նրան կպած մանրէների և փոշու հետ միասին: Քթի խոռոչում ներշնչված օդը, շփվելով լորձաթաղանթի արյունատար անոթների հետ, տաքանում է՝ հասնելով մարմնի ջերմաստիճանին, իսկ լորձի միջոցով խոնավանում է (մինչև 95% խոնավություն):

Քթի խոռոչը և քթըմպանը

Այսպիսով՝ քթի խոռոչով անցնելիս օդը փոշեզերծվում, մանրէազերծվում, տաքանում և խոնավանում է:

Բերանի խոռոչի մակերեսը անհամեմատ փոքր է: Այդ պատճառով բերանով շնչելիս օդը չի ենթարկվում վերոհիշյալ փոփոխություններին, որի հետևանքով հաճախ առաջանում են օդատարուղիների բորբոքումներ:

Քթի խոռոչի վերին մասում գտնվում են հոտառական ընկալիչներ, որի շնորհիվ քիթը համարվում է նաև հոտառական օրգան: Քթի խոռոչից օդը անցնում է քթըմպան, որն ըմպանի վերին մասն է, ապա մտնում է կոկորդ:





Կոկորդ

Կոկորդը գտնվում է պարանոցի վերին մասում: Այն մի քանի աճառներով, կապաններով, ջլերով և մկաններով միմյանց միացած խոռոչ է: Աճառներից ամենամեծը՝ **վահանաձառը**, շոշափվում է պարանոցի վրա առջևից: Այն արտաքինից պաշտպանում է կոկորդը: Կոկորդի մուտքը վերևից փակվում է մակկոկորդի աճառով, որը կլլման պահին խոչընդոտում է սննդագնդիկի թափանցումը շնչափող: Հակառակ դեպքում սննդանյութի անցումը շնչափող շնչահեղձության և մահվան պատճառ կարող է դառնալ:

Կոկորդի խոռոչը պատված է լորձաթաղանթով, որը վնասազերծում է օդի հետ այստեղ հասած մանրէները, փոշին և շարունակում է տաքացնել ու խոնավացնել օդը:



Կոկորդը նաև ձայնային օրգան է: Այդ խոռոչի ամենանեղ տեղում ձգվում են ձայնալարերը, որոնց միջև գտնվում է ձայնախորշը: Ձայնախորշը եռանկյունաձև է: Այն խոսելու պահին նեղանում է, և ձայնալարերը միմյանց են մոտենում: Ձայնը ձևավորվում է արտաշնչվող օդի միջոցով ձայնալարերի տատանման արդյունքում: Որքան մեծ է ձայնալարերի տատանման հաճախականությունը, այնքանբարձր է ձայնը:

Ձայնի և հոդաբաշխ խոսքի ձևավորման վրա ազդում է նաև լեզվի, շրթունքների, ստորին ծնոտի դիրքը, քթի և բերանի խոռոչների ձևը և այլն: Այդ է պատճառը, որ շնչառական ուղիների հիվանդությունների ժամանակ (անգինա և այլն) փոխվում է ձայնի որակը:

Ձայնախորշ



Շնչափողը անմիջապես կոկորդի շարունակությունն է: Այն 10–15սմ երկարությամբ խողովակավոր օրգան է: Կազմված է 16–20 աճառային կիսաօղակներից, որոնց շնորհիվ

պարանոցի շարժումների դեպքում շնչափողի լուսաձերպը մնում է բաց վիճակում, և օդն անարգել անցնում է շնչառական ուղիներ: Շնչափողի հետին պատը հպվում է կերակրափողին, և աճառի բացակայության շնորհիվ չի խանգարվում սննդագնդիկի տեղաշարժը: Շնչափողը ստորին մասում վեր է ածվում երկու գլխավոր՝ աջ և ձախ բրոնխների:



Բրոնխները կառուցվածքով նման են շնչափողին: Նրանք երկու խոշոր խողովակներ են, որոնք մտնում են թոքեր և այնտեղ ճյուղավորվելով առաջացնում են **բրոնխածառ**: Խոշոր բրոնխները վեր են ածվում մանր բրոնխների, սրանք էլ՝ մանրագույն բրոնխների, որոնք ավարտվում են օդով լցված թոքաբշտերով: Թոքաբշտերի պատերը կազմված են միաշերտ հարթ էպիթելից, բարակ առաձգական թելերից և պատվածեն արյան մազանոթների խիտ ցանցով:

Յուրաքանչյուր թոքում հաշվվում է մինչև 400 մլն թոքաբուշտ, որոնց ընդհանուր մակերեսը 100–150 մ² է:



Փաստորեն, թոքերի շնչառական մակերեսը 70–100 անգամ մեծ է մարդու մաշկի մակերեսից: Թոքերի այդ հսկայական մակերևույթն ապահովում է գազափոխանակության մեծ արագությունը:

Թոքերը երկուսն են, տեղավորված են կրծքավանդակում, գրավում են համարյա նրա ամբողջ խոռոչը: Թոքերը նման են հատած կոնի, գագաթով ուղղված են վեր, հիմքով՝ ցած և հենվում են ստոծանուն: Թոքերը խոր ակոսներով բաժանվում են բլթերի: Յուրաքանչյուր թոքի մեջ մտնում է մեկ բրոնխ, բազմակի ճյուղավորվելով վերածվում մանրագույն բրոնխների, որոնք ավարտվում են մանրադիտակային մեծություն և կառուցվածք ունեցող թոքաբշտիկներով և նմանվում խաղողի ողկույզի:



Թոքաբշտիկների պատը կազմված է միաշերտ բջիջներից, որոնք արտաքուստ ծածկված են արյունատար մազանոթների խիտ ցանցով: Թոքաբշտերի և մազանոթների պատերի միջև կատարվում է գազափոխանակություն:

Արտաքինից թոքը պատված է շարակցահյուսվածքային թաղանթով՝ թոքամզով (թոքային պլևրայով): Այն կազմված է երկու թաղանթներից, որոնցից մեկը պատում է թոքերի մակերեսը (թոքամզային թաղանթ), մյուսը՝ կրծքավանդակի պատը ներսից (մերձպատային թոքամզային թաղանթ):

Թոքային և մերձպատային թոքամզային թաղանթների միջև առաջանում է ճեղքանման ազատ տարածություն, որը կոչվում է թոքամզային խոռոչ:

Թոքամզային թաղանթներից այդ խոռոչ է արտադրվում քիչ քանակությամբ հեղուկ, որը թուլացնում է շնչառության ժամանակ թոքերի և կրծքավանդակի պատերի միջև առաջացող շփման ուժը:

Շնչառական օրգանների հիվանդություններ

Մեր օրերում հայտնի են շնչառական օրգանների բազմաթիվ հիվանդություններ, այնքան շատ, որ դրանց բոլորի ուսումնասիրության համար ամիսներ կպահանջվեն: Նման բազմազանությունը պայմանավորված է մարդու շնչառական համակարգը կազմավորող բազմաթիվ բաղադրիչ տարրերից: Դրանցից յուրաքանչյուրը կարող է ենթարկվել տարբեր բնույթի հիվանդությունների՝ բորբոքային, վարակիչ և այլն:

Շնչառական օրգանների հիվանդությունների մանրամասն նկարագիրը

Շնչառական օրգանների ախտահարման ժամանակ խախտվում են նրանց գործառույթները, որոնցից առավել կարևորներն են օրգանիզմի ապահովումը թթվածնով, ջերմափոխանակությունը և պաշտպանությունը արտաքին միջավայրի անբարենպաստ գործոններից: Դիտարկենք շնչառական համակարգի 20 առավել տարածված հիվանդությունները:

Ադենոիդներ

Հիվանդությունը իրենից ներկայացնում է կոկորդային նշիկի բորբոքում, որի դեպքում այն չափերով մեծանում է: Հաճախ ադենոիդներ զարգանում են երեխաների մոտ՝ մրսածության ու վարակիչ հիվանդությունների հողի վրա:

Ախտանիշներ.

- շնչառության դժվարացում, նույնիսկ՝ հարբուխի բացակայության դեպքում;
- քթի փակվածության զգացողություն;
- լորձաթաղանթային կամ թարախային բնույթի հարբուխ;
- քրոնիկ հազ;
- ֆսֆսոց:

Հիվանդության երկար ընթանալու դեպքում կարող են առաջանալ բարդություններ լսողության խանգարումների, հարբուծային մշտական հիվանդությունների, ուղեղի գործունեության ակտիվության նվազման տեսքով:

Ալերգիկ ռինիտ

Հանդիսանում է քթի լորձաթաղանթի բորբոքում՝ պայմանավորված տարբեր ալերգածինների (ծաղկափոշի, փոշի, ընտանի կենդանիների մազեր) ազդեցությամբ:

Մարմնի մեջ ալերգածինների ներթափանցումից գրեթե անմիջապես հետո առաջանում են.

- թեթև և հեղուկ մրսածություն;
- մշտական փռշոց;
- այտուցներ;
- արցունքներ;
- քոր աչքերում, քթում կամ ականջներում:

Որոշ ժամանակ անց հայտնվող ախտանիշներ.

- քթի փակվածություն և շնչառության դժվարացում;
- բարձր լուսազգայունություն;
- հոտառության խախտում;
- լսողության նվազում:

Ատոպիկ ասթմա

Այլ կերպ անվանում են նաև բրոնխիալ ասթմա: Հիվանդությունը իրենից ներկայացնում է շնչառական ուղիների ալերգիկ բնույթի բորբոքում: Բրոնխիալ ասթմայի գլխավոր ախտանիշն է շնչահեղձությունը: Այն առաջանում է ալերգածին մարմնի ներթափանցման հետևանքով իմունային համակարգի ակտիվացման արդյունքում, ինչը հանգեցնում է շնչուղիների հարևանությամբ գտնվող մկանների կտրուկ կծկման:

Այլ ախտանիշներ.

- կրծքավանդակում խզզոց և սուլոց;
- ֆիզիկական ծանրաբեռնվածությունից հետո առաջացող շնչահեղձության նոպաներ;
- հևոց;
- չոր հազ:

Բրոնխիտ

բրոնխների բորբոքումն է, որը հաճախ զարգանում է մրսածության, վիրուսային կամ վարակիչ հիվանդությունների ֆոնին: Գոյություն ունի բրոնխիտի երկու տեսակ, որոնցից յուրաքանչյուրը ունի իրեն հատուկ ախտանիշները:

Սուր ձևը ավելի հաճախ զարգանում է վարակի ֆոնին: Այն արտահայտվում է հետևյալ կերպ.

- հարբուխ;
- չոր հազ, աստիճանաբար դառնում է թաց;
- դեղին կամ կանաչավուն երանգի խորխ;
- ընդհանուր թուլություն;
- բարձր ջերմաստիճան:

Քրոնիկ բրոնխիտը բնութագրվում է հիվանդության երկարատև ընթացքով (մի քանի ամիս), որը կարող է որոշ ժամանակ անց կրկին ի հայտ գալ: Բացի վերոնշյալ ախտանիշներից, կլինիկական պատկերին կարող է ավելանալ շնչառության դժվարացումը:

Կարևոր է. Բրոնխիտից կարող են առաջանալ բարդություններ՝ թոքաբորբի տեսքով:

Բրոնխրոէկտազ

Պաթոլոգիկ գործընթաց է, որը բնութագրվում է շնչուղիների անդառնալի ընդլայնմամբ: Կարող է տեղակայված լինել բրոնխների առանձին հատվածներում կամ ընդգրկել ամբողջությամբ:

Բրոնխրոէկտազի համար բնորոշ է ախտանիշների աստիճանական դրսևորումը, ամենից հաճախ նրանք առաջանում են կատալիզատորի ազդեցության հետևանքով (օրինակ՝ շնչառական ուղիների ինֆեկցիոն հիվանդություններ):

Ախտանիշներ.

- մշտական հազ;
- առատ արյունոտ խորխ;
- ծանր շնչառություն և հևոց;
- թոքերի կրկնվող բորբոքում;
- սրտային անբավարարություն (հիվանդության ծանր ձևի դեպքում):

Հայմորիտ

Այլ անվանումը՝ վերին ծնոտի սինուսիտ: Հիվանդությունների ներկայացնում է հայմորիտային խոռոչի բորբոքային գործընթաց: Առավել հաճախ հայմորիտը հանդիսանում է մրսածության հետևանք այլ հիվանդությունների բարդություն, օրինակ՝ սուր ռինիտի կամ որևէ վարակի:

Ախտանիշներ.

- ընդհանուր թուլություն, դող;
- բարձր ջերմություն;
- գլխացավեր, որոնք ուժեղանում են գլուխը կախելիս և թեքելիս;
- այտուցներ բորբոքման շրջանում;
- փռշտոց;
- արցունքահոսություն;
- բարձր լուսազգայություն:

Գոյություն ունի նաև հայմորիտի քրոնիկ ձև, որի համար բնորոշ են քթի մշտական փակվածությունը, թուլությունը, աշխատունակության նվազումը:

Հիդրոթորակս

Հիվանդությունը իրենից ներկայացնում է ոչ բորբոքային հեղուկի կուտակում թոքի շուրջ գտնվող խոռոչում: Հիվանդությունը կարող է զարգանալ ներքին օրգանների աշխատանքի խախտման հետևանքով, օրինակ՝ սրտային անբավարարության պատճառով, որը առաջացնում է արյան շրջանառության լճացում:

Ախտանիշներ.

- ծանրություն կրծքավանդակում;
- օդի պակասի զգացողություն;
- մաշկի կապտություն;
- կրծքավանդակի ախտահարված մասի արտաքին փքվածություն;

լարինգիտ

Հանդիսանում է կոկորդի բորբոքում, մեծ մասամբ զարգանում է ինֆեկցիայի կամ մրսածության հիման վրա: Կա հիվանդության 2 ձև՝ սուր և քրոնիկ:

Սուր լարինգիտը առաջանում է որպես ցրտահարության, ձայնի գերլարման կամ ինֆեկցիոն հիվանդությունների հետևանք: Դրա առանձնահատկություններն են.

- կոկորդի կարմրություն;
- ընդհանուր թուլություն;
- բարձր ջերմություն;
- ցավ կուլ տալիս;
- խռպոտություն;
- չոր քերող հազ;

Սովորաբար ապաքինումը տևում է 1-2 շաբաթ:

Քրոնիկ լարինգիտը զարգանում է չբուժվելու կամ մշտական սուր լարինգիտի պատճառով: Մյուս ախտանիշներին ավելանում է աշխատունակության նվազումը, ձայնի արագ հոգնածությունը: Քրոնիկ լարինգիտը, որպես կանոն, տևում է 2 շաբաթ:

Գիշերային շնչականգ

Գիշերային շնչականգ կամ ավելի հայտնի որպես "երազային շնչականգ" քնի ժամանակ շնչառության կանգն է, որը տևում է 10 վայրկյանից ավելի: Հիմնականում ուշացումը տևում է կես րոպե, երբեմն կարող է տևել գիշերային քնի մեծ մասը:

Ախտանիշները.

- քնի խանգարում;
- քնի պակաս և, որպես հետևանք, հոգնածություն օրվա ընթացքում;
- քնկոտություն;
- գլխացավեր;
- դյուրագրգռություն;
- հիշողության վատթարացում;
- խռմփոց, անհանգիստ քուն, քնի մեջ խոսելը;
- էնուրեզ (մեզը պահել չկարողանալը):

Երկարատև և կանոնավոր շնչականգի դեպքում նվազում են ինտելեկտը և օրգանիզմի աշխատունակությունը, առաջանաում է քրոնիկ հոգնածություն:

Պլևրիտ

Հիվանդությունների խումբ է, որը բնութագրվում է թոքերի շուրջ գտնվող հեղուկային խոռոչների ախտահարմամբ: Որոշ դեպքերում պլևրալ խոռոչում կարող են լինել գոյացություններ հեղուկի, թարախի կամ արյան տեսքով: Պլևրիտը արտահայտվում է 2 ձևով՝ չոր կամ թաց:

Չոր ձևը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

- կողային ցավ, որը մեծանում է շունչ քաշելու և հազալու ժամանակ;
- ցավեր որովայնում (հազվադեպ);
- արագացած շնչառություն;
- զկռտոց;
- ցավ կուլ տալու ժամանակ:

Թաց ձևը ուղեկցվում է ընդհանուր թուլությամբ, չոր հազով, կրծքավանդակում ծանրության զգացողությամբ: Որոշ դեպքերում նկատվում է հևոց և զարկերակի արագացում, որոնց ժամանակ կարող է այտուցվել դեմքը, և կարող են փքվել պարանոցի երակները:

Թոքերի քաղցկեղ

Թոքերի քաղցկեղը բրոնխների և թոքերի վրա առաջացող չարորակ գոյացություն է: Ավելի հաճախ հիվանդությունը ազդում է աջ թոքի կամ նրա վերին մասի վրա: Հիվանդությունը զարգանում է աստիճանաբար, ամենից հաճախ հայտնաբերվում է ուշ փուլերում, երբ արդեն մետաստազներ են առաջացել այլ օրգաններում կամ մարմնի մասերում: Կա թոքերի քաղցկեղի երեք ձև՝ կենտրոնական, ծայրային և ատիպիկ, որոնցից յուրաքանչյուրը բնութագրվում է իր ախտանիշներով:

Կենտրոնական ձևի դեպքում ախտահարվում են խոշոր բրոնխները: Այն ուղեկցվում է հետևյալ նշաններով.

- ցավի զգացողություն ախտահարված մասում;
- չոր հազ, որը սահուն անցնում է թացի, լորձ, արյուն կամ թարախ պարունակող խորխ;
- հևոց;
- քաշի նվազում;
- հոգնածություն և թուլություն;

- հաճախակի բորբոքային հիվանդություններ:

Ծայրային ձևի դեպքում ախտահարվում են մանր բրոնխները և թոքերի պարենխիման: Ի տարբերություն կենտրոնական ձևի՝ ծայրամասայինի դեպքում ախտանիշները ի հայտ են գալիս հիվանդության ավելի ուշ փուլում: Բնորոշ են՝ հևոց, կրծքավանդակի ցավ, արյունոտ խորխ: Զարգացմանը զուգընթաց՝ հիվանդության ախտանիշները նմանվում են թոքերի կենտրոնական քաղցկեղի:

Սինուսիտ

Սինուսիտը քթի մեկ կամ երկու խոռոչների լորձաթաղանթի բորբոքային գործընթաց է: Հիվանդության հարուցիչը հաճախ վիրուսներն են կամ բակտերիաները:

Ախտանիշներ.

- քթի խոռոչներում ճնշման զգացողություն;
- ցավի զգացողություն, որը գլուխը շարժելիս ուժեղանում է;
- առատ, խիտ հարբուխ;
- բարձր ջերմություն:

Հազվադեպ դեպքերում լինում է.

- հոտառության խախտում;
- բերանից տհաճ հոտ;
- մարմնի թուլություն և հոգնածություն:

Տրախեիտ

Տրախեիտը բորբոքային գործընթաց է, որը տեղակայված է շնչափողի լորձաթաղանթի վրա: Ամենից հաճախ հարուցիչներ են հանդիսանում վիրուսային վարակը, ստաֆիլակոկը կամ ստեպտոկոկը: Կարող է ընթանալ երկու ձևով՝ սուր կամ քրոնիկ:

Սուր տրախեիտը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

- չոր հազ;
- խորը շունչ քաշելիս, ծիծաղելիս կամ օդի ջերմաստիճանը կտրուկ փոխվելիս հազի նոպաներ;
- ցավի զգացողություն կոկորդում և կրծքավանդակում;
- խռպոտ ձայն:

Խրոնիկ տրախեիտի ժամանակ հիվանդը սովորաբար տառապում է հաճախակի նոպայանման հազով, որը առաջանում է առավելապես առավոտյան կամ երեկոյան: Հազի ժամանակ արտադրվում է խորխ, որը կարող է լինել ինչպես հեղուկ, այնպես էլ՝ մածուցիկ: Հաճախ քրոնիկ տրախեիտը դժվար է բուժվում և կարող է ուղեկցվել սրացումներով:

Թոքերի տուբերկուլյոզ

Տուբերկուլյոզը վարակիչ հիվանդություն է, որը առաջանում է տվյալ դեպքում մարդու թոքերի վրա տեղակայված տարբեր թթվակայուն բակտերիաների հետևանքով: Հաճախ տուբերկուլյոզը կարող է ընթանալ առանց նախանշանների, նման դեպքերում այն կարող է հայտնաբերվել կանոնավոր ֆլյուրոգրաֆիայի միջոցով: Հիվանդությունը սկսվում է բազմաթիվ ոչ առանձնահատուկ ախտանիշներով.

- բարձր ջերմություն;
- հազ;
- ընդհանուր թուլություն:

Հիվանդության զարգացման հետ այդ դրսևորումներին ավելանում են գիշերային քրտնարտադրություն և քաշի նվազում, որոշ դեպքերում՝ ավշային հանգույցների մեծացում, զարգանում է խորխոտ հազ, որի մեջ հետագայում հայտնվում է արյուն, թոքերում առաջանում է խզզոց, դժվարանում է շնչելը:

Տուբերկուլյոզային պլևրիտ

Տուբերկուլոզի կլինիկական դրսևորումներից մեկն է, առավել հաճախ դրսևորվում է երիտասարդների մոտ: Բնութագրվում է պլևրայի բորբոքմամբ (թոքերի կեղևային շերտ) և դրա մեջ հեղուկի կուտակմամբ:

Համատեղում է տուբերկուլյոզի և պլևրիտի ախտանիշները: Ինչպես պլևրիտը, այն նույնպես կարող է լինել չոր կամ թաց (էկսուդատիվ).

Չոր տուբերկուլյոզային պլևրիտը որոշվում է բժշկի կողմից ստետոսկոպի օգնությամբ թոքերը լսելիս, հիվանդության այս ձևի դեպքում բժիշկը լսում է պլևրայի շփման ձայնը:

Էկսուդատիվ ձևը կարող է լինել երեք տեսակի՝ ալերգիկ, պերիֆոկալ և պլևրայի տուբերկուլյոզ:

Ալերգիկը բնութագրվում է.

- ջերմաստիճանի բարձրացմամբ մինչև 38 °C;

- սրտի աշխատանքի արագացմամբ;
- կողային ցավերով:

Որոշ ժամանակ անց ախտանիշները նվազում ու անհետանում են, տեղի է ունենում օրգանիզմի ապաքինում:

Պերիֆոկալ տուբերկուլյոզային պլևրիտի ժամանակ նկատվում են.

- հիվանդության անսպասելի սկիզբ;
- բարձր ջերմություն;
- քրտնարտադրություն;
- սրտի աշխատանքի արագացում:

Ախտանիշները կարող են պահպանվել 21-ից 28 օր:

Ֆարինգիտ

Քրոնիկ բորբոքային գործընթաց, որը ազդում է կոկորդի լորձաթաղանթի վրա: Կարող է առաջանալ ինչպես տարբեր բնույթի հիվանդությունների հետևանքով, այնպես էլ՝ կոկորդի տարբեր վնասվածքներից կամ ալերգիաներից հետո: Ֆարինգիտը կարող է լինել սուր և քրոնիկ:

Սուր ֆարինգիտի պատճառ սովորաբար հանդիսանում են վիրուսները, մանրէները, սնկերը, ալերգիան կամ վնասվածքները: Այն բնութագրվում է հետևյալ ախտանիշներով.

- կոկորդում խտղտոցի և չորության զգացում;
- կուլ տալիս տհաճ զգացողություն;
- ականջների ցավ (որոշ դեպքերում);
- մարմնի ջերմաստիճանի բարձրացում;
- ընդհանուր թուլություն:

Քրոնիկ ֆարինգիտը հաճախ աղեստամոքսային հիվանդությունների հետևանք է (օրինակ՝ գաստրիտի): Կարող է լինել 3 տեսակի.

1. Կատարալ - բնորոշ է կոկորդի մակերևույթին լորձային-թարախային արտադրության առկայությունը:
2. Ատրոֆիկ - բնորոշ է կոկորդի լորձաթաղանթի չորությունը: Ընդ որում՝ կոկորդը դառնում է բաց վարդագույն:
3. Հիպերտրոֆիկ - նկատվում է կոկորդի լորձաթաղանթի կարմրություն և հաստացում:

Ընդհանուր առմամբ, քրոնիկ ֆարինգիտին բնորոշ չէ մարմնի ջերմաստիճանի բարձրացումը կամ թուլությունը: Հիվանդությունն ուղեկցվում է նույն ախտանշաններով, ինչ սուր ֆարինգիտը, այն տարբերությամբ, որ նրանք այնքան էլ վառ չեն դրսևորվում:

Թոքերի քրոնիկ աբստրուկտիվ հիվանդության

Կրճատ՝ COPD: Հիվանդություն է, որի դեպքում թոքերի հյուսվածքների բորբոքման հետևանքով դժվարանում կամ սահմանափակվում է դրանց մեջ օդի շրջանառությունը: Սովորաբար առաջանում է շնչառական ուղիների վրա բացասական գործոնների երկարատև ազդեցության հետևանքով, օրինակ՝ ծխելուց:

Ախտանիշներ.

- մշտական քրոնիկ խորխոտ հազ;
- հևոց ֆիզիկական ծանրաբեռնվածությունից հետո (օրինակ՝ աստիճան բարձրանալիս):

Թոքերի լայնացում

Հիվանդություն է, որի ժամանակ տեղի է ունենում ալվեոլայի ձգում (թոքերի կազմի մեջ մտնող հյուսվածք)՝ իր էլաստիկության հետագա կորստով: Առաձգականության կորուստը հանգեցնում է արյան մեջ թթվածնի հագեցվածության և ածխաթթու գազի դուրսբերման խախտման:

Ախտանիշներ.

1. ֆիզիկական ծանրաբեռնվածությունից հետո առաջացող հևոց;
2. սրտային անբավարարություն;
3. կողերի միջև տարածության ընդլայնում:

Որոշ դեպքերում կարող է անհրաժեշտ լինել վիրաբուժական միջամտություն:

Առաջին օգնություն. Շնչառության խանգարումներ

ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ

Սովորաբար մարդը շնչում է հանգիստ և ազատ, առանց որևէ դժվարության: Սակայն որոշ վնասվածքներ և հիվանդություններ կարող են դժվարացնել շնչառությունը: Ժամանակին ցուցաբերած առաջին օգնությունը կարող է զգալիորեն թեթևացնել տուժածի վիճակը և կանխել հետագա բարդությունները:

Շնչառության խանգարումը պետք է հայտնաբերել հնարավորիս արագ և ցուցաբերել համապատասխան առաջին օգնություն: Որոշ վնասվածքներ կամ հանկարծահաս հիվանդագին վիճակներ կարող են հանգեցնել շնչառության կանգի, որը տուժածի կյանքին անմիջական սպառնացող իրավիճակ է: Նման դեպքերում անհրաժեշտ է անհապաղ ցուցաբերել առաջին օգնություն:



Նկ. 5.1 Տուժածի կյանքը փրկելու համար ժամանակը խիստ սահմանափակ է:

Մարդու մարմնի նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ է թթվածնի անընդհատ մատակարարում: Շնչառական համակարգը շնչառության միջոցով մարմնի բջիջներին ապահովում է թթվածնի անհրաժեշտ քանակով և հեռացնում է ածխաթթու գազը: Ներշնչման ժամանակ թոքերը լցվում են օդով, և թթվածինն օդից անցնում է արյան մեջ: Արյան շրջանառության համակարգը մղում է թթվածնով հարուստ արյունը դեպի օրգանները և հյուսվածքները, որտեղ թթվածինն օգտագործվում է սննդանյութերից էներգիայի անջատման գործընթացում: Տարբեր գործողությունների իրականացման համար անհրաժեշտ է տարբեր քանակի էներգիա, հետևաբար՝ նաև թթվածին: Նույնիսկ թեթև մրսածություն ունեցող հիվանդը ծախսում է ավելի շատ էներգիա, քան առողջ մարդը, որովհետև հիվանդի մարմինը, նորմալ գործունեության համար անհրաժեշտ էներգիայից բացի, պահանջում է լրացուցիչ էներգիա՝ հիվանդությանը դիմակայելու և ապաքինվելու համար: Եթե այս կամ այն պատճառով բջիջները չեն ստանում թթվածին, նրանք սկսում են մահանալ: Թթվածնային քաղցի նկատմամբ հատկապես զգայուն է նյարդային հյուսվածքը, որից

կազմված է ուղեղը: Նրա բջիջներն առանց թթվածնի 4-6 րոպեի ընթացքում վնասվում են, իսկ 10 րոպեից վնասումը դառնում է անդառնալի (նկ. 5.1):

Շնչառությունը կատարվում է շնչառական, սրտանոթային, նյարդային և հենաշարժիչ համակարգերի համաձայնեցված, համատեղ գործունեության շնորհիվ: Այս համակարգերից յուրաքանչյուրի վնասվածքը կարող է բերել շնչառության խանգարումների:

ԴԺՎԱՐԱՑԱԾ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ

Դժվարացած շնչառության պատճառ կարող են լինել՝

շնչառական հիվանդությունները,

- շնչուղիների խցանումը,
- էլեկտրական հարվածը,
- ջրահեղձումը,
- սրտային հիվանդությունները,
- կրծքավանդակի կամ թոքի վնասվածքները,
- որոշ ալերգիկ ռեակցիաներ, .
- թմրանյութերի օգտագործումը,
- թունավորումները:

Դժվարացած շնչառության պատճառ կարող են հանդիսանալ նաև սթրեսը, ուժեղ հուզմունքը, վախը, ֆիզիկական աշխատանքը և այլն:

ՆՇԱՆՆԵՐԸ

Աղյուսակ 5.1 Շնչառական խանգարումների նշանները

Տուժածի ինքնազգացողությունը	Շնչառությունը	Մաշկը
• օդի պակասի զգացում, • շնչահեղձություն, • գլխապտույտ, • ցավեր կրծքավանդակում, • դող (սարսուռ), • ծակծկոցներ վերջույթներում:	• դանդաղ կամ հաճախացած շնչառություն, • խորը կամ մակերեսային շնչառություն, • աղմկոտ շնչառություն (խզզոց, խռխռոց, կլկլոց), • անկանոն շնչառություն:	• անբնական խոնավ մաշկ, • գունատ, կարմրած կամ կապտավուն մաշկ, • բերանի լորձաթաղանթի կապտավուն երանգ:

Դուք կարող եք հեշտությամբ որոշել, որ տուժածի շնչառությունը դժվարացած է: Տուժածը կարող է այնպիսի տեսք ունենալ, ասես չի կարողանում շունչ քաշել կամ շնչահեղձ է լինում: Նա կարող է շնչել սովորականից ավելի արագ, դանդաղ կամ անկանոն, ավելի խորը կամ մակերեսային: Շնչառության ժամանակ նա կարող է տարօրինակ ձայներ հանել, օրինակ՝ խզզոցներ, կլկլոց, խռխռոց: Դժվարացած շնչառության ժամանակ փոփոխվում է նաև մաշկի վիճակը: Այն սկզբում կարող է լինել անսովոր խոնավ և կարմրած, հետո՝ գունատ կամ կապտավուն: Տուժածը կարող է զգալ գլխապտույտ, ցավ կրծքավանդակում, թմրածություն ձեռքերում և ոտքերում: Հասկանալի է, որ տուժածը կարող է լինել տագնապած, անհանգիստ կամ վախեցած: Դժվարացած շնչառության նշանները բերված են 5.1 աղյուսակում: Դժվարացած շնչառության վաղ նշանների ճանաչումը և համապատասխան առաջին օգնության ցուցաբերումը հաճախ կանխում են տուժածի վիճակի վատթարացումը: Դժվարացած շնչառությունը կարող է բերել կյանքի համար սպառնալից վիճակների: Հնարավոր է, որ այն լինի առողջության լուրջ խանգարման կամ հիվանդության առաջին նշանը:

Զանազան պատճառներից առաջացած դժվարացած շնչառության դեպքում կարող են ի հայտ գալ տարբեր նշաններ: Սակայն պարտադիր չէ ճշգրիտ իմանալ դժվարացած շնչառության պատճառը, քանի որ նման դեպքերում ձեր կողմից տուժածին ցուցաբերվող օգնության գործողությունները նույնն են:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

- Ուշադիր զննեք շրջապատը, քանի որ դժվարացած շնչառության պատճառ կարող են հանդիսանալ թունավոր գազերը, որոնք հնարավոր է՝ դեռևս առկա են դեպքի վայրում, և ապահովեք անվտանգությունը:
- Նստեցրեք տուժածին հարմար դիրքով, արձակեք սեղմող կապերը:
- Խորհուրդ տվեք տուժածին հնարավորինս քիչ շարժվել, այսպիսով նվազեցնելով մարմնում թթվածնի պահանջը:
- Ապահովեք թարմ օդի բավարար քանակ:
- Վստահություն ներշնչեք և հանգստացրեք տուժածին:
- Եթե տուժածն ունի բժշկի կողմից նշանակված դեղամիջոցներ, ապա օգնեք ընդունել դրանք:
- Անհրաժեշտության դեպքում ահազանգեք շտապ օգնություն:

• Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:

ՀԵՎՈՑ

Հևոցը շնչառության խորության և հաճախության խանգարումն է, որն ուղեկցվում է օդի պակասի զգացումով: Հևոցի ժամանակ շնչառությունը դառնում է հաճախացած, մակերեսային կամ անկանոն: Հևոցը կարող է առաջանալ տարբեր պատճառներից: Այն կարող է լինել ինչպես ֆիզիկական ծանրաբեռնվածության կամ զգացմունքային սթրեսի հետևանք, այնպես էլ վնասվածքների կամ հիվանդությունների արդյունք:

ՆՇԱՆՆԵՐԸ

• հաճախացած, մակերեսային շնչառություն,

• անկանոն շնչառություն,

• շնչահեղձություն (օդի պակասի զգացում),

• վախ և անհանգստություն,

• գլխապտույտ,

• վերջույթների մատների թմրածություն կամ ծակծկոց:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

• Եղեք հանգիստ և փորձեք հանգստացնել տուժածին:

• Բարձրաձայն հաշվեք տուժածի յուրաքանչյուր շնչառական շարժումը և աստիճանաբար դանդաղեցրեք հաշիվը: Դրանով իսկ կնպաստեք տուժածի շնչառության ռիթմի դանդաղեցմանը: Եթե տուժածը փորձի ձեզ հետ միասին կենտրոնանալ և աշխատել դանդաղեցնել շնչառությունը, նրա վիճակն արագ կլավանա:

• Երբ հևոցը պայմանավորված է հուզմունքով կամ ֆիզիկական աշխատանքով, արյան մեջ ածխաթթու գազի խտությունը նվազում է: Նման դեպքերում խորհուրդ տվեք տուժածին շնչել ձեռքերի ափերի մեջ:

Եթե համոզված չեք, որ հևոցը պայմանավորված է ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ կամ զգացմունքային սթրեսով, ապա, նույնիսկ եթե տուժածի վիճակն արդեն բարելավվել է, միևնույն է, նա բժշկական հսկողության կարիք ունի և պետք է դիմի բժշկի:

ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԳ

Նկ. 5.2 Բերան-բերան ներփչում կատարելու տեխնիկան:

Շնչառության կանգ կարող է առաջանալ տարբեր վնասվածքների, հիվանդությունների կամ շնչուղիների անցանելիության խանգարման հետևանքով: Շնչառության կանգը վիճակ է, երբ տուժածը դադարում է ինքնուրույն շնչել: Շնչառության կանգի դեպքում, արյան մեջ թթվածնի կտրուկ նվազման հետևանքով, վնասվում են բոլոր հյուսվածքները, խաթարվում է մարմնի բոլոր համակարգերի գործունեությունը, ինչը շատ կարճ ժամանակահատվածում կարող է բերել սրտի կանգի և մահվան: Ուստի, տուժածի կյանքը փրկելու նպատակով, պետք է անհապաղ սկսել կատարել արհեստական շնչառություն:

Նկ. 5.3 Բերան-քիթ ներփչում կատարելու տեխնիկան:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ

Արհեստական շնչառությունը շնչառություն չունեցող տուժածի թոքերի մեջ օդի ներփչման գործողությունների հաջորդականությունն է, որը կատարվում է արյան մեջ թթվածնի անհրաժեշտ քանակի ապահովման նպատակով: Շնչելիս մենք օգտագործում ենք մթնոլորտային օդում պարունակվող թթվածնի միայն մի մասը (ներշնչում ենք 21% թթվածնով, իսկ արտաշնչում ենք 16% թթվածնով օդ): Հետևաբար արտաշնչած օդում թթվածնի քանակը լիովին բավարար է տուժածին փրկելու համար: Արհեստական շնչառություն կատարելու անհրաժեշտությունը դուք պարզում եք առաջնային զննման ժամանակ, երբ հայտնաբերում եք, որ տուժածը չի շնչում, բայց ունի անոթազարկ: Այդ դեպքում պետք է շատ արագ սկսել կատարել արհեստական շնչառություն, քանի որ տուժածի կյանքը փրկելու համար կարևոր են նույնիսկ վայրկյանները: Եթե տուժածն ունի արհեստական ատամնաշար, մի հանեք այն: Հեռացրեք արհեստական ատամնաշարը միայն այն դեպքերում, եթե այն թուլացել, կոտրվել կամ տեղաշարժվել է և խանգարում է ձեզ:

Բերան-բերան ներփչումներ

Բերան-բերան ներփչում կատարելու համար փակեք տուժածի քթանցքերը, խորը շունչ քաշեք և, ձեր բերանով ամբողջությամբ ընդգրկելով տուժածի բերանը, կատարեք ներփչում (նկ. 5.2)։ Ձեր հայացքն ուղղեք տուժածի կրծքավանդակին։ Ներփչեք այնքան, մինչև տեսնեք, որ տուժածի կրծքավանդակը բարձրացավ։ Ներփչելուց հետո ուղղվեք և բաց թողեք տուժածի քթանցքերը։

Բերան-քիթ ներփչումներ

Նկ. 5.4 Ծծկեր երեխայի շնչուղիները բացելիս գլուխը հետ մի՛ տարեք։

Բերան-քիթ ներփչում կատարելու համար փակեք տուժածի բերանը, խորը շունչ քաշեք և, ձեր բերանով ընգրկելով տուժածի քթանցքերը, կատարեք ներփչում (նկ. 5.3)։ Ձեր հայացքն ուղղեք տուժածի կրծքավանդակին։ Ներփչեք այնքան, մինչև տեսնեք, որ տուժածի կրծքավանդակը բարձրացավ։ Ներփչելուց հետո ուղղվեք և մի փոքր բացեք տուժածի բերանը։

ԲԵբան-բեբան և քիթ ներփչում

Բերան-բերան և քիթ ներփչումը կատարում են ծծկեր երեխային արհեստական շնչառություն կատարելիս։ Ձեր ձեռքն անընդհատ պահեք երեխայի ճակատին, քանի որ ծծկեր երեխայի գլուխն անկայուն է։ Շնչուղիները բացելիս ծծկեր երեխայի գլուխը հետ մի՛ տարեք, այլ բարձրացրեք միայն կզակը (նկ. 5.4)։ Խուսափեք ծծկեր երեխայի կզակին և պարանոցին ցանկացած ճնշում գործադրելուց, քանի որ նրա շնչուղիները կարող են փակվել։ Ձեր բերանով ամբողջությամբ ընդգրկեք երեխայի բերանն ու քիթը և կատարեք ներփչում։ Ներփչված օդի ծավալը չպետք է գերազանցի ձեր այտերով ընգրկվող օդի ծավալը։

Ներփչումներ ողնաշարի վնասվածքներով տուժածին

Նկ. 5.5 Ողնաշարի ենթադրվող վնասվածքներով տուժածի շնչուղիները բացելիս բարձրացրեք նրա կզակը՝ առանց գլուխը հետ տանելու։

Եթե ենթադրում եք, որ վնասված է տուժածի ողնաշարը, ապա շնչուղիների բացումը պետք է կատարել այլ ձևով։ Առանց տուժածի գլուխը հետ տանելու, բարձրացրեք նրա կզակը (նկ. 5.5), ինչը լիովին բավական է օդի՝ թոքեր անցնելու համար։ Եթե շներփչում կատարելիս օդը, այնուամենայնիվ, թոքեր չի անցնում, գլուխը զգուշորեն մի փոքր հետ տարեք։ Միայն

հազվադեպ դեպքերում է, որ տուժածի գլուխն ավելի հետ տանելու կարիք է լինում։

Հիշեք, որ ամեն դեպքում շնչառություն չունեցող տուժածի համար առաջնայինը թթվածնի մատակարարումն է։

Ներփչումների խորությունը

Ներփչումները պետք է կատարվեն համաչափ, յուրաքանչյուրը մոտավորապես 1,5 վայրկյանի ընթացքում։ Ներփչվող օդի քանակը պետք է լինի այնքան, որ տուժածի կրծքավանդակը բարձրանա, իսկ ծծկեր երեխայի դեպքում չպետք է գերազանցի ձեր այտերով ընդգրկվող օդի ծավալը։ Ներփչումից հետո ուղղվեք, որպեսզի չներշնչեք տուժածի արտաշնչած օդը, և նայեք տուժածի կրծքավանդակին։ Եթե ներփչելիս բարձրանում է տուժածի որովայնը, նշանակում է, որ ներփչած օդն անցնում է ստամոքս։ Դրա հիմնական պատճառներն են՝

Տուժածի գլուխը բավականաչափ հետ չտանելը, որի հետևանքով շնչափողի մուտքը մասամբ փակ է, և ներփչած օդը կարող է մղվել դեպի ստամոքս։

• Չափազանց մեծ ծավալի օդ ներփչելը։ Այս դեպքում օդը, լրիվ լցնելով թոքերը, սկսում է անցնել ստամոքս։ Ուստի, տուժածի կրծքավանդակը բարձրանալիս՝ դադարեցրեք ներփչումը։

• Կտրուկ ներփչում կատարելը, որի հետևանքով ստեղծվում է բարձր ճնշում, և օդի մի մասը, չհասցնելով անցնել թոքեր, լցվում է ստամոքս։

• Օդի անցումը ստամոքս կարող է բերել վերջինիս պարունակության հետմղմանը, ինչը զգալիորեն կբարդացնի ձեր գործը։ Այս դեպքում, շնչուղիների խցանումը կանխելու համար, տուժածին արագ շրջեք կողքի և մաքրեք բերանի խոռոչը։ Բերանի խոռոչը մաքրելուց հետո շրջեք տուժածին մեջքի վրա և շարունակեք կատարել արհեստական շնչառություն։

Ներփչումների հաճախությունը

Ներփչումների հաճախությունը պետք է համապատասխանի տուժածի տարիքին։

Չափահաս (8 տարեկանից բարձր) - Կատարեք մեկ ներփչում՝ յուրաքանչյուր 4-5 վայրկյանը մեկ (րոպեում 12-15 ներփչում)։

Անչափահաս երեխաներ (1-8 տարեկան) - Կատարեք մեկ ներփչում՝ յուրաքանչյուր 3 վայրկյանը մեկ (20 ներփչում րոպեում)։

Ծնկեր երեխաներ (մինչև 1 տարեկան) - Կատարեք առնվազն մեկ ներփչում՝ յուրաքանչյուր 3 վայրկյանը մեկ (ռոպեում առնվազն 20 ներփչում)։

Դուք պետք է շարունակեք արհեստական շնչառությունը, մինչև՝

վերականգնվի տուժածի շնչառությունը,

- այլևս չշոշափվի տուժածի անոթազարկը,
- ձեզ փոխարինի մեկ ուրիշ փրկարար,
- ժամանի շտապ օգնությունը,
- շրջապատը դառնա վտանգավոր,
- դուք այլևս ի վիճակի չլինեք շարունակել։

Շնչառության վերականգնման դեպքում տուժածին բերեք կողքի ապահովության դիրքի (տե՛ս "ԿՈՂՔԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԴԻՐՔ")։ Տուժածի անոթազարկի բացակայության դեպքում սկսեք կատարել սրտի աշխատանքի և շնչառության վերականգնում (տե՛ս "ՍՐՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ")։

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ



Սովորեցինք, թե ինչպես ճանաչել և օգնություն ցուցաբերել տարբեր պատճառներից առաջացած շնչառական դժվարությունների դեպքում:

Տուժածի զննման ժամանակ անհրաժեշտ է ստուգել շնչառական խանգարումների նշանների առկայությունը: Շնչառական խանգարումների պատճառ կարող են հանդիսանալ ասթման, ինքնաբերական պնևմոթորաքսը, մի շարք այլ

հիվանդություններ կամ վնասվածքներ։ Շնչառական խանգարումների դեպքում ցուցաբերվող առաջին օգնության հիմնական քայլերն են՝

Օգնեք տուժածին ընդունել հարմար դիրք:

• Հանգստացրեք տուժածին:

• Ահազանգեք շտապ օգնություն:

• Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և ցուցաբերեք համապատասխան առաջին օգնություն:

Եթե այս կամ այն պատճառով տուժածը դադարել է շնչել՝

Ահազանգեք շտապ օգնություն:

• Շրջեք տուժածին մեջքի վրա:

• Բացեք շնչուղիները։ Անհրաժեշտության դեպքում կատարեք բերանի խոռոչի մատներով մաքրում:

• Կատարեք 2 ներփչում, որից հետո շոշափեք անոթազարկը։ Անոթազարկի առկայության դեպքում վերստուգեք շնչառությունը և շնչառության բացակայության դեպքում շարունակեք կատարել արհեստական շնչառություն:

• Յուրաքանչյուր րոպեն մեկ շոշափեք տուժածի անոթազարկը և գործեք իրավիճակին համապատասխան:

4. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս.Հ.Սիսակյան, Տ.Վ.Թանգամյան, Գ.Ի.Միրզոյան Կենսաբանությաուն Մարդ Տիգրան Մեծ 2014
2. Ս.Մինասյան, Ծ.Մինասյան, Հ.Հոհաննիսյան Կենսաբանություն Մարդ Մակմիլան Արմենիա 2000
3. Ն.Ի Սոնին, Մ.ՌՍապին Կենսաբանություն Մարդ Անտարես 2008
4. https://www.med-practic.com/arm/130/view_first_aid.html
5. http://www.emergency.am/am/Arajin_ognutyun?id=911

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեսավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՆ՝ Հետախուզության անցկացման առանձնահատկությունները քաղաքում

ԿԱՏԱՐՈՂ՝ Արման Գուրջանյան

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ՆԶՊ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Վանաձոր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Հետախուզությունը քաղաքում	4
Եզրակացություն	13
Օգտագործված գրականության ցանկ	14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեման իրազեկում է ծառայության ընթացքում նախազորակոչիկների մասնագիտության ընտրության հարցում որոշակի կողմնորոշման հնարավորության ընձեռում, իսկ նման կողմնորոշման համար կարևոր նախապայման է նախնական գիտելիքների և հմտությունների ձեռք բերումը նախքան զորակոչը;

Հետախուզություն, թշնամու զորքերի (կամ մրցակցի) վիճակի, գործողությունների և մտադրությունների, ինչպես նաև տեղանքի, ճառագայթային, քիմիական իրադրության և այլնի մասին տվյալներ հավաքելու միջոցառումների ամբողջությունը, որն անհրաժեշտ է հակառակորդին բազմակողմանիորեն գնահատելու և ճիշտ որոշում ընդունելու, իր անվտանգությունն ապահովելու և նրա նկատմամբ առավելության հասնելու համար ռազմական ուժերի, ռազմական գործողությունների, քաղաքականության կամ տնտեսության բնագավառում: Կազմակերպում է ցամաքային, ռազմաօդային, ռազմածովային և հակաօդային պաշտպանության զորատեսակների հրամանատարությունը: Հետախուզության միջոցների և ձևերի զարգացումը սերտորեն կապված է պատերազմավարության միջոցների և ռազմական գործողությունների փոփոխման հետ: Դրանց կատարելագործման համեմատ հետախուզության նշանակությունը անընդհատ մեծացել է:

Հետախուզությունը կարող է օգտագործել ինֆորմացիայի հավաքման ինչպես օրինական (օրինակ՝ բաց աղբյուրների տվյալների հավաքում և վերլուծություն, արտասահմանյան ռադիոկայանների ունկնդրում, հետախուզական արբանյակների օգնությամբ հետևում), այնպես էլ անօրինական միջոցներ, որոնք վերաբերում են «լրտեսության» և «ինֆորմացիայի գողության» ոլորտներին:

Թշնամու հետախուզության դեմ պայքարը կոչվում է հակահետախուզություն:

Ըստ նշանակության

- *Ռազմական հետախուզություն* – գործող կամ հավանական հակառակորդի, նրա ռազմական ռեսուրսների, մարտական հնարավորությունների և խոցելիության, ինչպես նաև ռազմական գործողությունների թատերաբեմի մասին տվյալների ստացման և մշակման միջոցառումների համալիր: Այն բաժանվում է *մարտավարական հետախուզության*, որը ներառում է նաև ինժեներական հետախուզությունը, և *ռազմավարական հետախուզության*,

- *Քաղաքական հետախուզություն* – գործունեություն, որն ուղղված է օտարերկրյա պետության ներքին և արտաքին քաղաքականության մասին տեղեկություններ ստանալուն,
- *Տնտեսական հետախուզություն* – արտաքին հետախուզության տեսակ, որի օբյեկտներն են արդյունաբերությունը, տրանսպորտը, առևտուրը, ֆինանսական և դրամավարկային համակարգերը, բնական ռեսուրսները և այլն,
- *Արդյունաբերական լրտեսություն*,
- *Գիտատեխնիկական հետախուզություն* – արտաքին հետախուզության տեսակ, որի օբյեկտ են հանդիսանում օտարերկրյա պետությունների գիտատեխնիկական հիմնարկները և գիտատեխնիկական ներուժը,
- *Գործարարական հետախուզություն*,
- *Արտաքին հակահետախուզություն* – արտաքին հետախուզության տեսակ, որի օբյեկտներն են օտարերկրյա պետությունների հետախուզական ծառայությունները, դրանց գործունեության մասին տեղեկություններ կորզելը,
- Միջազգային ահաբեկչական կազմակերպությունների և արտասահմանում նախապատրաստվող պետական հեղաշրջումների (սեփական երկրում) մասին տեղեկությունների ձեռքբերում,
- Միջազգային կազմակերպված հանցավորության մասին տեղեկությունների ձեռքբերում:

Ըստ օգտագործված միջոցների

- Զորային հետախուզությունն իրականացվում է ռազմական գործողությունների ժամանակ հետախուզական ստորաբաժանումների, օգտագործվում են դիտակայանները, հետախուզական պարեկախմբերը, հետախուզական ջոկատները, հետախուզական խմբերը, որոնումներ, դարանակալում իրականացնող խմբերը, մարտի հետախուզում իրականացնող ստորաբաժանումներ, օգտագործվում է տեղի բնակիչների հարցումը, գերիների և փախչողների հարցաքննությունը, հակառակորդից զավթված փաստաթղթերի, տեխնիկայի և սպառազինության ուսումնասիրությունը,
- Գործակալական հետախուզությունը ներառում է հետախուզական մարմինների գործողությունները, որոնք ուղղված ենհակառակորդի մասին անհրաժեշտ տեղեկություններ կորզելու հատուկ միջոցների և գործակալների միջոցով,
- Տիեզերական հետախուզությունն արտասահմանյան բանակներում իրականացվում է Երկրի արհեստական արբանյակների (հետախուզական և օդերևութաբանական) միջոցով և համարվում է հետախուզության ռազմավարական և օպերատիվ մասշտաբի միջոց,

- Օդային հետախուզությունն իրագործվում է օդային նկարահանումների, դիտարկումների և բազմազան այլ միջոցներով,
- Նավային հետախուզությունը կատարվում է նավատորմի վերջրյա և ստորջրյա ուժերով, տարբեր տեխնիկական միջոցներով,
- Ռադիոէլեկտրոնային հետախուզությունը ներառում է ինչպես բանակցությունների գրավումը՝ ռադիոհետախուզությունը, այնպես էլ կապի համակարգերի գրավումը տեխնիկական համակարգերի միջև և ռադիոճառագայթման աղբյուրների հայտնաբերումը՝ ռադիոտեխնիկական հետախուզություն,
- Կիբեռլրտեսություն։

Նշվում է նաև բաց աղբյուրների հիման վրա կատարվող հետախուզության մասին։ Այն իրականացվում է ոչ միայն հատուկ հետախուզական ծառայությունների, այլև պետական ու ոչ պետական այլ կազմակերպությունների կողմից։

Հետախուզական ցիկլը ներառում է՝

- Հետախուզական տեղեկատվության հավաքում,
- Ստացված տեղեկությունների ստուգում,
- Հետախուզական տեղեկատվության վերլուծություն։
- եզրակացությունների հասցնում շահագրգիռ ատյաններին։

ԱՄՆ-ում ընդունված է առանձնացնել հետախուզական ցիկլի հետևյալ տարրերը՝ տեղեկություններ հավաքման ցուցում, տեղեկատվության հավաքագրում, մշակում, տարածում և օգտագործում։

Հետախուզական գործունեությունը ներառում է տեղեկատվության հավաքումը, նրա արժանահավատության գնահատումը և առանձին փաստերի միավորումն ընդհանուր պատկերի մեջ։ Վերլուծաբանները գնահատում և ինտեգրում են տեղեկատվությունը, մեկնաբանում դրա նշանակությունն ու նշանակալիությունը։ Ընդ որում, մեծ նշանակություն ունի ստացված տեղեկատվության արժանահավատության գնահատումը։ Օրինակ, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ բրիտանական հետախուզությունը ստացված տեղեկատվության արժանահավատությունը գնահատել է A1-ից մինչև D5 տառերի և թվերի համակարգի միջոցով։ Տառով նշվել է աղբյուրի հուսալիությունը, թվանշանով՝ իրականությանը

տեղեկատվության համապատասխանության աստիճանը։ Այսպես, օրինակ, եթե գործակալը, որն աշխատում է հոսպիտալում, հայտնում է սպանվածների ու վիրավորների թվի մասին, ապա այդ ինֆորացիան նշվում է A տառով, իսկ եթե նա պատմում է որևէ նավի վնասվելու մասին, ապա այն ստանում է C տառը։ Օդային հետախուզության լուսանկարները միշտ չէ, որ գնահատվել են ամենաբարձր գնահատականով, քանի որ այստեղ հնարավոր էին լուսանկարների ապակոդավորիչների սխալները։ Այս տեղեկատվությունը կարող է ունենալ A2, B1 և ավելի ցածր գնահատականներ։ Ընդ որում, ռադիոգրերի, հեռագրերի կամ հեռախոսազրույցների գաղտնալսման շնորհիվ ստացված տեղեկատվությունը հաճախ գնահատվում է ամենաբարձր գնահատականով, սակայն հակառակորդը կարող է տեղեկատվություն տրամադրել հատուկ՝ իմանալով, որ նրա գաղտնագրերը հայտնի են կամ որ նրա հաղորդագրությունները հայտնվում են հակառակորդի մոտ։

ԱՄՆ ռազմական հետախուզության նախկին աշխատակից Վ. Պլեթն իր «Ռազմավարական հետախուզության տեղեկատվական աշխատանքը» գրքում գրում է, որ փաստն ինքնին ոչինչ չարժե։ Այն պետք է ներգրավվի համակարգում։ Վ. Պլեթը ներկայացնում է հետևյալ օրինակը. ահա մենք իմանում ենք, որ ԽՍՀՄ-ում տարեկան ինժեների որակավորում է ստանում 10 հազար մարդ, բայց այդ փաստն ինքնին ոչինչ չարժե, քանի որ հայտնի չէ, թե կոնկրետ քանի ինժեներ է անհրաժեշտ, ինչ չափով են նրանք օգտագործվում ռազմական գործում, քանի մարդ է ինժեների որակավորում ստանում ԱՄՆ-ում։ Իսկ երբ այդ փաստը դրվում է իր նման մյուսների փաստերի համակարգում, միայն այդ ժամանակ է այն դառնում ինչ-որ հարցի պատասխան[1]։

Հավաքված տեղեկատվության տարրերը զգալիորեն տարբերվում են ճշգրտությամբ և ամբողջականությամբ։ Բացի այդ, որքան էլ հավաստի լինեն հետախուզական տվյալները, դրանք ժամանակի ընթացքում կորցնում են իրենց արժեքը, ուստի դրանք պետք է պարբերաբար ստուգվեն և թարմացվեն։

Հետախուզությունը մեծ դժվարությունների է բախվում նույնիսկ խաղաղ ժամանակ տեղեկատվություն ստանալու ժամանակ։ Այսպես, վստահություն առաջացնող տեղեկատվության աղբյուրը կարող է սխալվել կամ միտումնավոր ապատեղեկատվություն հաղորդել։ Բռնապետական ռեժիմները հազվադեպ են թույլ

տալիս բաց մամուլում իրենց երկրների մասին հավաստի և ամբողջական վիճակագրական տվյալների հայտնվելը, նման ռեժիմներով երկրներում հրապարակվող բոլոր նյութերը գրաքննության են ենթարկվում և հաճախ միտումնավոր խեղաթյուրված տեղեկություններ են պարունակում: Նման երկրների ամբողջական շրջաններփակ են լինում այցելության համար: Ոչ ժողովրդավարական երկրներում զինված ուժերին վերաբերող գրեթե ցանկացած հարց համարվում է պետական գաղտնիք:

Այլ երկրներում հիմնական դժվարությունները կարող են լինել լեզվական արգելքը և հուսալի քարտեզների բացակայությունը:

Պատերազմի ժամանակ ավելի դժվար է ժամանակին հավաստի տեղեկություններ ստանալ հակառակորդի մասին: Օդային և ցամաքային հետախուզությունը մարտական գործողությունների ժամանակ կարող է դժվար լինել հակառակորդի կողմից հակազդեցության կամ բարդ եղանակային պայմանների պատճառով: Անբարյացակամ տրամադրված տեղացիները կարող են ոչ հավաստի տեղեկություններ տալ կամ հրաժարվել տեղեկատվություն տալուց: Ռադիոգրավումը կանխելու համար հակառակորդը կարող է օգտագործել բարդ կոդեր կամ ընդհանրապես արգելել իր ռադիոկայանների աշխատանքը (ռադիոլռության): Բացի այդ, հակառակորդը կարող է կիրառել քողարկում և ապատեղեկատվություն:

Դրա հետևանքով, հատկապես ռազմական գործողությունների ժամանակ, հակառակորդի մասին տեղեկությունները հաճախ լինում են սուղ, հատվածական, անհուսալի և հակասական: Դրա համար անհրաժեշտ է հետախուզական միջոցառումների մանրակրկիտ պլանավորում և տեղեկատվության հնարավորինս մեծ թվով անկախ աղբյուրների օգտագործում:

Հետախույզի իրավաբանական կարգավիճակ

Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերին համապատասխան՝ հակամարտության մեջ գտնվող կողմի զինված ուժերի կազմից ցանկացած անձ, որը հակառակ կողմի վերահսկողության տակ է հայտնվում այն ժամանակ, երբ նա զբաղվում է լրտեսությամբ (հակառակորդի քաղաքացիական հագուստով կամ համազգեստով), ռազմագերու կարգավիճակ ստանալու իրավունք չունի, և նրա հետ կարող են վարվել որպես լրտեսի, այսինքն՝ նրան կարող են ենթարկել քրեական հետապնդման:

Սակայն, եթե հետախույզը, որը հակամարտության մեջ գտնվող կողմի զինված ուժերի զինծառայող է, ժողովրդական աշխարհազորի անդամ կամ պարտիզանական շարժման մասնակից և հավաքում կամ փորձում է տեղեկատվություն հավաքել հակառակորդի կողմից վերահսկվող տարածքում, կրում է համապատասխան համազգեստ կամ ունի տարբերանշաններ, ապա նա ճանաչվում է որպես կոմբատանտ և գերի ընկնելու դեպքում ունի ռազմագերու կարգավիճակ:

Հակամարտության մեջ գտնվող կողմի զինված ուժերի կազմից այն անձը, որը չի բնակվում հակառակ կողմից գրավված տարածքում, և որն զբաղվում է այդ տարածքում լրտեսությամբ, չի կորցնում ռազմագերու կարգավիճակի իր իրավունքը, և նրա հետ չեն կարող վարվել որպես լրտեսի, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարածքը բռնազավթվել է մինչև այն, երբ այն կրկին միանում է այն զինված ուժերին, որոնց այն պատկանում է:

Համապատասխանաբար, միջազգային իրավունքի տեսանկյունից հետախույզներ կարող են համարվել միայն ճակատային հետախույզները (հետախուզական-դիվերսիոն խմբերի անդամները), որոնք կրում են իրենց զինված ուժերի համազգեստը: Բոլոր գործակալական հետախույզները, ըստ սահմանման, լրտեսներ են և ռազմագերու կարգավիճակի իրավունք չունեն:

Ապագա զորակոչիկի հետախույզի մասնագիտության ընտրության հարցում կարևորվում է մասնագիտական գիտելքների որոշակի պաշար կուտակելու անհրաժեշտությունը , ուստի միևնույն ժամանակ ի նկատի ունենալով վերջին տարիների ընթացքում հատկապես մեր արևելյան հակառակորդների պարբերական դիվերսիոն ոտնձգությունները կարևորվում է նման մասնագիտական փորձ ունենալու անհրաժեշտությունը:

Ուսումնասիրությունները հետախույզի զինվորական մասնագիտություն

նախընտրող զորակոչիկին հնարավորություն կտա, կիրառելով արտադպրոցական լրացուցիչ պարապմունքներ, ձեռք բերել լրացուցիչ նախնական գիտելիքներ ընտրած մասնագիտության մասին: Հետախուզումը քաղաքում Հակառակորդի քաղաքի մատույցներ և անմիջականորեն քաղաք դուրս եկող խմբավորումների, դրանց կազմի և դուրս գալու ժամանակի որոշումը, քաղաքի գրավման գործողության մտահղացման, գլխավոր և այլ հարվածների ուղղության բացահայտումը, քաղաքի շրջանցման, շրջապատման, գրավման նպատակով կատարվելիք գործողությունների բնույթի, հիմնական խմբավորումների կազմի որոշումը, գերճշգրիտ զենքի տեղակայման վայրերի (կոորդինատների) և դրանց կիրառման նախապատրաստման բացահայտումը, հակառակորդի պահեստի (երկրորդ էշելոնի) քաղաքին մոտենալը բացահայտելը, ստորգետնյա հեռահաղորդակցությունների վիճակի և դրանց օգտագործման վերաբերյալ

հակառակորդի հնարավոր մտադրությունների որոշումը, հակառակորդի զորքերի զորաշարժի, մոտեցման և տարհանման համար հարմար ուղիների բացահայտումը, զորամասերի տեղաբաշխման շրջանների սանիտարահամաճարակային վիճակի պարզումը: Քաղաքի պաշտպանական մարտի ընթացքում հետախուզության խնդիրներն են. հակառակորդի խմբավորման ճգրտումը, գլխավոր ուժերի հիմնական ջանքերի կենտրոնացման ուղղության որոշումը, հակառակորդի երկրորդ էշելոնի և պահեստի տեղաշարժման դիտարկումը (հետևելը դրանց տեղաշարժին), դրանց կենտրոնացման շրջանների, ծավալման բնածերի և մարտի մեջ մտնելու ժամանակի որոշումը, կառավարման կետերի, կապի հանգույցների, հրետանու կրակային դիրքերի բացահայտումը, հակառակորդի հարձակվող զորամասերի թևերում խոցելի տեղերի բացահայտումը, փոփո- խությունների բացահայտումը հակառակորդի խմբավորման մարտական կազմում, նոր մարտավարական հնարքների բացահայտումը հակառակորդի գործողություններում:

Քաղաքում հետախուզում կատարելուն կարող են ազդել մեծ ավերածությունների, փլուզումների, հրդեհի խոշոր օջախների առաջացման հավանականությունը, մեռյալ

տարածությունների առկայությունը, ստորերկրյա հեռահաղորդակցությունները, բաձրահարկ շենքերը, ծուխը, փոշին:

Պաշտպանության արտաքին գոտու սահմաններ կարող են դուրս բերվել հետախուզական դետքեր, հետախուզական խմբեր, որոնք մեր զորքերի պաշտպանական մարտի ժամանակ կհետախուզեն հարձակվող հակառակորդին: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հակառակորդի քաղաքը շրջանցելով հարվածելու համար նախատեսված թևային խմբավորումների բացահայտմանը:

Պաշտպանության արտաքին գոտուց մեր զորքերի հետքաշման ժամանակ հետախուզական խմբերը կարող են թողնվել հակառակորդի թիկունքում և շարունակել առաջադրանքի կատարումը:

Նախորդ մարտական գործողությունների ժամանակ հակառակորդի թիկունք նետված հետախուզական դետքերը առանձին դեպքերում, ելնելով իրադրությունից, կարող են դուրս բերվել սեփական զորքերի դիրք:

Ընդհանուր հարցերից զատ գումարտակի (վաշտի) հրամանատարը որոշում է, ինչ շինություններում սարքավորել թաքստոցները (ապաստարանները), զինամթերքի, ՎՔՆ-ի, պարենի, խմելու ջրի, դեղորայքի և նյութական այլ միջոցների լրացուցիչ պաշարների ստեղծման, հետախուզության պահեստի զորաշարժի համար անցումներ սարքելու խնդիրները:

Ոչ մեծ բնակավայրի հետախուզումը հետախուզական դետքն սկսում է այն հեռվից դիտարկելով: Հատուկ ուշադրություն է դարձվում առանձին շինվածքների, աշտարակների, այգիների, անտառակների վրա, որտեղ կարող են տեղաբաշխվել հակառակորդի դարանակալողները, դիպուկահարները և պահպանողները, առանձին զենքերը և հակատանկային ղեկավարվող հրթիռները, որոնք պաշտպանում են բնակավայրերի մերձուղիները: Այդ խնդիրն առաջին հերթին կատարում է դետքային մեքենան: Դետքային մեքենան (դիտորդները) պատուհաններ չունեցող տնտեսական շինությունների ուղղությամբ ծածուկ դուրս է գալիս ծայրամաս: Հետախույզները բնակելի և տնտեսական շինություններն սկզբում զննում են դրսից, իսկ հետո ներսից: Նահանջելիս հակառակորդը կարող է ականապատած լինի տան և կից կառույցների մուտքերը: Այդ պատճառով պետք է դռները, դարպասները բաց անել մանրազնին ստուգելուց հետո:

Ծայրամասերի շենքերը զննելուց և այնտեղ հակառակորդին չհայտնաբերելուց հետո դետքային մեքենայի հրամանատարն արդյունքների մասին զեկուցում է հետախուզական դետքի հրամանատարին և նրա թույլտվությամբ շարունակում բնակավայրի հետագա ուսումնասիրումը: Հետախուզական դետքի մնացած կազմը մտնում է բնակավայր, պատրաստ դետքային մեքենայի գործողությունները կրակով պաշտպանելու: Հատուկ ուշադրություն է դարձվում առավել ամուր շենքերին, որոնցից ապահովվում է փողոցների դիտումն ու գնդակոծումը: Նկատելով հակառակորդին դետքային մեքենայի հրամանատարը ռադիոյով կամ ազդանշանով այդ մասին զեկուցում է դետքի հրամանատարին: Շարունակելով կատարել առաջադրանքը դետքը շրջանցում է զբաղեցված օբյեկտը թաքնվելով շինությունների, ցանկապատների, այգիների հետևում: Հետախուզական դետքի հրամանատարն անձնական դիտարկմամբ ճշտում է հակառակորդի կազմն ու դիրքը և ձեռք բերված

տեղեկությունները ռադիոյով հայտնում է ավա պետին:

Եթե հակառակորդը հայտնաբերված չէ, դետքային մեքենան, թաքնվելով եզրային կառույցների հետևում, ուշադիր զննում է դիմացի տարածքը ճշտելով հետախուզության նախնական տվյալները: Վերջնականապես համոզվելով, որ հակառակորդն այդտեղ չէ, դետքային մեքենայի հրամանատարը տալիս է Ճանապարհն ազատ է ազդանշանը:

Քաղաքում մարտ վարելիս հետախուզության արժեքավոր տեղեկություններ կարելի է ձեռք բերել դիտարկմամբ, որոնմամբ և դարանակալումով: Ընդ որում հետախույզները պետք է լավ իմանան պաշտպանության ժամանակ հակառակորդի կողմից կիրառվող մարտավարական հնարքները:

Կրակային միջոցները կարող են տեղավորվել տարբեր հարկերում: Կիսանկուղներում և առաջին հարկերում խոշոր տրամաչափի զենքերը և կառավարման կետերը, իսկ ավելի բարձր փոքր տրամաչափի զենքերը, հակատանկային միջոցները, գնդացիրները: Շենքերի ձեղնահարկերում և տանիքներին տեղակայվում են զենիթային գնդացիրների կրակային հաշվարկները, դիպուկահարները,դիտակետերը: Նկուղները և ստորգետնյա հեռահաղորդակցությունները սովորաբար օգտագործվում են որպես հակառակորդի կենդանի ուժի և կրակային միջոցների թաքստոցներ: Դրանցում կարող են տեղավորվել նաև պարենի, զինամթերքի և այլ գույքի պահեստները: Հաուբիցային հրետանային մարտկոցները սովորաբար գտնվում են այգիներում, պուրակներում, ծառուղիներում և ամայի տեղերում:

Գևորգ և Գոհար Վարդանյաններ

Հեռվից զննելուց հետո, թաքնվելով բնական թաքստոցներում, հետախույզները թափանցում են բնակավայր, զննում են ծայրամասերի շինությունները և հարցում են անցկացնում տեղի բնակիչների շրջանում: Պետք չէ ընդհուպ մոտենալ այն շինություններին ու տեղամասերին, որոնք տեսանելի են պատուհաններից ու դռներից: Խոշոր բնակավայրի փողոցների երկայնքով ձգվող տների հետախուզումը, որպես կանոն, կատարվում է դիտորդների երկու զույգով: Մեկը մյուսից ոչ մեծ հեռավորությամբ շարժվելով փողոցի հակառակ ուղղություններով[a] նրանք դիտարկում են հակառակ կողմը պաշտպանելով միմյանց: Շինությունները ներսիցզննելիս ավագ դիտորդը մնում է դրսում, պատրաստ օգնելու դիտորդներին և տեսողական կապ է պահպանում հրամանատարի հետ:

Քրիստինե Մկրտչյան ՀՀ ԶՈՒ հետախույզ

Դիտորդները, զննելով շենքի ներսը, մուտքի դուռը թողնում են բաց: Զննման ժամանակ պետք է հատուկ ուշադրություն դարձնել ձեղնահարկերին ու նկուղներին: Դատարկ շինությունում, փողոցում և բակում չի կարելի ձեռք տալ իրերին, առարկաներին, որովհետև հնարավոր է, որ դրանք ականապատված լինեն: Դռները շենքում բացվում են պարանի օգնությամբ, իսկ եթե հնարավոր չէ դրանք բացել, օգտագործվում են զենք, տեխնիկա, պայթուցիկ նյութեր: Շենք են մտնում շատ զգույշ, պատրաստ անմիջապես կրակ բացել այնտեղ նետված նռնակի պայթունից հետո: Դիտորդների գործողություններին հետևում է հրամանատարը, որը զննումից հետո բնակավայր է տանում դետքային ջոկը: Մարտական մեքենաներով կատարվող գործողությունների ժամանակ դետքային ջոկը դիտորդների զննումից հետո մեծ արագությամբ կտրումանցնում է բնակավայրը և միայն դրանից հետո անցնում է հետախուզական մարմնի միջուկը: Միջուկը շարժվում է դետքային ջոկի հետևից թաղամասից թաղամաս զննելով: Ականապատված շինություններն ու

արգելափակոցները նշվում են նշաձողերով կամ պատերին արված գրություններով: Հակառակորդի թողած նշանները նկարվում են և ձեռք բերված փաստաթղթերի հետ ուղարկվում ավագ պետին: Բնակավայրերից դուրս գալիս առջևի տարածքը մանրամասնորեն զննվում է, և հետագա շարժումը կազմակերպվում է աննկատ:

Քաղաքում դիտարկման համակարգը պետք է ապահովի շրջանաձև դիտարկումը, պաշտպանվածությունը շենքերի փլուզումից և հրետանային ու ականանետային կրակից, թաքստոցներ հաղորդակցությունների մուտքերով, փոխկապակցված դիտարկումը, պահեստային և օժանդակ դիտակետերի համակարգը: Դիտակետերն ու գաղտնալսման կետերը քաղաքում նպատակահարմար է տեղակայել հակառակորդի առջևի եզրին որքան հնարավոր է մոտ: Դիտարկումը կատարվում է տների արանքներում, փողոցների և նրբանցքների երկայնքով: Այն պետք է ապահովի փողոցների, շենքերի վերևի և ներքևի հարկերի զննումը: Քաղաքում տեղի ունեցող մարտի ժամանակ դիտարկումն ուժեղացվում է, ավելացվում է դիտակետերի քանակը: Հետախուզելու համար դիտակետերը, որպես կանոն, ստանում են առանձին օբյեկտ: Դիտակետերի միջև կապը պահպանվում է ռադիոյով, հեռախոսով, սահմանված ազդանշաններով, սուրհանդակների միջոցով: Փողոցների և հրապարակների զննման համար օգտագործվում են անկյունային տները (շենքերը): Դիտարկումն առավելապես կատարվում է արկերի բացած անցքերից կամ հատուկ բացված դիտաճեղքերից: Շենքի փլուզման հավանականությունը հաշվի առնելով պետք է նախատեսել դիտարկման տեղից առնվազն երկու ելք:

Միջոցներ են ձեռնարկվում նրա կենսունակությունը բարձրացնելու, հրդեհների դեմ պայքարի, մի կետից մյուսը տեղափոխվելիս անվտանգության ապահովման ուղղությամբ: Կոշիկներին փաթաթում են փափուկ կտոր, փայտե աստիճաններով բարձրանումիջնում են պատերին ավելի մոտ:

Հետախուզական դետքերը քաղաքում հետախուզություն են կատարում հետիոտն հնարավորինս օգտագործելով ստորգետնյա հեռահաղորդակցությունները: Որոնում կատարելու համար ստեղծվում են ոչ մեծ կազմ (4-8-ական մարդ) ունեցող խմբեր: Պետք է տեղաշարժվել կարճ թափվազքերով, թաքստոցից թաքստոց: Գործողությունները չպետք է շաբլոն բնույթ ունենան: Հետախուզական դետքի հետախուզման գոտին չպետք է գերազանցի 1-2 թաղամասը: Հետախուզման

հիմնական ուղղությունը պետք է փողոցը լինի:

Որոնման օբյեկտներն ընտրվում են փլատակներում և առանձին կառույցներում, որքան հնարավոր է մոտ առջևի եզրին կամ դրանից դուրս հաշվի առնելով գաղտնի մերձուղիների առկայությունը և խմբերի գործողությունների պաշտպանության հնարավորությունը մեր զորքերի հրետանու և առաջավոր ստորաբաժանումների կրակով: Օբյեկտներին մոտենալու առավել հարմար ճանապարհներ են շենքերի

նկուղները, բակերը, այգիները և նեղ անցումները տների միջև: Ստորգետնյա շինություններով անցնելու համար հետախույզներն ապահովվում են հակագազով:

Քաղաքում ավելի հաջող, քան բաց տեղանքում կարող են կիրառվել դարանակալումներն ու հանկարծակի հարձակումները: Դրա համար առանձնացված ստորաբաժանումները ծածուկ տեղավորվում են շենքերի և գետնուղիների ելքերի մոտ, անցքերում, հաղորդակցման մուտքերի մոտ և թունելներում, փողոցների խաչմերուկում, այգիներում, պուրակներում, հենց շենքերում, ինչպես նաև շենքերի միջև եղած անցումներում, որոնք ամենից առաջ կարող են օգտագործվել հակառակորդի հետախուզական մարմինների և այլ ստորաբաժանումների կողմից հարձակման ընթացքում: Հետախուական մարմիններն ապահովվում են քաղաքի խոշորամասշտաբ քարտեզներով և պլաններով:

Որոնում, դարանակալում կամ հանկարծակի հարձակում կատարելու համար

նախատեսված անձնակազմը տեղանքը, հակառակորդի տեղաշարժման երթուղին, գործողությունների բնույթն ուսումնասիրելու նպատակով միանում է դիտորդներին, նրա հետ անց են կացվում մերձամարտ վարելու, բոլոր տեսակի արգելքների հաղթահարման, միայնակ գործելու, գիշերը և սահմանափակ տեսանելիության պայմաններում հետախուզում կատարելու պարապմունքներ: Այդպիսի ստորաբաժանումների անձնակազմի համազգեստը պետք է լինի թեթևացված, շարժումները չսահմանափակող, տեղանքին (տարվա եղանակին) համապատասխան: Սպառազինությունը պետք է լինի փոքր տրամաչափի, անձայն, անբոց հրաձգության սարքերով, ունենան գիշերային տեսանելիության և հրաձգության օպտիկական սարքեր, կապի միջոցներյուրաքանչյուրի համար, ազդանշանային, լուսավորման հրթիռներ և ծխագլանիկներ: Շենքում գտնվող հակառակորդի վրա հարձակվելիս չի կարելի գրոհել նրա վրա ամբողջ ստորաբաժանումով միանամից: Հետախույզների մի մասը մնում է փողոցում, շենքի

մուտքի մոտ: Նրանց խնդիրը շենքում գտնվող հետախույզներին վտանգի մասին ժամանակին զգուշացնելն է կամ խմբի վրա հարձակումը հետ մղելը: Ավագի ցուցումով այդ զինվորներն զբաղեցնում են այն տեղերը, որտեղից կարելի է կրակ վարել հարող փողոցների, խաչմերուկների, հարևան տների պատուհանների, ինչպես նաև շենքի ելքերի և ներքին հարկերի ուղղությամբ, որտեղ գտնվում է հակառակորդը:

Դարանակալումը կազմակերպելու համար օգտագործվում են իրենց կազմում 5-10 մարդ ունեցող խմբեր: Դարանակալման վայր դուրս գալու համար օտարծվում են շենքերի և ցանկապատների ճեղքերը, միջանցիկ բակերը, այիները և պուրակները: Հարձակման օբյեկտ կարող են լինել առանձին տները պաշտպանող ոչ մեծ կայազորները, դիտակետերն ու հրամանատարական կետերը:

Ռադիոէլեկտրոնային հետախուզման վրա բացասական ազդեցությունը փոքրացնելու նպատակով ռադիոէլեկտրոնային հետախուզության վաշտի ստորաբաժանումները պետք է տեղավորել մայրուղիների, այգիների, պուրակների երկայնքով, իսկ ռադիոորսման կետերը կղմինդրե, հերձաքարե (շիֆեր) և բետոնե տանիքներ ունեցող շենքերի վերին հարկերում, ինչպես նաև ձեղնահարկերում: Ռադիոէլեկտրոնային հետախուզական վաշտի ստորաբաժանումների ծավալման համար պահեստային դիրքերը նախապես սարքավորվում են ինժեներական

առումով, կարող են օգտագործվել զորքերի թողած դիրքերը: Շարժվող վերգետնյա նշանակետերի հետախուզության ռադիոտեղորոշիչ (ռադիոլոկացիոն) կայանները նպատակահարմար է ծավալել այգիներում, պուրակներում, մարզադաշտերում, հրապարակներում, մայրուղիներին և այլ վայրերում, որտեղ ապահովվում է հակառակորդի օբյեկտների լավագույն ռադիոդիտարկում:

Քաղաքի առանձին շրջաններից մեր զորքերի հետքաշման դեպքում անհրաժեշտ է այնտեղ թողնել հետախույզների ոչ մեծ խմբեր հակառակորդի թիկունքում հետախուզում իրականացնելու համար: Հետախուզական խմբերը և հետախուզական դետքերը շարունակում են հետախուզել հակառակորդի մոտեցող պահեստը հիմնական ուշադրությունը դարձնելով քաղաքում պաշտպանվող զորքերի թևերը շրջանցելու նպատակով զորքերի հնարավոր վերախմբավորման վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս թեման յուրացնելուց հետո ուսուցանվողները լիովին պատրաստ կլինեն ծառայելու մեր ազգային բանակում, արդեն գիտակցելով ,որ հայրենիքի պաշտպանության համար, կա այդպիսի մասնագիտություն և դա զորային հետախուզությունն է:

Այն հարկ եղած դեպքում պահանջում է սեփական կյանքի նվիրում հայրենիքին: Գիտակցական մոտեցման պահանջը այս մասնագիտությանը հանդեպ այն է, որ պետք է տիրապետել գերազանց, քանի որ դա է հանդիսանում մարտում հաղթանակի գրավականը: Գաղտնիք չէ, որ հետախուզական ստորաբաժանումները հանդիսանում են բանակի էլիտան:

Զինվորական պատրաստվածության հետ մեկտեղ պետք է աշակերտների մոտ ձևավորել հետախուզական ուղղվածության կարողություններ, պետք է սերմանել և ուսուցանել թեման իր ողջ հետաքրքրություններով՝ այս ուղղվածությունը միակն է որտեղ երեխաները ներգրավելով բազմաբովանդակ խաղերի միջոցով ձեռք կբերեն հմտություն, ունակություն, հնարամտություն և ճիշտ կողմնորոշում, ուսուցումը կարելի է կազմակերպել համագործակցելով այլ առարկաների ուսուցիչների հետ, կարևորելով ֆիզիկական պատրաստվածության մակարդակը

Արդյունքում երեխան կապրի այդ դասը ու կսիրի: Այս առարկան այնպիսին է որ ողջ կյանքի ընթացքում պիտանի և օգտավետ է յուրաքանչյուրիս:

Ցանկալի կլինի ռազմական ուսուցման ծրագրի մեջ ուսումնական հաստատություններում, դպրոցներում, քոլեջներում և այլ ուսումնական հաստատություններում ներառել հետախուզության դասաժամեր, և ցանկալի կլինի փոփոխություն կատարվեն ռազմական ուսուցման ծրագրում:

Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ռազմական տեղագրություն դասագիրք 2008 թ.
2. Տեղաերկրաբաշխական ամրակապում հրետանային ստորաբաժանումների ուժերով և միջոցներով 2011թ
3. Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք 2012 թ.
4. Ստորաբաժանումների տեղագրական պատրաստություն 2009 թ.
5. ՀՀ ԶՈՒ օպերատիվ և մարտավարական օղակներում Հակառակորդի տեղեկատվական-հոգեբանական ներազդեցությունից անձնակազմի պաշտպանության արդյունավետության բարձրացման ուղիներ մեթոդական ձեռնարկ 2014
6. Նորակոչիկների պատրաստության ծրագիր 2011
7. Զինվորական պատրաստության կտրուկ բարձրացմանը և արտակարգ դեպքերի ու պատահարների կանխարգելմանն ուղղված ցուցումներ 2011
8. 2011թ.Մեթոդական ուղոցույց զինծառայողների համար
9. Սպայի հուշատետր
10. Մարտական կանոնադրություն մաս II, ՀՀՊՆ, Երևան, 1999թ.
11. ՀՀ ԶՈՒ մարտական կանոնադրություն մաս III, ՀՀ ՊՆ, Երևան, 1997թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեսավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՆ՝ ՄՀՋ երթակարգ և մարտակարգ

ԿԱՏԱՌՈՂ՝ Հայկ Մայիլյան

ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ՆԶՊ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Վանաձոր 2022

Բովանդակություն

1. Նորածություն 3

2. ՄՀՋ երթակարգ և մարտակարգ 7

3. Եզրակացություն 15

4. Գրականություն 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մոտոհրաձգային ջոկ, պարզագույն ստորաբաժանում է զինծառայության մեջ, Զինված ուժերի համակարգում ցամաքային զորքերի տեսակ, որը նախատեսված է մարտական գործողություններ վարելու ինչպես ինքնուրույն, այնպես էլ այլ զորատեսակների հետ համատեղ[1]: Ջոկը ներառվում է մոտոհրաձգային, մոտոհետևակային, հետևակային, ականանետային, սակրային, կապի և այլ դասակների կազմի մեջ: Մեկ դասակը կազմված է երեք ջոկից: Ռազմական գործողությունների ժամանակ ջոկը իրեն առաջադրված խնդիրը կատարում է դասակի կազմում: Մոտոհրաձգային ջոկը լինում է հետևակի մարտական մեքենայով (ՀՄՄ) կամ զրահապատ փոխադրիչով (ԶՓ), իսկ հրաձգային ջոկը՝ ավտոմեքենայով:

Մարտ

Մարտը դա երկու և ավելի ստորաբաժանումների զինված ընդհարումն է: Մարտը կարող է սկսել սովորական տարաձայնություններից և ավարտվել խոշոր կորուստներով: Մարտը կարող է ավարտվել երկու արդյունքներով, առաջին դեպքում մի կողմը հաղթում է, իսկ մյուսը հակառակը: Մյուս դեպքում ավարտվում է ինչ որ տերության աջակցությամբ՝ հաշտությամբ: Մարտը հաղթանակին հասնելու միակ միջոցն է: Ժամանակակից մարտը համազորային է: Համազորային մարտին մասնակցում են տարբեր տեսակի զորամիավորումներ և զորատեսակներ: Նաև հանդիպում են դեպքեր երբ հատուկ զորքերը համագործակցում են ռազմաօդային և ռազմածովային զորքերի հետ:

Պաշտպանություն

Մարտի այն տեսակը, որը խափանում է հակառակորդի հարձակումը կամ հնարավոր հարձակումը կոչվում է պաշտպանություն։ Պաշտպանությունը մարտի կարևոր բաղկացուցիչ մասերից է և մարտերի հետ միասին կազմում է մեկ ամբողջություն։ Պաշտպանությունները լինում են երկու տեսակի՝ հարկադիր կամ կանխամտածված։ Ստորաբաժանումները կարող են հաղթանակի հասնել անմիջապես պաշտպանությունից հետո։

Հարձակում

Հարձակումը մարտի ամենակարևոր բաղադրիչն է։ Հիմնականում նրա նշանակությունը կայանում է նրանով, որ *հակառակորդի նկատմամբ հաղթանակի կարելի է հասնել միայն հարձակման պարագայում*։ Միայն վճռական հարձակմամբ կարելի է հասնել հաղթանակի։ Հարձակումից առաջ սովորաբար անցկացվում է համապատասխան պարապմունքներ՝ կրակային և շարային։ Այս պարապմունքների նպատակը կայանում է նրանով, որ հրետանու և օդուժի նախօրոք պլանավորված հարձակումները պետք է չեզոքացնվի։ Հարձակման վճռական պահը կոչվում է **գրոհ**։ Հարձակվող հակառակորդի վրա հարձակումը կոչվում է **հանդիպական կայուն մարտ**։ Այն առաջանում է տարբեր իրավիճակներում։ Նահանջող հակառակորդի վրա հարձակումը կոչվում է **հետապնդում:** (1)

Մոտոհրաձգային ջոկի կազմը. մարտական հնարավորությունները

Մոտոհրաձգային ջոկը համարվում է մարտական սկզբնական ստորաբաժանում, որը կարող է մտնել ոչ միայն մոտոհրաձգային, այլև մոտոհետևակային, հետևակային, ականանետային, սակրային, կապի և այլ դասակների մեջ։

Մոտոհրաձգային ջոկի կազմում կարող է ընդգրկված լինել 8-10 մարդ, որոնցից յուրաքանչյուրին առաջադրվում են առանձնահատուկ խնդիրներ՝ իր զբաղեցրած պաշտոնով պայմանավորված:

Մոտոհրաձգային ջոկի ղեկավարը ջոկի հրամանատարն է: Բացի հրամանատարից ջոկի կազմում են նաև՝ նշանառու օպերատորը, նշանառու գնդացրորդը, մեխանիկ-վարորդը, վարորդը, գնդացրորդը, նռնականետորդը, նռնականետորդի օգնականը, ավագ հրաձիգը, հրաձիգը:

Մոտոհրաձգային ջոկի մարտական հնարավորությունները պետք է ճիշտ գնահատվեն, քանի որ հենց դրանցով են բնորոշվում սահմանված ժամկետում և իրադրության տվյալ պայմաններում որոշակի մարտական խնդիր կատարելու կարողությունները:

Մոտոհրաձգային ջոկի մարտական հնարավորությունները բնորոշվում են կրակային հզորությամբ և զորաշարժային (խուսանավելու) ունակությամբ:

Կրակային հզորությունը հնարավորություն է տալիս հակատանկային միջոցներով և հրաձգային զենքի կրակով հակառակորդին կորուստ պատճառել: Եթե ջոկը լրիվ սպառազինված է, ապա նա կարող է պայքարել հակառակորդի տանկերի, զրահամեքենաների, ցածր թռչող ուղղաթիռների դեմ և ոչնչացնել նրա կրակային միջոցներն ու կենդանի ուժը:

Կրակի խտությամբ է որոշվում հրաձգային զենքի կրակային հզորությունը, որը ճակատի 1 մ-ի վրա 1 րոպեում արձակված գնդակների թիվն է: Դա կախված է զենքի քանակից, տեսակից, արագաձգությունից և նաև ճակատի այն հատվածից, որի ուղղությամբ կրակ է բացվում: Մոտոհրաձգային ջոկը կարող է 1 րոպում արձակել 1000 գնդակ, ինչը նշանակում է, որ կրակի խտությունը հարձակման ժամանակ կկազմի 20, իսկ պաշտպանության ժամանակ 6-7 գնդակ: Հարձակման դեպքում կրակի այսպիսի խտությունը կարող է ապահովել հակառակորդի ոչնչացումը, իսկ պաշտպանության դեպքում կարող է հաջողությամբ հետ մղել հակառակորդի գրոհը:

Պատերազմական փորձի վերլուծությունները ցույց են տվել, որ հակառակորդը նահանջում կամ հրաժարվում է հետագա հարձակումից, եթե նա կորցրել է

անձնակազմի ու կրակային միջոցների 50 տոկոսը: Իսկ ճակատի 1 մ-ի վրա 4-5 գնդակը լիովին բավարար է հակառակորդի ուժերի նման քանակի ոչնչացման համար:

Հարձակման ժամանակ ջոկը կարող է ոչնչացնել մեկ տանկ, մեկ զրահամեքենա և զինվորների մի խումբ, իսկ պաշտպանությունում՝ մինչև 2-3 տանկ կամ 3-4 ՀՄՄ(ԶՓ) և 12-15 զինվոր:

Ջոկի զորաշարժի հնարավորությունը պայմանավորված է ջոկի հարձակման տեմպով, իսկ պաշտպանությունում՝ որոշակի ժամանակում դիրքերը փոխելու ունակությամբ:

Զորաշարժը հնարավորություն է տալիս առավել նպաստավոր դիրքեր զբաղեցնել հակառակորդի ուղղությամբ կրակ բացելու, հակառակորդի թևերն ու թիկունքը գրոհելու համար: Զորաշարժ տեղի է ունենում նաև այն դեպքերում, երբ անհրաժեշտ է դուրս գալ հակառակորդի գերազանցող ուժերի հարվածի տակից:

Եթե զորաշարժը տեղի է ունենում հարձակման ժամանակ, ապա այն կատարվում է հակառակորդին շրջանցելով: (7)

Մոտոհրաձգային ջոկի երթակարգը և մարտակարգը

Համազորային մարտ վարելիս մոտոհրաձգային ստորաբաժանումները տեղաշարժվում ու գործում են երթակարգով, նախամարտակարգով և մարտակարգով:Հակառակորդի գործողություններով, ինչպես նաև տեղանքով պայմանավորված՝ մոտոհրաձգային ջոկը կարող է տեղաշարժվել երթակարգով և մարտակարգով:

Մոտոհրաձգային ջոկի երթակարգը հետիոտն կարգով միաշարասյուն կամ երկշարասյուն շարքի տեղաշարժումն է: Դրա նպատակն է ապահովել շարժման բարձր արագություն, մարտակարգի արագ ծավալում, ինչպես նաև զինված ուժերի անձնակազմի ու տեխնիկայի պահպանում ու խնայում:

Մոտոհրաձգային ջոկի մարտակարգը զինվորների դասավորությունն է մարտ վարելու համար, որի նպատակն է ապահովել կրակ վարելու անընդմեջություն, հակառակորդի կրակից անձնակազմի խոցելիության նվազեցում: Մոտոհրաձգային ջոկի մարտակարգը հետիոտն հարձակվելիս զինվորների շղթա է, որտեղ զինվորների միջև տարածությունը պետք է լինի 6–8 մ (8–12 քայլ), իսկ նռնականետորդի և օգնականի միջև՝ 1–2 մ:

Շղթայի հետևից շարժվում է հետևակի մարտական մեքենան (ՀՄՄ) կամ զրահապատ փոխադրիչը (ԶՓ)՝ իր կրակով աջակցելով ջոկին: (6)

Ջոկը հարձակվում է մինչև 50 մ ճակատով, իսկ դասակի կազմում ջոկերի միջև հեռավորությունը պետք է լինի մինչև 50 մ: Ջոկի այդպիսի մարտակարգը հնարավորություն է տալիս խնդիրը հաջողությամբ կատարել, նվազեցնել կորուստները հակառակորդի կրակից,

ղեկավարել կրակը ձայնով կամ ազդանշանով, պահպանել զինվորների միջև փոխգործակցությունը:

Պաշտպանությունում ջոկը զբաղեցնում է մինչև 100 մ ճակատով դիրք: Այսպիսով ջոկը առավելապես պատրաստ է հետ մղել հակառակորդի գերազանցող ուժերի գրոհը, քանի որ ունի կրակային միջոցների համար հիմնական և պահեստային դիրքեր:

Ջոկի հրամանատարի գտնվելու տեղանքը պետք է նպատակահարմար լինի ջոկը ղեկավարելու, տեղանքը դիտարկելու և դասակի հրամանատարի ազդանշաններին հետևելու համար:

Ջոկի մարտակարգում գնդացրորդը տեղավորվում է ջոկի հրամանատարի կողքին: Ջոկի հրամանատարի կողքին պետք է գտնվի նաև ավագ հրաձիգը, քանի որ նա պետք է մշտապես պատրաստ լինի փոխարինելու հրամանատարին՝ մարտում նրա մարտունակության կորստյան դեպքում: Իսկ նռնականետորդի տեղը որոշվում է պայմանավորված հակառակորդի տանկերի շարժման հավանական ուղղություններից:

Պաշտպանելով սահմանագիծը (դիրքերը) մինչև 100 մ ճակատով, ջոկը կարող է հետ մղել հակառակորդի՝ տանկերով ուժեղացված մոտոհետևակային դասակի գրոհը: (2)

Մոտորտաձգային ջոկի կազմը՝

Մոտոհրաձգային ջոկի կազմում կարող են լինել ինչպես շարքայիններ, այնպես էլ մի շարք այլ պաշտոնյաներ (օրինակ՝ եֆրեյտորներ և սերժանտներ):Մոտոհրաձգային ջոկը կազմված է 9-11 հոգուց, որոնք համապատասխանաբար լինում են նշված պաշտոնյաներ

- ավագ հրաձիգ և նրան ուղեկցող երեք կրտսեր հրաձիգներ
- նռնականետ և նռնականետի օգնական

- նշանառու օպերատոր
- գնդացրորդ
- վարորդ-մեխանիկ վարորդ
- ջոկի հրամանատար
- կարգ ու կանոնի վերահսկիչ

Երթակարգ և մարտակարգ

Մոտոհրաձգային զորքերը և ստորաբաժանումները կարող են տեղաշարժվել մի վայրից մյուս վայրը և գործել երթակարգով: Երթակարգը և մարտակարգը կախված է հակառակորդի գործողություններից և ռազմական տեղագրությունից: **Երթակարգի** տեղաշարժումը բաժանվում է երկու մասի՝ միաշարասյուն և երկշարասյուն: Սրանք սահմանված են հետիոտնի և ցամաքային ռազմական մեքենաների համար: Սա ունի շարժման բարձր արագություն և ուժգնություն:



Մոտոհրաձգային ջոկի մարտակարգը զինծառայողների մարտ վարելու ժամանակ դասավորվածությունն է: Մարտակարգը պետք է ապահովի անընդմեջությունը, նվազեցնել անձնակազմի խոցելիությունը հակառակորդի հարձակումից: Մոտոհրաձգային ջոկի մարտակարգը հետիոտն հարձակվելիս զինվորների միությունն է: Զինծառայողների միջև միջին հեռավորությունը պետք է լինի 6-8 մ, իսկ երկու նռնականետորդների (կամ օգնականների) միջև պետք է լինի 1-2 մ: Շղթայի հետևից պետք է շարժվի զգոն հետևակը մարտական մեքենայով, իսկ վերևից ռազմաօդային ուժերը: Պաշտպանությունում ջոկը զբաղվում է մինչև 100-110 մետր ճակատային դիրքով: Ամեն ինչ հիմնված է համապատասխան սպառազինության հետ: Ջոկի մեջ գնդացրորդը տեղակայված է հրամանատարի կողքին: Նռնականետորդը գործում է

անկախ։ Ավագ հրաձիգը ունի փոփոխական դիրք, սակայն հիմնականում հանդես է գալիս հրամանատարի ՀՄՄ-ի կողքին :(3)

ՄՈՏՈՀՐԱԶԳԱՅԻՆ ՋՈԿԻ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՆԿԵՐԻ ՈՒ ԶՐԱՀԱՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼԻՍ

Հակառակորդի տանկերի, զրահամեքենաների դեմ պայքարը համարվում է համազորային մրտի կարևոր խնդիրներից մեկը։ Այդ պայքարում մեծ հաջողությունների հասնելու համար զինվորը պետք է գիտենա տանկերի և զրահամեքենաների ուժեղ ու թույլ կողմերը, հատկապես խոցելի տեղերը, ինչպես նաև իր սպառազինության մարտական հնարավորությունները և դրանք մարտական կիրառումը։ ՄՀՋ-ի սպառազինությունը բաղկացած է հակատանկային կառավաթվող հրթիռային համալիթից, ձեռքի հակատանկային նռնականետից, ձեռքի հակատանկային նռնակնեթից և հետևակի մարտական մեքենայի հրանոթից։ ՄՀՋ-ն ունենալով վերը նշված հակատանկային միջոցները կարող է ոչնչացնել՝ հարձակվելիս 1-2 տանկ (2-3 զրահափոհադրիչ) և զինվորների խումբ, պաշտպանությունում՝ 2-3 տանկ, (1-2 զրահափոխադրիչ) և հակառակորդի 12-15 զինվոր։ (4)

Հետևակի մարտական մեքենա (ՀՄՄ), Թրթուրավոր կամ անվավոր, զրահապատ մարտական մեքենա։ Նախատեսված է մոտոհրաձգային և տանկային ստորաբաժանումների սպառազինման, հրթիռամիջուկային զենքիկիրառման դեպքում՝ անձնակազմի (մարտադաշտում գործող) շարժունակության, զինվածության և պաշտպանունակության ապահովման համար։

Ղարաբաղյան պատերազմում օգտագործվել են ՀՄՄ-1 և ՀՄՄ-2 մակնիշների մեքենաները։ ՀՄՄ-2 մեքենայում ՀՄՄ-1-ի համեմատությամբ փոփոխվել է մարտական բաժանմունքը։ Երկտեղ աշտարակում տեղակայվել է առավել կատարյալ՝ 30 մմ-անոց 2Ա42 ավտոմատ թնդանոթ, իսկ «Մալյուտկա» կառավարվող հրթիռը փոխարինվել է «Կոնկուրս» հրթիռով, որով հնարավոր է դարձել օդային ու ցամաքային թիրախների հրթիռահրետակոծությունն ընթացքի ժամանակ (կամ կանգնած), և ավելացել հիմնական մարտական խնդիրների լուծման արդյունավետությունը։ ՀՄՄ-2 մեքենայի անձնակազմը կրճատվել է 1-ով (11-ի

փոխարեն՝ 10 անձ), զետնահեռությունը ավելացել է մինչև 420 մմ, միջին արագությունը՝ 40-50 կմ/ժ, նախկին մակարդակի վրա պահպանելով դինամիկ որակները՝ փոխվել է սարքավորումների համալիրը: ՀՄՄ-ի վրա տեղակայված սպառազինությունը հնարավորություն է տալիս պայքարել տարբեր նպատակակետերի՝ ներառյալ տանկերի և մարտական ուղղաթիռների դեմ: Մեքենայի վրա տեղակայված սարքավորումներն անձնակազմին պաշտպանում են միջուկային զինամթերքի պայթյունի հարվածային ալիքի ազդեցությունից և թափանցող ճառագայթումից,քիմիական և մանրէական զենքերի ազդեցությունից, իսկ վարակված տեղանքով շարժվելիս՝ռադիոակտիվ փոշուց: Քողարկման նպատակով մեքենան հանդերձված է նաև ծխածածկույթ ստեղծելու ջերմածխային սարքավորմամբ և ծխահան նռնակի արձակման համակարգով: Մեքենայի վրա կարող է տեղակայվել ականազերծիչ համակարգ:

Հակատանկային կառավարվող հրթիռ (ՀՏԿՀ), հակատանկային զինամթերք է, նախատեսված տանկերի և այլ ծանր զրահատեխնիկայի դեմ պայքարելու համար։ Խորհրդային ռազմական գրականության մեջ հայտնի է նաև ***ՀՏԿՌԱ*** *հակատանկային կառավարվող ռեակտիվ արկ*անվանումով։[1]։ *ՀՏԿՀ*-ը կոշտ վառելիքով հրթիռ է, այն ընդունակ է փոխելու իր թռիչքի ուղղությունը, ըստ օպերատորի հրամանի, կամ ըստ իր ինքնակառավարող գլխիկի հրամանի։ ՀՏԿՀ-ի մարտական գլխիկը կումուլյատիվ գործողության է, նորագույն հրթիռները ավելի կատարելագործված են՝ ունենհամակցված կումուլյատիվ գործողության մարտական գլխիկ։

Կոռնետ հակատանկային հռթիռային համալիր։ (3)



Ֆագոտ հակատանկային հոթիռային համալիր

ՁՀՆ-7 կամ **ձեռքի հակատանկային նռնականետ**, դյուրակիր, բազմակի օգտագործման հակտանկայիննռնականետ: **ՁՀՆ-7** անվանումը ծագել է ռուսերեն Ручной Противотанковый Гранатомёт (Ձեռքի հակատանկային նռնականետ) անվանումից: Սկզբնապես արտադրվել է Խորհրդային Միությունում: Այժմ այն արտադրում է ռուսական Բազալտ ընկերությունը: Ձենքի ԳՌԱՌԻ-ի ինդեքսը՝ **6G3**:

ՁՀՆ-7-ը իր ամրության, պարզության, էժան գնի և անդյունավետության շնորհիվ դարձել է աշխարհի ամենալայն կիրառություն ունեցող հակատանկային զենքը: Ներկա դրությամբ շուրջ 40 երկիր օգտագործում է, և յոթ երկիր արտադրում է զենքի մի շարք տեսակներ: Այն ժողովրդականություն է վայելում պարտիզանական անկանոն ուժերի շրջանում: ՁՀՆ-ն Վիետնամյան պատերազմից (1960-ականների կեսեր) սկսած մինչև 2010-ականների Աֆղանստանի պատերազմը օգտագործվել է աշխարհի գրեթե բոլոր հակամարտությունների ժամանակ:(5)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս թեման յուրացնելուց հետո սովորողների մոտ պարզ կդառնա Հայաստանի Հանրապետության Զինված Ուժերում մոտոհրաձգային ջոկի դերը նշանակությունը ժամանակակից համազորային մարտ վարելու ժամանակ յուրաքանչյուր զինծառայողի դերի և նշանակության մասին:

Այն հարկ եղած ժամանակ իր վրա է վերցնում մարտի ընթացքում առաջացած ողջ պատասխանատվությունը առաջխաղացման և մարտական խնդրի կատարման որակի մասով:

Մոտոհրաձգային ստորաբաժանումների կազմի, սպառազինության մասին հստակ գիտելիքներ ունենալով պատկերացում կազմելով երթակարգի և մարտակարգի առանձնահատկությունների և նշանակությունների մասին սովորողների մոտ ավելի հստակ կամրապնդվել գիտելիքներ ժամանակակից համազորային մարտի առանձնահատկությունների և նշանակության մասին:

Զինվորական կարգապահության հետ համատեղ սովորողի մոտ պետք է ամրապնդվի յուրաքանչյուր մասնագիտության հանդեպ կարևորության և պատասխանատվության զգացումը:

Ցանկացած զինծառայողի գործողություններից է կախված ողջ ստորաբաժանման հաջողությունը այս է նպատակը սովորողին ուսուցանելու հաջողության հասնեու և պակաս կորուստներ ունենալու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%B8%D5%BF%D5%B8%D5%B0%D6%80%D5%A1%D5%B1%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%BB%D5%B8%D5%AF

2. https://www.dasaran.net/apps/wiki/view/id/14205

3.Նախնական զինվորական պատրաստություն 9-րդ դասարան 2015 թվական

4. Նախնական զինվորական պատրաստություն 98րդ դասարան 2014 թվական

5.https://www.google.com/search?q=%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B6%D5%A5%D5%BF&sxsrf=ALiCzsbvJoSxZS6bPYG-4tKrvDpOHvsfCQ:1661342626810&source=lnms&tbm=isch&sa=X&ved=2ahUKEwjqpvvIt9_5AhU3X_EDHcyuAYUQ_AUoAXoECAIQAw&biw=1366&bih=568&dpr=1#imgrc=EEHhSENT8mtBMM

6.https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%B8%D5%BF%D5%B8%D5%B0%D6%80%D5%A1%D5%B1%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%BB%D5%B8%D5%AF

7. https://www.dasaran.net/apps/wiki/view/id/14213

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՐԿԱ՝ ՆԱԽՆԱԿԱՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ և ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ »

ՁԻՆՂԵԿ ՝ Քոչարյան Քոչար

ՂԵԿԱՎԱՐ՝ Սարգսյան Անդրանիկ

2022

ՑԱՆԿ

Ցանկ……1

Ներածություն 2

Թեմայի նպատակը և խնդիրները. . . . . .……...3

Գլուխ 1 ՀՀ ԶՈՒ կազմավորումը ……..4

Գլուխ 2 ՀՀԶՈՒ կառուցվածքը ……...9

Եզրակացություն 16

Օգտագործված գրականություն 17

ՇՈՒՆՉԴ ՏՈՒՐ , ՀՈԳԻԴ ,ԲԱԸՑ ՔՈ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՄԻ՛ ՏՈՒՐ ԹՇՆԱՄՅԱՑ

Խ.Աբովըան

Ներածություն

Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը :
(ՀՀ Սահմանադրություն, հոդված 46)

Յուրաքանչյուր պետության գոյության երաշխիքը զինված ուժերի առկայությունն է: Հայաստանը, գտնվելով բարդ ռազմաքաղաքական տարածաշրջանում, որտեղ մեր հարևանները պլանավորում են մեր պետության և ժողովրդի ոչնչացումը, որտեղ մանք կարող ենք ապահովել մեր անկախությունն ու անվտանգությունը միայն հզոր և մարտունակ բանակի առկայությամբ: Պետք է միշտ հիշել, որ հույսը դնել արտաքին ուժի վրա, մոռանալ պատմության դառը դասերը՝ կործանարար կլինի մեր հայրենիքի համար: Միայն հզոր բանակի առկայության դեպքում կարող է լինել արդյունավետ արտաքին քաղաքականություն:

Ցանկացած պետության պաշտպանությունը տվյալ պետության և ժողովրդի կարևորագույն խնդիրն ու պարտականությունն է: Պետությունը այդ խնդիրն իրականացնում է զինված ուժերի միջոցով: Հզոր և մարտունակ բանակ ունենալու համար անհրաժեշտ է ոչ միայն ժամանակակից սպառազինություն և տեխնիկա այլ նաև բանիմաց , խիզախ , հայրենասիրական ոգով օժտված զինվորներ և սպաներ : Չթերագնահատելով հասարանության և ընտանիքի դերը ապագա զինվորի կրթման և դաստիարակության գործում , պետք է նշել, որ այդ ամենի ամբողջ պատասխանատվությունը դրված է հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա: Դպրոցն է այն դարբնոցը որտեղ կրթվում և դաստիարակվում է մեր վաղվա զինվորն ու սպան :

Արցախյան պատերազմի և հատկապես 2020թ. 44 օրյա պատերազմի ողջ ընթացքը ցույց տվեց , որ երկրի զինված ուժերի մարտունակությունը կախված է հատկապես անձնակազմի բարոյահոգեբանական և կամային բարձր հատկանիշներից: Հաղթում է այն բանակը, որն ավելի լավ է պատրաստված, որտեղ բարձր է զինվորական կարգապահությունն ու մարտական ոգին, որի սպաներն ու զինվորները հմտորեն տիրապետում են ռազմական տեխնիկային, կարողանում են ռազմարվեստի մեջ նոր, արդյունավետ ձևեր ու մեթոդներ կիրառել, բարդ իրադրություններում, առանց խուճապի ճիշտ որոշումներ կայացնել: ՀՀ ԶՈՒ խնդիրների, առանձնահատկությունների և նշանակության, հայոց բանակի պատմական ավանդույթների, այսօրվա զենքի ու ռազմական տեխնիկայի, կանոնադրությունների և արարողակարգերի մասին վաղվա զինվորներն ու սպաները տեղեկանում են են հենց աշակերտական նստարանից, և հենց առաջին տպավորությունն էլ վճռորոշ է լինում նրանց որպես անհատ և քաղաքացի ձևավորման գործում :

Թեմայի նպատակը և խնդիրները

Հայաստանի զինված ուժերի պատմությունը, հայկական պետականության կարևորագույն կազմակերպության պատմությունն է: Առանց զինված ուժերի թե անցյալում, թե ներկայումս անհնար է երկրի անկախության ու անվտանգության պաշտպանությունը: Հազարամյակներ շարունակ, ինչպես ցանկացած այլ պետության, այնպես էլ Հայաստանի զինված ուժերի կոչումը, խնդիրները, կառուցման սկզբունքները, աշակերտի ուսուցումն ու դաստիարակությունը պայմանավորված են հասարակական, պետական կարգով և պետության քաղաքականությամբ:Դեռ հին դարերում մեր ժողովուրդը կազմավորել է զինված ուժեր: Հայկական զորքերի կառուցվածքային բաժանումները, ինչպիսիք են գունդը, գումարտակը, վաշտը, երբեմն նաև հարյուրյակը, հիշեցնում են ժամանակակից բանակի կառուցվածքային հիմնական գծերը:

Այս թեմայի նպատակն է ծառայել որպես նախապատրաստական ազդակ ռազմական ասպարեզ մուտք գործելու շեմին, որպես հիմնավորում այն իրողության, որ ազգապահպան այլևայլ խորհրդանիշներից ամենից առաջ ազգը պետք է ունենա ռազմական կարողություն և ռազմական հնարավորություններ՝ ազգային մնացած հատկանիշները պահելու և պահպանելու համար: Մեծ նշանակություն ունի բանակը, ռազմական ուժը պետության գոյապահպանման համար: Խիստ կարևոր է բանակի դերը ազգային խնդիրների իրագործման ճանապարհին : Հայրենիքը պաշտպանելու սուրբ գաղափարը շատ հին է հայոց կյանքում: Ըստ էության՝ հենց հայրենիքի պաշտպանության դրվագով էլ բացվում է հայոց պատմությունը: Խոշաբի ճակատամարտով, որը տեղի է ունեցել Ք.Ա. 2492 թվականի օգոստոսի 11-ին, այստեղից էլ սկսվում է բուն հայոց պատմությունը,իր զինվորներին ուղղված կոչի մեջ Հայկը՝ հայոց զորապետը, հռչակում է հայրենիք ունենալու և այն պահպանելու միակ և անողոք պայմանը՝ մահ կամ ազատություն:

Հետևաբար աշակերտը պետք է լինի ֆիզիկապես կոփված, մտավոր ու հոգևոր ներուժով բարոյական վեհ արժանիքներով օժտված անձնավորություն, ծանոթ լինի ՀՀ ԶՈՒ-ի ստեղծմանը ու կառուցվածքին:

Գլուխ 1 ՀՀ ԶՈՒ կազմավորումը

1992 թ. հունվարի 28-ին ՀՀ Առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով ստեղծվեց ՀՀ պաշտպանության նախարարությունը, որի ենթակայությանը հանձնվեցին երկրում եղած ուժային կառույցներից որոշակի ստորաբաժանումներ՝ մասնավորապես, ներքին գործերի նախարարության պարեկապահակային գունդը, հատուկ նշանակության օպերատիվ գունդը, քաղաքացիական պաշտպանության գունդը և ՀՀ զինվորական կոմիսարիատը:

Եթե չլիներ ժամանակին կատարված հավաքագրման, ճշտման աշխատանքները, կադրերի պատրաստությունը և կամավորական ջոկատների կազմակերպումը, ապա չէր ստացվի կյանքի կոչել այդ համազգային նշանակության ռազմավարական նախագիծը:

Հայոց բանակի ստեղծումն ու պատմությունն անքակտելիորեն կապված են հայոց պետականության ստեղծման պատմական իրողության հետ, քանզի պետություն և բանակ հասկացությունները միմյանց պայմանավորող են, և դժվար է պատկերացնել մեկն առանց մյուսի: Ե՛վ մեկի, և՛ մյուսի համար ամեն ինչի սկիզբը եղավ 1988թ. փետրվարը՝ սկիզբը Ղարաբաղի համար պայքարի, պետականության վերականգնման ու Ազգային բանակի ստեղծման: Հայոց բանակն իր կայացման ճանապարհին (ինչպեսև հայոց պետականությունն ինքը) անցավ մի քանի դժվարին ու առանցքային փուլ:

Առաջին. 1988-ի փետրվար-1992 թվականի մայիս, երբ ղարաբաղյան շարժման

ակտիվացման և հայ-ադրբեջանական հարաբերությունների ծայրաստիճան սրման պայմաններում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչության ռազմական անվտանգության ապահովումը դարձավ ավելի քան հրատապ:

Երկրորդ. 1992 թվականի հունիս-1994 թվականի մայիս, երբ արդեն անկախ Հայաստանի Հանրապետությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ միասին գտնվելով չհայտարարված, բայց փաստացի պատերազմի մեջ Ադրբեջանի հանրապետության հետ, միաժամանակ ձեռնամուխ եղավ նաև Ազգային բանակի ստեղծմանը:

Երրորդ. 1994 թվականի հունիսից մինչ 44 օրա պատերազմը: Այս փուլը, կարելի է անվանել բանակաշինության, կայուն զարգացման, զորքերի մարտունակության բարձրացման, կարգապահության ամրապնդման, միջին և բարձր սպայական անձնակազմի պատրաստման ու վերապատրաստման, ինչպես նաև բանակ-հասարակություն հարաբերություններում առկա անջրպետի տարեցտարի վերացման փուլ, երբ հաստատված հրադադարից հետո երկրի իշխանություններն ու բանակի ղեկավարությունը հնարավորություն ստացան արդեն խաղաղ պայմաններում ջանքերը կենտրոնացնել բանակի, որպես ռազմապաշտպանական համակարգի, վերջնական ձևավորման, բոլոր անհրաժեշտ ստորաբաժանումներն ստեղծելու ու գործադրելու ուղղությամբ:

1990-ի անկախության հռչակագիրը, որով ազդարարվեց Հայաստանի փաստացի անկախությունը, նոր իրավական և գործնական հեռանկարներ բացեց ազգային բանակի ստեղծման հարցում: Նույն տարվա սեպտեմբերին կազմավորվեց Երևանի հատուկ գունդը, իսկ Արարատում, Գորիսում, Վարդենիսում, Իջևանում, Մեղրիում ձևավորվեցին հինգ վաշտեր: 1991թ.-ին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծվեց Նախարարների խորհրդին առընթեր Պաշտպանության պետական կոմիտե: Նմանատիպ կառույց արդեն գործում էր Լեռնային Ղարաբաղում: Սրանով զգալիորեն հեշտացվեց բարդագույն պայմաններում Հայաստանի, Արցախի և Շահումյանի պաշտպանական գործողությունների համակարգման խնդիրը՝ միաժամանակ դառնալով այն հիմքը, որի վրա քիչ ավելի ուշ պետք է ստեղծվեր Պաշտպանության նախարարությունը:

1991թ. դեկտեմբերի 5-ին, Հայաստանի հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով առաջին պաշտպանության նախարար նշանակվեց Վազգեն Սարգսյանը

1992թ. հունվարի 28-ին Կառավարությունը ընդունեց «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշում՝ դրանով իսկ իրավականորեն ազդարարելով Հայոց Ազգային բանակի ստեղծումը:

Նորաստեղծ նախարարության ենթակայությանը հանձնվեցին Ներքին գործերի նախարարության միլիցիայի պարեկապահակային գունդը, հատուկ նշանակության օպերատիվ գունդը, քաղաքացիական պաշտպանության գունդը և հանրապետական զինվորական կոմիսարիատը: Քիչ ավելի ուշ հիմնվեց Պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը՝ Գլխավոր շտաբը, վարչություններն ու առանձին բաժինները:

1992թ.-ի մայիսին պաշտպանության նախարարությունը սկսեց առաջին զորակոչը հանրապետության տարածքում՝ հիմք դնելով բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն ավանդույթին:

Այս պահից սկիզբ է առնում մեր բանակի պատմության երկրորդ փուլը: Մի փուլ, որի խնդիրներն, իրենց բարդությամբ չզիջելով նախորդին, բնույթով այլ էին:

1992թ-ին Հանրապետության ղեկավարությունը, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, ընդունեց Հայաստանի, առաջին հերթին՝ նրա Զինված ուժերի համար չափազանց կարևոր և հեռատես որոշում. մենք բռնեցինք ո՛չ թե Խորհրդային զորքի սպառազինության բռնի գրավման, այլ՝ այդ սպառազինության Հայասատանի չափաբաժնի կանոնավոր, պայմանագրային հիմունքներով ստացման ուղին: Դրա շնորհիվ էր, որ թեև ռազմական տեխնիկան քանակապես քիչ էր՝ համեմատ նրան, ինչը կարող էր ստացվել բռնագրավման պարագայում, սակայն այն սարքին վիճակում էր և անցավ ո՛չ թե անհատներին կամ առանձին ջոկատներին, այլ՝ պետությանը: Դրա շնորհիվ էր, որ ռուսական զորքի մի մասը մնաց Հայաստանում՝ հետագայում վերաճելով ռազմական բազայի և դառնալով Հայաստանի անվտանգության կարևոր բաղկացուցիչ մասը:

Բանակն այս տարիներին, եթե կարելի է այսպես ասել, ապրում էր երկու կյանքով: Մի կողմից ինտենսիվորեն ընթանում էր բանակային կառուցվածքի ձևավորում, նրա իրավական ամրագրում, իսկ մյուս կողմից՝ նորաստեղծ բանակային կազմավորումները փաստացի պատերազմի մեջ էին հարևանի հետ:

«Ամեն ինչ ռազմաճակատի համար» տրամաբանությանը զուգահեռ փորձ էր արվում

հնարավորինս պաշարներ ուղղել կառուցվածքային խնդիրների լուծմանը:

Ձենք-զինամթերքի, վառելիքի, պարենի ու հագուկապի խնդիրներին զուգահեռ, նորաստեղծ նախարարության առջև ծառացել էր ոչ պակաս կարևոր ևս մեկ խնդիր՝ զինված ուժերի համալրումը կրտսեր, ավագ և բարձրագույն սպայական կազմով և մասնագետ կադրերով: Պաշտպանության նախարարությունը հսկայական աշխատանք ծավալեց՝ նախկին խորհրդային բանակում ծառայող սպաներին հայկական զինված ուժերում ընդգրկելու և դրանով իսկ, թեկուզ ժամանակավորապես, այս խնդիրը մեղմելու ուղղությամբ: Ի պատիվ մեր ժողովրդի, բազմաթիվ հայազգի սպաներ արձագանքեցին ՊՆ կոչին, թողեցին իրենց խաղաղ-անվտանգ բնակավայրերը, եկան և լծվեցին բանակաշինության, հայրենիքի անվտանգության ապահովման սուրբ գործին:

Դրանց թվում էին՝Գուրգեն Դալիբալթայանը, Միքայել Հարությունյանը, գեներալ-լեյտենանտներ Նորատ Տեր-Գրիգորյանցը, Հրաչ Անդրեասյանը, Քրիստափոր Իվանյանը, Մկրտիչ Աբրահամյանը, Յուրի Խաչատուրովը, Միքայել Գրիգորյանը, գեներալ-մայորներ Արկադի Տեր-Թադևոսյանը, Արտուշ Հարությունյանը, Մուրազ Սարգսյանը, Լեոնիդ Մարտիրոսովը, Վլադիմիր Հայրապետյանը,Մարտին Կարապետյանը, Տիգրան Գասպարյանը, Ալիկ Միրզաբեկյանը և շատ ուրիշներ: Այս անձանց կողքին չենք կարող չնշել նաև գեներալ-լեյտենանտ Անատոլի Ձինևիչի անունը, որի համար Հայաստանը դարձավ երկրորդ հայրենիք: Բանակաստեղծման առումով 1992-ը բացառիկ արդյունավետ եղավ.

- ամրագրվեց անհրաժեշտ իրավական դաշտը,
- ձևավորվեցին ղեկավարման օղակները, առաջին հերթին՝ Գլխավոր Շտաբը,
- ստեղծվեցին թիկունքի և սպառազինության ծառայությունները,
- հիմնադրվեցին զորատեսակներն ու մասնագիտացված զորամասերը,
- մշակվեցին խմբավորումների, զորամասերի մարտական կազմերը և կառուցվածքները, դրվեց զորատեսակների և ծառայությունների ձևավորման սկիզբը, անցկացվեց առաջին զորակոչը,
- կազմավորվեցին առաջին սահմանապահ զորամասերը՝ մոտոհրաձգայինների վերափոխման հեռանկարով,
- ծավալվեցին զորամասերի ստորաբաժանումները՝ դասակները, վաշտերը, գումարտակները, սկսվեց անձնակազմի մարտական ներդաշնակման ու մարտական պատրաստության գործընթացը:

Այս ամենին զուգահեռ թեթև մարտական գործողությունները սահմանի երկայնքով

արդեն վերաճել էին իսկական պատերազմի՝ իրենց ահագնացող ծավալներով:

1992թ.-ի մայիսին, հիմնականում ավարտելով Ղարաբաղի ներսում ադրբեջանական կրակակետերի ոչնչացումը, ինքնապաշտպանական ուժերը ծրագրեցին և փայլուն կերպով իրականացրեցին Շուշիի ազատագրման օպերացիան՝ կերտելով մեր նորօրյա ռազմական տարեգրության ամենափառահեղ էջերից մեկը: Դրանով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնապաշտպանական ուժերը Ստեփանակերտը փրկեցին ամենօրյա ծանր ռմբահարումներից, ինչպես նաև ցամաքային ճանապարհ հարթեցին դեպի Հայաստան: Մի քանի օր անց ինքնապաշտպանական ուժերը գրավեցին նաև Լաչինը՝ լռեցնելով Ջանհասանի, Քյոսալարի և մի շարք այլ կրակակետեր: Հայաստանի հետ ցամաքային կապն այլևս վերագտնված էր, հակառակորդը նահանջել էր և շատ հեռու էր: Շատերին թվաց, թե մարտական գործողությունները մոտալուտ ավարտ կունենան: Եվ մենք, ստիպված, մի պահ հապաղեցինք, ինչը. հետո չափազանց ծանր հետևանքներ ունեցավ:

1992-ի հունիսից սկիզբ է առնում մեր բանակի պատմության երկրորդ փուլը, երբ ադրբեջանցիները, ոգևորված խորհրդային բանակի՝ Ադրբեջանի տարածքում տեղաբաշխված ստորաբաժանումների մեծաքանակ սպառազինության անարգել բռնագրավումով, անցան լայնածավալ հարձակման: Ընկավ Շահումյանը, սկիզբ առավ հակառակորդի ժամանակավոր հաջողությունների շրջանը: Մեր ջոկատները ստիպված էին նահանջել Մարտակերտի տարածքի մի զգալի մասից՝ իրենց հետ տանելով նաև բնակչությանը: Այս շրջանը մեր պետության ու ողջ ժողովրդի համար եղավ իսկապես ծանրագույն փորձության շրջան:

1993թ. մարտի վերջին իրականացվեց Քելբաջարի օպերացիան՝ գրավվեց Հայաստանն ու Ղարաբաղը սեպի պես զատող այս կարևոր հատվածը:

Հունիսին հակառակորդը ծանր մարտերից հետո, չկարողանալով դիմադրել հայկական ինքնապաշտպանական ուժերի շեշտակի գրոհներին, ստիպված էր թողնել Մարտակերտն՝ հարող բնակավայրերով, հուլիսին՝ Աղդամը, օգոստոս-հոկտեմբերին՝ Ֆիզուլին, Ջաբրայիլը, Կուբաթլուն և Զանգելանը, ինչը թույլ տվեց պաշտպանական բանակին երկրի երկայնքով ձևավորել անվտանգության գոտի՝ զերծ պահելու համար Լեռնային Ղարաբաղի տարածքի մեծ մասը հնարավոր ռմբահարումներից:

1993թ. դեկտեմբերին հակառակորդն անցավ նախադեպը չունեցող հարձակման:

Այս ճակատամարտը, որը տևեց ուղիղ հինգ ամիս, ավարտվեց հայկական

պաշտպանական ուժերի լիակատար հաղթանակով: Այնպիսի հաղթանակով, որ պարտված հակառակորդը, որ մինչ այդ լսել անգամ չէր ուզում հրադադարի մասին, գլխիկոր համաձայնեց ստորագրել այն:

1994թ. մայիսի 16-ին Հայաստանի, Ղարաբաղի և Ադրբեջանի պաշտպանության նախարարները Մոսկվայում ստորագրեցին հրադադարի մասին համաձայնագիր:

Արդեն խաղաղ պայմաններում նորաստեղծ բանակը, նրա հրամանատարական կազմը հնարավորություն ստացավ լծվելու բանակաշինության գործին՝ ուշադրություն դարձնելով առավելապես բանակի ներքին խնդիրներին: Բանակաշինության գործընթացն ընդգրկեց ռազմական համակարգի, առանց բացառության, բոլոր ոլորտները՝ սկսած բանակային ենթակառուցվածքների ստեղծումից մինչև անհրաժեշտ օրենսդրական հիմքի ապահովում:

1-ին տեսանյութում՝ Լևոն Տեր-Պետրոսյանի կոչը. «Ցուցակագրվել կամավորների շարքում, որոնք պետք է տեղափոխվեն Ղարաբաղ», 1988թ: Այս կոչը հետագայում վերաճում է Հայոց Ազգային Բանակի, արդեն Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանատարությամբ: https://youtu.be/qKi55L-VGN0

2-րդ տեսանյութում՝ Վազգեն Սարգսյանի կոչով հանրապետության բոլոր մարզերից հավաքված 500 մահապարտները 1992 թվականի օգոստոսի 15-ին երդում տվեցին «Եռաբլուր» պանթեոնում և մեկնեցին ռազմաճակատ: https://youtu.be/5YRrU6ft86I

Տեսանյութում՝ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի առաջին զինվորական զորահանդեսը. https://www.facebook.com/watch/?v=30138672529644

ԳԼՈՒԽ 2 ՀՀԶՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հայաստանի անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը պաշտպանող պետական ռազմական հաստատություն

Հայաստանի զինված ուժերը կազմված են Հայաստանի պաշտպանության նախարարությունից, հինգ բանակային կորպուսներից: Պաշտպանության նախարարությունը իր հերթին կազմված է վարչական ապարատից, հետախուզության, հրթիռային զորքերի և հրետանու, ավիացիայի, Զորքերի ծառայության և զինվորական ծառայության անվտանգության ապահովման, հակաօդային պաշտպանության զորքերի, ռազմավարական պլանավորման, մարտական պատրաստության, թիկունքի, կապի և ավտոմատ կառավարման համակարգերի, ինժեներական զորքերի, սպառազինության, ռադիացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության, կազմազորահավաքային, օպերատիվ, անձմնակազմի հետ տարվող աշխատանքների, ֆինանսական, կադրերի վարչություններից, ռադիոէլեկտրոնային պայքարի, ռազմական հաղորդակցությունների, ռազմատեղեկագրական, ութերորդ, ստանդարտացման և չափագիտական, ռազմանվագախմբային բաժիններից, Հայաստանի զինվորական կոմիսարիատից և այլ ստորաբաժանումներից, որոնք կատարում են խնդիրների առաջադրման և պլանավորման, դրանց իրականացման, վերահսկողության գործառույթներ:

Հայաստանի զինված ուժերը կազմված են հետևյալ մասնագիտացված զորքերից.

ՀՀ ցամաքային զորքեր (**Հայկական բանակ**), Հայաստանի զինված ուժերի տեսակ, որը հիմնականում նախատեսված է ցամաքում մարտական գործողությունները վարելու համար:

Ցամաքային զորքերը կազմավորվել են 1992 թվականի հունվարի 28-ին, այն բանից մի քանի ամիս անց, երբ Հայաստանի Հանրապետությունը հայտարարել է Խորհրդային Միությունից իր անկախության մասին: Առաջին ղեկավարն է դարձել Սովետական Ցամաքային Զորքերի գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Նորատ Տեր-Գրիգորյանցը:

Ցամաքային զորքերը կոչված են լուծելու ստրատեգիական և օպերատիվ-տակտիկական խնդիրներ գործողությունների ցամաքային ռազմաբեմում: Իրենց մարտական հնարավորություններով ցամաքային զորքերը կարող են ինքնուրույն կամ զինված ուժերի այլ տեսակների հետ համագործակցելով ետ մղել հակառակորդի ցամաքային բանակների, օդային և ծովային խոշոր դեսանտի ներխուժումը, նրա օպերատիվ դասավորության ամբողջ խորությամբ կհասցնել միաժամանակյա զանգվածային կրակային հարված, ճեղքել հակառակորդի պաշտպանությունը, իրականացնել ստրատեգիական հարձակում՝ մեծ խորությամբ և ամրանալ զբաղեցրած տարածքում: Ցամաքային զորքերի գլխավոր հատկությունը կրակային մեծ հզորությունն է, հարվածային ուժը, բարձր մանևրայնությունը և մարտական լրիվ ինքնուրույնությունը:

ՀՀ ՁՈՒ ռազմաօդային քուժեր: Հիմնական խնդիրներն են.

1. օդից ցամաքային զորքերի կրակային աջակցումը,
2. անձնակազմի և բեռների օդային տեղափոխում:
3. ավիացիայի ստորաբաժանումների մշտական մարտական պատրաստականության վիճակի պահպանումը:

ՀՀ ԶՈՒ ավիացիայի վարչության հիմնական գործառույթներն են.

1. ուսումնամարզական թռիչքների իրականացման կազմակերպումը,
2. ռազմական տեխնիկան մարտունակ վիճակում պահելու անհրաժեշտ միջոցառումների իրականացումը,
3. ըստ անհրաժեշտության՝ որոնողական-փրկարարական աշխատանքների իրականացումը

ՀՀ ՀՕՊ զորքեր:1992թ. սեպտեմբերի 14-ի ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով ստեղծվում է հակաօդային պաշտպանության վարչությունը: ՀՕՊ զորքերի հիմնական խնդիրն է ՀՀ օդային տարածությունում պետական սահմանի անառիկության ապահովումը, իսկ ԱՊՀ մասնակից պետությունների ՀՕՊ միացյալ համակարգի կազմում՝ ՌԴ ռազմական բազայի ՀՕՊ և ավիացիայի ուժերի ու միջոցների հետ, հավաքական անվտանգության Կովկասյան տարածաշրջանի օդային տարածությունում, ԶՈՒ ՀՕՊ զորքերի առջև դրված մարտական խնդիրների կատարումը:

ՀՕՊ զորքերի հիմնական նպատակն է՝

- շարունակել ՀՕՊ զորքերի մարտական պատրաստականության վիճակի պահպանումը, բարձրացնել ՀՕՊ զորամասերի գործունեության արդյունավետությունը,
- օդային տարածությունում պետական սահմանի (շփման գծի) խախտումները կանխարգելելու և բացառելու, հերթապահ ուժերով ու միջոցներով օդային հակառակորդի հանկարծակի հարվածները հետ մղելու նպատակով հերթապահ ուժերն ու միջոցները մշտապես պահել համապատասխան պատրաստականության վիճակում,
- կատարելագործել զորքերի մարտական կառավարման համակարգը:

Միաժամանակ 1992թ. պլանավորվեց և իրագործվեց նախկինում ՀՕՊ զորքերում ծառայած պահեստայինների զորակոչը: Ազատամարտի ընթացքում ստեղծվեցին հրամանատարական կետեր, զորամասերի և ստորաբաժանումների կառավարման ցանց և մի ամբողջ զենիթային հրթիռային ու ռադիոլոկացիոն համակարգ, որն էլ դրվեց մարտական հերթապահության:Մոտոհրաձգային գնդերում և բրիգադներում ստեղծվեցին միաժամանակ հակաօդային պաշտպանության թեթև օղակներ, որոնք հետագայում վերածվեցին մարտկոցների և դիվիզիոնների: Զենիթային հրթիռային տեխնիկայի ճիշտ տեղաբաշխումը և արդյունավետ օգտագործումը երաշխիք հանդիսացավ հակառակորդի օդային ուժերի կասեցմանը, մեր զորքերի ապահով առաջխաղացմանը և, որ ամենակարևորն էր, այն նպաստեց բնակչության և զորքերի ողջ անձնակազմի մարտական ոգու բարձրացմանը և հավատը դեպի հաղթանակ:1992-1994թթ. մարտերի ընթացքում հակաօդային պաշտպանության զորքերը ոչնչացրել են հակառակորդի ինքնաթիռներ և

ուղղաթիռներ, մեծ քանակությամբ ռազմական տեխնիկա: ՀՕՊ կազմակերպման փորձառությունը, որը ձեռք էր բերվել պատերազմի ընթացքում, ներկայումս նույնպես պահպանում է իր նշանակությունը՝ կարևոր ուղղություններում օգտագործելով իր հզորությունը և միջոցները, մարտական գործողությունների և զորաշարժերի ընթացքում պահպանելով այլ զորամասերի և ստորաբաժանումների հետ փոխգործողությունները և ներդաշնակությունը:ՀՕՊ զորքերի զարգացմանը և կատարելագործմանը կարևոր և առանձնահատուկ դեր խաղաց ԱՊՀ երկրների «ՀՕՊ-ի համակարգ ստեղծելու մասին» համաձայնագրի ստորագրումը: Սկսած 1999թ. Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության հետ համատեղ մարտական հերթապահություն են իրականացնում նաև Հայաստանի Հանրապետության ՀՕՊ զորքերը

Ցամաքային զորքերն իրենց հերթին բաղկացած են հետևյալ զորատեսակներից.

Մոտոհրաձգային զորքեր: Զինված ուժերի համակարգում ցամաքային զորքերի տեսակ, որը նախատեսված է մարտական գործողություններ վարելու ինչպես ինքնուրույն, այնպես էլ այլ զորատեսակների հետ համատեղ: Ջոկը ներառվում է մոտոհրաձգային, մոտոհետևակային, հետևակային, ականանետային, սակրային, կապի և այլ դասակների կազմի մեջ: Մեկ դասակը կազմված է երեք ջոկից: Ռազմական գործողությունների ժամանակ ջոկը իրեն առաջադրված խնդիրը կատարում է դասակի կազմում: Մոտոհրաձգային ջոկը լինում է հետևակի մարտական մեքենայով (ՀՄՄ) կամ զրահապատ փոխադրիչով (ԶՓ), իսկ հրաձգային ջոկը՝ ավտոմեքենայով:

Հրթիռահրետանային զորքեր:ՀՀ պաշտպանության նախարարի 1993 թ. հոկտեմբերի 30-ի հրամանով հոկտեմբերի 19-ը ճանաչվել է որպես հրթիռային զորքերի և հրետանու օր:ՀՀ ԶՈՒ հրթիռային զորքերը և հրետանին համալրված է հրթիռային, հրետանային և հակատանկային բրիգադներով, գնդերով, առանձին հրետանային և ռեակտիվ հրետանային դիվիզիոններով:

ՀՀ ԶՈՒ հրթիռային և հրետանային զորամասերի ծառայության կազմակերպման գործում մեծ է ՀՀ ԶՈՒ հրթիռային զորքերի և հրետանու վարչության դերը: ՀՀ ԶՈՒ հրթիռային զորքերը և հրետանին վերազինվում են մեծ հեռահարությամբ, գերճշգրիտ հրթիռային, համազարկային կրակի ռեակտիվ համալիրներով և հակա-տանկային կառավարվող հրթիռային համակարգերով, ինչը հնարավորություն է տալիս բարձր արդյունավետությամբ խոցելու ինչպես մեծ հեռավորության վրա գտնվող հակառակորդի ռազմավարական օբյեկտները, այնպես էլ պաշտպանության ամբողջ խորությամբ կենդանի ուժն և զրահատեխնիկան:

Ինժեներասակրավորական զորքեր: Արցախյան ազատամարտի առաջին իսկ օրերից կամավորական տարբեր ջոկատների կազմում սկսեցին գործել նաև սակրավորները,

որոնք հիմնականում բարձրագույն ուսումնական հաստատությունների ռազմական ամբիոններ ավարտած սպաներ էին և ԽՍՀՄ զինված ուժերում ծառայած ինժեներական զորքերի մասնագետներ: Քիչ չէին նաև կադրային սպաները, որոնց մի մասը ազատամարտի կանչով թողնելով իրենց պաշտոնները, իսկ ոմանք վաստակած հանգիստը՝ զինվորագրվեցին ազգային ազատագրական պայքարին:Ազատամարտի տարիներին ինժեներական զորքերի շնորհիվ ոչ միայն կանխվեց թշնամու առաջխաղացումը, այլև զգալի կորուստներ հասցվեց նրա կենդանի ուժին և տեխնիկային՝ մեծ ավանդ ներդնելով հաղթանակի և անկախ Հայաստանի Հանրապետության նորաստեղծ բանակի կայացման գործում: ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով սեպտեմբերի 7-ը սահմանվել է որպես Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ինժեներական զորքերի օր:Ինժեներական զորքերի կողմից զորամիավորումների, միավորումների և զորամասերի պաշտպանական գոտիներում և տեղամասերում շարունակվում է ամրաշինական կառույցների սարքավորման, պայթյունային և ոչ պայթյունային արգելափակոցների տեղադրման մեծածավալ աշխատանքների իրականացումը: Հատկապես նշանակալի և արդյունավետ ծրագրեր են իրականացվել մարտական հերթապահություն իրականացնող անձնակազմի կենսունակության բարձրացման և կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ: Բացի այդ, ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի ստորաբաժանումները հումանիտար ականազերծման աշխատանքներ են իրականացնում ՀՀ մարզերում, ինչպես նաև ՆԱՏՕ-ի հետ համագործակցության շրջանակներում խաղաղապահ առաքելություն է իրականացրել 2003-2007 թթ.՝ Իրաքում, 2010 թ.-ից՝ Աֆղանստանում: ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչությունը մշտական աշխատանք է տանում առաջավոր փորձի ուսումնասիրման, նոր տեխնոլոգիաների ներդրման, ժամանակակից ինժեներական սպառազինության միջոցների ստեղծման ուղղությամբ:

Կապի զորքեր: ՀՀ Զինված ուժերի կապի զորքերը ձևավորվել են Արցախյան պատերազմի ընթացքում և անցնելով բավականին բարդ ու դժվարին ուղի՝ ապահովելով զինված ուժերի անընդհատ և հուսալի ղեկավարումը, դարձել են մեր հաղթանակի գրավականներից մեկը:Պատերազմի սկզբնական փուլում կապի միջոցների, զինվորական կապի մասնագետների պակասը, դեռևս կապի չձևավորված ստորաբաժանումները և զինվորական կապի համակարգը խոչընդոտում էր զինված ստորաբաժանումների ղեկավարմանը:Զինվորական կապի համակարգի հիմնական ծավալումը սկսվել է 1992 թվականին: ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի կազմում 1992 թվականին կազմավորվեց կապի վարչությունը և մարտական խնդիրների կատարմանը զուգահեռ սկսվեց իրականացվել կապի զորքերի ձևավորումը: 1992թ. կազմակերպվեցին պաշտպանության համակարգի կապի հանգույցները:

Զինված ուժերի ղեկավարման կետերի միջև կապը կազմակերպվել է տարբեր կապուղիներով, որոնք կազմավորվում էին լարային, ռադիո և ռադիոռելեային կապի միջոցներով: Ապահովվել է հեռախոսային և ռադիոհեռախոսային կապը տարբեր

ռեժիմներում: Կազմակերպվել է գործել նաև գլխավոր շտաբի սուրհանդակափոստային կապի հանգույցը, որն ապահովում էր թղթակցության ու զինվորական փոստի շուրջօրյա առաքումները:ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի

կապի վարչությունը համապատասխան կառույցների և ստորաբաժանումների միջոցով ղեկավարում էր կապի զորքերը, իրականացնում էր կապի միջոցների և նյութերի մատակարարում, կապի միջոցների վերանորոգման աշխատանքներ: Կապի կազմակերպմանը զուգահեռ ստեղծվել է նաև ուսումնանյութական բազան, պատրաստվել են ուսումնական ծրագրերը:2004թ-ին մեկնարկել և առ այսօր շարունակվում է նոր սերնդի թվային ռադիոկայաններով վերազինման ծրագիրը Կապիհանգույցներում :
Արդեն սկսվել է հայրենական արտադրության կայանների ներդրումը: Այս ամենի հետ զուգահեռ, հաշվի առնելով կապի համակարգի կատարելագործման ուղղվածությունը, կատարվել են և շարունակվում են իրականացվել կապի զորամասերի և ստորաբաժանումների կառուցվածքային ու հաստիքային փոփոխություններ, իրականացվում են աշխատանքներ կապի զորքերում անձնակազմի պատրաստության ուղղությամբ:

2002թ. ՊՆ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտում բացվել է կապի ֆակուլտետ, որտեղ ներկայումս պատրաստվում են կապավոր սպաներ:

ՀՀ ՊՆ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտի կապի ֆակուլտետում և ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում կուրսանտների պատրաստության գործընթացում լայն կիրառում է ստանում համակարգչային տեխնիկայի օգտագործումը: Ռազմական ինստիտուտների կապի ֆակուլտետում լավ հիմքերի վրա է դրված նաև օտար լեզուների, մասնավորապես՝ անգլերեն լեզվի ուսուցումը: Այս ամենի համար պատրաստված է համապատասխան ուսումնանյութական բազա: Պլանավորման փուլում է գտնվում նշված ուսումնական հաստատությունների համար էլեկտրոնային գրադարանի կազմակերպումը:

ՀՀ ԶՈՒ թիկունքի զորքեր: վարչության խնդիրներն են.

1. ՀՀ զինված ուժերի թիկունքային ապահովման պլանավորումն ու կազմակերպումը,
2. ՀՀ ԶՈՒ թիկունքի մշտական մարտական և զորահավաքային պատրաստականության ապահովումը,
3. ՀՀ ԶՈՒ թիկունքի օպերատիվ թիկունքային, մարտական և հատուկ պատրաստության կազմակերպումը,
4. ՀՀ ԶՈՒ թիկունքի ենթակա զորամասերի դաստիարակչական աշխատանքի, զինվորական կարգապահության պահպանման, անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի և զինվորական ծառայության անվտանգության ապահովումը,
5. ՀՀ ԶՈՒ թիկունքի ենթակա զորամասերում և կազմակերպություններում սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների պահպանման կազմակերպումը:

ՌԷՊ զորքեր:Ռադիոէլեկտրոնային պայքարը (ՌԷՊ) զորքերի՝ նպատակով, խնդիրներով, տեղով և ժամանակով համաձայնեցված միջոցառումների և գործողությունների միասնությունն է՝ ուղղված հակառակորդի զորքերի և զենքի

ղեկավարման համակարգերի ու միջոցների հայտնաբերմանը, կրակային խոցմանը, զավթմանը (շարքից դուրս բերմանը) և ռադիոէլեկտրոնային ճնշմանը, ինչպես նաև սեփական զորքերի և զենքի ղեկավարման համակարգերի և միջոցների ռադիոէլեկտրոնային պաշտպանությանը, հակառակորդի հետախուզական

տեխնիկական միջոցների հակազդմանը:Ռադիոէլեկտրոնային պայքարի

միջոցառումներն իրականացվում են զորատեսակների և հատուկ զորքերի կողմից ղեկավարման կետերի և ռադիոէլեկտրոնային օբյեկտների կրակային խոցման (ոչնչացման, գրավման, շարքից դուրս բերման) գործողությունների և հետախուզական, օպերատիվ քողարկման ու այլ օպերատիվ ապահովման տեսակների հետ համատեղ:Խաղաղ ժամանակ ռադիոէլեկտրոնային պայքարի հերթապահ ուժերն ու միջոցները հետախուզում են հակառակորդի ռադիոէլեկտրոնային միջոցների և առաջնահերթ օբյեկտների ավտոմատ ղեկավարման համակարգերը և մշտապես հետևում են դրանց:Ռադիոէլեկտրոնային պայքարի նպատակներն են.

1. Հակառակորդի զորքերի ղեկավարման համակարգերի ապակազմակերպումը,
2. Նրա զենքի, մարտական տեխնիկայի և հետախուզական տեխնիկական միջոցների կիրառման արդյունավետության նվազեցումը,
3. Յուրային զորքերի և զենքի ղեկավարման համակարգերի և միջոցների աշխատանքի կայունության բարձրացումը:

ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունն իրականացնում է տեխնիկական ապահովման համակարգի շրջանակներում հետևյալ գործառույթները՝

գիտատեխնիկական բաղադրիչի (պաշարների, անխափան գործող արտադրական կարողությունների և այլն) ստեղծման ուղղությամբ միջոցառումների պլանավորումը, նախապատրաստումն ու անցկացումը,սպառազինության ու ռազմական (հատուկ) նոր տեխնիկայի, չափման միջոցների նմուշների, համալիրների, համակարգերի և այլնի ստեղծման հնարավորությունների բազմակողմանի հետազոտումն ու նախագծումը կամ արդիականացումը,կուտակումը, շարակարգումը, պահուստների պահպանումը,ՍՈՏ շահագործումը, պահպանումը, վերականգնումը (նորոգումը), օգտահանումը և թափոնումը (վերացումը),տեխնիկական ապահովման մարմինների զորահավաքային նախապատրաստումը,ինժեներատեխնիկական կազմի ու կրտսեր մասնագետների պատրաստումը:

Եզրակացություն

Հայաստանի Հանրապետությունը և աշխարհասփյուռ հայությունը հունվարի 28-ին նշում է հայկական բանակի կազմավորման օրը:

Հայոց բանակը, հայ զինվորը բազմիցս է ապացուցել, որ տարածաշրջանում ամենահզորն ու մարտունակն է: Բանակի օրը հարկ է մեկ անգամ ևս շեշտել և արժևորել հայոց բանակի դերն ու նշանակությունը մեր՝ թշնամական երկրներով շրջապատված երկրի համար:

Հայոց բանակը մեր միասնական հայրենիքի, ազգային շահերի և արժեքների պահապանն է:

Այո', մենք բոլորս պարտական ենք Մայր Հայրենիքին, բոլորս էլ կրում ենք մեր պատասխանատվությունը: Բայց եթե այդ պատասխանատվությունը մեր բոլորիս ծառայության մի մասն է, ապա զինվորականի համար այն կյանքի իմաստն է:

Մեր պետության պատմության ամբողջ ընթացքը անբաժանելիորեն կապված է բանակի հետ: Այս ուժեղ միության շնորհիվ է, որ ամենադժվար պահերին Հայաստանը պաշտպանել է իր անկախությունը ու արժանապատվությունը: Մեր հայրենքի հանդեպ հայոց փառահեղ բանակի զինվորների անձնազոհ սիրո, քաջության, հերոսության, հմտությունների և դրանց կատարելագործման շնորհիվ է, որ կարողացել ենք կայացնել պատասխանատու որոշումներ, որոնցով պայմանավորված են եղել մեր երկրի խաղաղությունը և Հայրենիքի ճակատագիրը:

Մեր բանակը մեր հպարտությունն է: Հայ սպան և զինվորը ոչ միայն մեր հայրենիքի սահմաններն են պաշտպանում, այլև անձնազոհ ծառայություն են մատուցում միջազգային խաղաղապահական օպերացիաներում՝ծառայելով ամբողջ մարդկությանը: Հայոց բանակի ներդրումը անթիվ ու անգին է: Վստահաբար կարող ենք ասել, որ անցնելով պատմական դժվար ուղի, հայոց բանակը դարերի ընթացքում էլ ավելի է ամրապնդվել ու մարտունակ դարձել: Մեր բարդ տարածաշրջանում անհնար է չգնահատել Հայոց բանակի դերն ու նշանակությունը: Հայաստանի զինված ուժերը մեր երկրի ու ժողովրդի անվտանգության առաջին երաշխավորն են և խաղաղության հուսալի պատվարը:Պետք է խոստովանել, որ բանակը դեռևս հին դարերից սկսված մեր պետական կառույցի ամենաամուր օղակն է:

Փառք ու պատիվ նրանց, ովքեր իրենց կյանքն են զոհել Հայրենիքի պաշտպանության սուրբ գործում:

Բանակն ընկճվելու իրավունք չունի. զինվորը, սպան, գեներալը գլուխը կարող է խոնարհել միայն զոհված ընկերների սուրբ հիշատակի և նրանց հարազատների առջև, Զինված ուժերի կազմավորման 29-ամյակի կապակցությամբ իր ուղերձում ասել է Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Օնիկ Գասպարյանը:

Փա՛ռք մեր Բանակին, փա՛ռք մեր Զինվորներիի:

Օգտագործված գրականություն

https://www.civilnet.am/news/

https://www.civilnet.am/news/188695

http://www.historyofarmenia-am.armin.am/am/Encyclopedia_of_armenian_history_Hayoc_azgayin_banak

https://newsline.am/news/1992t_hownvari_28_in_azdararvec_hayoc_azgayin_banaki_steghcowmy_tesanyowter/2022-01-28-5582

https://hy.wikipedia.org/

https://www.mil.am/hy/structures/

հայոց պատմություն 9-րդ դասարանը դասագիրք էջ 131-133,էջ 146-147:

Ն Զ Պ 8-րդ դասարանի դասագիրք էջ 3-17 :

Ն Զ Պ 11-րդ դասարանի դասագիրք էջ 9-19 :

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

<<ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ: ՎԵՐԻՆ ՇՆՉՈՒՂԻՆԵՐԻ ԽՑԱՆՈՒՄԸ ՕՏԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՎ>>

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՝ Գևորգ Կոստանդյան

ԽՄԲԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝ Անդրանիկ Սարգսյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------

2.ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ----------

3.ՇՆՉՈՒՂԻՆԵՐԻ ԽՑԱՆՈՒՄ----------

4. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ. ՉԱՓԱՀԱՍ ՏՈՒԺԱԾ ԵՎ ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱ : ՀԱՄՅԼԻԿԻ ՄԵԹՈԴ----------

5. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ. ԾԾԿԵՐ ԵՐԵԽԱ----------

6.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------

7.ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ներածություն

Առաջին օգնություն, դժբախտ պատահարների, վնասվածքների, հանկարծահաս հիվանդությունների ժամանակ մարդու կյանքը փրկելու և բարդությունները կանխելու

նպատակով ցուցաբերվող պարզագույն, անհապաղ և նպատակահարմար օգնության միջոցառումներ: Կատարվում է մինչև բուժաշխատողների ժամանելը և հիվանդին (տուժածին) բուժհիմնարկ հասցնելը: Երբ դրանք կիրառում է ինքը՝ հիվանդը (տուժածը), անվանվում է *ինքնաօգնություն*, : *Փոխօգնությունը* ցուցաբերում են ուրիշ մարդիկ և, որպես կանոն, այն ավելի ծավալուն է:

Անհապաղ առաջին օգնություն հատկապես անհրաժեշտ է սուր սկսվող, կյանքին վտանգ սպառնացող վիճակների:

Հաճախ առաջին օգնության ճիշտ ցուցաբերումով է պայմանավորվում հետագա բուժօգնության հաջողությունը:Առաջին բուժօգնության հիմունքների իմացությունը շատ կարևոր է բոլորի համար:

Առաջին բուժօգնության **հիմնական խնդիրներն են.**

1.Գնահատել դեպքի վայրը և յուրաքանչյուր տուժածի վիճակը,

2.Դադարեցնել վնասող գործոնի հետագա ազդեցությունը,

3.Ցույց տալ առաջին բուժօգնություն

4.Ապահովել տուժածի արագ տեղափոխումը բուժհաստատություն:

Յուրաքանչյուր տուժածի առաջին բուժօգնությունն սկսվում է շնչառական ուղիների , շնչառության և արյան շրջանառության զննումով,որոնց ֆունկցիոնալ շեղումներից առաջանում է օրգանիզմի թթվածնային քաղց:Կարևոր է արագ և ճիշտ կազմակերպել առաջին բուժօգնությունը՝ ապահովելով շնչառական ուղիների անանցանելիությունը,կարգավորելով շնչառությունը և արյան շրջանառությունը,որոնք կնպաստեն օրգանիզմի գոյատևմանը,կիմանաք շնչառության խանգարումների պատճառների, վերին շնչուղիների խցանումը օտար մարմիններով և այդ դեպքերի առաջին բուժօգնության մասին:

Շնչառության խանգարումներ

Հասուն մարդը մեկ րոպեում շնչում է 15-20 անգամ,1 տարեկան երեխաները ՝ 20-35 անգամ,իսկ մինչև մեկ տարեկան երեխաները ՝35-ից ավելի,հիվանդագին վիճակների

ժամանակ շնչառությունը կարող է ավելի արագանալ,դանդաղել,լինել մակերեսային, կամ էլ ընդհատվել:

Շնչառության սուր խանգարումների պատճառ կարող են լինել `շնչառական ուղիների անանցանելիության պատճառները , շնչառական համակարգի բորբոքային երևույթները , կրցքավանդակի վնասվածքները և այլն:

Շնչառական ուղիների անցանելիության խանգարումների պատճառներն են՝

- Շնչառական ուղիների վնասվածքները (հրազենային ,կենցաղային,տրանսպորտային և այլն)
- Շնչառական ուղիներում օտար մարմինների հայտնվելը կերակրի մնացորդ,փոքր առարկաներ,դեղահաբ,,մետաղադրամ,հատապտուղ,կորիզ և այլն
- Լեզվի հետանկումը անգիտակից վիճակներում

Կոկորդի սպազմը և այտուցը,շնչառական համակարգի սուր բորբոքային հիվանդությունները:

Շնչուղիների խցանում

Նորմալ շնչառության համար անհրաժեշտ է, որ շնչուղիները լինեն անցանելի: Ու՞մ հետ չի պատահել, որ հանկարծ շնչուղիները փակվեն, ու մի պահ չկարողանա շնչել: Հիմնականում բանն ավարտվում է մի քանի խռպոտ հազով, որի շնորհիվ կոկորդին կանգնած օտար մարմինը դուրս է մղվում: Բայց լինում է եւ այնպես, որ հազը չի օգնում, մարդը՝ չկարողանալով ո՛չ շնչել, ո՛չ խոսել, ո՛չ հազալ, կարմրում է, կապտում… Սա բավական հաճախ հանդիպող իրավիճակ է, որ ավելի շատ առաջանում է մանկահասակ երեխաների շրջանում: Ու քանի որ նման իրավիճակներում շատ կարեւոր է արագ եւ ճիշտ առաջին օգնություն կամ ինքնօգնություն ցույց տալը՝ ուստի հարկ է, որ բոլորն իմանան, թե ինչու՞ եւ ինչպե՞ս են փակվում շնչուղիները եւ փրկության ի՞նչ միջոցներ կան:

Եթե այս կամ այն պատճառով շնչուղիները խցանված են, ապա տուժածի շնչառությունը կարող է դժվարանալ կամ դադարել: Նման դեպքերում անհրաժեշտ է անհապաղ ցուցաբերել առաջին օգնություն: Շնչուղիների խցանումն ավելի հաճախ հանդիպում է փոքր երեխաների մոտ:



Նկ. 7.1 Շնչուղիների խցանում օտար մարմնով

Շնչուղիների խցանումը շնչառական ուղիների լրիվ կամ մասնակի փակումն է, որի հետևանքով խանգարվում է օդի անցումը թոքեր: Շնչուղիների խցանումը շնչառության խանգարման հիմնական պատճառներից մեկն է:

Սննդի ընդունման ժամանակ մակկոկորդը փակում է շնչուղիների մուտքը և կանխում սննդի անցումը դեպի շնչուղիներ, իսկ շնչառության ժամանակ այն բարձրանում է, բացում շնչուղիները, և օդն անցնում է թոքեր: Երբ այդ պաշտպանական մեխանիզմը խանգարվում է, օրինակ՝ երբ միաժամանակ տեղի է ունենում կլում և ներշնչում,շնչուղիները կարող են խցանվել օտար մարմիններով՝ սննդով, փոքր խաղալիքներով կամ խաղալիքի կտորներով, փոքր առարկաներով (կոճակ, ուլունք. մետաղադրամ, խճաքար).

Շնչուղիների խցանումն ավելի հաճախ հանդիպում է երեխաների մոտ: Երեխան հեշտությամբ կարող է կուլ տալ փոքր առարկաներ, օրինակ՝ կոճակներ, ուլունքներ, խաղալիքի մասեր և այլն: Երեխաների մոտ խցանում կարող է առաջանալ նաև ուտելիս, քանի որ նրանց մոտ ծամելու, կուլ տալու ունակությունները դեռևս լրիվ ձևավորված չեն:

Օտար մարմիններով շնչուղիների խցանման հիմնական պատճառներն են՝

- **Ուտելիքի չծամված կամ մեծ պատառ կուլ տալը:**
- **Ուտելիս կամ ուտելուց առաջ ալկոհոլի չարաշահումը, ինչը բթացնում է ուշադրությունը և հեշտությամբ կարող է խցանման պատճառ դառնալ:**
- **Խոսելով, ծիծաղելով կամ շտապելով ուտելը:**
- **Երեխաներին ստիպողաբար կամ լացի ժամանակ կերակրելը:**
- **Քայլելով, վազելով կամ խաղալով ուտելը:**

Շնչուղիները սննդամթերքով չխցանվելու համար հարկավոր է պահպանել այն կանոնները, որոնք նաեւ գեղագիտության ասպարեզից են: Նախ՝ չի կարելի ագահորեն կուլ տալ պատառներն առանց ծամելու: Հետո՝ չի կարելի ուտելիս խոսել, ծիծաղել, մտածել այլ բաների մասին, զարմանալ: Հատկապես վտանգավոր են ուտելով, ծամելով քայլելը կամ վազելը, խաղալը:





Շնչուղիների խցանման ժամանակ օտար մարմինը հայտնվում է կոկորդում՝ վահանաձառի մակարդակին և ձայնային ճեղքից վերև փակելով մուտքը դեպի շնչափող:Տուժածը հանկարծակի ցուցաբերում է անհանգստություն,մեկ կամ երկու ձեռքերով բռնում է կոկորդը կամ կրծքավանդակը կորցնում է խոսելու ընդունակությունը,երբեմն կարող է թույլ հազալ կամ անբնական սուր ձայներ
(խզոցներ) հանել:

Մարդու դեմքը կարմրում է, հետո՝ սկսում է կապտել, պարանոցի երակներն ուռչում են:1-2 րոպեում,սուր թթվածնային քաղցի պատճառով կարող է առաջանալ գիտակցության կորուստ,ինճպես նաև շնչառական և ապա առաջանալ սրտի կանգ:

Շնչուղիները կարող են խցանվել նաև մարմնի հյուսվածքներով (լեզու, այտուցված հյուսվածքներ)։ Սեփական հյուսվածքներով խցանում կարող է առաջանալ պարանոցի, կոկորդի վնասվածքների կամ ալերգիկ ռեակցիաների ժամանակ առաջացող հյուսվածքների այտուցի պատճառով։ Անգիտակից վիճակում շնչուղիների խցանման ամենահաճախ հանդիպող պատճառը լեզուն է։ Շնչուղիների խցանումը կարող է լինել մասնակի կամ լրիվ։

ՄԱՄՆԱԿԻ ԽՑԱՆՈՒՄ

Մասնակի խցանման դեպքում որոշ քանակի օդ անցնում է թոքեր, ինչը հնարավորություն է տալիս մարդուն հազալով փորձել դուրս բերել խցանող առարկան։ Տուժածը նույնիսկ կարող է խոսել։ Նեղացած շնչուղիներով օդի անցման ժամանակ լսվում են խզզոցներ, խռխռոց, սուլոց։ Տուժածը սովորաբար ձեռքերով բռնում է կոկորդը։

Եթե տուժածը հազում է, մի՛ խանգարեք։ Հնարավոր է, որ հազալու միջոցով օտար մարմինը դուրս գա շնչուղիներից։

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

- Մնացեք տուժածի հետ։
- Քաջալերեք նրան, որ շարունակի հազալ։
- Եթե տուժածի վիճակը չի բարելավվում, ահազանգեք շտապ օգնություն։

ԼՐԻՎ ԽՑԱՆՈՒՄ

Շնչուղիների լրիվ խցանման դեպքում տուժածը չի կարողանում խոսել, շնչել, հազալ։ Նա կարող է անբնական ձայներ հանել։ Այս նշանները ահազանգում են այն մասին, որ օդը չի անցնում տուժածի թոքեր։ Անհապաղ սկսեք ցուցաբերել առաջին օգնություն և որևէ մեկին ուղարկեք ահազանգելու շտապ օգնություն։

ՆՇԱՆՆԵՐԸ

- խոսելու, հազալու անկարողություն,
- կոկորդից բռնած դիրք,
- կարմրած դեմք, փքված պարանոցային երակներ,
- անհանգստություն, ոչ նպատակաուղղված շարժումներ,
- մաշկի կապտություն,
- գիտակցության կորուստ։

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ. ՉԱՓԱՀԱՍ ՏՈՒԺԱԾ ԵՎ ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱ

Շնչուղիների լրիվ խցանումով չափահաս տուժածին կամ մեկ տարեկանից բարձր երեխային օգնություն ցուցաբերելիս, կախված տուժածի վիճակից երբեք չի կարելի փորձել մատներով հանել օտար մարմինը, քանի որ կարող եք այն ավելի խորը հրել։Պետք չէ ժամանակ կորցնել նաև տուժածի բերանը հետազոտելու վրա։ Անհրաժեշտ է կատարել ստորև բերված գործողություններից մեկը կամ մի քանիսը՝



Նկ. 7.2 Որովայնի հրումներ գիտանկից տուժածին
ա. ձեռքերի դիրքը, բ. հրումների կատարումը

- որովայնի հրումներ,
- կրծքավանդակի սեղմումներ,
- մատներով մաքրում,
- ներփչումներ:

Այս երկու տարիքային խմբերին ցուցաբերվող առաջին օգնության հիմնական քայլերը նույնն են, այն բացառությամբ, որ եթե տուժածը երեխա է, ապա և՛ որովայնի հրումները, և՛ կրծքավանդակի սեղմումները կատարվում են ավելի փոքր ուժով:

Որովայնի հրումներ : Հայմլիկի մեթոդ:

Տուժածի շնչուղիների խցանման դեպքում պետք է հնարավորիս արագ վերականգնել շնչուղիների անցանելիությունը: Շնչուղիների բացման ձևերից մեկը որովայնի հրումներն են որը կոչվում է **Հայմլիկի մեթոդ:**



Այս մեթոդի ժամանակ որովայնային հրումներ կատարելու համար տուժածին գրկում ենք հետևից :

Որովայնի վրա կտրուկ ճնշման գործադրումը բերում է թոքերում և շնչուղիներում ճնշման կտրուկ բարձրացման: Որպես արդյունք, օդը ուժով դուրս է մղվում թոքերից՝ իր հետ դուրս մղելով օտար մարմինը: Այս երևույթը նման է գազի ճնշման տակ շամպայնի շշից խցանի դուրս թռչելուն:

ընդ որում տուժածը կարող է լինել նստած կամ կանգնած: Մի ձեռքի բռունցքը բութ մատի կողմով դրեք տուժածի որովայնին, պորտի ու կրծոսկրի թրաձև ելունի միջև ընկած տարածության մեջտեղում մյուս ձեռքով բռնեք այդ բռունցքը և մեծ ուժով կատարեք դեպի վեր և ներս ուղղված կտրուկ, արագ հրումներ :

Յուրաքանչյուր հրում նպաստում է խցանման պատճառ հանդիսացած օտար մարմնի դուրս մղմանը: Հրումները շարունակեք այնքան, մինչև օտար մարմինը դուրս գա շնչուղիներից:Եթե օտար մարմինն արդեն բերանում է ճկույթով զգույշ հեռացնում ենք:Եթե տուժածը գեր մարդ է,մեր բռունցքը դնում ենք կրծոսկրի վրա, թրաձև ելունից քիչ վերև և որովայնի հրումները փոխարինում կրծքավանդակի հրումներով:

Որովայնի հրումներ ինքնօգնության նպատակով:

Եթե դուք մենակ եք և ձեր շնչուղիները խցանվել են, ապա ինքներդ ձեր վրա կիրառեք Հայմլիկի մեթոդը :Դա հնարավոր է երկու եղանակով՝

- Դրեք ձեր մի բռունցքը որովայնի հրման տեղի վրա, մյուս ձեռքով դեպի վեր ուղղված ուժեղ հարվածներ հասցնելով բռունցքին ,
- Մյուս դեպքում հրումներ կատարել որովայնին՝ամբողջ մարմնով հենվելով տարբեր առարկաների՝ աթոռի միջքին, ցանկապատին կամ լվացարանին,որոնք չունեն սուր անկյուններ ու եզրեր:

Բոլոր դեպքերում հրումները կրկնվում են այնքան,մինչև օտար մարմինը դուրս գա շնչուղիներից:Եթե Հայմլիկի մեթոդով որևէ արդյունքի հասնել չի հաջողվում և տուժածը,կորցնելով գիտակցությունը,վայր է ընկնում,ապա Հայմլիկի մեթոդը կիրառում ենք պառկած տուժածի վրա:

Որովայնի հրումներ անգիտակից տուժածին: Պառկեցրեք տուժածին մեջքի վրա որևէ պինդ, հարթ մակերեսի վրա և կատարեք որովայնի հրումներ: Դրա համար նստեք տուժածի ազդրերին՝ ծնկներով հենվելով գետնին այնպես, որ նրա ազդրերը լինեն ձեր

ծնկների միջև: Հարմար տեղավորվելով՝ մի ձեռքի ափի բլրակը դրեք տուժածի որովայնին՝ պորտի և կրծոսկրի թրաձև ելունի միջև ընկած տարածության մեջտեղում: Մյուս ձեռքը դրեք առաջինի վրա: Երկու ձեռքի մատներն էլ պետք է ուղղված լինեն տուժածի գլխի կողմը: Կատարեք դեպիներքև և առաջ ուղղված 5 կտրուկ հրում:

ԿՐԾՔԱՎԱՆԴԱԿԻ ՍԵՂՄՈՒՄՆԵՐ

Նկ. 7.5 Կրծքավանդակի սեղմումներ գիտակից չափահաս տուժածին

Կան հատուկ դեպքեր, երբ որովայնի հրումների փոխարեն կատարվում են կրծքավանդակի սեղմումներ: Օրինակ՝ երբ տուժածը հղի կին է, կամ դուք չեք կարողանում ձեռքերով ընդգրկել տուժածի իրանը:

Կրծքավանդակի սեղմումներ գիտակից, չափահաս տուժածին: Կանգնեք տուժածի ետևում: Տուժածի բազուկների տակից ձեռքերով օղակեք կրծքավանդակը: Մի ձեռքի բռունցքը բութ մատի կողմով դրեք կրծոսկրի մեջտեղում: Համոզվեք, որ ձերբռունցքը կրծքավանդակի կենտրոնում է, այլ ոչ թե կողերի կամ կրծոսկրի թրաձև ելունի վրա: Մյուս ձեռքը դնելով առաջինի վրա՝ կատարեք կտրուկ արագ սեղմումներ (նկ. 7.5) այնքան ժամանակ, մինչև օտար մարմինը դուրս գա շնչուղիներից կամ տուժածը կորցնի գիտակցությունը:

Կրծքավանդակի սեղմումներ անգիտակից, չափահաս տուժածին: Պառկեցրեք տուժածին մեջքի վրա որևէ պինդ, հարթ մակերեսի վրա: Տեղավորվեք նրա կրծքավանդակի կողքին: Ձեռքերը տեղադրեք կրծոսկրի մեջտեղում (ինչպես ՍԱՇՎ կատարելիս) և 5 անգամ կտրուկ սեղմում կատարեք: Սեղմման խորությունը պետք է լինի 4-5 սմ:



Նկ. 7.6 Չափահաս տուժածի շնչուղիների բացում և մատներով մաքրում

ՄԱՏՆԵՐՈՎ ՄԱՔՐՈՒՄ

Մատներով մաքրում կատարվում է անգիտակից տուժածի բերանի խոռոչից օտար մարմինները հեռացնելու նպատակով: Նախ և առաջ կատարեք շնչուղիների բացում: Դրա համար բռնեք տուժածի ստորին ծնոտը լեզվի հետ միասին և բարձրացրեք վեր, մինչև որ կզակը լինի ավելի բարձր, քան քիթը: Եթե տուժածը մեծահասակ է, ապա մյուս ձեռքի ցուցամատը սահեցրեք դեպի բերանի խոռոչի խորքը և փորձեք հեռացնել օտար մարմինը (նկ. 7.6): Եթե տուժածը փոքր երեխա է, ապա օտար մարմինը կարելի է հեռացնել, միայն եթե այն տեսանելի է: Ե՛վ մեծահասակներին, և՛ փոքր երեխաներին օգնություն ցուցաբերելիս եղեք զգույշ, որ օտար մարմինը ավելի խորը չհրեք դեպի շնչուղիներ: Մատներով մաքրում կատարելիս ցանկալի է օգտագործել ձեռնոցներ կամ մատին փաթաթել ստերիլ անձեռոցիկ:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ. ԾԾԿԵՐ ԵՐԵԽԱ

Ծծկեր երեխայի մոտ պետք է ենթադրել շնչուղիների խցանում, եթե նրա շնչառությունը հանկարծակի խանգարվում է, նա սկսում է հազալ կամ տարօրինակ ձայներ հանել: Շնչուղիների խցանումով ծծկեր երեխային օգնություն ցուցաբերելիս անհրաժեշտ կլինի կատարել ստորև բերված գործողություններից մեկը կամ մի քանիսը՝ կախված երեխայի վիճակից՝

- հարվածներ թիկունքին,
- կրծքավանդակի սեղմումներ,
- մատներով մաքրում,
- ներփչումներ:

ՀԱՐՎԱԾՆԵՐ ԹԻԿՈՒՆՔԻՆ

Ծծկեր երեխային երեսնիվայր պառկեցրեք ձեր նախաբազկի վրա այնպես, որ նրա գլուխն ավելի ցածր լինի ոտքերից: Գլխի ավելի ցածր դիրքը նպաստում է շնչուղիներից օտար մարմնի դուրս գալուն: Ձեռքի ցուցամատով և բութ մատով բռնեք նրա ծնոտը: Ազատված ձեռքի ափով 5 անգամ հարվածեք երեխայի թիկունքին՝ թիակների միջև (նկ. 7.7):

ԿՐԾՔԱՎԱՆԴԱԿԻ ՍԵՂՄՈՒՄՆԵՐ

Երեխային կրծքավանդակի սեղմումներ կատարելու համար պառկեցրեք մեջքով ձեր նախաբազկին, այնպես, որ նրա գլուխը հայտնվի ոտքերից ավելի ցածր: Կրծքավանդակի սեղմումների ճիշտ տեղը որոշելու համար պատկերացրեք նրա պտուկները միացնող երևակայական գիծը: Տեղադրեք ձեր ձեռքի մատնեմատը այդ գծին՝ կրծոսկրի վրա, իսկ միջնամատի և ցուցամատի բարձիկները՝ անմիջապես մատնեմատի կողքին: Բարձրացրեք մատնեմատը (նկ. 7.8): Եթե շոշափում եք թրաձև ելունը, ապա մատների բարձիկները կրծոսկրով մի փոքր ետ սահեցրեք և սեղմումները կատարեք այդ տեղում: Երկու մատների բարձիկներով կատարեք կրծքավանդակի սեղմում 1,5-2 սմ խորությամբ (ինչպես ՍԱՇՎ դեպքում): Այնուհետև թույլ տվեք, որ կրծոսկրը վերադառնա իր նորմալ դիրքին:Կրկնեք սեղմումները 5 անգամ:



Նկ. 7.7 Հարվածներ թիկունքին



Նկ. 7.8 Կրծքավանդակի սեղմումներ

ԿՐԾՔԱՎԱՆԴԱԿԻ ՍԵՂՄՈՒՄՆԵՐ

Երեխային կրծքավանդակի սեղմումներ կատարելու համար պառկեցրեք մեջքով ձեր նախաբազկին, այնպես, որ նրա գլուխը հայտնվի ոտքերից ավելի ցածր: Կրծքավանդակի սեղմումների ճիշտ տեղը որոշելու համար պատկերացրեք նրա պտուկները միացնող երևակայական գիծը: Տեղադրեք ձեր ձեռքի մատնեմատը այդ գծին՝ կրծոսկրի վրա, իսկ միջնամատի և ցուցամատի բարձիկները՝ անմիջապես մատնեմատի կողքին: Բարձրացրեք մատնեմատը (նկ. 7.8): Եթե շոշափում եք թրաձև ելունը, ապա մատների բարձիկները կրծոսկրով մի փոքր ետ սահեցրեք և սեղմումները կատարեք այդ տեղում: Երկու մատների բարձիկներով կատարեք կրծքավանդակի սեղմում 1,5-2 սմ խորությամբ (ինչպես ՍԱՇՎ դեպքում): Այնուհետև թույլ տվեք, որ կրծոսկրը վերադառնա իր նորմալ դիրքին:Կրկնեք սեղմումները 5 անգամ:

ՄԱՏՆԵՐՈՎ ՄԱՔՐՈՒՄ



Նկ. 7.9 Մատներով մաքրում

Եթե տուժածը ծծկեր երեխա է՝ օտար մարմինը կարելի է հեռացնել, միայն եթե այն տեսանելի է: Դրա համար ձեռքի ճկույթը սահեցրեք դեպի բերանի խոռոչի խորքը և փորձեք դուրս բերել օտար մարմինը (նկ. 7.9): Զգույշ եղեք, որ օտար մարմինը ավելի խորը չհրեք դեպի շնչուղիներ:

Եզրակացություն

Այսպիսով մենք իմացանք, որ առաջին բուժօգնությունը բժշկական միջոցառումների համալիր է, այն իրականացվում է դեպքի վայրում՝ ինքնօգնության և փոխօգնության կարգով՝ հիմնականում օգտագործելով ձեռքի տակ եղած միջոցներ և նպատակ ունենալով պահպանել տուժածների կյանքն ու կենսագործունեությունը:

Այս գլխում մենք սովորեցինք ճանաչել և օգնություն ցուցաբերել շնչուղիների մասնակի և լրիվ խցանումների դեպքում: Շնչուղիների լրիվ խցանման դեպքում չափահաս տուժածին կամ մեկ տարեկանից մեծ երեխային օգնություն ցուցաբերելիս անհրաժեշտ Է կատարել ստորև բերված գործողություններից մեկը կամ մի քանիսը՝ կախված տուժածի վիճակից՝

- որովայնի հրումներ,
- կրծքավանդակի սեղմումներ,
- մատներով մաքրում,
- ներփչումներ:

Շնչուղիների լրիվ խցանման դեպքում ծծկեր երեխային օգնություն ցուցաբերելիս անհրաժեշտ Է կատարել ստորև բերված գործողություններից մեկը կամ մի քանիսը՝ կախված երեխայի վիճակից՝

- հարվածներ թիկունքին,
- կրծքավանդակի սեղմումներ,
- մատներով մաքրում,

- ներփչումներ։





Արտակարգ իրավիճակներում ժամանակին ձեռնարկվող հմուտ գործողություններով հնարավոր է կյանք փրկել: Սակայն երբեմն մարդիկ, նկատելով պատահարը, խուսափում են որևէ գործողության դիմել, միգուցե դա առաջին բուժօգնության գիտելիքներին տիրապետելու պակասն է:

Այսպիսով տիրապետելով առաջին բուժօգնության հիմունքներին՝ դպրոցականները կկարողանան ստացած գիտելիքները ոչ միայն կիրառել իրենց շրջապատում՝ նվազեցնելով դժբախտ պատահարների հետևանքները, այլև դրանով իսկ կնպաստեն բարության ու մարդասիրական հատկանիշների ձևավորմանը, կոլեկտիվում առողջ մթնոլորտի ամրապնդմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1.Նախնական զինվորական պատրաստություն 8-րդ դասարանի դասագիրք,Երևան 2019

2. Նախնական զինվորական պատրաստություն 9-րդ դասարանի դասագիրք,Երևան 2019

3.ԱԻ հանրագիտարան

4. https://www.doctors.am/

5. https://www.med-practic.com

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Թեմա՝ ՀՀ Զինված ուժերի խորհրդանիշները: Զինվորական երդում

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ Անդրանիկ Սարգսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------էջ 3
2. ՀՀ Զինված ուժերի խորհրդանիշները, զինվորական երդում-----էջ 5
3. Եզրակացություն----------էջ19
4. Գրականության ցանկ---------- էջ 21
5. Հավելված 1----------էջ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտական աշխատանքում ուսումնասիրության առարկա է դարձել ՀՀ Զինված ուժերի խորհրդանիշները և զինվորական երդումը թեման: Սույն թեմայի արդիականությունը և կարևորությունը պայմանավորված է նախ և առաջ նրանով, որ յուրաքանչյուր պետություն առանձնանում է այլ պետություններից իր խորհրդանիշներով, մշակութային արժեքներով, որոնք էլ բնութագրում են տվյալ պետության պատմությունն ու ներկան, մշակութային առանձնահատկություններն ու արժեքները:

Ցանկացած պետություն ունի իր խորհրդանիշները, որոնք հետևյալն են՝ զինանշանը, դրոշը և օրգներգը: Այդ խորհրդանիշների շարքում իրենց ուրույն տեղն են գրավում նաև յուրաքանրյուր պետության Զինված ուժերին բնորոշ խորհրդանիշները, որոնց միջոցով Զինված ուժերը առանձնանում է այլ պետությունների զինված ուժերից և այն ինքնին իր մեջ պարունակող դետալներով, նշաններով, գունային երանգներով ընդգծում է տվյալ պետության արժեքները և իրեն բնորոշ առանձնահատկությամբ այն դարձնում տվյալ պետության և հատկապես զինված ուժերի կազմում յուրահատուկ և յուրօրինակ որպես տարբերակիչ հատկանիշ այլ պետությունների զինված ուժերից:

Հայաստանի Հանապետության զինված ուժերը (այսուհետ նաև՝ ՀՀ ԶՈՒ) ևս ունի իր խորհրդանիշները. ՀՀ ԶՈՒ զինանշանը, մարտական դրոշ, զինվորական երդում և բանակի երգ: Աշխատանքի մեջ մարնարամասն ներկայացվել են խորհրդանիշները, թե դրանք ինչ առանձնահատկություն և կարևորություն ունեն:

Աշխատանքի առարկան: Այս աշխատանքի առարկան ՀՀ ԶՈՒ խրհրդանիշներն են, որոնք ծագել ն դեռևս հին ժամանակներից և այսօր հանդիսանալով մեր պետականության պահապանման կարևորագույն մաս պարտադիր են և ենթակա են պահմանման բոլորիս կողմից :

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Ոսումնասիրության նպատակը ներառում է խորհրդանիշներ հասկացության, ԶՈՒ խորհրդանիշների բացահայտումը, դրանց տեսակների վերլուծությունը:

Այդ նպատակը կանխորոշում է աշխատանքի հետևյալ խնդիրները՝

- բացահայտել ինչ են իրենցից ներկայացնում խորհրդանիշերը,
- բացահայտել դրանց բովանդակությունը և առանձնահատկությունները,

բացահայտել ՀՀ ԶՈՒ ինչ խորհրդանիշներ ունեն, դրանցից յուրաքանչյուր ինչ կարևորություն, դեր և նշանակություն ունի

Աշխատանքում օգտագործվող հետազոտության մեթոդները: Աշխատանքի առարկայի հետազոտությունն իրականացվել է ընդհանուր և հատուկ մեթոդներով: Որպես աշխատանքի առարկայի ուսումնասիրման հիմնարար մեթոդաբանական հիմք՝ օգտագործվել են համակարգային վերլուծության, համակարգային-կառուցվածքային, համեմատական և պատմական մեթոդները:

ՀՀ Զինված ուժերի խորհրդանիշները: Զինվորական երդում

Նախքան թեմայի բովանդակությանը անցնելը ցանկանում եմ հակիրճ անդրադարձ կատարել զինանշանագիտությանը և թե այն մեր երկրում ինչպես է ծնունդ առել և զարգացել: Հին և միջնադարյան պատմության և արվեստի կարևոր բնագավառներից է հերալդիկան՝ զինանշանագիտությունը, որն ուսումնասիրում է զինանշանները: Լայն առումով զինանշանը պատկեր է, որը խորհրդանշում է առանձին պետություն, երկիր, քաղաք, տոհմ, քաղաք կամ բնակավայր և այլն: Նեղ իմաստով զինանշանը հորինվածք է, բաղկացած մի քանի բաղադրիչներից, որոնք արտահայտված են որոշակիորեն սամանված կանոնների միջոցո[1]: Բաղադրիչներ են որոշակի ֆիգուրները կամ խորհրդանիշ պատկերներ, որոնք ծառայում են որպես մշտական տարբերակիչ հատկանիշներ առանձին պետության, մարմնի քաղաքի նահանգի և այլնի համար: Հայկական զինանշանների վերաբերյալ գրականությունը շատ աղքատիկ է: Առաջինը լույս է տեսել 1919թ. Վենետիկում Վ. Հացունու հեղինակությամբ ՝ «Հայ դրոշները պատմութեան մէջ», երկրոդ հրատարակությունը՝ 1930թ.: 1966թ. Բեյրությում հրատարակվել է Յ. Ստեփանյանի գիրքը «Հայկական դրոշակներ և զինանշաններ», բայց այն հիմնականում նվիրված է եղել նոր և նորագույն շրջանների դրոշներին, իսկ միջնադարի բաժինը կրկնել է Վ. Հացենու աշխատությունը[2]:

Հայաստանի Հանրապետությունը ունի իրեն բնորոշ խորհրդանիշները՝ այն է Հայաստանի դրոշը, Հայաստանի զինանշանը և Հայաստանի պետական օրհներգը: Հայաստանի զինված ուժերը, որը Հայաստանի անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը պաշտպանող պետական ռազմական հաստատությունն է,[3] ևս ունի իր խորհրդանիշները, որոնց միջոցով այն տարբերվում և առանձնանում է այլ պետությունների զինված ուժերից, և այն պարտադիր է բոլոր ՀՀ զինվորական հաստատությունների համար: Այդ խորհրդանիշներն են՝ ՀՀ ԶՈՒ զինանշանը, մարտական դրոշը, երդումը և բանակի երգը:

ՀՀ ԶՈՒ զինանշանը: Այն զետեղված է ՀՀ ԶՈՒ մարտական դրոշի, ՀՀ ՊՆ պատվոգրերի, շնորհակալագրերի, զինվորական համազգեստի, ՀՀ ԶՈՒ ենթակայության տակ գտնվող շինությունների վրա, ծառայողական շենքերի ճակատային մասում: ՀՀ զինված ուժերի զիանանշանը զինծառայողների,

[1] Ռ.Ի Մաթևոսյան Հայկական զինանշաններ ՀՀ ԳԱԱ գիտություն հրատակաչություն 1994թ. էջ 5
[2] Ռ.Ի Մաթևոսյան Հայկական զինանշաններ ՀՀ ԳԱԱ գիտություն հրատակաչություն 1994թ. էջ 9
[3] ttps://hy.wikipedia.org/wiki/

սպառազինության և ռազմական տեխնիկայի պատկանելիության հավաստում է որպես ՀՀ ԶՈՒ բաղկացուցիչ մաս:[4]

2001 թվականի հունվարի 23-ին Հայաստանի Հանրապետության Նախագահ, Զինված ուժերի գլխավոր հրամանատար Ռոբերտ Քոչարյանը հաստատել է ՀՀ զինված ուժերի զինանշանը: Զինանշանը պատկերված է վերևում՝ ուղղանկյուն, ներքևում՝ կիսաշրջանաձև վահանի վրա: Վերին եզրում հորիզոնական կապույտ ֆոնի վրա սպիտակ տառերով գրված է՝ «ՀԱՅԱՍՏԱՆ», ներքևում՝ կիսաշրջանին համապատասխան՝ կապույտ գույնով «ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ» բառերը: Վահանի մնացյալ դաշտը զինանշանային (հերալդիկ) տարրերով կազմված է հետևյալ պատկերային մասերից. Կենտրոնում պատկերված է թևատարած արծիվ՝ գլխով դեպի աջ շրջված, արծվի յուրաքանչյուր թևը բաղկացած է յոթական փետուրից (7 թիվը խորհրդանշում է արարչական շաբաթվա օրերի թիվը, կարող է արծվի գլխի հետ հասկացվել նաև պատմական Հայաստանի 15 նահանգները):Արծիվն իրականացված է մուգ կապույտ գույնով և կենտրոնական կերպար է զինանշանի վրա: Խոհրդանշում է ուժ, հզորություն, խորաթափանցություն, սլացք, կամք: Իհարկե, այդ բոլոր հատկանիշները բնութագրական են երկրի պահապան բանակին: Արծվի գլուխը պատկերված է արևի կլոր սկավառակի վրա, որը նույնպես իմաստավորվում է. քանի դեռ կա արևը, կլինեն նաև Հայաստանն ու Հայոց զինված ուժերը:Արևի ճառագայթների վրա, արծվի թևերի բացվածքի մեջ պատկերված է Հայաստանի պետական խորհրդանիշ եռագույն դրոշը, որը հավաստում է, որ Հայաստանի զինված ուժերը գտնվում են պետության հովանու ներքո:Արծվի մարմինը կազմում է հայկական կլոր վահանը՝ իրականացված ծիրանագույնի մուգ ու բաց երանգներով: Վահանը խորհրդանշում է, որ զինված ուժերը երկրի գոյության պատվարն ու պահապանն են:Վահանի ներսում պատկերված է հավասարաթև խաչ, որ մեր քրիստոնեական ժառանգորդության ու հավատի առհավատչյան է:Զինանշանային վերջին տարրը սուրն է: Այն հորիզոնական դիրքով գտնվում է վահանի տակ: Աջ կողմում երևում է սրի կոթը, ձախ կողմում՝ սրի ծայրահատվածը: Սուրը խորհրդանիշն է մշտարթուն վիճակի և հանուն հայրենյաց պատրաստ է իջնել թշնամու գլխին: Զինանշանային պատկերագրության առումով, իր երևացող հատվածներով, սրի մասերը նաև

[4] Նախնական զինվորական պատրաստություն Վ. Օհանյան, Ս. Մարգարյան, Վ. Առաքելյան, Հ. Գաբրիելյան, Լ. Ղազարյան, Ռ. Ալավերդյան, Հ. Մաթևոսյան, Ա. Վիրաբյան, Ս. Հովհաննիսյան «Աստղիկ Գրատուն» հրատարակչություն Երևան 2014 էջ 12

խորհրդանշում են արծվի ճանկերը՝ ամբողջացնելով արծիվ-զինված ուժեր խորհրդանիշը: [5] ՀՀ ԶՈՒ-ի զինանշանի լուսանկարը տեղադրված է աշխատանքի հավելված 1-ում նկար 1:

Զորամասի մարտական դրոշը: Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զորամասի մարտական դրոշը զինվորական պատվի, արիության ու փառքի խորհրդանիշն է: Նա յուրաքանչյուր զինծառայողի՝ Հայրենիքին անձնվիրաբար ծառայելու, այն արիաբար և հմտորեն պաշտպանելու, արյունն ու կյանքը չխնայելով՝ հայրենի հողի յուրաքանչյուր թիզը պաշտպանելու սրբազան պարտքի հիշեցումն է: Զորամասի մարտական դրոշի կանոնադրությունը, մարտական դրոշի նկարագիրը և մարտական դրոշի վկայագրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը: Զորամասի մարտական դրոշի վերաբերյալ դրույթները սահմանվում են «ՀՀ զինված ուժերի ներքին կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, որն ընդունվել է 03.12.1996թվականին:[6]

Մարտական դրոշը զորամասերին են հանձնում նրանց կազմավորումից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ներկայացուցիչները: Մարտական դրոշը զորամասում պահվում է նրա գոյության ողջ ընթացքում՝ անկախ զորամասի անվան և համարի փոփոխությունից: Մարտական դրոշը մշտապես գտնվում է իր զորամասի հետ, իսկ մարտի դաշտում՝ զորամասի մարտական գործողությունների շրջանում: Զորամասի ողջ անձնակազմը պարտավոր է մարտի ժամանակ անձնվիրաբար և արիաբար պաշտպանել մարտական դրոշը և թույլ չտալ նրա զավթումը թշնամու կողմից: Մարտական դրոշի կորստի դեպքում զորամասի հրամանատարը և այդ խայտառակության անմիջական մեղավոր զինծառայողները ենթակա են ռազմական տրիբունալի դատին, իսկ զորամասը՝ կազմացրման: Մարտական դրոշը հանձնվում է բրիգադներին, գնդերին, առանձին գումարտակներին, դիվիզիոններին, ավիաէսկադրիլիաներին, ուսումնական զորամասերին, ռազմական ուսումնական հաստատություններին: Տեխնիկական, թիկունքի ապահովման, պահպանության և սպասարկման, կարգապահական, ռազմաշինարարական միավորումներին ու զորամասերին և համանման այլ զորամասերի մարտական

[5] https://www.dasaran.net/apps/wiki/view/id/9441

[6] «ՀՀ զինված ուժերի ներքին կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 03.12.1996թ., https://www.arlis.am/documentview.aspx?docid=364

դրոշ չի հանձնվում, բացառությամբ այն զորամիավորումների և զորամասերի, որոնք պարգևատրված են շքանշաններով: Առանձին դեպքերում, երբ զորամասի տեղաբաշխման, օպերատիվ օգտագործման պայմանների և այլ պատճառներով չեն կարող ապահովել մարտական դրոշի պահումն ու պահպանումը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետի որոշմամբ նման զորամասի համար մարտական դրոշ կարող է չպատվիրվել և նրան չհանձնվել:

Հուշադրոշները զորամասում որպես մասունք պահվում են զորամասի մարտական դրոշի մոտի պահակակետերում և դրա հետ միասին դուրս են բերվում տոներին և հանդիսավոր իրադարձություններին նվիրված հանդիսավոր նիստերի ժամանակ: Զինված ուժերի գլխավոր շտաբի պետի թույլտվությամբ և զորամասի կազմացրման ժամանակ հատուկ դեպքերում այդ դրոշները, ինչպես նաև իշխանության և կառավարման տեղական պետական մարմինների, հասարակական այլ կազմակերպությունների կողմից հանձնված դրոշները պատմական համառոտ տեղեկանքով հանձնվում են զինված ուժերի թանգարան՝ պահպանման: Մարտական դրոշը զորամասին հանձնվում է զորամասի կազմավորման ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով: Մարտական դրոշը զորամասին հանձնելու ժամանակ տրվում է նաև մարտական դրոշի վկայագիրը: Մարտական դրոշի հանձնման համար զորամասը զենքով շարվում է շարային ստուգատեսի համար՝ ՀՀ զինված ուժերի շարային կանոնադրությամբ սահմանված կարգով: Մարտական պայմաններում մարտական դրոշի հանձնման ժամանակ զորամասի շարվածքի կարգը սահմանվում է մարտական իրադրության հաշվառումով:

Մարտական դրոշը զորաշարվածքի տեղը դուրս բերելու համար մարտական դրոշը հանձնելու եկած պետին ի տնօրինություն զորամասի հրամանատարը նշանակում է դրոշակակիր և երկու օգնական՝ սերժանտներից, ենթասպաներից կամ սպաներից, գերազանցապես շքանշաններով և մեդալներով պարգևատրվածների, մարտական պատրաստության գերազանցիկների թվից, և դրոշակակիր դասակ: Սահմանված ժամին դրոշակակիրը դուրս է բերում ծածկոցով մարտական դրոշը և մարտական դրոշը հանձնող պետից երեք քայլ հեռավորության վրա շարժվում է դեպի զորաշարվածքի տեղը: Այդ ընթացքում դրոշակակիրը մարտական դրոշը պահում է ձախ ուսին այն դիրքով, որը նշված է Հայաստանի

Հանրապետության շարային կանոնադրության մեջ, դրոշակակրի աջ և ձախ կողքերից քայլում են օգնականները:

Երբ մարտական դրոշը հանձնելու եկած անձը 40-50 քայլ հեռավորությամբ մոտենում է զորաշարքին, զորամասի հրամանատարը հրաման է տալիս:

Օրինակ՝ «**Գունդ, դրոշի ներքո, զգաստ: Հավասարությունը դեպի աջ (ձախ, կենտրոն)».** Եթե գունդը զինված է կարաբիններով, ապա տրվում է հետևյալ հրամանը. «**Գու՛նդ, դրոշի ներքո զգա՛ստ: Աջից (ձախից, ճակատից) դիմավորելու համար ողջունի՛ր**»: Նվագախումբը կատարում է «Դիմավորման քայլերգը»:

Զորամասի հրամանատարը հրամանը տալուց հետո ձեռքը դնում է գլխարկին, մոտենում մարտական դրոշը հանձնելու եկած անձնավորությանը, կանգ առնում նրա դիմաց 2-3 քայլ հեռավորության վրա և զեկույց տալիս:

Մարտական դրոշը հանձնելու եկած անձնավորությանը զեկույց տալու համար գնդի հրամանատարի կանգ առնելու պահին նվագախումբը դադարեցնում է նվագը: Դրոշակակիրը մարտական դրոշը ուղղահայաց կանգնեցնում է աջ ոտքի մոտ՝ պահելով այն ազատ իջեցված աջ ձեռքով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության զինված ուժերի շարային կանոնադրության պահանջների:

Մարտական դրոշը հանձնելու եկած անձնավորությունը, ընդունելով զեկույցը, կանգնում է զորաշարքի կենտրոնի առջև, ողջույն տալիս զորամասին և մոտենում դրոշակակրին: Մարտական դրոշը հանձնելու եկած անձի մոտենալուն պես դրոշակակիրը ներքև է թեքում մարտական դրոշը և երկու ձեռքով պահում հորիզոնական դիրքով: Մարտական դրոշը հանձնողը հանում է ծածկոցը և բացում մարտական դրոշը: Այնուհետև դրոշակակիրը, մարտական դրոշը ուղղահայաց դնելով և աջ ձեռքով պահելով, կանգնում է դեմքով դեպի զորաշարքը:

Մարտական դրոշը հանձնողն ընթերցում է մարտական դրոշի վկայագիրը, որից հետո մարտական դրոշը և մարտական դրոշի վկայագիրը փոխանցում է զորամասի հրամանատարին: Նվագախումբը կատարում է պետական օրհներգը: Զորամասի հրամանատարը, ընդունելով մարտական դրոշը և մարտական դրոշի վկայագիրը, նվագախմբի պետական օրհներգի կատարման ավարտից հետո մարտական դրոշը հանձնում է դրոշակակրին և հրաման տալիս «**Դրոշակակի՛ր, իմ հետևից, քայլով-մա՛րշ**»: Դրոշակակիրը «քայլով» հրամանով մարտական դրոշը դնում է ձախ ուսին: Զորամասի հրամանատարը, նրա հետևից 3 քայլ հեռավորությամբ՝ դրոշակակիրը մարտական դրոշով, և

օգնականները գնում են դեպի շարքի ձախ թևը, որից հետո շարքի ճակատի երկայնքով (շարքից 10-15 քայլ հեռավորության վրա) անցնում են դեպի աջ թևը: Գալով զորաշարքի աջ թևը՝ զորամասի հրամանատարը դրոշակակրին և օգնականներին հրամայում է զբաղեցնել շարքում իրենց հատկացված տեղը: Երթն սկսվելուց մինչև դրոշակակրի շարք կանգնելը նվագախումբը կատարում է «**Դիմավորման քայլերգը**»: Զորամասը ողջունում է մարտական դրոշը և երկարաձիգ «**Ուռա**»-յով: Երբ դրոշակակիրը կանգնում է իր տեղը, զորամասի հրամանատարը նվագախմբի նվագը դադարեցնելու նշան է տալիս, դուրս է գալիս շարքի կենտրոն, կանգնում մարտական դրոշը հանձնողի կողքին, որից հետո նրա ցուցումով տալիս «**Ազատ**» հրամանը, իսկ եթե գունդը պատվի առած դիրքով կարաբիններ ուներ, ապա տրվում է «**Գունդ, ոտքին՝ առ**» հրամանը: Մարտական դրոշը հանձնողը շնորհավորում է զորամասին մարտական դրոշ ստանալու կապակցությամբ, զորամասն այդ շնորհավորանքին պատասխանում է եռակի երկարաձիգ «Ուռա»-յով: Դրանից հետո զորամասի հրամանատարը հանդես է գալիս պատասխան խոսքով: Վերջում զորամասը հանդիսավոր երթով անցնում է մարտական դրոշը հանձնողի առջևով: Հանդիսավոր երթով անցնելուց հետո զորամասը կրկին շարվում է և մարտական դրոշը տարվում է նրա պահատեղը: Մարտական դրոշ ստանալու մասին տրվում է գնդի հրաման, որով սահմանվում է մարտական դրոշի պահատեղը և նշանակվում են դրոշակակիր ու օգնականներ: Մարտական դրոշի դիրքը զորաշարքում, նրա դուրսբերման և տանելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի շարային կանոնադրությամբ, իսկ պահպանման կարգը՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագրքով:Մարտական դրոշը պատկանում է զորամասին նրա գոյության ողջ ընթացքում, անկախ նրա համարի և անվանման փոփոխությունից: Զորամասի վերակազմավորման հետևանքով նրա անվանման և համարակալման փոփոխությունները վերադաս հրամանատարը (պետը) գրանցում է մարտական դրոշի վկայագրում և հաստատվում զինանշան կնիքով: Զորամասերի մարտական ավանդույթների և նրանց մարտական ծառայությունների ու հիշատակի պահպանման համար մարտական դրոշները, շքանշանները և պատվանունները կարող են փոխանցվել ուրիշ զորամասերի: Ընդ որում, մարտական դրոշի, շքանշանների և պատվանունների փոխանցումը կատարվում է միայն զորամասերի միջև

ուղղակի ժառանգորդության առկայության դեպքում, այն է՝ մեկ կամ մի քանի զորամասեր նոր զորամասի (զորամասերի) վերակազմավորելու ժամանակ:

Արտակարգ իրավիճակը (պատահարը) այն իրավիճակն է, որի դեպքում որոշակի տարածքում՝ աղետի գոտում կամ դեպքի վայրում խաթարվում է կարգավորված կենսագործունեությունը, որի հետևանքով առաջանում է առաջին օգնության ցուցաբերման անհրաժեշտություն: Դեպքի վայրը պատահարի անմիջական տարածքն է: Բնական աղետների, ավտովթարի, հրդեհի կամ ցանկացած այլ դժբախտ պատահարի

հետևանքով կարող են լինել տուժածներ: Տուժածն այն անձն է, որն առաջին օգնության կարիք ունի:

Երբեմն դժվար է լինում կողմնորոշվել և իրադրությունը բնորոշել որպես պատահար: Սակայն կան արտակարգ իրավիճակներին բնորոշ նշաններ, որոնք կարող են գրավել ձեր ուշադրությունը և հուշել դժբախտ պատահարի մասին: Օրինակ՝ արտասովոր աղմուկը, տեսարանը, հոտը, մարդկանց կամ կենդանիների վարքագիծը, արտասովոր զգացողությունները:Արդյունավետ առաջին օգնություն ցուցաբերելու համար դուք պետք է կարողանաք կողմնորոշվել տարբեր արտակարգ իրավիճակներում: Ժամանակին եւ ճիշտ ձեռնարկված առաջին օգնության քայլերը տուժածի կյանքի համար կարեւոր նշանակություն ունեն:

Ցանկացած արտակարգ իրավիճակում, մինչեւ որեւէ գործողության դիմելը, մի պահ կանգ առեք, սառնասրտորեն մտածեք կատարվածի մասին, գնահատեք իրավիճակը, ապա ծրագրեք ձեր հետագա գործողությունները՝ դրանք համապատասխանեցնելով առկա պայմաններին եւ հնարավորություններին:
Առաջին հերթին ուշադիր զննեք դեպքի վայրը՝ դա կօգնի ձեզ գնահատելու իրավիճակը եւ հասկանալու, թե ինչ է պատահել: Փորձեք պարզել տվյալ դժբախտ պատահարի պատճառները: Փորձեք գտնել հետեւյալ հարցերի պատասխանները.
- Ի՞նչ է պատահել:
- Ի՞նչ վտանգ կա:
- Քանի՞ տուժած կա:
- Կարո՞ղ են դեպքի վայրում ներկա գտնվող մարդիկ օգտակար լինել:

Արտակարգ իրավիճակներում ժամանակին ձեռնարկվող հմուտ գործողություններով հնարավոր է կյանք փրկել: Սակայն երբեմն մարդիկ, նկատելով պատահարը, խուսափում են որևէ գործողության դիմել: Կան հանգամանքներ, որոնք խանգարում են մարդկանց ցուցաբերել առաջին օգնություն կամ որոնց պատճառով մարդիկ վարանում են, տատանվում և գործողություններ չեն ձեռնարկում: Այդ հանգամանքները մենք անվանում ենք խանգարող հանգամանքներ: Խանգարող հանգամանքները կարող են լինել տարբեր, և մարդը կարող է չդիմել գործողությունների՝ ինչ-որ անձնական պատճառներից ելնելով: Դիտարկենք ավելի հաճախ հանդիպող խանգարող հանգամանքները և նրանց հաղթահարման ուղիները:

Օգտագործվածգրականություն

1.Առաջին օգնության ձեռնարկՀՀ առողջապահության նախարարի 6 մայիսի 2018 թ, թիվ 1103-Լ հրաման

2.Նախնական զինվորական պատրաստություն, դասագիրք 9-րդ դասարան էջ 97

3. https://manebarseghyan.wordpress.com/2016/12/21/արյան-շրջանառություն/(11.11.2021թ.)

4.https://hy.wikipedia.org/wiki/Արյան շրջանառություն(17.11.2021թ.)

5.https://ysmubooks.am/uploads/սրտի ֆիզոլոգիա(17.11.2021թ.)

6. http://healthmag.am/2016/02/26/շնչառական-անբավարարություն/(18.11.2021թ.)

7.https://blognews.am/arm/news/218464/arajin-ognutyun-shncharutyan-kan(18.11.2021թ.)

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Բնական բնույթի ԱԻ (Երկրաշարժ, Սպիտակի 1988թ. ավերիչ երկրաշարժը, սողանքներ, փլուզումներ)

ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐԱՅԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ՆԶՊ ՈՒՍՈՒՑԻՉ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ …… 2
Բնակչության պաշտպանության պետական միասնական Համակարգը …… 3
ԲՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ ԵՐԿՐԱՇԱՐԺ …… 6
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ …….. 6
Երկրաշարժի մագնիտուդ և ուժգնություն …… 7
Բնակչության գործելակերպը և վարքը երկրաշարժից առաջ ……. 10
Ինչպե՞ս նախապատրաստվել երկրաշարժին …… 11
Ինչպե՞ս վարվել երկրաշարժի ժամանակ …… 12
Ինչպե՞ս վարվել երկրաշարժից հետո …….. 14
ՍՊԻՏԱԿԻ 1988 Թ. ԵՐԿՐԱՇԱՐԺ …… 15
ՍՈՂԱՆՔՆԵՐ …….... 16
ՓԼՈՒԶՈՒՄՆԵՐ …….. 19
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ …….. 20
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ …… 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր կրթությունը և աղետների կանխարգելումն ու պատրաստվածությունն իրարից անբաժան են: Ընտանիքները վստահում են իրենց երեխաներին դպրոցներին, որպեսզի այնտեղ անցկացրած օրվա ընթացքում նրանք լինեն ապահովության մեջ: Միլիոնավոր ուսուցիչների, տնօրենների և կրթական այլ աշխատակազմի ջանքերի շնորհիվ՝ դպրոցները սովորաբար ապահով վայր են հանդիսանում երեխաների համար:

Աղետների հետևանքները կարող են մեղմացվել համապատասխան գիտելիքների առկայության և պլանավորման, կառուցվածքային և ոչ կառուցվածքային պաշտպանության միջոցների, աղետների ռիսկերի նվազեցման և աղետներին պատրաստվածության գործողությունների միջոցով:

Վտանգավոր երևույթների ծագումը հաճախ բերում է ծանր հետևանքների, առաջացնում արտակարգ իրավիճակներ: **Արտակարգ իրավիճակը վտանգավոր երևույթների ազդեցության հետևանքով առաջացած իրավիճակ է**, որը բերում է մարդկային ու նյութական կորուստների, և մարդկանց գործունեության բնականոն պայմանների խախտման: Հետևաբար, արտակարգ իրավիճակ կարող է առաջանալ, եթե ծագում է վտանգավոր երևույթ, որի ազդեցությունից մարդիկ և տարածքը խոցելի են: Այլ կերպ ասած՝ արտակարգ իրավիճակը այն առաջացնող վտանգավոր երևույթի և խոցելիության արդյունք է:

Սխալ է կարծել, որ երկրաշարժը, ջրհեղեղը, սողանքը, բնական հրդեհները արտակարգ իրավիճակներ են: Դրանք երևույթներ են: Օրինակ՝ **երկրաշարժը բնական երևույթ է**, արտադրական վթարը՝ տեխնածին: Որքան անուշադրության են մատնվում արտակարգ իրավիճակների կանխարգելման հարցերը, այնքան աղետալի են լինում դրանց հետևանքները:

Արտակարգ իրավիճակները երբեմն ընդգրկում են հսկայական տարածքներ և բերում ծանր կորուստների: Օրինակ՝ 1878թ. Չինաստանում Խուանխե գետի ջրհեղեղի հետևանքով զոհվել է 7 մլն մարդ: 14-րդ դարում ժանտախտի հետևանքով Եվրոպայում մահացել է 100 մլն մարդ: Իսկ 1988թ. Սպիտակի երկրաշարժը ընդգրկեց Հայաստանի տարածքի 40 տոկոսը, և պաշտոնական տվյալներով զոհվեցին 25 հազարից ավելի մարդ:

Յուրաքանչյուր տեսակի արտակարգ իրավիճակից պաշտպանությունն ունի իր առանձնահատկությունները: Արտակարգ իրավիճակից պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը այդ իրավիճակի կանխումն է: Հիմնականում այն իրականացվում է վտանգավոր երևույթի կանխման միջոցով: Կան վտանգավոր երևույթներ, որոնք կանխել հնարավոր չէ:

Այս դեպքում կարելի է դրանց ազդեցությունը նվազեցնել, հետևանքները մեղմացնել: Օրինակ՝ **երկրաշարժը կանխել հնարավոր չէ**, սակայն կարելի է երկրաշարժի հետևանքները նվազեցնել: Իսկ ահա ջրհեղեղները կարելի է և՛ կանխել, և՛ ազդեցությունը նվազեցնել, և՛ հետևանքները մեղմացնել:

Դպրոցներում աղետից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո դպրոցականների և դպրոցի աշխատակիցների պաշտպանությունն հանդիսանում է դպրոցի ղեկավարության առաջնային պարտականությունը:

Արտակարգ իրավիճակներից պաշտպանվելու համար անհրաժեշտ է ճանաչել դրանք առաջացնող վտանգավոր երևույթները: Դա նշանակում է՝ իմանալ դրանց էությունը, ազդեցության հետևանքները և այլն:

Վտանգավոր երևույթները կարելի է բաժանել մի շարք խմբերի՝

● ըստ կանխատեսման հնարավորության՝ **կանխատեսելի և ոչ կանխատեսելի**: Օրինակ՝ երկրաշարժերը ոչ կանխատեսելի վտանգավոր երևույթներ են
● ըստ կանխման հնարավորության՝ **կանխելի, մասնակի կանխելի և անկանխելի**: Օրինակ՝ երկրաշարժերը կանխել հնարավոր չէ: Հետևաբար, դրանք անկանխելի վտանգավոր երևույթներ են.
● ըստ զարգացման արագության՝ **դանդաղ, միջին և ակնթարթային զարգացող:** Օրինակ՝ երկրաշարժերը դասվում են ակնթարթային զարգացող վտանգավոր երևույթների խմբին:

Գործնական կարևոր նշանակություն ունի վտանգավոր երևույթների բաժանումն ըստ դրանց ծագման աղբյուրի: Այդպիսի աղբյուրներ կարող են լինել բնությունը, արտադրությունն ու տեխնիկական միջոցները, սոցիալական միջավայրը և այլն: Ուստի վտանգավոր երևույթները լինում են **բնածին, տեխնածին, սոցիածին** և այլն: Յուրաքանչյուր խմբի վտանգավոր երևույթ առաջացնում է իրեն հատուկ արտակարգ իրավիճակ:

Արտակարգ իրավիճակներից պաշտպանվելու հարցում կարևոր է բնակչության դերը: Յուրաքանչյուր բնակիչ պետք է իմանա իրեն, իր շրջապատին սպառնացող վտանգավոր երևույթները, դրանց հետևանքները, դրանցից առաջացած արտակարգ իրավիճակներում վարքի կանոնները և տիրապետի ինքնօգնության ու փոխօգնության որոշ հմտությունների:

Համաձայն «Արտակարգ իրավիճակների մասին» ՀՀ օրենքի քաղաքացիները իրավունք ունեն իմանալ արտակարգ իրավիճակներում իրենց պաշտպանվածության աստիճանի մասին, ստանալ ճշգրիտ տեղեկություն արտակարգ իրավիճակ առաջանալու վտանգի մասին, ստանալ փոխհատուցում արտակարգ իրավիճակի պատճառով կորուստների համար:

Բնակչության պաշտպանության պետական միասնական համակարգը

Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանությունը ներառում է երկու հիմնական ուղղություն՝
● մարդկանց կյանքի ու առողջության պաշտպանություն,
● պետության և քաղաքացիների ունեցվածքի պահպանություն:

Արտակարգ իրավիճակները հանգեցնում են թե՛ մարդկային կորուստների, թե՛ նյութական կորուստների. ավերվում ու վնասվում են շենքեր, կամուրջներ, ճանապարհներ, երկաթգծեր, գործարաններ, էլեկտրահաղորդման գծեր, գազատարներ, ջրատարներ, անասնագոմեր, ցանքատարածություններ և այլն: Հետևանքների նման բազմազանությամբ էլ պայմանավորված են արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության միջոցառումների բազմազանությունն ու բարդությունը: Այդ միջոցառումներն ըստ իրականացման ժամանակի բաժանվում են երկու խմբի՝

Առաջին խմբի միջոցառումներն ուղղված են արտակարգ իրավիճակների **կանխմանը** կամ դրանց **ազդեցության մեղմացմանը**: Այդ պատճառով դրանք կրում են կանխարգելիչ բնույթ:

Երկրորդ խմբի միջոցառումներն ուղղված են արտակարգ իրավիճակների **հետևանքների վերացմանը**: Այս խմբի միջոցառումները կրում
են հրատապ (օպերատիվ) բնույթ:
Երկրորդ խմբի միջոցառումներից են՝
● ազդարարում և բնակչության իրազեկում,
● բնակչության տարհանում,
● փրկարարական աշխատանքների կատարում,
● վթարների վերացման աշխատանքների կատարում,
● հասարակական կարգի պահպանություն,
● տրանսպորտային միջոցների երթևեկության կարգավորում,
● բժշկական ապահովում և այլն:



Նման միջոցառումների իրականացումը պահանջում է հանրապետությունում գործող բոլոր կազմակերպությունների մասնակցությունը:
Այլ կերպ ասած՝ արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության ապահովումը համապետական խնդիր է: Իսկ դա նշանակում է, որ արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանությանը մասնակցում են հանրապետությունում գործող բոլոր մարմիններն ու կազմակերպությունները՝ անկախ սեփականության ձևից: Այդպիսի համակարգի ստեղծման նպատակն է՝ միավորել հանրապետությունում գործող բոլոր պետական և ոչ պետական մարմինների, կազմակերպությունների ուժերն ու միջոցները բնակչության պաշտպանությունն արդյունավետ իրականացնելու համար:

Դպրոցներում աղետների կառավարման պլանավորումը շարունակական և մասնակցային գործընթաց է, որտեղ պետք է ընդգրկված լինեն ղեկավարությունը, ուսումնական հաստատությունները, տեղի համայնքը, տեղական իրավասու մարմինները և ծնողները, որոնք բոլորը պետք է այս ողջ գործընթացում լիազորված լինեն հանդես գալու որպես անվտանգության մշակույթի ստեղծման և խթանման գործակալներ: Դպրոցում անվտանգության ապահովման մեկնարկային կետն ու անկյունաքարը հանդիսանում են վտանգների, ռիսկերի և խոցելիության գնահատումը, որը թույլ է տալիս պլանավորումը կազմակերպել տեղի ֆիզիկական և սոցիալական իրողությունների հիման վրա:

Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության պետական կառավարման միասնական համակարգի կառուցվածքը ներառում է նախարարությունները, մարզպետարանները, համայնքներն ու կազմակերպությունները: Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի

Հանրապետության կառավարությունը: Արտակարգ իրավիճակների նախարարությունը կազմակերպում և համակարգում է նախարարությունների, մարզպետարանների, համայնքների և կազմակերպությունների գործունեությունը:

(*Հղում* 1., 9.)

ՀԻՇԵ՛Ք ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐԸ 911

ԲՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ ԵՐԿՐԱՇԱՐԺ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ

Մեր երկիրը գտնվում է երկրաշարժավտանգ գոտում: Հայաստանում և նրա հարակից տարածքներում, գրեթե ամեն օր տեղի են ունենում տարբեր ուժգնության երկրաշարժեր: Երկրաշարժը լինելով բնական երևույթ, կարող է լինել աղետալի, եթե տեղի ունենա այնպիսի վայրերում, որտեղ կառույցները սեյսմակայուն չեն, իսկ բնակչությունը չի տիրապետում սեյսմապաշտպանության վարքականոններին: Երկրաշարժը, որպես այդպիսին, սպառնում է ոչ միայն մեր տարածաշրջանի բնակիչներին. Երկիր մոլորակի վրա յուրաքանչյուր հինգ րոպեն մեկ գրանցվում է տարբեր ուժգնության մեկ երկրաշարժ:

Երկրագունդը կենդանի մոլորակ է՝ իր բնականոն փոփոխություններով: Երկրաշարժը բնական երևույթներից է, ինչպես քամին, անձրևը կամ փոթորիկը և այն արտահայտվում է երկրակեղևի կտրուկ տատանումներով ու ցնցումներով, բնականաբար, պատճառելով վիթխարի ավերածություններ:

Երկրաշարժերը լինում են փլուզումնային, հրաբխային և տեկտոնական: Առավել ավերիչ են տեկտոնական երկրաշարժերը, (տեկտոնական-երկրակեղևի շարժումները, կառուցողական), որոնք կապված են շարունակվող լեռնագոյացման գործընթացների հետ և կազմում են աշխարհում տեղի ունեցող երկրաշարժերի մեծ մասը (ավելի քան 95%):

Երկրաշարժի ուժգնությունը մեր տարածաշրջանում չափվում է MSK-64 1-12-բալանոց սանդղակով: Որքան ուժեղ է երկրաշարժը, այնքան բարձր է բալը:

Երկրաշարժը՝ երկրաբանական բարդ գործընթացի արդյունք լինելով հանդերձ, տեղի է ունենում նաև երկրագնդի ու տիեզերական մարմինների (Լուսին, Արև, Վեներա) փոխազդեցության հետևանքով, և նրա կանխատեսումը երկրաֆիզիկայի գերխնդիրն է, որի լուծման ուղղությամբ աշխատում են աշխարհի տարբեր բնագավառների գիտնականներ: Եթե ճշգրիտ կանխատեսումներ կատարվեն, ապա միլիոնավոր մարդկանց կյանք կարելի է փրկել: Կասկած չկա, որ ժամանակի ընթացքում գիտնականները կլուծեն նաև այս խնդիրը:

Երկրաշարժերի նախապատրաստման փուլում ընդերքում տեղի ունեցող գործընթացները խախտում են որոշ բնական երևույթների սովորական ընթացքը՝ փոխելով դրանց քանակական և որակական բնութագիրը: Նման շեղումները, կամ ինչպես երկրաբաններն են ասում՝ անոմալիաները վկայում են մոտալուտ աղետի մասին:

Գիտության և տեխնիկայի ժամանակակից զարգացումը, ինչպես նաև մարդկանց ու կենդանիների բնական վարքը հնարավոր դարձրեցին ի հայտ բերել բազմաթիվ բնութագրեր, որոնք կարող են նպաստել երկրաշարժերի կանխատեսմանը:

Ուժեղ երկրաշարժերի բնական նախանշանները բաժանվում են երկու հիմնական խմբի՝

- մակերևութային նախանշաններ
- մարդկանց և կենդանիների վարք

Մակերևութային նախանշաններ

- Ուժեղ երկրաշարժերից առաջ նկատվում է սեյսմիկ ակտիվացում, բազմաթիվ թույլ ցնցումները, նրանց ուժը և տեղը կարող են վկայել վերահաս երկրաշարժի մասին:

- Կուտակվող լարումների ազդեցություններից ապարներում առաջացած ճեղքվածքների հետևանքով ստորգետնյա ջրերի մակարդակը և քիմիական կազմը երկրաշարժից առաջ հաճախ փոփոխվում են՝ իջնում կամ բարձրանում: Այդ փոփոխությունները նկատվում են նույնիսկ էպիկենտրոնից մեծ հեռավորությունների վրա:

- Երկրագունդն, ինչպես հայտնի է, ունի իր մագնիսական դաշտը, որի բնութագիրը երկրաշարժից առաջ կարող է փոխվել՝ լեռնային ապարների լարումների ձևախախտումների հետևանքով:

- Տարբեր լեռնային ապարներ օժտված են տարբեր էլեկտրական դիմադրողականությամբ: Դիտվել է, որ երկրաշարժից առաջ լարումների ազդեցության պատճառով փոխվում է նաև ապարների էլեկտրական դիմադրությունը:

Մարդկանց և կենդանիների անսովոր վարքը

Երկրաշարժին նախորդող ժամանակաշրջանում կայացած էլեկտրամագնիսական դաշտերի, ռադիացիոն ֆոնի, ուլտրաձայների և այլ երևույթների փոփոխություններն ազդում են մարդկանց (հատկապես կանանց և երեխաների) նյարդային համակարգի վրա, որոնք արտահայտվում են գլխապտույտով, գլխացավով, սրտխառնոցով, արյան ճնշման փոփոխությամբ և այլն:

(*Հղում* 2.)

Երկրաշարժի մագնիտուդ և ուժգնություն



Դեռ հարյուրամյակներ առաջ մարդիկ փորձել են որոշել երկրաշարժերի ուժը՝ ելնելով դրանց պատճառած վնասներից: Եթե մի երկրաշարժ ավերել է ավելի շատ շենք, քան մյուսը, ապա այն համարվում էր ավելի ուժգին: Թեև նման մոտեցումը թվում է տրամաբանական, սակայն այն չի կարող համարվել բացարձակ ճիշտ:

Ավերածությունների չափերը կախված են ոչ միայն երկրաշարժի ուժից, այլև շինությունների որակից և նրանց հիմնատակի ապարների հատկությունից: Տատանումների մեծությունը մակերեսի վրա կախված է երկու գործոնից՝ հիպոկենտրոնից ճառագայթվող էներգիայի քանակից և երկրաշարժի օջախի խորությունից: Կարող է լինել այնպես, որ ճառագայթվող էներգիայի քանակը լինի շատ, բայց այն անջատվի մեծ խորությունում, այսինքն՝ օջախը լինի խոր: Այս դեպքում սեյսմիկ ալիքները, մինչև երկրի մակերևույթ հասնելը, զգալիորեն մարում են, թուլանում, ցնցումներն էլ, բնականաբար, լինում են թույլ:

Մի այլ երկրաշարժի դեպքում կարող է անջատվել ավելի քիչ էներգիա, բայց փոքր խորություններում: Սեյսմիկ ալիքներն այդ դեպքում քիչ թուլանալով կհասնեն երկրի մակերևույթ և, հետևաբար, կառաջացնեն ուժեղ ցնցումներ:

Անջատված սեյսմիկ էներգիայի մեծությունը սեյսմոլոգները գնահատում են մագնիտուդով: **«Մագնիտուդ»** հասկացությունը 1935 թ. գործածության մեջ դրեց Կալիֆոռնիայի տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր Չարլզ Ռիխտերը: Նա էլ մշակեց երկրաշարժերի մագնիտուդների սանդղակ, որն այժմ անվանվում է **«Ռիխտերի սանդղակ»**: Այդ սանդղակի ամենաբարձր աստիճանը համապատասխանում է 9 մագնիտուդի, որի էներգիայի մեծությունը կարելի է համեմատել ջրածնային ռումբի պայթյունից անջատված էներգիայի հետ:

Այլ բան է երկրաշարժի ուժգնությունը, որը որոշվում է շինություններում՝ ցնցումների հետևանքով առաջացած վնասվածքների և ավերածությունների աստիճանով: Ամենաուժեղ ցնցումները, բնականաբար, տեղի կունենան էպիկենտրոնում և մոտակա տարածքում: Ինչքան հեռու է տեղանքը էպիկենտրոնից, այնքան փոքր է այնտեղ երկրաշարժի ուժգնությունը: Ի տարբերություն մագնիտուդի, ուժգնությունը անմիջականորեն չափվող մեծություն չէ: Այն որոշելու համար հարկավոր է ուսումնասիրել վնասված տեղանքը, բնակավայրերը, տեսնել, թե ցնցումների հետևանքով ինչ վնասվածքներ են ստացել շենքերը, շինությունները և տեղանքի ռելիեֆը:

Երկրաշարժի ուժգնության որակական գնահատման համար մշակված է 12-բալանոց սանդղակ (MSK-64), որի անվան տառերը այն ստեղծողների անունների սկզբնատառերն են (Մեդվեդև, Շպոնհոյեր,Կառնիկ), իսկ 64-ը՝ ստեղծման տարեթիվը: Այսօր այս սանդղակը համարվում է ամենակատարելագործվածը, շատ հայտնի է և ունի լայն կիրառություն: Դրա պարզեցված տարբերակը բերվում է ստորև:

Երկրաշարժի ուժգնության 12-բալանոց (MSK-64) սանդղակ

1 բալ
Մարդիկ այն չեն զգում: Գրանցվում է միայն սեյսմոգրաֆների կողմից:

2 բալ
Զգում են շատ քչերը, եթե նրանք գտնվում են բարձրահարկ շենքերում, հանգիստ վիճակում:

3 բալ
Զգում են նրանք, ովքեր գտնվում են շինություններում, հատկապես վերին հարկերում: Դրսում գտնվողների մեծամասնության կողմից այն որպես երկրաշարժ չի ընկալվում: Նկատվում է վիբրացիա և առարկաների թույլ ճոճում:

4 բալ
Շենքի ներսում զգում են գրեթե բոլորը, դրսում՝ քչերը: Գիշերը ոմանք արթնանում են, ամանեղենը զրնգում է: Լսվում է պատուհանների և դռների դռռոց: Կահույքը ցնցվում է, կախված առարկաները նկատելիորեն ճոճվում են:

5 բալ
Զգում են բոլորը, շենքերը ցնցվում են ամբողջությամբ: Գիշերը շատերն արթնանում են, ամանեղենի մի մասը և պատուհանների ապակիները կոտրվում են, պատերի ծեփի մեջ տեղ-տեղ ճաքեր են առաջանում: Կախված առարկաներն ուժեղ ճոճվում են:

6 բալ

Զգում են բոլորը, ինչպես շենքի ներսում, այնպես էլ դրսում: Շատերը վախից դուրս են վազում: Չամրացված կահույքը տեղաշարժվում է: Որոշ տեղերում պատերի ծեփը թափվում է: Ծխնելույզները թեքվում են: Ավերածությունը քիչ է:

7 բալ
Հատուկ նախագծով կառուցված շենքերում վնասվածքները հազվադեպ են, տիպային լավ կառույցներում՝ թույլից-չափավոր, վատ նախագծված կամ վատ կառուցված շինություններում՝ զգալի: Շենքերի ծխնելույզները շարքից դուրս են գալիս:

8 բալ
Հատուկ նախագծով կառուցված շենքերում վնասվածքները թեթևակի են, տիպայինում՝ նշանակալի, վատ կառույցներում տեղի են ունենում ավերածություններ: Թեքվում և ընկնում են վառարանային և գործարանային ծխնելույզները, սյուները և հուշարձանները: Հորատանցքերում և ջրհորներում փոխվում է ջրի մակարդակը: Երկրի մակերևույթի վրա երբեմն առաջանում են ճեղքեր:

9 բալ
Հատուկ նախագծով կառուցված շենքերում վնասվածքները լուրջ են, մյուսներում նկատվում են զանգվածային փլուզումներ: Երկրի մակերևույթին առաջանում են բազմաթիվ ճեղքեր:

10 բալ
Երկրի մակերևույթին առաջացած ճեղքերի լայնությունը հասնում է մինչև 1 մետրի: Ավերվում է նույնիսկ լավ կառուցված փայտե և քարե տների մեծամասնությունը: Ծռվում են երկաթգծի ռելսերը: Գետերի ափերի և սարալանջերի հողը սկսում է սահել:

11 բալ
Կանգուն են մնում միայն շատ քիչ երկաթբետոնե կառույցներ, փլվում են կամուրջները: Երկրի մակերևույթին առաջանում են բազմաթիվ ճեղքեր: Փլուզումները համատարած են:

12 բալ
Հիմնահատակ կործանում: Երկրի մակերևույթին առաջանում են լայն և երկար ճեղքեր: Գետերը փոխում են հուները: Փլուզվում են լեռները, լանջերի վրա առաջանում են բազմաթիվ սողանքներ, երբեմն առաջանում են արհեստական լճեր:

Այսպիսով, յուրաքանչյուր երկրաշարժի հզորության համար գոյություն ունի ընդամենը մեկ մագնիտուդ, սակայն այդ նույն մագնիտուդի երկրաշարժը կարող է երկրի մակերևույթի վրա առաջ բերել տարբեր ուժգնության ցնցումներ, ամենաուժեղից (էպիկենտրոնի տարածքում) մինչև ամենաթույլը՝ էպիկենտրոնից մեծ հեռավորության վրա: Հետևաբար՝ երկրաշարժի ուժգնությունը երկրի մակերևույթի տվյալ շրջանում

հիմնականում կախված է մագնիտուդից, այսինքն՝ անջատված էներգիայի մեծությունից, օջախի խորությունից և էպիկենտրոնից նրա ունեցած հեռավորությունից: Օրինակ՝ Սպիտակի երկրաշարժը, որի մագնիտուդը եղել է մոտավորապես 7, իսկ օջախը գտնվել է մոտ 9-10 կմ խորության վրա, էպիկենտրոնում առաջ է բերել 9-10 բալ ուժգնությամբ ցնցումներ:

Մարդիկ զգում են 3–4 բալ ուժգնությամբ երկրաշարժերը, 6-բալանոց երկրաշարժերը համարվում են ուժեղ, իսկ 8–10-բալանոցները ոչնչացնում են շինարարական նորմերին չհամապատասխանող բոլոր կառույցները:

Այն կետը, որտեղից ճառագայթվում են սեյսմիկ ալիքները, կոչվում է երկրաշարժի **հիպոկենտրոն**, իսկ դրա պրոեկցիան երկրի մակերևույթին՝ **էպիկենտրոն**: Երկու կետերի միջև եղած հեռավորությունը կոչվում **օջախի խորություն**:

Ուժեղ երկրաշարժերին երբեմն նախորդում են համեմատաբար թույլ ցնցումներ: Ավելի հաճախ երկարաշարժերին հաջորդում են հետցնցումներ, որոնք կարող են տևել ամիսներ: Երկրաշարժից մարդուն սպառնացող վտանգը կախված է բազմաթիվ գործոններից: Դրանք են՝

● երկրաշարժի էներգիան,
● օջախի խորությունը,
● երկրի մակերևույթի վրա էպիկենտրոնից եղած հեռավորությունը,
● այդ պահին մարդու գտնվելու վայրը (շենքում թե դրսում),
● շենքերի կառուցման որակը և այլն:

Երկրաշարժերից բնակչության պաշտպանությունը բարդ հիմնախնդիր է և պահանջում է երկրի ողջ ներուժի միավորում:

Այս կարևոր հիմնախնդրի լուծման գերակա պահանջներից են՝

● սեյսմակայուն շենքերի կառուցումը,
● շենքերի կառուցվածքի ուժեղացումը,
● շենքերի բնականոն շահագործումը,
● բնակչության վարվելակերպի ուսուցումը,
● վթարավերականգնողական աշխատանքների հրատապ և արդյունավետ կատարումը և այլն:

(*Հղում* 3. , 1.)

Բնակչության գործելակերպը և վարքը երկրաշարժից առաջ

Երկրաշարժը բնական երևույթ է, որը երկրի մակերևույթին արտահայտվում է երկրակեղևի կտրուկ տատանումներով և ցնցումներով: Բնականաբար, դրանց վերնակենտրոնները դարձել են հազարավոր քաղաքների և ավանների ավերման պատճառ՝ խլելով միլիոնավոր մարդկային կյանքեր:

Նման դեպքերից զերծ չէ նաև մեր հանրապետությունը:

1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքները ցույց տվեցին, որ այն ժամանակ Խորհրդային Միությունում գործող սեյսմապաշտպանության բոլոր օղակները բավական ցածր մակարդակի վրա էին:

Այս ամենի վերլուծությունն էր, որ առաջ քաշեց Հայաստանի բնակչությանը երկրաշարժից պաշտպանելու հարցը: Այն ստացավ հատուկ կարգավիճակ և դարձավ մեր ազգային անվտանգության անբաժանելի մասը:

Դպրոցների և երեխաների անվտանգությունն ապահովելու համար էական նշանակություն ունեն արտակարգ իրավիճակներին արագ և արդյունավետ արձագանքելու կարողությունները: Ուստի, հարկավոր է նախապես սահմանել արտակարգ իրավիճակում հայտնված յուրաքանչյուրի անելիքը:

Ինչպե՞ս նախապատրաստվել երկրաշարժին

Դպրոցներում պետք է մշակվեն և պարբերաբար փորձարկվեն աղետներին և (կամ) արտակարգ իրավիճակներին արձագանքելու ընթացակարգեր՝ ընդունված չափանիշներին համապատասխան:

Անհրաժեշտ է ընդհանուր բառացանկ կազմել: Շատ կարևոր է, որ դպրոցում աղետների կառավարման կոմիտեի և անվտանգության աշխատակիցների համակարգի ներկայացուցիչները, ինչպես նաև դպրոցի և արտակարգ իրավիճակներին արձագանքող մարմինների աշխատակիցները ծանոթ լինեն միմյանց կողմից օգտագործվող եզրույթներին: Էվակուացման, տարածքի մեկուսացման և այլ գործողությունների հրահանգները պետք է լինեն պարզ, այլ ոչ թե՝ կախված վտանգի տեսակից:

1988-ի Սպիտակի երկրաշարժի վերլուծությունը ցույց տվեց, որ երկրաշարժի նախապատրաստական փուլը սեյսմապաշտպանության հարցում վճռական նշանակություն ունի:

Այժմ թվարկենք այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են նախապատրաստական փուլում:

Շենքերի անվտանգության համար անհրաժեշտ պայմանները՝

Այս խնդրի շուրջ խոսելիս տեղին է հիշել ճապոնացիների հետևյալ պատկերավոր արտահայտությունը. ***«Երկրաշարժերը չեն սպառնում մարդկանց, այլ՝ նրանց կառուցած վատ շենքերի բեկորները»:*** Սա իր ողբերգական հաստատումը գտավ 1988-ին Հայաստանում: Մարդկանց մեծ մասն ավերակների զոհ դարձավ:

Շենքերում չի կարելի կատարել այնպիսի ձևափոխումներ, որոնք նվազեցնում են շենքի սեյսմակայունությունը, օրինակ՝

ա. հիմքը թուլացնող նկուղային հարկերի վերակառուցում.

բ. բնակարանի հատակագծի փոփոխություն (կրող պատերում բացված որմնախորշեր, որոնք ազդում են շենքի ընդհանուր ամրության վրա).

գ. տանիքում ջրի ծանր բաքի տեղադրում:

Շենքերից մարդկանց տարահանելու և տուժածներին փրկելու ուղիների ապահովման համար պետք է՝ երկաթյա դռները փոխարինել փայտե դռներով, որովհետև առաջին իսկ ցնցումների ժամանակ մետաղյա դռները սովորաբար ճկվում են և դժվար բացվում, իսկ երբեմն՝ լռվում:

Ելքերը և մուտքերը, սանդղավանդակներն ու միջանցքներն ազատել մեծածավալ առարկաներից:

Ծառայողական և բնակելի շենքերում ձեր անվտանգությունն ապահովելու համար՝ կահույքը, հաստոցներն ու սարքերը հուսալիորեն ամրացրեք հատակին ու պատերին:

Բոլոր էլեկտրոնային սարքերն իջեցրեք վերին դարակներից և տեղադրեք ներքին դարակներում՝ հատուկ միջադիրների վրա:

Կախովի իրերը և լուսավորող սարքերը հուսալիորեն ամրացրեք առաստաղին:

Մահճակալները տեղադրեք կրող պատի մոտ՝ պատուհաններից հեռու: Չի կարելի մահճակալի վերևում կախել գրադարակներ, ծանր շրջանակներով նկարներ:

Գիտենալ տան կամ աշխատավայրի ամենաանվտանգ տեղերը, ուր կարելի է պատսպարվել ցնցումների ժամանակ:

Նախապես որոշել շենքից դուրս գալու և դեպի բաց տարածություն հեռանալու ամենաանվտանգ ուղին: Պայմանավորվել ընտանիքի անդամների հետ (եթե երկրաշարժի ժամանակ գտնվում եք բնակավայրի տարբեր մասերում) հանդիպման տեղը:

Տանը՝ մուտքի մոտ, պահել առաջին անհրաժեշտության իրերով պայուսակ: Պայուսակի մեջ պետք է լինեն՝

ա. առաջին օգնության դեղարկղիկ (դեղորայք, վիրակապական նյութեր).

բ. մարտկոցով ռադիոընդունիչ և գրպանի լապտեր.

գ. կարևոր փաստաթղթեր և տաք հագուստ.

դ. պահածոյացված սնունդ և խմելու ջրով լի տարա (սնունդ պատրաստելու և խմելու համար անհրաժեշտ է 3-4 լիտր ջուր):

(*Հղում* 4.)

Ինչպե՞ս վարվել երկրաշարժի ժամանակ

Հիշեք, երկրաշարժը ձեզ, ամենայն հավանականությամբ, հանկարծակիի կբերի:

Ինքնատիրապետում, հանգստություն և հստակ կշռադատված գործողություններ. ահա թե ինչպիսի իրավիճակներ են անհրաժեշտ ձեզ: Ձեր հանգստությունը վստահություն կներշնչի շրջապատին:

- Հիշեք, որ նույնիսկ ավերիչ երկրաշարժի դեպքում շենքերը միանգամից չեն փլուզվում: Գյումրիի (9 բալ) ավերածությունների վերլուծությունը ցույց տվեց, որ 10-հարկանի շենքերը սկսել են փուլ գալ առաջին ցնցումից 10-12 վայրկյան հետո: Դա այն ժամանակն է, որի ընթացքում փրկվելու համար որոշակի գործողություններ կկարողանաք ձեռնարկել:

- Հիշեք, ձեզ որոնում են և ձեր փրկության համար կօգտագործվեն բոլոր հնարավորությունները:

Եթե երկրաշարժի ժամանակ շենքում եք

ա. եթե բարձրահարկ շենքի 1-ին և 2-րդ հարկերում եք, աշխատեք անհապաղ դուրս գալ շենքից, հեռացեք դեպի բաց տարածություն.

բ. եթե գտնվում եք 3-րդ և ավելի բարձր հարկերում, շենքից դուրս մի եկեք, աստիճաններն ու սանդղակները խցանված կլինեն խուճապահար մարդկանցով, վերելակները կարող են անջատվել ցանկացած պահի: Բացի դրանից, առաջին հերթին, սովորաբար, աստիճաններն ու սանդղակավանդակները փլվում են.

գ. կարելի է կանգնել շենքի միջին մասի հիմնական կրող պատերի, նրանցով կազմված անկյունների, այդ իսկ պատերում դռան բացվածքների և հենասյուների մոտ՝ գլխավերևում պահելով աթոռ, պայուսակ կամ այլ համապատասխան իր՝ վերևից թափվող ծեփակտորներից պաշտպանվելու համար: Կարելի է նաև մտնել տարածքում գտնվող մահճակալի կամ սեղանի տակ.

դ. պատուհաններից և շենքի արտաքին պատերից հեռու մնացեք, դրանք փլվում են առաջին հերթին՝ փշրվող առարկաներից չվնասվելու համար.

ե. ցնցումների ավարտից հետո փորձեք դուրս գալ շենքից՝ նախապես որոշված ճանապարհով.

Եթե երկրաշարժի ժամանակ գտնվուն եք փողոցում

ա. հեռացեք շենքից, կամուրջներից և էլեկտրասյուներից հեռու, դեպի անվտանգ տարածություն.

բ. երբեք շենք չմտնեք այնտեղ գտնվողներին դուրս բերելու համար. դա շատ վտանգավոր է.

Մնացեք դրսում միաժամանակ փնտրեք նրանց օգնելու տարբերակներ:

Եթե արթնացել եք ստորգետնյա ցնցումներից

ա. Ոչ մի դեպքում չօգտվեք էլեկտրականությունից, չօգտագործեք լուցկի կամ գազայրիչ (գազատարը կարող է վնասված լինել): Օգտվեք միայն գրպանի լապտերից:
բ. Հագնվելու վրա ժամանակ մի վատնեք, արագ վերցրեք ամենաանհրաժեշտ իրերով պայուսակը, գործեք բաժնի նախորդ կետերում նշված կանոնների համաձայն:

(*Հղում* 5.)

Ինչպե՞ս վարվել երկրաշարժից հետո

Ավերիչ երկրաշարժից անմիջապես հետո, մարդկանց փրկելու համար անհրաժեշտ է գործադրել բոլոր ուժերը: Համաշխարհային փորձը ցույց է տվել, որ օպերատիվ փրկարարական աշխատանքներն առավել արդյունավետ են երկրաշարժից հետո առաջին շաբաթվա ընթացքում, երբ ավելի հավանական է մարդկանց փրկության գաղափարը:

Մարդկանց փրկելը՝ աղետի գոտում գտնվող յուրաքանչյուր մարդու պարտքն է: Օգտագործեք ձեռքի տաք եղած բոլոր միջոցները՝ ոչ մեծ փլատակներից մարդկանց հանելու համար:

• Փլատակներում մնացած մարդիկ զրկված լինելով ջրից և սննդից կարող են դիմանալ 7 օր: Ուստի, աշխատեք որոնել և փրկել մարդկանց առաջին յոթ օրերին:
• Փլատակների մաքրումը, մարդկանց դուրս բերումը և տուժածներին օգնություն ցույց տալը պետք է կատարվեն մասնագետ փրկարարների ղեկավարությամբ:
• Փլատակների անզգույշ մաքրումը կարող է հանգեցնել հետագա նոր փլուզումների, իսկ ոչ ճիշտ բուժօգնություն ցույց տալու հետևանքով մարդիկ կարող են զոհվել:
• Կազմակերպեք առաջին բուժօգնության կետեր: Այդ նպատակին կարող են ծառայել զբոսայգիները, մարզադաշտերը, մեծ հրապարակները:
• Բժիշկների և փրկարարների խմբերում անպայման պետք է լինեն հոգեբաններ և հոգեկան ցնցում ապրած մարդկանց ցույց տան հոգեբանական առաջին օգնություն:
• Փլատակներում գտնվողներից նույնիսկ ոչ մի ազդանշան չլինելու դեպքում որոնումը շարունակեք շների և հատուկ սարքերի միջոցով:

Ի. Եթե գտնվում եք փլատակներում խուճապի մի՛ մատնվեք, այլ հանգիստ և սթափ գնահատեք իրավիճակը:

ա. Չմտածված գործողությունները կարող են հանգեցնել նոր փլուզումների, եթե տարածությունը թույլ է տալիս՝ տեղափոխվեք ավելի անվտանգ տեղ:

բ. Անհրաժեշտության դեպքում առաջին բուժօգնություն ցույց տվեք ինքներդ ձեզ (դադարեցրեք արյունահոսությունը, վիրակապ դրեք): Եթե ձեզ հետ փլատակում կան և ուրիշ մարդիկ, հանգստացրեք և առաջին բուժօգնություն ցույց տվեք նրանց:

գ. Կապ հաստատեք (գոռացեք, հնչեղ առարկաներով հարվածեք) դրսում և մոտակա փլատակներում գտնվողների հետ: Դա կօգնի փլատակներից ավելի հեշտ և ճիշտ ուղիներ որոնել ձեզ և ուրիշներին փրկելու համար: Հնարավորության դեպքում փրկարարներին զգուշացրեք ձեզ սպառնացող վտանգի մասին:

դ. Եթե առաջին երկու օրերի ընթացքում ձեզ չգտնեն, խուճապի մի՛ մատնվեք, խնայեք ձեր ուժերը, ավելորդ շարժումներ մի՛ արեք:

ե. Եթե ձեր տրամադրության տակ կա սնունդ և հեղուկ՝ խնայողաբար օգտագործեք, բաժանելով առնվազն 15 օրվա: Մարդն առանց սննդի դիմանում է 15 օրից ավելի, իսկ առանց հեղուկի՝ 7 օր:

Ուժեղ երկրաշարժերը միշտ էլ ուղեկցվում են զոհերով և ավերածություններով: Թեև կատարյալ անվտանգությունն ապահովող կանոններ չկան, այնուամենայնիվ, վերոհիշյալ վարքականոնների ճիշտ կիրառումը կօգնի նվազեցնել ձեզ և ձեր շրջապատին սպառնացող վտանգը:

(*Հղում* 6.)

ՍՊԻՏԱԿԻ 1988 Թ. ԵՐԿՐԱՇԱՐԺ

1988 թվական դեկտեմբերի 7. ժամը 11 անց 41րոպե 22,7 վայրկյան. ցնցվեցին Հայաստանի հյուսիսային շրջանները: Երկրաշարժը ընդգրկել է ՀՀ տարածքի մոտ 40%-ը, ուր ապրում էր 1մլն. մարդ:

Ուժգնությունը էպիկենտրոնում գնահատվել է 10 բալ: Ավերման գոտին, որտեղ երկրաշարժի ուժգնությունը կազմել է 8 բալ և ավելին, ընդգրկել է երեք հազար քառ. կմ տարածություն: Տուժել են 21 քաղաք և շրջան, 342 գյուղ: Անօթևան են մնացել 514 հազար մարդ: Տարբեր աստիճանի վնասվածքներ են ստացել մոտ 20000 մարդ, որոնցից հոսպիտալացվել են 12500 մարդ, զոհերի թիվը կազմել է 25000 մարդ: Զոհեր շատ են եղել հատկապես Գյումրիում (մոտ 15-17 հազար) և Սպիտակում (4 հազար) մարդ:

Ավերվել է ՀՀ-ի ամբողջ բնակֆոնդի 17%-ը, դադարել են գործել 170 արդյունաբերական ձեռնարկություն, մեծ վնաս է հասցվել գյուղերին և ագրոարդյունաբերական համալիրին: Մեծ վնաս է հասցվել նաև ճարտարապետական, պատմական, արվեստի հուշարձաններին, տուժել է ժողկրթության 917 օջախ: Երկրաշարժի հետևանքով զանգվածային վնասվածքների և փլուզումների են ենթարկվել հազարավոր շինություններ:

Ազգաբնակչության և փրկարարների ջանքերով փլատակներից, զոհված կամ կենդանի, հանվել է ավելի քան 45000 մարդ, հոսպիտալացվել 12500 մարդ:

Սպիտակի երկրաշարժը պատկանում է այսպես կոչված լրիվ ցիկլի երկրաշարժերին՝ նախացնցումներ, հիմնական ցնցում, հետցնցում:1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժի նման ավերիչ ուժի երկրաշարժեր երկրագնդի վրա, միջին հաշվով, տարեկան լինում են 15-20 հատ: Ինչպես ամեն մի ուժեղ երկրաշարժ, այնպես էլ Սպիտակի երկրաշարժը, ունի իր որոշակի առանձնահատկությունները:

Վնասների հիմնական պատճառներն են՝

1. Հանրապետության ողջ տարածքում թերագնահատված էր սեյսմիկ վտանգը, քանի որ մասնագետների կողմից այդ գոտու սեյսմիկ վտանգը գնահատված էր 7-8 բալ և դա այն դեպքում, երբ 1988թ երկրաշարժի ուժգնությունը Սպիտակում գնահատվեց 10, Ստեփանավանում՝ 9, Վանաձորում՝ 8-9 բալ:
2. Աղետի հետևանքներն ուսումնասիրող հատուկ կառավարական հանձնաժողովը հայտնաբերել է, որ թույլ էին տրված որոշակի սխալներ շենքերի եւ կառույցների նախագծման ժամանակ: Այսինքն՝ խախտված էին սեյսմակայուն շինարարության չափանիշներն ու կանոնները:
3. Ցածր է եղել շինարարության որակը: Կոպտորեն խախտվել է շինարարության տեխնոլոգիան, շինանյութերը չեն համապատասխանել պետստանդարտին:
4. Երկրաշարժի ժամանակ Գյումրի քաղաքի տարածքում գետնի տատանման գերակշռող պարբերության մեծությունը կազմել է մոտավորապես 0,4-0,8 վրկ., որը շատ մոտ է բարձրահարկ շենքերի հիմնական ձևերի սեփական տատանումների պարբերությունների մեծություններին: Նման դեպքերում առաջ են գալիս, այսպես կոչված, ռեզոնանսային անցանկալի երևույթներ՝ բերելով տատանումների ամպլիտուդաների աճին եւ շատ հաճախակի շենքերի փլուզմանը:
5. Երկրաշարժի տեւողությունը (մինչեւ 5 րոպե) եւ կրկնվող ցնցման փաստը, որի դեպքում շինությունների մեծամասնությունը չհասցրեցին «վերականգնվել» հիմնական ցնցումից:
6. Տատանումների ուղղահայաց բաղադրիչների զգալիությունը:
7. Թերագնահատվել է տարածքի սեյսմիկ վտանգը, հաշվի չեն առնվել տեղանքի ինժեներա-երկրաբանական պայմանների առանձնահատկությունները:
8. Շատ զոհերի պատճառ դարձան փրկարարական աշխատանքների ձգձգումն ու ոչ ժամանակին կազմակերպումը:
9. Ազգաբնակչության համապատասխան հմտությունների եւ իրազեկման բացակայությունը էքստրեմալ պայմաններում:

(*Հղում* 7.)

ՍՈՂԱՆՔՆԵՐ

Լեռան լանջով ապարների զանգվածի լանջերով տեղաշարժ (սահք)՝ սեփական քաշի և լրացուցիչ բեռնվածության ներգործությամբ, որն առաջանում է լանջի ողողաքանդման, ջրադինամիկ ճնշման, գերխոնավացման, սեյսմիկ կամ տեխնածին ցնցումների և այլ ընթացքների հետևանքով:

Դասակարգվում են ըստ հզորության (**խոշոր, միջին և մանր**) և ըստ շարժման արագության (**շատ արագ, արագ, չափավոր և դանդաղ**)

Լեռների և ձորերի զառիվայր ու զառիթափ լանջերից խոշոր, հաճախ հսկայական չափերի ապարազանգվածների պոկումն ու փլուզումը, որն առաջանում է գլխավորապես լեռնային ապարների հողմահարության ընթացքների և մակերևութային ու ստորգետնյա ջրերի ներգործությունից դրանց կապակցվածության թուլացման հետևանքով:

Սողանքներ, ծանրության ուժի ազդեցությամբ լեռնալանջերով կամ թեք տեղանքով ապարների զանգվածային սահաշարժեր, որոնք, լվացման հետևանքով, ապարների հավասարակշռության խախտման արդյունք են: Սողանքային շարժընթացներն ուղղակիորեն կախված են տեղանքի կառուցվածքից, ապարների շերտերի տեղաբաշխումից, ստորերկրյա ջրերի ակտիվությունից, անտառածածկույթի կամ խոտածածկույթի խտությունից, գերխոնավացումից, ստորերկրյա ցնցումներից, մարդու անզգույշ տնտեսական գործունեության, երկրաբանական և երկրաձևաբանական պայմանների առանձնահատկությունների անտեսումից, որոնք հանգեցնում են ապարների ամրության նվազմանը և սողանքի առաջացմանը:

Հայաստանի տարածքը բնորոշվում է ուժեղ զարգացած սողանքային շարժընթացներով: Հայաստանի տարածքում գոյություն ունեն 2000-ից ավելի խոշոր սողանքներ (մոտ 500 կմ² տարածք), որոնցից շատերը գտնվում են բնակավայրերի (Դիլիջան, Իջևան, Կապան, Վանաձոր և այլն) սահմաններում, միջին բարձրության լեռնային գոտում՝ Ախուրյանի հովտում (Գյումրուց հյուսիս-արևմուտք), Դեբեդի, Աղստևի, Վեդիի, Գետիկի, Որոտանի ավազաններում, Նուբարաշենի, Ջերմուկի սարավանդներում և այլն:

Սողանքային վտանգը սպառնում է նաև տրանսպորտային (շուրջ 8 000 կմ ընդհանուր երկարության ուղիներից ավելի քան 1500 կմ-ը սողանքային ազդեցության գոտում է) և էներգետիկ մայրուղիներին, արոտավայրերին և մշակովի հողերին, պատմամշակութային հուշահամալիրներին (Մակարավանք, Գոշավանք, Ջուխտակվանք և այլն): Սողանքները շատ հաճախ ավերիչ են. օրինակ՝ Մարմաշեն (Շիրակի մարզ), Մարտիրոս (Վայոց ձորի մարզ) գյուղերն ավերվել, բնակիչները տեղափոխվել են: Նույն պատկերն է Դիլիջանում: Սողանքային փլվածքները տարածված են հանրապետության շուրջ 125 բնակավայրում:

Քանի որ մակերևութային և ստորերկրյա ջրհոսքերն ակտիվացնում են սողանքները, սողանքավտանգ տարածքներում չի թույլատրվում ջրագծեր (ջրմուղկոյուղու), առավել ևս բաց ջրանցքներ կառուցել: Ջրագծերից ու ջրանցքներից ներծծվող անխուսափելի կորուստների հետևանքով սողանքներն ակտիվացել են Գառնի-Հացավան-Ողջաբերդ, Արզնի-Գետամեջ-Պտղնի և այլ տեղամասերում:

Հայաստանում առկա են նաև բլոկային տեղաշարժեր (սողանքային բլոկներ), որոնք հիմնական զանգվածից պոկված, բայց իրենց միաձուլությունն ու ներքին կառուցվածքը պահպանած մայր ապարների խոշոր հատվածներ են (Իջևանի լեռնաշղթայում, Որոտանի կիրճում և այլն): Կան նաև քայքայված նյութի նվազագույն տեղաշարժով փլվածքային գոյացություններ՝ փլվածքային սողանքներ, և բավականին յուրահատուկ ձև ունեցող հոսքային սողանքներ, որոնք բնորոշվում են մածուցիկ և պլաստիկ հոսքերով, ամբողջապես քայքայված ներքին կառուցվածքով և սողանքային զանգվածների տեղաշարժման առավելագույն չափերով (Մարտիրոս, Արևիս, Հովք և այլ գյուղեր):

Հայաստանի տարածքի սողանքային տեղաշարժերի տեսակները շատ հաճախ տարանցման ընթացքում փոխակերպվում են փլվածք-սահք-հոսք սխեմայով (օրինակ՝ Ջերմուկի սողանքային խումբը): Նշված շարժընթացները վտանգավոր ու քայքայիչ են արոտավայրերի և վարելահողերի համար:

Սողանքների դեմ պայքարելու համար կառուցվում են գետափերն ամրացնող ու ցամաքուրդային կառույցներ, կատարվում ծառատնկումներ և այլ միջոցառումներ:

Սողանքները կամ այլ կերպ ասած՝ լոկալ երկրաշարժերը կարող են լինել մարդկանց գործունեության հետեւանք: Առանց նախնական մասնագիտական հետազոտության՝ ճեղքվում են սարեր ու բլուրներ, բացվում են ճանապարհներ ու կառուցվում շենքեր:

Սողանքը լեռնալանջերի, գետահովիտների եւ արհեստական թեքությունների վրա զգալի չափերի ապարազանգվածի տեղաշարժն է (սահքը), որը կատարվում է (կատարվել է) ծանրության ուժի, ջրադինամիկ ճնշման, լանջի վրա արհեստական բեռնվածքի ավելացման (կառուցապատման), սեյսմիկ կամ տեխնածին ցնցումների (օրինակ՝ պայթյունների) եւ այլ ուժերի ազդեցությունից:

Ընդհանուր առմամբ սողանքը երկրաբանական վտանգավոր երեւույթ է երկրակեղեւի մակերեսային հատվածներում հողազանգվածների երբեմն երկարատեւ ու աստիճանաբար, երբեմն արագ տեղաշարժով, որն արտահայտվում է սարերի, բլուրների լանջերում, գետահովիտներում, ծովերի ու լճերի ափերին: Սողանքը զարգանում է հողազանգվածներում, որոնք չունեն բնական կցորդում: Սողանքների առաջացման պատճառներն են՝ ջրով հագենալու հետեւանքով հողի բեռնվածության ավելացումը, փոսերի, իջվածքների ու մակերեսային շերտերի տակ ջրակայուն կավի առկայությունը, երկրաշարժից եւ ուժեղ պայթյուններից առաջացած ցնցումները:

Հայաստանի սողանքների ճնշող մեծամասնությունը մարդու ներգործության հետեւանք է: Առանց մասնագիտական լուրջ հետազոտությունների եւ հաշվարկների ճեղքում են սարերն ու բլուրները, կառուցում ճանապարհ ու երկաթուղի, շենք ու շինություն, վիրավոր ու բզկտված հողի լեզուն չհասկանալով, նրա թուլացած ու սորուն մարմնին շարունակում են նոր վերքեր հասցնել՝ դարավանդներ մխրճել ու ջրել, չթողնելով, որ ջուրը բնականոն հեռանա, բեռնել ու գերբեռնել քարաբետոնային ծանր կառուցվածքներով՝ զրկելով հողը հավասարակշռությունից:

Հողը չի սիրում իրեն չսիրողին, իր լեզուն չհասկացողին. Կամ ամլանում է, կամ ոտ առած, ջուր դառած փախչում:

Շռայլ ու բարի բնությունը կամակոր ու հիշաչար է դառնում, երբ նրան կտցահարում են,

հոշոտում, խախտում հավասարակշռությունը:

Սողանքների սպառնալիքի նախանշանները

- տան դռներն ու պատուհանները դժվարությամբ են փակվում կամ սեղմված են
- տան պատերի ծեփերի վրա ի հայտ են գալիս նորանոր ճեղքեր
- հողի մակերեւույթին, մայթերին, ճանապարհներին հայտնվում են ճաքեր, որոնք աստիճանաբար լայնանում են
- լանջերի հիմքերի մոտ հողն ուռչում է
- հայտնվում են ստորգետնյա ջրերի նոր ելքեր
- ցանկապատերն ու ծառերը սկսում են 'տեղաշարժվել'
- հողամասում առաջանում են փոսեր

Ինչ անել իրական վտանգի դեպքում

- անհրաժեշտ պաշտոնական միջոցառումներ կազմակերպելու համար դիմել տեղական գործադիր մարմիններին
- նախատեսել մթերքի, հանդերձանքի, դեղորայքի վթարային պահուստներ
- չանտեսել ապաստարանների մասին տեղեկությունները եւ տարահանման վերաբերյալ գործադիր մարմինների կոնկրետ ցուցումները
- թույլ չտալ սողանքային վտանգի ուժեղացմանը նպաստող գործողություններ:

(*Հղում* 8.)

ՓԼՈՒԶՈՒՄՆԵՐ

Դարերի ընթացքում հողմնահարման հետևանքով առաջանում են սահմանային հավասարակշռության վիճակում գտնվող ժայռային ցցվածքներ, ժայռաբեկորներ, որոնք աննշան ցնցման դեպքում լանջով գլորվում են:

Փլուզվող ապարների զանգվածից, անկման բարձրությունից կախված՝ փլուզումները պատճառում են ծանր հետևանքներ՝ շինությունների ավերում, հաղորդակցական ուղիների վնասում, մարդկային զոհեր, անասուններիկորուստ և այլն:

Փլուզման առաջացմանը նպաստում են ապարների ճաքերը, խզվածքները: Ջուրը, ձյունը, թափանցելով ժայռաբեկորների ճեղքերը, արագացնում են փլուզումը: Վճռորոշ կարող են լինել մոտա կայքում պայթեցման աշխատանքները:
Փլուզման կանխանշաններն են՝ կախված ժայռերում բազմաթիվ ճաքերի առկայությունը, հիմնական ապարներից անջատվող առանձին ժայռերի հայտնվելը:

Փլուզումների կանխարգելման միջոցառումներն են՝

- ժայռերի, խոշոր քարաբեկորների ամրացումը,
- պաշտպանիչ հենապատերի կառուցումը,
- արհեստական փլուզման առաջացումը,
- փլուզումավտանգ տարածքի մակերևույթի ամրացումը ցանցերով:

Փլուզման ենթակա հատվածներում պետք է սահմանափակել շինարարությունը: Փլուզման սպառնալիքի դեպքում անհրաժեշտ է դադարեցնել տեղաշարժը վտանգավոր տեղամասում, կատարել բնակչությանտարհանում:

(*Հղում* 1.)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր դպրոցի անձնակազմն ու այնտեղ սովորող երեխաները պետք է գիտակցեն իրենց կյանքին սպառնացող վտանգները և պատրաստ լինեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում: Ուսուցիչներն և այլ աշխատակիցները գիտեն, թե ինչպես պաշտպանել իրենց աշակերտներին արտակարգ իրավիճակի դեպքում և նրանց ապահով տուն վերադարձնել: Հանգստության և քաոսի, խիզախության և վախի, կյանքի և մահվան միջև եղած տարբերությունը կարող է պայմանավորված լինել աղետի դեպքում ճիշտ վարվելակերպի իմացությամբ: Դպրոցները և նախադպրոցական հաստատությունները պետք է պատրաստ լինեն արձագանքել փոքր և մեծ արտակարգ իրավիճակներին, վտանգից զերծ պահեն երեխաներին և դպրոցի աշխատակիցներին, ինչպես նաև պատրաստ լինեն սովորել և դասավանդել:

Շատ կարևոր է դպրոցներում աղետներին պատրաստվածության շրջանակներում իրականացրած գործողությունները լինեն բարձր մակարդակի: Պարբերաբար անցկացվող միջոցառումները և փաստագրումը դպրոցներում աղետներին պատրաստվածության պլանավորման գործընթացի էական բաղադրատարրերից է, որը կապահովի արդյունավետ աշխատանքներ: Աղետները կառավարող ընդհանուր միջոցառումները դպրոցներում աղետներին պատրաստվածության համակարգը բարելավելու և կատարելագործելու կարիքը մնում է առաջնային:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՆԶՊ 8 – րդ դասարանի դասագիրք
2. http://www.mes.am/hy/masnageti-ankyun/item/2016/06/27/erkrasharj/
3. http://www.mes.am/hy/masnageti-ankyun/item/2016/06/27/magnitud/
4. http://www.mes.am/hy/masnageti-ankyun/item/2016/06/27/earthquake-before/
5. http://www.mes.am/hy/masnageti-ankyun/item/2016/06/27/duringerathquake/
6. http://www.mes.am/hy/masnageti-ankyun/item/2016/06/27/earthquake-after/
7. https://www.panorama.am/am/news/2015/12/07/Սպիտակ-երկրաշարժ/1493823
8. http://www.mes.am/hy/masnageti-ankyun/item/2015/05/22/soxanq/
9. Դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում աղետների պատրաստվածության և աղետների մեղմացման ուղեցույց

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթացներ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՐՏԱԿ

Թեմա՝ Հայկական բանակի կառուցվածքը, ղեկավար կազմը

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ Անդրանիկ Սարգսյան

Բովանդակություն

1. Ներածություն

2. ԳԼՈՒԽ 1 ՝ Հայաստանի զինված ուժերի պատմությունը հին և միջին դարերում, Հայասայի բանակի թիվը և կազմը, Նաիրյան զինված ուժեր, 2.4 Վանի թագավորության զինված ուժեր, Երվանդունիների թագավորության զինված ուժերը, Մեծ Հայքի թագավորության զինված ուժերը Արտաշեսյանների օրոք, Մեծ Հայքի թագավորության զինված ուժերը Արշակունիների օրոք, Մեծ Հայքի թագավորության զինված ուժերը մարզպանության և արաբական խալիֆայության օրոք, Մեծ Հայքի թագավորության զինված ուժերը Բագրատունիների օրոք, Մեծ Հայքի թագավորության զինված ուժերը Զաքարյանների օրոք, Կիլիկիայի հայկական պետության զինված ուժերը:

2.1 Հայաստանի զինված ուժերի պատմությունը հին և միջին դարերում

2.2 Հայասայի բանակի թիվը և կազմը

2.3 Նաիրյան զինված ուժեր

2.4 Վանի թագավորության զինված ուժեր

2.5 Երվանդունիների թագավորության զինված ուժերը

2.6 Մեծ Հայքի թագավորության զինված ուժերը Արտաշեսյանների օրոք

2.7 Մեծ Հայքի թագավորության զինված ուժերը Արշակունիների օրոք

2.8 Մեծ Հայքի թագավորության զինված ուժերը մարզպանության և արաբական խալիֆայության օրոք

2.9 Մեծ Հայքի թագավորության զինված ուժերը Բագրատունիների օրոք

2.10 Մեծ Հայքի թագավորության զինված ուժերը Զաքարյանների օրոք

2.11 Կիլիկիայի հայկական պետության զինված ուժերը

3. ԳԼՈՒԽ 2 ՝ Հայկական բանակը 1918-1920թ., Ղեկավար կազմը, Կազմավորման պատմություն, Հայկական բանակի կառուցվածքը, Սպառազինություն

3.1 Հայկական բանակը 1918-1920թ.

3.2 Ղեկավար կազմը

3.3 Կազմավորման պատմություն

3.4 Հայկական բանակի կառուցվածքը

3.5 Սպառազինություն

4. Գլուխ 3 ՝ Զինված ուժերի պատմությունը ,Ինքնապաշտպանական ուժերի և ջոկատների վերակազմավորումը կանոնավոր բանակի, ՀՀ ԶՈՒ կառուցվածքը, խնդիրները, ՀՀ ԶՈՒ ղեկավար կազմը (պաշտպանության նախարարները. 1991-ից մինչ այսօր), ՀՀ զինված ուժերի զինանշանը, զինվորական երդումը, բանակի երգը:

4.1 Զինված ուժերի պատմությունը ,Ինքնապաշտպանական ուժերի և ջոկատների վերակազմավորումը կանոնավոր բանակի

4.2 ՀՀ ՋՈՒ կառուցվածքը, խնդիրները

4.3 ՀՀ ՋՈՒ ղեկավար կազմը (պաշտպանության նախարարները. 1991-ից մինչ այսօր)

4.4 ՀՀ զինված ուժերի զինանշանը, զինվորական երդումը, բանակի երգը

5. Եզրակացություն

6. Առաջարկություն

7. Օգտագործված գրականության ցանկ, հղումներ

Ներածություն

Լինելով պահեստազորի սպա ՀՀ զինված ուժերում, ունենալով 25 տարվա ծառայության ստաժ անչափ կարևորում եմ ՀՀ զինված ուժերի դերն ու նշանակությունը՝ ՀՀ պետականության կայացման, տարածքային ամբողջականության պահպանման ռազմաքաղաքական կայունության, հայ ժողովրդի իր բնօրանում ապրելու, արարելու իրավունքը պահելու գործում:

Յուրաքանչյուր հայ պետք է միշտ հիշի և գիտակցի, որ պետության անվտանգության ապահովման համար անհրաժեշտ են ոչ միայն զարգացած տնտեսություն, ժամանակակից հզոր բանակ, այլ նաև իր օջախին հայրենիքին նվիրված բարձր բարոյահոգեբանական հատկանիշներով օժտված, ուժեղ, կոփված, ռազմական գործին տիրապետող քաղաքացիներ:

Հիշենք մեծն Գարեգին Նժդեհի խոսքերը.

<< Հայրենասիրությունը մարդկային առաքինությունների թագն ու պսակն է **>>**, որ վախկոտ ժողովուրդները պատերազմից տուժում են ավելի շատ և որ հայրենասիրության հետ բարձրանում են ազգերը, ընկնում՝ նրա պակասից:

Գլուխ 1

1.1 Հայաստանի զինված ուժերի պատմությունը հին և միջին դարերում

Հայկական պետականության կարևորագույն կազմակերպության պատմությունն է: Առանց զինված ուժերի թե՛ անցյալում, թե՛ ներկայումս անհնար է երկրի անկախության ու անվտանգության պաշտպանությունը: Հազարամյակներ շարունակ, ինչպես ցանկացած այլ պետության, այնպես էլ Հայաստանի զինված ուժերի կոչումը, խնդիրները, կառուցման սկզբունքները, անձնակազմի ուսուցումն ու դաստիարակությունը պայմանավորված են հասարակական, պետական կարգով և պետության բաղադրությամբ: Որպես հայկական առաջին պետականություն, կամ գոնե պատմության մեջ առաջին անգամ օտարերկրյա հավաստի աղբյուրներում հիշատակված հայկական պետականություն՝ Հայասան կամ Հայասա-Ազզին, բնականաբար, դարձավ հայկական պետականության պատմության վաղագույն փուլը, իսկ նրա բանակի ստեղծմամբ, Ք.ա. XV դարում փաստացի ծնունդ առան և մի քանի դար շարունակ՝ XV-XIII դարերում ահեղ մարտական մկրտություն ստացան հայկական զինված ուժերը՝ որպես նորաստեղծ հայկական պետականության կարևորագույն հաստատություն: Այդ առաջին անգամ ձևավորված հայկական բանակի հզորության մասին են խոսում ժամանակի գերտերության՝ Խեթական թագավորության հետ Հայասայի երկարատև պատերազմների մասին հենց հակառակորդ պետության կողմից թողնված արձանագրություններում հավաստվող փաստերը: Այսպիսով, հայկական պետականության և նրա զինված ուժերի պատմությունը ունի առնվազն 3 500 տարվա պատմականորեն գրանցված հավաստի և փառավոր ուղի:

1.2 Հայասայի բանակի թիվը և կազմը

Տոհմատիրական կարգերի քայքայման շրջանում գտնվող բոլոր ցեղերի նման հայասցիները ևս եղել են խիստ մարտունակ: Նրանց բանակը կազմված է եղել հետևակազորից ու հեծելազորից: Նրանք պատրաստել և կռիվներում օգտագործել են նաև ռազմակառքեր: Հայասան ռազմադաշտ էր դուրս բերում 700 մարտակառքից և 10 հազարանոց հետևազորից բաղկացած բանակ, որն այդ ժամանակաշրջանի համար նշանակալից ուժ էր:

1.3 *Նաիրյան զինված ուժեր*

Հայկական զինված ուժերի պատմության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում Նաիրիի զինված ուժերը: Նաիրին (աքքադ. naru–«գետ» բառից), Ասորեստանից և Հյուսիսային Միջագետքի Կաշիյարի լեռնապարից (անտիկ աղբյուրներում՝ Մասիոս, այժմ՝ Տուռ–Աբդին) հյուսիս տարածվող «երկրների» («ազգագավառներ», ցեղային իշխանություններ) ընդհանրական անվանումն էր ասորեստանյան արձանագրություններում[1]: Նաիրի «երկրներ» (matati Nairi) արտահայտությունն առաջին անգամ հանդիպում է Ասորեստանի Թուկուլտի–Նինուրտա I թագավորի (Ք. ա. 1243–1221) արձանագրություններից մեկում, որտեղ նա պատմում է Նաիրիի 43 դաշնակից «թագավորների» (ցեղային առաջնորդներ) ուժերի դեմ իր կռվի ու հաղթանակի մասին:

1.4 Վանի թագավորության զինված ուժեր

Հայաստանում դեռևս Վանի թագավորության (Ուրարտու, Արարատյան թագավորություն) ժամանակաշրջանում ստեղծվել է ուժեղ բանակ, որի միջուկը «արքայական» կոչված զորագունդն էր, հիմնական զորատեսակները՝ հետևակը, այրուձին և մարտակառքերը: Հետևակազորի կազմում եղել են սակրավորների, նիզակավորների, աղեղնավորների, հետախույզների և այլ միավորումներ: Հետևակ զինվորները կրել են զրահներ, սաղավարտներ և վահաններ: Ուրարտական սեպագիր արձանագրություններում հիշվում է զորքի գլխավոր հրամանատարը («թուրթան») և այլ զինվորական պաշտոնյաներ («գնդապետ», «հիսնապետ») :

Բանակի կորիզը կազմել է արքունի մշտական ու կարգավարժ զորագունդը, որը խաղաղ պայմաններում տեղակայվել է արքունական բերդերում ու ամրոցներում: Պատերազմների ժամանակ արքունի զորագնդին միավորվել են կուսակալների ու գավառակալների զորամասերը, ինչպես նաև երկրի ազատ բնակչությունից հավաքագրված աշխարհազորը:

1.5 Երվանդունիների թագավորության զինված ուժեր

Ք. ա. VII դարում հայկական զորամասերը մասնակցել են դաշնակից Մարաստանի թագավորության, իսկ ապա՝ Աքեմենյան տերության մղած կռիվներին:

1.6 *Մեծ Հայքի թագավորության զինված ուժերը Արտաշեսյանների օրոք*

Արտաշեսյանների օրոք (Ք. ա. 189թ. – Ք. հ. 1 թ.) հաճախակի պատերազմների պատճառով Հայաստանը ստիպված էր պահել մոտ 100 հազարանոց բանակ, որի կորիզն էր զրահավոր (ծանր) հեծելազորը (տես Այրուձի հայոց): Ստվարաթիվ էր թեթև հեծելազորը: Զորքի գերակշիռ մասը պարսածիգներից, նետածիգներից և զրահավոր նիզակակիրներից բաղկացած հետևակն էր: Կային նաև պաշարողական տեխնիկա, սակրավոր զորամասեր, գումակ և այլն: Քաղաքներում ու բերդերում տեղակայվել են կայազորներ:Զինվորներին մշտական ծառայության դիմաց տրվել են հողաբաժիններ: Զորքի գլխավոր հրամանատարը թագավորն էր, որն ուներ իր գվարդիան, դրանիկ գունդը և հեծելակներից կազմված թիկնազորը:

1.7 *Մեծ Հայքի թագավորության զինված ուժերը Արշակունիների օրոք*

Արշակունիների օրոք (66–428 թթ.) բանակի կորիզը արքունի գվարդիան էր, որը Եղիշեն և Փավստոս Բուզանդը անվանում են «Մատյան գունդ», «Մատենիկ գունդ»։ Տրդատ Գ (287–332) կատարեց ռազմական բարեփոխումներ և Հռոմեական կայսրության օրինակով հայոց զորքի հրամանատարությունը հանձնեց չորս զորապետների (նախկին մեկ գլխավոր հրամանատարի փոխարեն): Այս բարեփոխումից հետո, ինչպես երևում է նույն դարի Զորանամակից, Մեծ Հայքի զինված ուժերը բաղկացած են եղել սահմանակալ չորս (80 հազար հեծյալ) և մեկ արքունի (40 հազար հեծյալ) բանակներից: (Յուրաքանչյուր սահմանակալ բանակ կազմվել է 21–22 նախարարությունների զորամասերից և ունեցել 18–21 հազար մարտիկ: Հայոց մշտական զորքը համալրվել է ազատներից, որոնց համար զինվորական ծառայությունը եղել է

ժառանգական, ծառայության դիմաց նրանք ստացել են կալվածներ և անշարժ գույք: Երկրում գործել են ռազմական դպրոցներ: Պատերազմների ժամանակ հետևակազորը համալրվել է ռամիկներից:

1.8 Մեծ Հայքի զինված ուժերը մարզպանության և արաբական խալիֆայության օրոք

աջ աչքին:Հնարավոր է, որ անհրաժեշտ լինի աջ դաստակը շարժել, որպեսզի շրջանակն ուղղվի ուղիղ առաջ: Նպատակ ունենալու համար շարժեք ձեր մարմինը (դիրքը պահպանելիս) մինչև զենքն ուղղված լինի թիրախին: Շնչեք դանդաղ, հանգստացեք և փորձեք նպատակ դնել, նպատակ դնել:Թիրախային նկարահանումների համար (միայն եթե բավական ժամանակ ունեք նպատակ ունենալու համար) հաճախ լավագույնն է կենտրոնանալ առջևի տեսողության վրա և այն ուղղել թիրախին կամ թիրախի և առջևի տեսողության միջև որոշակի կետի: Մի կենտրոնացեք թիրախի վրա: Կենտրոնացեք առջևի տեսարանին մոտ ՝ ամբողջովին կենտրոնանալով խաչաձև կատարյալ պատկեր ստեղծելու վրա, որտեղ թիրախը լիովին համընկնում է առջևի տեսողության հետ: Թիրախը անորոշ տեսանելի է ձեր զենքից դուրս: Եթե կրակոցի արագությունը կարեւոր է, ապա 99% դեպքերում ավելի լավ է ամբողջությամբ կենտրոնանալ առջեւի տեսողության վրա: Timeամանակի ընթացքում դուք կհասկանաք, որ ձեր շնչառությունը և հանգիստ և հանդարտ մնալու ունակությունը նպատակների ճշգրտությունը պահպանելու գործընթացում գլխավոր առաջնահերթություններն են: Դրան կարելի է հասնել միայն պրակտիկայով: Կրակելուց առաջ հավասար շնչեք, ապա ավելի խորը ներշնչեք և ամբողջովին արտաշնչեք ՝ դատարկելով ձեր թոքերը: Դա արտաշնչման պահին է (մի՛ արտաշնչեք ուժով, այլ պարզապես հանգստացեք) կրակոցը արձակվում է: Ավանդական բաց տեսարժան վայրերի տեսադաշտի պատկերը պետք է նմանվի III ձևին, որտեղ առջևի տեսողությունը իդեալականորեն պաշտպանված է հետևի տեսարանային անցքով: Հիշեք, որ սա նշանակում է ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց տեղադրում: Այս իդեալական պատկերը այնուհետև պետք է տեղադրվի թիրախի վրա (առանց այն քողարկելու), այնուհետև կրակվի: Թիրախին ճշգրիտ հարված հասցնելու համար, եթե շրջանակի պատկերը թիրախից ցածր է, ապա ատրճանակը պետք է «զրոյացվի» (ճշգրտվի): Հետո պետք չէ արհեստական ճշգրտումներ կատարել (օրինակ ՝ թեքել դեպի ձախ կամ ավելի բարձր), իսկ ատրճանակը, որն ուղղված է ուղղակի թիրախին, ճշգրիտ հարված կհասցնի ցանկալի թիրախի ցուլի աչքին: Տարբեր պարկուճներ տարբեր կերպ են կրակում (քիչ թե շատ ճշգրիտ) տարբեր տեսակի զենքերի համար:Փորձեք տարբեր տեսակի փամփուշտներ ձեր հրազենի համար ՝որոշելու, թե որն է ավելի լավ ձեր ատրճանակի համար: Սկսնակ հրաձիգները հաճախ հպարտանում են իրենց հրաձգությամբ, եթե նրանց կրակոցների մեծ մասը դիպչում է նպատակին:Այնուամենայնիվ, նույնիսկ պատահական կրակոցը երբեմն դիպչում է թիրախին: Սա ավելի շուտ հաջողություն է ցույց տալիս, քան հմտություն: Կենտրոնացեք ձեր կրակոցները մեկ նպատակային չափի խմբավորելու վրա. Սա պրոֆեսիոնալ դիպուկահարի առաջին նշանն է և ցուցադրում է նկարահանման հետևողական ճշգրտությունը: Երբ դուք լավ նպատակ եք դնում և տեսնում եք կատարյալ շրջանակի պատկերը, դանդաղ սեղմեք ձգանը ձեր աջ ցուցամատի վերջին կամ նախավերջին ֆալանգայով դեպի ատրճանակի հետևը (սեղմեք ուղիղ, դանդաղ և կայուն կրակոցների միջև): Կրկնակի գործողություն հարվածային-հրահրող մեխանիզմով (UPS) ունեցող ատրճանակներում նախ պետք է OPS- ը հասցնել կոկորդված դիրքի: (այժմ ատրճանակի OPS- ը գտնվում է մեկ գործողության ռեժիմում): Կախված տեսակից, ձգան դիմադրությունը տատանվում է 900 գրամից մինչև 3,5 կգ: Որքան թեթև է ձգանը, այնքան ավելի հեշտ է ճշգրիտ լինելը (չնայած որ ինքնաձիգ ատրճանակներում կա ձգանի որոշակի դիրք ՝դրա ձգողականությունը նվազեցնելու համար. Դա կարելի է գտնել կրակելու ընթացքում ձգանը պահելով: Դանդաղ արձակեք ձեր մատը մինչև ձգանը կտկտկի, այժմ կարող եք նորից սեղմել դրա վրա ՝նկարահանելու համար): Կրակելուց հետո ստուգեք, թե որտեղ է ընկել գնդակը (բարձր, ցածր, աջ, ձախ և այլ համակցություններ):Պրակտիկայով դուք կկարողանաք որոշել ձեր բացթողման պատճառը ՝ոչ ճշգրիտ տեսողությունը, ձեր ձեռքը դողաց, և / կամ ժամանակն ավարտվեց, կամ պատճառը այսպես կոչված կրակոցի սպասելն էր: Եթե կրակոցը դիպչում է թիրախի ձախ կողմին, աջ ձեռքի համար, դա նշանակում է, որ դուք ուժեղ սեղմում եք ամբողջ ատրճանակը, և ոչ միայն ձգանը: Եթե կրակոցը դիպչում է թիրախի աջ կողմին, աջ ձեռքի համար, դա նշանակում է, որ դուք կամ չափազանց ուժեղ եք ձգում ձգանը, կամ միաժամանակ մատները սեղմում եք ատրճանակի բռնակին: Կրակոցը հազվադեպ է դիպչում թիրախից վեր, բայց եթե դա

տեղի ունենա, նշանակում է, որ հրաձիգը, նախապես փոխհատուցելով հետընթացը, բարձրացնում է ատրճանակը նույնիսկ կրակոցից առաջ: Կրակոցը դիպչում է թիրախից ներքև ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հրաձիգը կամ վերաշարադրում է ձգանը (միաժամանակ սեղմում է ձգանը և ատրճանակը և շատ արագ քաշում է ձգանը), կամ, ամենայն հավանականությամբ, փոխհատուցում է հետնահանջը ՝ իջեցնելով ատրճանակը: ներքև մինչև կրակոցի արձակման պահը: Նահանջից առաջ փոխհատուցումը հիմնական պատճառներից մեկն է, որ հրաձիգը չի կարող ատրճանակով ճշգրիտ կրակել: Անձը, որը սպասում է ատրճանակի հետ քաշվելուն, շարժում է դաստակը և ուղղում ատրճանակը վեր կամ վար ՝ կախված կրակողից: Դա հեշտությամբ կարելի է որոշել ՝ մարդուն տալով զենք, որին նա ծանոթ է: Համոզվեք, որ այն լիցքավորված չէ, բայց հրաձիգին մի ասեք այդ մասին: Երբ նա նշան ընդունի և քաշի ձգանը, ինքնաբերաբար կշարժի ատրճանակը: Այս սովորությունը վերացնելու մի քանի տեխնիկա կա: Ամենապարզը կենտրոնանալ ձգանը քաշելու վրա: Նպատակ դարձրեք թիրախին և դանդաղքաշեք ձգանը: Հնարավորինս դանդաղ և սահուն սեղմեք: Մինչ կրակոցի արձակումը կարող է տևել մինչև 10 վայրկյան: Թիրախը անակնկալ կրակոց է, ինչը նշանակում է, որ դուք հստակ չգիտեք, թե երբ է զենքը կրակելու և, հետևաբար, նախապես չեք փոխհատուցում հետընթացը: Այս խնդիրը լուծելու համար սահուն ձգանով և սուր կրակոցով ատրճանակն ամենահարմարն է, այնուհետև, երբ ձգանը քաշվում է, ավելի քիչ հավանական է զգալ, թե երբ է զենքը կրակելու: Երկրորդ տեխնիկան, ըստ էության, նույնն է, այն տարբերությամբ, որ այն ամբողջությամբ վերացնում է հետմահու փոխհատուցումը: Նպատակ դարձրեք թիրախին և հնարավորինս ճշգրիտ պահեք առջևի տեսողությունը: Խնդրեք ձեր ընկերոջը մատը դնել ձգանի վրա (ուղղակիորեն կամ ձեր մատի վրա ձգանի վրա) և սեղմել այն ձեզ համար: Համոզվեք, որ այն, ինչ իրականում ձգանը ձգում է, շատ դանդաղ է և ձեռքը (հիմնականում բութ մատը) հեռու է պահում ատրճանակի հետևից, որտեղ պտուտակի սահնակը կարող է սեղմել այն: Սա շատ անհարմար մեթոդ է, բայց հաստատում է, որ հրահրումը հրացանի կրակման ամենակարևոր տարրերից է: Շատերը, նույնիսկ փորձառու հրաձիգները, ցատկում են նկարահանելիս ՝ չնկատելով դա: Նահանջից առաջ փոխհատուցումը կարող է դրսևորվել թեթև ճոճմամբ, որն աննկատ է ատրճանակի փաստացի հետ մղման ֆոնի վրա և, հետևաբար, անտեսանելի է մնում հրաձիգի կամ դիտորդների համար: Դուք հեշտությամբ կարող եք դա ստուգել ՝ օգտագործելով http://en.wikipedia.org/wiki/Snap_cap գլխարկը: Ինչպես նշված է հղման մեջ, «սեղմիչ գլխարկը այն սարքն է, որը նման է սովորական հրազենի, բայց չի պարունակում լիցք կամ գնդակ և օգտագործվում է դատարկ կրակոց արձակելու համար: Գլխարկը սովորաբար պարունակում է լիցքավորման փոխարինող զսպանակ, որը ներծծում է ուժը հարվածողից և թույլ է տալիս զենքը ապահով փորձարկել ՝ առանց դրա բաղադրամասերը վնասելու: Խնդրեք ընկերոջը, որ նա ձեզ համար լիցքավորի ատրճանակը, բայց փամփուշտներից մեկը փոխարինեք նույն տրամաչափի ճարմանդով, որը պատահաբար տեղադրված է պահարանում (ատրճանակի համար) կամ բալոնում (ատրճանակի համար): Բոլոր փամփուշտներն օգտագործելուց հետո, ի վերջո, կգտնեք ճարմանդային կափարիչը, բայց դրա մասին չգիտեք, մինչև ձգանը չքաշեք: Այս պահին ձեզ համար ակնհայտ կդառնա, որ եթե տեսողության պատկերը պարզ է, ապա դուք սովորել եք ինչպես վերահսկել զենքի հետընթացը: Եթե զենքը ցատկեց ձեր ձեռքում, կարծես ուղիղ կրակոց արձակեցիք, ապա պետք է շարունակեք մարզումները: Սա պարզ, էժան թեստ է, և արդյունքները կարող են զարմացնել ձեզ: Distanceորավարժություններ արեք այս հեռավորության վրա, մինչև հետևողականորեն չկարողանաք հարվածել մոտ 50 սմ տրամագծով թիրախին: Թիրախը հետ տեղափոխեք մոտ 10 մետր: Կրկին գործարկեք ցիկլը: Պահպանեք մշտական շնչառություն: Եթե ձեր շրջանակը փոխված է, վերցրեք նորը ուղղման համար կամ հինը տվեք վրիպազերծման համար: Բաց տեսարանն իմ ամենասիրելին է: Բայց ոմանք նախընտրում են այլ տեսակի շրջանակներ: Կարգավորելի շրջանակները նաև հեշտացնում են ցանկացած պահի ձեր զենքի զրոյական մակարդակի փոփոխությունը: Թիրախը մեկ -երկու անգամ ավելի տեղափոխելուց հետո, ի վերջո, կգտնեք, որ կարող եք հետևողականորեն հարվածել 50 սմ թիրախին ավելի ու ավելի հեռավորություններից: Ինչ -որ պահի վերադառնա մոտակա թիրախ և գոհացրու ինքդ քեզ

այն հեշտությամբ, որով կարողանում ես մտնել թիրախի որոշակի հատվածներ: Այսպիսով, դուք ավելի շատ ինքնավստահություն կստանաք, քանի որ նկատելի բարելավում կտեսնեք: Եթե 40-50 մետր հեռավորության վրա (իդեալական) ձեր կրակոցները դիպչում են թիրախին, ապա 60-70 մետր հեռավորության վրա ստիպված կլինեք փոխհատուցել գնդակի հետագիծը `ավելի բարձր նշան դնելով: Տարբերությունը կարող է լինել ընդամենը մի քանի սանտիմետր, բայց որոշ ժամանակ ընտելանալ է պետք: 100 մ հեռավորության վրա տեղի է ունենում փամփուշտների հետագծի էական փոփոխություն (մոտ 25-35 սմ ստանդարտ 45 տրամաչափի դեպքում), և քամին նույնպես սկսում է ազդել: Հնարավոր է, որ կանգնած դիրքում կարողանաք ճշգրիտ կրակել ավելի քան 100 մ հեռավորությունից: Ստիպեք ինքներդ ձեզ ուսումնասիրել ձեր սահմանները: Ասածս այն է, որ լրացուցիչ աջակցությամբ ծնկի իջած դիրքում դուք կգտնեք, որ հետևողականորեն կարող եք թիրախներ խոցել մինչև 200 մետր հեռավորության վրա: Ավելի քան 200 մետր հեռավորության վրա սովորական ատրճանակի բալիստիկ հատկությունները կասկածելի են: Ավելի երկար հեռահարությունների դեպքում ավելի ծանր գնդակները պահպանում են իրենց էներգիայի ավելի մեծ տոկոսը `աերոդինամիկ գործակիցների պատճառով: Պրակտիկա, պրակտիկա, պրակտիկա: Չնայած այն հանգամանքին, որ գիտելիքը ուժ է, դուք պետք է կարողանաք կիրառել այն, ինչ գիտեք: Անվտանգությունն առաջին հերթին! Carryingենք կրելուց կամ տեղափոխելուց առաջ համոզվեք, որ այն բեռնված չէ, և պահարանը դատարկ է: Մեկ այլ պատճառ, որով ատրճանակը կարող է ոչ ճշգրիտ կրակել, գնդակի և տակառի անհամապատասխանությունն է: Թեև դա ավելի քիչ նշանակություն ունի ատրճանակի համար, քան հրացանի համար, արժե փորձել տարբեր մակնիշների և տեսակների փամփուշտներ: Բայց երբ դուք գտաք մի փամփուշտ, որը լավ է կրակում, այլևս մի փոխեք այն, և մեկ տիպի զինամթերքով միշտ ունենաք դրանց լավ պաշար: Նաև պարբերաբար մաքրեք տակառի ներսը (օգտագործեք յուղ և երբեմն բարակ): Մի քանի հարյուր կրակոցից հետո դուք կգտնեք, որ տակառը շատ կեղտոտ է, նույնիսկ եթե նկատելի չէ: Ինչպես նշվեց վերևում, ձեր զենքը, հավանաբար, ավելի ճշգրիտ է, քան ինքներդ ձեզ (մեծ տրամաչափի մեծ տրամաչափի ատրճանակների մեծ մասը): Հետևաբար, եթե բաց եք թողնում նշանը, հավանականությունը մեծ է, որ դա ձեր մեղքն է: Ավելի շատ վարժություններ արեք, որպեսզի համոզվեք, որ ժամանակից շուտ չեք փոխհատուցելու և շատ չեք ցատկելու: Օգտագործելուց հետո անպայման մաքրեք զենքը: Այս վիճակում օգտագործելու դեպքում խոնավությունը և կեղտը կարող են կոռոզիայից վնասել ձեր հրացանը: Մի նկարեք ալկոհոլ կամ կոֆեին նկարահանումներին գնալուց առաջ: Թեև ալկոհոլը կնվազեցնի ձեր գործելու և լավ որոշումներ կայացնելու ունակությունը, կոֆեինը նաև կնվազեցնի ձեր շարժիչային գործառույթները վերահսկելու ունակությունը (օրինակ, եթե ձեր արյունը պարունակում է կոֆեին, դուք կարող եք շատ ցատկել կամ նույնիսկ դողալ): Ձեռքերը սեղմելը սովորական խնդիր է, որը կարող է գալ և գնալ և հաճախ առաջանում է կոֆեինի, սթրեսի, նյարդայնության կամ անհանգստության պատճառով: Եթե ձեր ձեռքերում ցնցումները շարունակվում են, մի քիչ նստեք, մի քիչ ջուր խմեք և մտածեք զենքի հետ կապ չունեցող բանի մասին (մի մտածեք նաև ձեր ձեռքերի մասին): Որոշ ժամանակ անց կրկին փորձեք վերցնել ատրճանակը: Անվտանգության կողպեք ատրճանակը, եթե դուք չեք պատրաստվում կրակել հենց հիմա (եթե հրացանը ունի անվտանգության կողպեք): Գուշացումներ Հրազենը վտանգավոր է: Օգտագործեք ատրճանակ կամ այլ ատրճանակ միայն այն դեպքում, եթե դուք փորձառու հրաձիգ եք, կամ ձեր մոտ կա շատ փորձառու հրաձիգ, ով ուղղակիորեն վերահսկում է ձեզ: Դուք պետք է իմանաք, թե ինչ է կրակի գիծը: Փամփուշտները կարող են անցնել կիլոմետրեր կամ ռիկոշետ անսպասելի ուղղություններով: Ատրճանակը կարող է զգալի վնասվածքներ պատճառել և նույնիսկ մահացնել: Միշտ ուղղեք ատրճանակը անվտանգ ուղղությամբ և երբեք մի նշեք այն այն բանի վրա, որի վրա չեք պատրաստվում կրակել: Fireանկացած հրազեն պետք է օգտագործվի անվտանգ և թույլատրված վայրում: Իմացեք և հետևեք հրազենի օգտագործման և փոխադրման մասին պետական և տեղական օրենքներին: Օրենքները կտրուկ փոխվում են տարբեր երկրներում, երբեմն քաղաքներում և նահանգներում: Ինչ է պետք Ատրճանակ (ցանկացած տրամաչափի, չափի `վերը նշված հիմնական կանոններին համապատասխան): Amինամթերք

(ըստ ձեր ատրճանակի տրամաչափի): Aminամթերքը պետք է գնել անվտանգ վայրից (ցանկալի է արտադրողից): Ինքնալիցքավորված կամ լիցքավորված փամփուշտները կարող են վնասել ձեր զենքը և վտանգավոր լինել: Հատուկ հագուստ, եթե մտադիր եք բացօթյա նկարահանումներ կատարել: Հագեք բավականաչափ տաք եղանակի համար: Տաբատը միշտ խորհուրդ է տրվում: Եթե դուք գտնվում եք մի տարածքում, որտեղ կարող են լինել զենք ունեցող այլ անձինք (օրինակ ՝ որսը), խորհուրդ է տրվում կրել վառ նարնջագույն բաճկոն կամ շապիկ: Տեսողության և լսողության պաշտպանությունը կարևոր է: Կիսաավտոմատ զենքերից արձակված տաք արույրը կարող է վնասել աչքերը, իսկ բարձր ձայները կարող են շատ արագ վնասել լսողությունը: ՀԱՆՐԱՃԱՆԱՉ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ Minecraft »19 նոր ամբոխ Ինչպես պոմպել հորթերը տանը Հեծանիվների շղթայի տեղադրում Շղթայի ճիշտ տեղադրում հեծանիվին Կոշիկ ընտրելու համար ոտքի չափը չափելու կանոններ Ինչպես սովորել մեկ հոնք բարձրացնել Ինչպես սովորել մեկ հոնք բարձրացնել Ռուսաստանի Դաշնության զինված ուժերում բժշկական հետազոտությունների կազմակերպում ՎԵՐՋԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ M4 «Դոն» մայրուղու վճարովի հատվածներ Սպորտային դասընթացներ սպորտի վոլեյբոլի տեսակով Սպորտային մարզումների դաշնային ստանդարտ սպորտաձևի վոլեյբոլի բնագավառում Ռուսաստանի Դաշնության սպորտի նախարարություն Ինչպես նետեր պատրաստել «Minecraft» - ում. Արհեստագործության հիմունքները Ինչպես կատարել սլաքներ minecraft- ում Այլ սլաքներ Ինչպես կատարել սլաք minecraft- ում 1 Ֆիթնես ուղեղի համար Ուղեղի ֆիթնես վարժություններ ՀԱՆՐԱՃԱՆԱՉ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ Ինչպես հավաքել ճիճուներ Որտե՞ղ ձկնորսության համար փորել որդերը Ինչպես սովորել ճիշտ բարձրանալ լարախաղաց Ֆուտբոլիստների ամենագեղեցիկ կանայք և աղջիկները (45 լուսանկար) Քաղաքը խելագար. Յուլիա Լիսենկո Յուլիա Լիսենկո, ով նրա ամուսինն է Քայլողներ նոր տարվա համար: Քայլողներ - Առաջ թեքությամբ քայլելը, որպեսզի կոնքից ամբողջ մարմինը զվարճանա ձողերի առջև 2021 kichan.ru. Սպորտայի

Read more at: https://kichan.ru/hy/volleyball/osnovnye-priemy-strelby-iz-pistoleta-kak-nauchitsya-metko-strelyat/

ԹԵՄԱ. ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՇԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՐԶՈՒՄԸ
Ավտոմատից հրաձգությունը կատարում են տարբեր դիրքերից (կանգնած, ծնկած, պառկած) և ցանկացած տեղից, որտեղից երևում է թիրախը: Հրաձգու թյունը ներառում է՝ ● նշանոցի տեղադրումը, ● փոխադրիչի տեղադրումը պահանջվող կրակաձևի վրա, ● ավտոմատը ուսին հարմարեցնելը, ● նշանառությունը, ● ձգանը քաշելը, ● ավտոմատի կայուն դիրքը կրակելու ժամանակ: Կրակելուն ճիշտ պատրաստվելն ապահովում է զենքի կայունու թյունը, որն էլ իր հերթին ազդում է հրաձգու թյան դիպուկու թյան վրա: Հրա - ՆԱԽՆԱԿԱՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ձգու թյան ամենահարմար դիրքը պառկած կրակելն է: Պառկած կրակելիս ապահովվում է հրաձիգի և զենքի ամենակայուն վիճակը: Պառկած կրակելուն նախապատրաստվելը ներառում է հետևյալ տարրերը՝ կրակելու համար անհրաժեշտ դիրքի ընդունումը, զենքի լիցքավորումը և կոթը ուսին դնելը: Ավտոմատից (հրացանից) պառկած կրակելու համար դիրքն ընդունվում է այսպես. զենքը պահելով աջ ձեռքով՝ փողաբերանը առաջ, հրաձիգը աջ ոտքով կատարում է լրիվ քայլ առաջ և մի փոքր աջ: Թեքվելով առաջ՝ իջնում է ձախ ծնկի վրա, այնուհետև ձախ ձեռքով հենվելով գետնին՝ հաջորդաբար իջնում է ձախ ոտքի ազդրի և ձախ ձեռքի նախաբազկի վրա: Պառկում է ձախ կողքի վրա և արագ շրջվում փորի վրա՝ թե թևակի տարածելով ոտքերը կողմ՝ ոտնաթաթերը դուրս: Ավտոմատի (հրացանի) փողակալը դրվում է ձախ ձեռքի ափի մեջ: Ավտոմատի (հրացանի) կոթը ուսին է դրվում հետևյալ կերպ. ձախ ձեռքով բռնելով փողակալից, իսկ աջով ատրճանակային բռնակից (ագուստի վզիկից)՝ կոթը հենել ուսին: Արմունկները դնել գետնին մոտավորապես ուսերի լայնու թյամբ, գլուխը թեքել մի փոքր առաջ, վիզը չլարելով՝ աջ այտը հպել կոթին, աջ ձեռքի ցուցամատը դնել ձգանի վրա: Եթե զենքը թեքված է աջ կամ ձախ, ապա խոցումները կլինեն զենքի թեքված կողմը և ներքև: Նշանառու թյունը զենքի փողին անհրաժեշտ ուղղու թյուն տալն է՝ թիրախը խոցելու համար: Բաց նշանոցով

կրակելիս անհրաժեշտ է փակել ձախ աչքը, աջով նայել նշանահատիկին այնպես, որ այն լինի նշանաձողի կտրվածքի մեջտեղում, իսկ գագաթը՝ նշանաձողի գագաթի եզրերին հավասար: Այսպիսի դրու թյունը կոչվում է «հավասար նշանահատիկ»: Հիմնական ուշադրու թյունը հարկավոր է դարձնել նշանաձողի կտրվածքում նշանահատիկի դիրքին և միայն պարբերաբար, նշանառու թյան ճշտման համար տեսողու թյունը տեղափոխել նշանառու - թյան կետի վրա: 55 ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ Հրաձիգը կրակային դիրքում 56 Շնչառու թյունը: Դիպուկու թյան վրա զգալի ազդեցու թյուն ունի հրաձիգի շնչառու թյունը: Ձգանը սեղմելիս շնչառու թյունը չպահելու դեպքում զենքը կունենա ուղղահայաց և հորիզոնական զգալի տատանումներ, քանի որ շնչելիս զենքի կոթը բարձրանում է, փողը՝ իջնում, իսկ արտաշնչելիս՝ ընդհակառակը: Որպեսզի դա տեղի չունենա, անհրաժեշտ է նշանառու թյան և ձգանը սեղմելու ժամանակ շնչառու թյունը 7–10 վրկ պահել: Այդ ժամանակը բավական է ճիշտ նշանառու թյան և ձգանը սահուն սեղմելու համար: Ձգանի սեղմումը: Դիպուկ կրակելու համար անհրաժեշտ է համատեղել զենքի կայունու թյունը, ճիշտ նշանառու թյունը և ձգանի սեղմումը: Ձգանի կտրուկ սեղմումը կարող է խախտել զենքի ճիշտ դիրքը և շեղել գնդակի թռիչքի ուղղու թյունը: Ուստի անհրաժեշտ է ճիշտ շնչառու - թյան հետ միասին ձգանը սեղմել սահուն և հավասարաչափ՝ միաժամանակ ԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ հավասար գնդակները դիպչում են թիրախին նշանահատիկ ցածր նշանահատիկ գնդակները գնում են ներքև բարձր նշանահատիկ գնդակները գնում են վերև աջ նշանահատիկ գնդակները գնում են աջ ձախ նշանահատիկ գնդակները գնում են ձախ Նշանառության սխալները Ճիշտ նշանառություն նակ նայելով նշանահատիկի, նշանաձողի կտրվածքի և նշանակետի ճիշտ դիրքին: Ցուցամատը պետք է դնել ձգանի վրա առաջին հոդով: Երբ մատի սեղմման ուժն ուղղվում է անկյան տակ, զենքի դիրքը փոխվում է, նշանառու թյունը՝ խախտվում: Հիշի՛ր. Քեզ վստահված զենքի գերազանց իմացությունից և կատարյալ տիրապետումից է կախված և՛ քո, և՛ ընկերներիդ կյանքը: (2)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշանառության և կրակային պատրաստության դասավանդումը հանրկրթական համակարգում մեծապես օգնում է աշակերտներին տիրապետել ինքնածիգից կրակի վարման նրբություններին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարկում եմ բոլոր հանրակրթական համակարգի ուսումնական հաստատությունները համալրել կրակի վարման ուսումնական

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՆԶՊ 9-րդ դասարան Երևան 2014
2. ՆԶՊ 10-րդ դասարան Երևան 2014

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեսավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՆ՝ **ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ**

ԿԱՏԱՐՈՂ՝ Նարեկ Ղարիբյան

ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ՆԶՊ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Վանաձոր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Օսմանյան բանակի արշավանքը դեպի Արևելյան Հայաստան ----------3
2. Իրադրությունը Երևանում ճակատամարտի նախօրեին ----------5
3. Սարդարապատի ճակատամարտը ----------6
4. Սարդարապատի ճակատամարտին նախորդած զորաշարժերը ----------8
5. Սարդարապատի գրավումը թուրքերի կողմից. հայերի հակահարձակումը ---10
6. Ընդհանուր իրադրությունը ճակատամարտի առաջին օրերին ----------13
7. Մարտական հետագա գործողությունները ----------14
8. Բաշ Ապարանի ճակատամարտը ----------19
9. Ղարաքիլիսայի ճակատամարտը ----------20
10. Ցանկ օգտագործված գրականության ----------22

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

1. Օսմանյան բանակի արշավանքը դեպի Արևելյան Հայաստան

1917 թվականին Ռուսաստանում հոկտեմբերյան հեղաշրջումից և ապա դեկտեմբերի 5-ին Երզնկայում Օսմանյան կայսրության 3-րդ բանակի և Անդրկովկասի կոմիսարիատի միջև կնքված զինադադարից հետո Կովկասյան ճակատից, մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանի տարածքից նահանջող ռուսական զորքերին սկսեցին փոխարինել նոր կազմավորվող փոքրաթիվ հայկական զորաջոկատները։ Օգտվելով ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակից՝ օսմանյան կառավարությունը ծրագրեց վերանվաճել համաշխարհային պատերազմի ընթացքում ռուսական բանակի գրաված տարածքները, ապա նաև ներխուժել Արևելյան Հայաստան ու Հարավային Կովկաս[1]։

1918 թվականի փետրվարին հարձակման անցնելով՝ թուրքական 3-րդ բանակը հաջորդաբար սկսեց գրավել Արևմտյան Հայաստանի բնակավայրերը։ Ապրիլին՝ Տրապիզոնի հաշտության բանակցությունների ձախողումից հետո 3-րդ բանակի հրամանատար Մեհմեդ Վեհիբ փաշան զորքերը շարժեց դեպի Անդրկովկաս։ Նորահռչակ Անդրկովկասի Դաշնային Հանրապետության ղեկավարության զիջողական քաղաքականությունից օգտվելով՝ թուրքական զորքերը ապրիլի 25-ին գրավեցին նաև Կարսի լավ ամրացված ամրոցը՝ անմիջական սպառնալիք ստեղծելով Ալեքսանդրապոլի համար։ Կարսի գրավումից հետո օսմանյան զորքերի հրամանատարությունը Անդրկովկասի իշխանությունների առջև նոր պայմաններ առաջ քաշեց՝ Ախալքալաքի, Ախալցխայի և Ալեքսանդրապոլի, ինչպես նաև Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծի հանձնում, որով թուրքական զորքերը կարող էին փոխադրվել դեպի Թավրիզ և Անդրկովկասյան բոլոր երկաթուղիներն ազատ օգտագործել մինչև բրիտանացիների դեմ պատերազմի ավարտը։ Չսպասելով Բաթումում Անդրկովկասի պատվիրակության հետ

[1] Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. հատոր 1, Երևան, 2005, էջ 20-30։

բանակցությունների ավարտին՝ թուրքական զորքերն արագ հարձակումով մայիսի 15-ին գրավեցին նաև Ալեքսանդրապոլը՝ նվաճման սպառնալիք ստեղծելով ամբողջ Արևելյան Հայաստանի համար։

Արևելյան Հայաստան ներխուժելու համար թուրքական հրամանատարությունը կատարեց զորքերի վերախմբավորում։ 3-րդ բանակի 1-ին Կովկասյան բանակային կորպուսի (հրամ.՝ գեներալ - մայոր Քյազըմ Կարաբեքիր փաշա) և 2-րդ Կովկասյան բանակային կորպուսի (հրամ.՝ գեներալ - մայոր Յակուբ Շևքի փաշա) ստորաբաժանումներից Կարսում ստեղծվեց հատուկ զորախումբ՝ Յակուբ Շևքի փաշայի ընդհանուր հրամանատարությամբ։ Այդ զորախմբի կազմում հայկական ուժերի դեմ գործելու էին 1-ին Կովկասյան բանակային կորպուսի 36-րդ դիվիզիան (հրամանատար՝ գնդապետ Փիրսելիմօղլու Համդի բեյ)՝ Ալեքսանդրապոլ-Երևան ուղղությամբ, և 9-րդ դիվիզիան (հրամանատար՝ գնդապետ Ռուշթու փաշա)՝ Ալեքսանդրապոլ - Համամլու - Բաշ-Ապարան - Երևան ուղղությամբ, և 2-րդ Կովկասյան բանակային կորպուսի 11-րդ դիվիզիան (հրամանատար՝ գնդապետ Ջավիդ Էրդել)՝ Ալեքսանդրապոլ - Ղարաքիլիսա - Դիլիջան - Ելիզավետպոլ ուղղությամբ, 5-րդ դիվիզիան (հրամանատար՝ գնդապետ Մյուրսել)՝ Ալեքսանդրապոլ - Վորոնցովկա - Թիֆլիս ուղղությամբ։ Այդ զորախմբից բացի դեպի Արևելյան Հայաստան արշավանքի ռազմական գործողություններին մասնակցում էր նաև 2-րդ բանակի 4-րդ կորպուսի 12-րդ դիվիզիան, որը Սարդարապատի ճակատամարտի նախօրյակին հսկում էր Սուրմալուի լեռնանցքները և առաջադրանք ուներ ներխուժելու Իգդիրի շրջան։

Հակառակորդին դիմակայելու համար հայկական զինված ուժերի ընդհանուր հրամանատար գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանը որոշեց պաշտպանել դեպի Երևան և Թիֆլիս տանող ռազմավարական նշանակության երկու ճանապարհները։

Ալեքսանդրապոլից դուրս եկած հայկական ուժերի մի մասը՝ Հայկական կորպուսի 1-ին դիվիզիայի որոշ ստորաբաժանումներ, ինչպես նաև Հայկական հատուկ հավաքական ջոկատի կազմում եղած մի քանի ստորաբաժանումներ, Ալեքսանդրապոլ-Սարդարապատ ուղղությամբ նահանջեց դեպի Արարատյան դաշտ։ Այստեղ Մովսես Սիլիկյանի ընդհանուր

հրամանատարությամբ ձևավորվեց հայկական զորքերի երևանյան զորախումբը, որի առջև դրվեց Երևանի ուղղությամբ թուրքական հարձակումը հետ մղելու խնդիր։

2. Իրադրությունը Երևանում ճակատամարտի նախօրեին

Թուրքական զորքերի արշավանքը ծանր կացության մեջ դրեց հայկական քաղաքական ղեկավարությանն ինչպես Թիֆլիսում, այնպես էլ Երևանում։ Մայիսի 19-ին՝ Սուրմալու ներխուժելուց հետո, թուրք գեներալ Հալիլ բեյը (Էնվեր փաշայի հորեղբայրը) Բաթումում հայտարարեց, թե «հայերը պարտված են և պետք է ենթարկվեն»։ Մյուս կողմից, Բաթումի բանակցություններում հայկական պատվիրակությունը (Ալեքսանդր Խատիսյան, Հովհաննես Քաջազնունի) Անդրկովկասի կառավարության հայ անդամ Խաչատուր Կարճիկյանին հղած հեռագրով խորհուրդ էր տալիս «ռազմական դիմադրություն ցույց չտալ թուրքերին»։

Թուրքական զորքերի հարձակման հետևանքով Ալեքսանդրապոլի գավառում, Արարատյան դաշտում ու Երևանում տիրող խուճապի արդյունքում Երևանի քաղաքային խորհուրդը մայիսի 18-ի ընդլայնված նիստում ընդունեց Երևանի քաղաքագլուխ Թադևոս Թոշյանի առաջարկությունը՝ քաղաքն առանց դիմադրության թուրքերին հանձնելու, քաղաքի բնակչությունը տարհանելու և Քանաքեռի բարձունքում դիրքավորվելու վերաբերյալ։ Սակայն Երևանը հանձնելու մասին ընդունված որոշումը գործնական հետևանք չունեցավ, քանի որ Երևանում Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի լիազոր գործադիր մարմինը՝ Հատուկ կոմիտեն, Երևանի ազգային խորհրդի ղեկավար Արամ Մանուկյանի գլխավորությամբ կտրուկ դեմ հանդես եկավ նման զարգացմանը և բեկանեց այդ որոշումը (Երևանում և Երևանի նահանգում փաստացի գերագույն իշխանությունը պատկանում էր Հատուկ կոմիտեին)։ Շուրջ 1500 բնակիչների օգնությամբ Արամ Մանուկյանի հրահանգով Երևանի մատույցները պաշտպանական ամրություններով ապահովելու աշխատանքներ տարվեցին, մասնավորապես, Եռաբլրի տարածքում։

Մայիսի 18-ին Արամ Մանուկյանը Երևանի պարետ Արշավիր Շահխաթունու ուղեկցությամբ այցելեց Էջմիածին՝ կաթողիկոս Գևորգ 5-րդին հորդորելու անվտանգության նկատառումներով ժամանակավորապես թողնել Էջմիածինը և մեկնել Բյուրական։ Սակայն

կաթողիկոսը ոչ միայն կտրուկ հրաժարվեց, այլև զորքին կոչ արեց վճռական դիմադրություն ցույց տալ հակառակորդին։ Արամ Մանուկյանը հետագա օրերին Երևանում ու շրջակայքում իրավիճակը կայունացնելու և հետագա զարգացումները հօգուտ հայկական կողմի շրջելու հարցում անփոխարինելի դեր ունեցավ։ Մայիսի 19-ի առավոտյան նա հայկական 1-ին դիվիզիայի հրամանատար գեներալ Մովսես Սիլիկյանի առջև խնդիր դրեց կանգնեցնել հայկական զորքերի նահանջը և ամեն գնով կանխել դեպի Երևան թուրքական զորքերի հարձակումը։ Ա. Մանուկյանը խոստացավ կարճ ժամանակում կատարել այդ նպատակի համար անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքներ, հավաքագրել մարդուժ, զենք-զինամթերք[2]։ Հետագա օրերին Աստաֆյան փողոցում, Անգլիական այգում, Ուսուցչական սեմինարիայի առջև և այլ վայրերում կազմակերպվեց կամավորների հավաքագրում, որոնք ճակատամարտի սկզբում համալրեցին զորքերը։

3. Սարդարապատի ճակատամարտը

Ալեքսանդրապոլ-Երևան ուղղությամբ արշավող թուրքական 36-րդ դիվիզիայի կազմում էին 106-րդ, 107-րդ և 108-րդ հետևակ գնդերը, հրաձգային մեկ գումարտակ, երկու հրետանային դիվիզիոն։ Թուրքական զորքն ուժեղացված էր կորպուսային առանձին հեծալազորային գնդի և քրդական 1 500-ոց հեծյալ գնդի ուժերով։ Թուրքական ուժերի ընդհանուր թվաքանակը կազմում էր 7 500 - 10 000 զինվոր ու սպա՝ ներառյալ քրդական ուժերը։ Թուրքերի տրամադրության տակ կար 40 հրանոթ[3]։

Սարդարապատի ճակատում հայկական կողմի ուժերն ընդգրկված էին երևանյան զորախմբի կազմում, որի ստորաբաժանումների մյուս մասը մասնակցեց թուրքական 9-րդ դիվիզիայի դեմ Բաշ-Ապարանի ճակատամարտին։ Զորախմբի հրամանատարն էր գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանը, շտաբի պետը՝ գնդապետ Ալեքսանդր Վեքիլյանը։ Շտաբը Վաղարշապատում էր՝ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի շենքում։

---

[2] Ասրյան Ա., Արամ Մանուկյանի գործունեությունը Սարդարապատի հերոսամարտի օրերին // Կանթեղ. - հատ. 2. - էջ 164-172

[3] Սարդարապատ Բաշ-Ապարան Ղարաքիլիսա։ 1918 թ. մայիսյան հերոսամարտերը, Երևան 1998 , էջ 174։

Սարդարապատի ճակատում կռվող ուժերի ընդհանուր հրամանատարը Երևանյան զորախմբի հրամանատարի տեղակալ գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանն էր, շտաբի պետը՝ կապիտան Ալեքսանդր Շնեուրը։ Ներառված էին Հայկական կորպուսի 2-րդ դիվիզիան՝ ոչ լրիվ կազմով, և Հայկական հատուկ հավաքական ջոկատի (1917 թ. վերջին արևմտահայ կամավորականներից կազմված զորախումբ, նախքան Սարդարապատի ճակատամարտը կռվել է Կովկասյան ճակատում) կազմում եղած մի քանի ստորաբաժանումներ։ 2-րդ դիվիզիայի (հրամանատար՝ Մովսես Սիլիկյան) կազմում էին 5-րդ (3 գումարտակի կազմով, հրամանատար՝ գնդապետ Պողոս-Բեկ Փիրումյան) և 6-րդ (12 վաշտ, հրամանատար՝ փոխգնդապետ Աբրահամ Դոլուխանյան) գնդերը, 2-րդ հեծյալ գունդը՝ 4 հեծելավաշտով (գնդապետ Զալինյան), պարտիզանական հետևակ գունդը՝ 8 վաշտով (գնդապետ Ալեքսեյ Պերեկրյոստով), պարտիզանական հեծյալ գունդը՝ 3 վաշտով (գնդապետ Կորոլկով), սահմանապահ գումարտակը (փոխգնդապետ Սիլին), 2-րդ դիվիզիայի շտաբի պարեկային վաշտը։ 1-ին դիվիզիայի 4-րդ գնդի մեկ գումարտակ կանգնած էր Դավալուում՝ որպես հարավային ուղղության պաշտպանական զորաջոկատ։

Հայկական հատուկ հավաքական ջոկատի ստորաբաժանումներից Երևանյան զորախմբի կազմում ընդգրկվել էին 3-րդ հատուկ բրիգադից Վանի 1-ին (գնդապետ Յուզբաշև) և 2-րդ (գնդապետ Չախմախչև) հետևակ գնդերը՝ 2-ական գումարտակով (տեղակայված էին Իգդիրի շրջանում), Մակվի գումարտակը, 2-րդ հատուկ հեծյալ՝ Զեյթունի գունդը (4 հեծելավաշտ, գնդապետ Սալիբեկյան), 2-րդ հատուկ բրիգադի զորամասերը՝ Խնուսի և Կարաքիլիսայի (գյուղաքաղաք հին Բայազետի գավառում) հետևակային գնդերը (գնդապետ Կազիմիրսկի), 1-ին հատուկ բրիգադից՝ Երզնկայի գունդը (6 վաշտ, հրամանատար՝ Կարապետ Հասան-Փաշայան), ինչպես նաև 1-ին հատուկ հեծյալ գունդը (հրամանատար՝ զորային ավագ Պավել Զոլոտարյով)[4] ։

Երևանյան զորախմբի կազմում կար հրետանային 5 մարտկոց՝ գնդապետ Քրիստափոր Արարատյանի ընդհանուր հրամանատարությամբ։ Զորախմբի կազմում ճակատամարտին մասնակցեցին նաև արևմտահայ ու արևելահայ կամավորականների մի քանի ջոկատներ (Թռուցիկ Հովսեփի, Մակեդոնի, Բուլանըխցի Մուրադի և ուրիշների

[4] Կարապետյան Մ., Հայկական ազգային բանակային կորպուսի ստեղծման պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1 (82), Երևան, 1994, էջ 6-12։

հրամանատարությամբ), եզդիների հեծյալ գումարտակը (հրամանատարներ՝ Ուսուբ բեկ և Ջանգիր աղա), մեծ թվով աշխարհազորայիններ։ Հայկական զորքերի ընդհանուր թիվը ճակատամարտի առաջին օրերին կազմում էր շուրջ 9000 - 10000 զինվոր ու սպա, իսկ ուժերի մի մասը Բաշ-Ապարանի ճակատ տեղափոխելուց հետո՝ շուրջ 6 000 - 6 500։ Հայերն իրենց տրամադրության տակ ունեին 28 հրանոթ, որոնցից 16-20-ն են օգտագործվել ռազմական գործություններում[5]։

4. Սարդարապատի ճակատամարտին նախորդած զորաշարժերը

Ալեքսանդրապոլի գրավման նախօրեին Ախուրյան գետի երկայնքով ձգվող ճակատում կանգնած հայկական ջոկատների հիմնական խնդիրներից էր Ալեքսանդրապոլից դեպի Երևան և դեպի Թիֆլիս տանող երկաթգծերն ու ճանապարհները պաշտպանելը։ Ալեքսանդրապոլի անկումից հետո թուրքական գերազանցող ուժերի առաջխաղացման պատճառով այդ ջոկատները ստիպված էին նահանջել՝ մի մասը դեպի Համամլու-Ղարաքիլիսա, մյուսները՝ դեպի Արարատյան դաշտ։ Մայիսի 19-ին թուրքական 36-րդ դիվիզիան, Ախուրյանի մերձակա Ղարաղուլա կիսակայարանը գրավելով, ռազմերթով շարժվեց Երևանի ուղղությամբ[6]։ 2-րդ հատուկ բրիգադի ստորաբաժանումների մի մասը՝ Խնուսի և Կարաքիլիսայի հետևակային գնդերից, ինչպես նաև 1-ին հատուկ բրիգադի մի մասը (Երզնկայի հետևակ գունդը և այլ զորամասեր) մայիսի 16-19-ը Ախուրյանի ձախ ափից՝ Անի և Արագած կայարաններից, երկաթգծի երկայնքով աստիճանաբար հետ քաշվեցին դեպի Սարդարապատ։ Նահանջի ընթացքում, դեռևս նախքան թուրքական հիմնական ուժերի հետ մարտի բռնվելը, նրանք թիկունքից ու թևերից կրակային հարվածներ էին ստանում 36-րդ դիվիզիայի առաջապահ քրդական հեծելազորի կողմից։ Ալեքսանդրապոլ-Երևան ճանապարհով հայկական այդ զորամասերի կազմակերպված նահանջը կարևոր դեր խաղաց Երևանյան զորախմբի համար ժամանակ շահելու և ուժերի վերախմբավորում կատարելու համար։ Դեռևս մայիսի 16-17-ին Երևանյան զորախմբի՝ Սարդարապատի շրջանում տեղակայված զորաջոկատների մի

[5] Սարդարապատ Բաշ-Ապարան Ղարաքիլիսա։ 1918 թ. մայիսյան հերոսամարտերը, Երևան էջ 174։
[6] Սարդարապատ Բաշ-Ապարան Ղարաքիլիսա։ 1918 թ. մայիսյան հերոսամարտերը, Երևան, էջ 170։

մասը շտապ ուղարկվեց Արաքս և Ղարաբուրուն կայարաններ՝ դեպի Արարատյան դաշտ արշավող թուրքերին դիմադրելու համար, իսկ որոշ ջոկատներ ուղարկվեցին Երևան՝ կամավորներով ու զինամթերքով համալրվելու և մարտերին պատրաստվելու համար։

Ստեղծված պայմաններում Հայկական կորպուսի հրամանատար Թովմաս Նազարբեկյանի և կորպուսի շտաբի պետ գնդապետ Եվգենի Վիշինսկու հրամանով կատարվեց հայկական ուժերի վերախմբավորում ու վերադասավորում։ Նպատակն էր թուրքերի հարձակումները կանգնեցնել առանձին շրջաններում՝ Ալեքսանդրապոլ-Սարդարապատ ուղղությամբ և Ղարաքիլիսայում։ Մայիսի 19-ին շտաբից ստացած հրամանի համաձայն[7] գեներալ Մովսես Սիլիկյանը որոշեց իր տրամադրության տակ եղած ուժերը կենտրոնացնել Էջմիածնի շրջանում և հակահարձակման միջոցով կանխել թուրքերի հարձակումը Երևանի վրա։ Մայիսի 20-ին հայկական առաջապահ ուժերը ստիպված թողեցին Արաքս և Ղարաբուրուն կայարանները, նահանջեցին նաև երկաթգծից հյուսիս ընկած նախալեռնային շրջաններից՝ Մաստարայից, Թալինից, Աշնակից՝ կենտրոնանալով Սարդարապատում։ 1-ին հատուկ բրիգադի նահանջող զորամասերը՝ Երզնկայի գունդը և Խնուսի գնդից կես վաշտ (Կարապետ Հասան-Փաշայանի ընդհանուր հրամանատարությամբ), մայիսի 20-ի երեկոյան Սարդարապատից տեղափոխվեցին ավելի խորք ու տեղակայվեցին Խզնաուզ գյուղում՝ Էջմիածնից հս.-արմ. մոտ 6 կմ։

Ալեքսանդրապոլ - Երևան ուղղությամբ թուրքական զորքերի արշավանքի հետևանքով Սուրմալուն պաշտպանող հայկական ջոկատների համար ստեղծվեց Երևանյան զորախմբի հիմնական ուժերից կտրվելու և շրջապատվելու վտանգ։ Մայիսի 18-ին հակառակորդը հարձակվեց Կողբի հայկական ուժերի վրա։ Սիլիկյանի հրամանով մարտով նահանջեցին դեպի Կարակալայի կամուրջ։ Մայիսի 19-ին թուրքական 4-րդ կորպուսի զորամասերը՝ հիմնականում 12-րդ հետևակային դիվիզիան, Բայազետի շրջանից ներխուժեցին Սուրմալու՝ այն գրավելուց հետո Արաքսը գետանցելու և Երևանյան զորախմբի թիկունք դուրս գալու նպատակով։ Իգդիրից հարավ ընկած լեռնանցքներում ու բարձունքներում որոշակի դիմադրությունից հետո հայկական ուժերը (Վանի 1-ին և 2-րդ գնդերը) ստիպված նահանջեցին Իգդիր, այնուհետև, Երևանյան զորախմբի

[7] Աֆանասյան Ս., Սարդարապատի հաղթանակը, Հայաստան, մայիս 1918, Երևան, 1991, էջ 31։

հրամանատարությունից այն թողնելու հրաման ստանալով, մայիսի 20-ին առանց մարտի նահանջեցին ու Մարգարայի կամրջով անցան Արաքսի ձախ ափ՝ իրենց հետևից այրելով այդ և Կարակալայի կամուրջները։ Այդպիսով Սուրմալուն գրաված թուրքական զորքերը Սարդարապատի ռազմաբեմից կտրված մնացին։ Հայկական կողմից կամուրջների մոտ տեղի կամավորների միջոցով ամուր պաշտպանություն կազմակերպվեց, որը ձախողեց ճակատամարտի օրերին գետանցելու և հայերին թիկունքից հարվածելու թուրքական փորձերը[8]։ Ռազմաճակատի թիկունքը հարավից ապահովելու՝ Դավալուի ուղղությամբ կամ Շարուրի կողմից Արաքսը գետանցելով թուրքական հարձակումը կանխելու համար Սիլիկյանի հրամանով այդ կողմում ծավալվեց 3-րդ հատուկ բրիգադի ստորաբաժանումների մի մասը, որի գլխավոր ուժը Վանի 4-րդ գունդն էր (բրիգադի հրամանատար՝ գնդապետ Տիգրան Բաղդասարյան)։

5. Սարդարապատի գրավումը թուրքերի կողմից. հայերի հակահարձակումը

Մայիսի 21-ին թուրքական 108-րդ հետևազորային գունդը հեծյալ և հրետանային ստորաբաժանումների հետ Արաքս կայարանի շրջանից շարունակեց հարձակումը։ Սարդարապատի ջոկատը, հրետանային պաշտպանական մարտեր վարելով, սկսեց նահանջել և երեկոյան՝ 17:00-ին մոտ, հետ քաշվեց դեպի Քյուրաքյանլու - Քյորփալու - Հայի Զեյվա գյուղերի բնագիծը։ Թուրքերն ընդհուպ մոտեցան Քյորփալուին (Էջմիածնից շուրջ 7 կմ արևմտ.)։ Երկաթգծի ուղղությամբ առաջ շարժվելով՝ այդ օրը երեկոյան թուրքերը գրավեցին Սարդարապատ կայարանը (այժմ՝ Արմավիր քաղաքի տարածքում) և շուրջ 2 կմ դեպի հարավ գտնվող համանուն գյուղը, ապա նաև Գեչրլու գյուղը։ Շարունակելով հարձակումը՝ թուրքական ուժերն օրվա վերջին գրավեցին նաև Վերին Կոլիբեկլու (այժմ՝ Ակնալիճ գյուղի տարածքում) բնակավայրը և երկաթգծի ուղղությամբ առաջացան մինչև Ղամըշլու կիսակայարան (այժմ՝ Զարթոնք գյուղի տարածքում)՝ Երևանից 20 կմ հեռավորության վրա։Երկաթգծի երկայնքով արշավող թուրքական ուժերի նպատակն էր առաջանալ դեպի Զանգիբասար։ Դրանով նրանք երկաթգծից հարավ գտնվող հայկական

[8] Սարդարապատ Բաշ-Ապարան Ղարաքիլիսա։ 1918 թ. մայիսյան հերոսամարտերը, Երևան էջ 172։

զորաջոկատներին, տեղի բնակչությանը և շուրջ 100 000 արևմտահայ գաղթականությանը կդնեին Երևանից կտրվելու և կոտորվելու սպառնալիքի տակ: Սակայն Ղամբշլուից արևելք՝ Արտաշար գյուղի մոտ տեղակայված կապիտան Խորեն Իգիթխանյանի հրետանային մարտկոցը կարողացավ հակառակորդին գամել տեղում[9]: Չնայած նահանջին՝ զգալիորեն ուժեղացվեց Արաքսի քանդված կամուրջների ձախափնյա պաշտպանությունը: Միաժամանակ Երևանից արագորեն ռազմաճակատ տեղափոխվեցին օրեր առաջ համալրման ուղարկված հայկական զորաջոկատները[26]:

Երևանյան զորախմբի հրամանատար Մովսես Սիլիկյանը իր շտաբի պետ գնդապետ Ա. Վեքիլյանի հետ մշակեց ակտիվ հակահարձակմամբ արշավող թուրքական ուժերին Սարդարապատից հետ շպրտելու մարտավարական ծրագիր: Մայիսի 21-ի երեկոյան Սարդարապատի ճակատում գործող բոլոր զորաջոկատներին տրվեց հաջորդ օրվա իրենց մարտական առաջադրանքը՝ ռազմական գործողությունները փոխհամաձայնեցված կատարելու հրահանգով: Սարդարապատի ճակատում կռվող հայկական զորքի կազմում էին 5-րդ և 6-րդ գնդերը, 2-րդ հատուկ բրիգադի Կարաքիլիսայի հետևակ գունդը (փոխգնդապետ Արեշյան), պարտիզանական հետևակ գունդը, եզդիական հեծյալ գումարտակը, արևմտահայ կամավորական ջոկատները, հրետանային 4 մարտկոցներ:

Մայիսի 21-ի լույս 22-ի գիշերը Մոլլաբայազետ գյուղի շրջանում հայ աշխարհազորայինները և Ջանգիր աղայի գլխավորությամբ եզդիական 300-հոգանոց հեծյալ ջոկատը փոխհրաձգության մեջ մտան թուրքական զորքի՝ տեղի մուսուլմանների զինված անկանոն խմբերի հետ՝ թույլ չտալով նրանց թևերից ու թիկունքից հարվածել հայկական զորամասերին: Այդ հրաձգությունը Դոլուխանյանին և Պերեկրյոստովին հնարավորություն ընձեռեց մարտական կարգի բերելու իրենց գնդերը, իսկ կապիտաններ Սերգո Աթանեսյանին և Վլադիմիր Սակկիլարիին՝ դասավորելու իրենց հրետանին:

Հայկական զորքի շրջադարձային հակահարվածը գլխավորեց Երևանյան զորախմբի փոխհրամանատար, Սարդարապատի ճակատում կռվող ուժերի հրամանատար գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանը: Մայիսի 22-ի վաղ առավոտյան նրա ընդհանուր հրամանատարությամբ հայկական ուժերն ամբողջ ճակատով հարձակման անցան

[9] Աֆանասյան Ս., Սարդարապատի հաղթանակը..., էջ 34-35:

Քյուրաքյանլու - Քյորփալու - Հայի Զեյվա - Ղուրդուղուլի գյուղերի բնագծերից։ Ճակատի կենտրոնում հարձակումն իրականացրեցին 5-րդ և 6-րդ գնդերը, որոնք հրետանային ու գնդացրային ստորաբաժանումների օգնությամբ կարողացան հուժկու գրոհով ոչնչացնել թուրքական առաջապահ զորքը Ղամըշլու կիսակայարանի շրջանում։ Մասնավորապես, Քյորփալու, Ակնա (Այղր) լճի մոտակայքից, Թափադիբի գյուղի այգիներից և Սարդարապատից հարավ գտնվող՝ պատմական Արգիշտիխինիլի բնակավայրի բլրի վրայից Խ. Իգիթխանյանի, Վ. Սակկիլարիի, Նիկոլայ Կլիչի և Ս. Աթանեսյանի հրետանային մարտկոցները, ինչպես նաև գնդի ու այլ զորամասերի գնդացրային ստորաբաժանումները միաժամանակյա դիպուկ կրակով կարողացան ճնշել հակառակորդի հրետանու կրակը և նոսրացնել հետևակի ու հեծելազորի շարքերը, որից հետո հայկական հետևակն աշխարհազորային ուժերի աջակցությամբ անցավ ամբողջ թափով հակահարձակման։ Թևերից ու թիկունքից հակառակորդին հարվածեցին Պերեկրյոստովի կամավորական գունդը, Իգդիրի, Զեյթունի և Խնուսի ջոկատները, 1-ին հատուկ հեծյալ գունդը (վերջինի կազմում իր հեծյալ դասակով ճակատամարտին մասնակցել է նաև հեծելազորի կրտսեր սպա (կորնետ) Հովհաննես Բաղրամյանը)։ Թուրքական ուժերը, ընդունելով ճակատային մարտը, փորձեցին ակտիվ դիմադրություն ցույց տալ, որը որոշ հատվածներում ուղեկցվեց նաև սվինամարտով։ Սակայն մեծ կորուստներ կրելուց հետո ստիպված էին փախչել։

Շարունակելով առաջխաղացումը՝ հայկական զորամասերն օրվա ընթացքում հետ գրավեցին Գեչրլուն, Մոլլաբայազետը, Սարդարապատ գյուղն ու կայարանը և դրանից աջ ընկած դաշտային շրջանը։ Հայկական զորքերի աջ թևում 5-րդ գնդի մի գումարտակ վաղ առավոտյան հարձակվեց Կոշ-Թալիշ ուղղությամբ և մինչև երեկո մղված մարտերով ազատագրեց Ուջան և Կոշ գյուղերը։ Օրվա մարտերում թուրքական առաջապահ ուժերը գլխովին ջախջախվեցին՝ տալով ավելի քան 500 սպանված ու վիրավոր։ Հայկական զորքերը, մարտերի արդյունքում հաղթանակ տանելով, առաջ շարժվեցին 15-20 կմ-ով։

Մայիսի 22-ին պարտություն կրելուց հետո, օգտվելով այն հանգամանքից, որ հայկական զորքը ելման դիրքերից չկտրվելու նկատառումով չշարունակեց կրնկակոխ հետապնդումը՝ թուրքական գլխավոր ուժերը նահանջեցին Արաքս կայարանի

ուղղությամբ՝ ամրանալով կայարանի մատույցներում և այդ ուղղությամբ երկաթգծից հարավ և հյուսիս գտնվող բարձունքներում։ Ճակատամարտի հետագա օրերին երկուստեք մարտավարական բավական մեծ նշանակություն ունեցան հատկապես Արաքս կայարանից հյուսիս գտնվող 449 (Թյուլքի-թափա) և 440 (Չիմնի Ղըռ) բարձունքները, որտեղ նույնպես այդ ժամանակ դիրքավորվեցին նահանջած թուրքական ստորաբաժանումները։

Մայիսի 23-ին Սարդարապատի գլխավոր ճակատում ակտիվ մարտական գործողություններ տեղի չունեցան, միայն ձախ թևում Իգդիրից նահանջած զորաջոկատը մարտի բռնվեց Զաֆարաբադի շրջանում։ Այդ մարտում հաղթանակից հետո Իգդիրի զորաջոկատը միավորվեց Սարդարապատի զորաջոկատի հետ Դանիել Բեկ-Փիրումյանի ընդհանուր հրամանատարության ներքո, իսկ Արաքսի կամուրջների պաշտպանությունը վստահվեց 2-րդ հատուկ հեծյալ՝ Զեյթունի գնդի ստորաբաժանումներին, որոնք որպես պահեստազոր տեղակայված էին Շահրիար գյուղում։ Ճակատի մյուս ուղղություններով կողմերը զբաղված էին հիմնականում հակառակորդի դիրքերի հետախուզությամբ և մարտակազմերը հետագա գործողություններին պատրաստելով։ Մայիսի 22-ին և 23-ին զորքերին աջակցության համար ճակատ այցելեցին մի խումբ հոգևորականներ՝ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի և Զավեն արքեպիսկոպոսի գլխավորությամբ։ Մայիսի 22-ի վճռական մարտից առաջ հանդիպելով 5-րդ գնդի զինվորներին և ոգևորիչ ճառ արտասանելով՝ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը Պողոս Բեկ-Փիրումյանի հրամանատարությամբ կռվող գունդը մկրտեց «Մահապարտներ» անունով[10]։

6. Ընդհանուր իրադրությունը ճակատամարտի առաջին օրերին

Մայիսի 22-ի մարտերից հետո զորախմբի հրամանատար Մովսես Սիլիկյանը իր տրամադրության տակ եղած զորաջոկատների մի մասը՝ 6-րդ գունդը, 2-րդ հեծյալ գունդը, պարտիզանական հեծյալ գունդը և այլ ստորաբաժանումներ շտապ տեղափոխեց Բաշ-Ապարանի ճակատ՝ կանխելու այդ ուղղությամբ Երևանի վրա արշավող թուրքական զորքերի առաջխաղացումը։ Սարդարապատի ճակատում հայերի առաջին հաղթանակը

[10] Աֆանասյան Ս., Սարդարապատի հաղթանակը..., էջ 43։

բեկումնային նշանակություն ունեցավ ոչ միայն զորքի մարտական տրամադրվածության բարձրացման ու հետագա հաղթանակների համար, այլև Երևանի նահանգի հայ բնակչության և արևմտահայ գաղթականների խուճապային տրամադրությունների հաղթահարման համար։ Մայիսի 24-ին գեներալ Մովսես Սիլիկյանը ճակատամարտին զինվորագրվելու կոչով դիմեց ժողովրդին.

Երևանից ու շրջակա գյուղերից բնակչությունը ջուր և սննդամթերք, անհրաժեշտ այլ իրեր էր ուղարկում ռազմաճակատում կռվողներին։

Սարդարապատի ճակատում առաջին պարտությունից հետո հաջողություն գրանցելու և առաջխաղացումը հեշտացնելու նպատակով թուրքական հրամանատարությունը նախաձեռնեց հայկական զորքերի թիկունքը թյուրքաբնակ գյուղերի խռովություններով թուլացնելու գործելակերպը։ Դեռևս հայերի հակահարձակման առաջին օրը՝ մայիսի 22-ին, նման խռովություն եղավ Դավալու - Ղամարլու շրջանում։ Այդ օրը, երբ անվտանգության նկատառումներով Դավալուի հայ բնակչությունը գնացքով տեղափոխվեց Ղամարլու,տեղափոխությունն ապահովող Վանի 4-րդ գունդը ճանապարհին առջևից և հետևից ենթարկվեց շրջակա թուրքական և քրդական գյուղերի հրոսակախմբերի (շուրջ 5000) զանգվածային հարձակմանը։ 5 ժամ տևած կռիվը հատկապես կատաղի էր Ավշար և Շիրազլու գյուղերի մատույցներում, որոնք գրավեց հայկական զորաջոկատը։ Սակայն օրվա վերջում գունդը կենտրոնացավ Յուվա գյուղում։ Հայկական կողմի կորուստները կազմեցին 37 սպանված և վիրավոր, թուրքերինը՝ 100-ից ավելի[11]։ Հետագա օրերին՝ մինչև Սարդարապատի ճակատամարտի ավարտը և հունիսի սկզբին Դիլիջանի ճակատ մեկնելը, Ղամարլուի շրջանը վերահսկող Վանի 4-րդ գունդը հուսալիորեն պաշտպանեց Երևանյան զորախմբի թիկունքը Շարուրի կողմից, ինչպես նաև ձախողեց թուրքական զորքերի՝ այդ շրջանում Արաքսի գետանցման փորձը։

[11] Սարդարապատ Բաշ-Ապարան Ղարաքիլիսա։ 1918 թ. մայիսյան հերոսամարտերը, Երևան էջ 176։

7. Մարտական հետագա գործողությունները

Մայիսի 24-ին թուրքական կողմը հարձակում ձեռնարկեց, բայց հայկական հրետանու դիպուկ կրակից զգալի կորուստներ կրելով՝ հետ շպրտվեց։ Կողմերի ելման դիրքերը մնացին անփոփոխ։ Պարտությունները և ծանր կորուստները թաքցնելու համար թուրքական հրամանատարությունը հնարեց Աղին կայարանում թուրքական զինվորական գնացքաշարի խորտակման կեղծ պատմություն և տարածեց մամուլի միջոցով[12]։ Մարտերից հետո Մ. Սիլիկյանի հրամանով կատարվեց հայկական ուժերի վերախմբավորում։ Կենտրոնական՝ Սարդարապատ-Արաքս կայարան ուղղությամբ դիրքավորվել էին հայկական գլխավոր հարվածային ուժերը՝ 5-րդ հրաձգային գնդի վաշտերը, ինչպես նաև 1-ին հատուկ հեծյալ գնդի մեկ հեծելավաշտ, երևանյան զորախմբի շտաբի պարեկային վաշտը։ Ձախ թևում՝ երկաթգծից հարավ, Սարդարապատ և Մոլլաբայազետ գյուղերի ուղղությամբ տեղակայված էին պարտիզանական հետևակ գունդը, 1-ին հատուկ հեծյալ գնդի մյուս ստորաբաժանումները, երկրորդ մարտկոցի չորս հրանոթ, Քյարիմարխ գյուղում՝ Իգդիրի զորաջոկատը (Վանի 1-ին և 2-րդ գնդերը), այնուհետև, 2-րդ հատուկ հեծյալ (Զեյթունի) գունդը, Կարաքիլիսայի գունդը, Մակեդոնի և Թռուցիկ Հովսեփի կամավորական ջոկատները՝ Արաքսի ափամերձ շրջանում։ Սարդարապատի ջոկատի աջ թևում՝ կենտրոնական ուղղության առաջապահ զորամասերից ավելի հետ քաշված, արագ զորաշարժերի համար նախատեսված ուժերն էին՝ Խզնաուզում տեղակայված Երզնկայի գունդը և Խնուսի ջոկատից կես վաշտ, և Կոշում տեղակայված Մակվի գումարտակն ու Կարաքիլիսայի գնդի մեկ վաշտ։Աջ թևի առաջապահ դիրքերում՝ Արագածի լանջերին, կապիտան Պանդուխտի պարտիզանական հեծելաջոկատն էր։ Սարդարապատի ջոկատի կազմում 5-րդ գնդի որոշ ստորաբաժանումներ առանձնացված էին որպես ընդհանուր պահեստազոր՝ Վերին Կուլիբեկլու (Ակնալիճ գյուղի շրջանում) և Թուրքի Զեյվա գյուղերում[13]։

Մայիսի 25-ին 5-րդ գնդի առաջապահ ստորաբաժանումները հրետանային 4 մարտկոցների և կապիտան Տաճատ Հովակիմյանի գնդացրային ջոկատի աջակցությամբ

[12] Նույն տեղում, էջ 177։

[13] Սարդարապատ Բաշ-Ապարան Ղարաքիլիսա։ 1918 թ. մայիսյան հերոսամարտերը, էջ 177։

գրոհեցին 440-րդ և 449-րդ բարձունքները։ Սակայն հայկական ուժերը հանդիպեցին թուրքերի համառ դիմադրությանը և, կորուստներ տալով, նահանջեցին ելման դիրքեր։ Այդ ընթացքում հայերի ձախ զորասյունը Սարդարապատ գյուղից երկաթգծի երկայնքով գրոհեց դեպի Արաքս կայարան և մոտ 3 կմ հեռավորությամբ կանգ առավ՝ հանդիպելով թուրքերի առաջապահ զորամասերի համառ դիմադրությանը։ Պարզվեց, որ Արաքս կայարանում տեղակայված է հակառակորդի բավական ուժեղ խմբավորում, այնինչ հայկական հետախուզությունը զեկուցել էր, թե թուրքերի հիմնական ուժերը կանգնած են Ղարաբուրուն կայարանում և Ներքին Թալինում։

Մայիսի 26-ի վաղ առավոտյան թիկունքից առաջ քաշվեցին 5-րդ գնդի պահեստային վաշտերը։ Զորախմբի հրամանատար Մովսես Սիլիկյանի ռազմագործողությունների ծրագրով նախատեսվում էր աջ, կենտրոնական և ձախ զորասյուների միաժամանակյա հարձակումով գրավել Արաքս և Ղարաբուրուն կայարանները և երկաթգծից աջ ու ձախ՝ Արագածի լանջերից մինչև Ախուրյանի ափեր ընկած ամբողջ տարածքով գրոհելով՝ հակառակորդին հետ մղել դեպի Ալեքսանդրապոլ[14]։

Նույն օրն առավոտյան 5-րդ գնդի առաջին գումարտակն իր հրամանատարի՝ շտաբս-կապիտան Վարդան Ջաղինյանի ինքնակամ հրամանով անհաջող հարձակում ձեռնարկեց Չիմնի Ղըռ (440) բարձունքի վրա և, տալով մեծ կորուստներ՝ այդ թվում նաև Ջաղինյանը, հետ քաշվեց դեպի ելման դիրքեր։ Ճակատի մյուս հատվածներում ակտիվ գործողություններ տեղի չունեցան, միայն գնդապետ Ա. Պերեկրյոստովի պարտիզանական գունդը գնդացիրներով հարվածեց Արաքս կայարանում տեղակայված թուրքական ուժերին[15]։

Մայիսի 25-26-ի ճակատային անհաջող գրոհներից հետո Մովսես Սիլիկյանը նոր ծրագիր մշակեց. Խզնաուզում և Կոշում տեղակայված զորաջոկատների արագ զորաշարժ կատարել և թուրքերի գրված բարձունքներին հարվածներով աջակցել ճակատային գրոհներին։ Ճակատի կենտրոնական և ձախ թևերն ուժեղացվեցին թիկունքից առաջ քաշված՝ Իգդիրի գնդի և պարտիզանական գնդի պահեստային ուժերով[16]։

---

[14] Նույն տեղում, էջ 178-179։
[15] Նույն տեղում, էջ 178-179։
[16] Նույն տեղում, 178-179։

Մայիսի 27-ի լուսաբացին Խզնաուզի ջոկատը սկսեց զորաշարժ կատարել և արդեն կեսօրին հաջողությամբ շրջանցեց թուրքական առաջապահ ուժերի ձախ թևը։ Նույն ժամանակ Խզնաուզի ջոկատից աջ հարձակվող Կոշի ջոկատը, չկարողանալով հաղթահարել թուրքերի դիմադրությունը Ներքին Կալակուտ (Պարտիզակ գյուղից արևմուտք) գյուղի մոտ՝ ստիպված կանգ առավ. որպես օգնություն՝ Երզնկայի գնդի հրամանատար գնդապետ Կ. Հասան-Փաշայանն ուղարկեց երկու վաշտ։

Սարդարապատի գլխավոր ճակատում նույն օրն առավոտյան 9-ին հայկական հրետանին շուրջ կես ժամ հուժկու համազարկեր հասցրեց հակառակորդի դիրքերին՝ հատկապես 440 և 449 բարձունքներում՝ ճնշելով նրա հրետանու և գնդացրային ջոկատների կրակը։ Կենտրոնական ուղղության ուժերն այնուհետև անցան դիրքային հարձակման՝ վճռական գրոհի համար սպասելով աջից զորաշարժ կատարող ուժերի թիկունքից հարձակմանը։ Գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանը, զորքին ոգևորելու համար զինվորական համազգեստի կարմիր աստառը դուրս շրջած, անձամբ ղեկավարեց մարտը։ Խզնաուզի ջոկատը, թուրքական ձախ թևը կեսօրին շրջանցելուց հետո, կտրուկ թեքվեց դեպի հարավ՝ դուրս գալով 440 և 449 բարձունքների թիկունքը։ Մարտավարական այս փայլուն զորաշարժից հետո հարձակման անցան Սարդարապատի ջոկատի կենտրոնական ուղղության հիմնական ուժերը և Երզնկայի գնդի աջակցությամբ ժամը 14-ին մոտ վերջապես կարողացան գրավել այդ և հարակից այլ բարձունքները։ Նույն օրը Պերեկրյոստովի ձախ զորասյունն էլ, երկաթգծի երկայնքով հարձակվելով, գրավեց Արաքս կայարանը, իսկ երեկոյան նաև Մաստարա կիսակայարանը (այժմ՝ գ. Դալարիկ), որտեղ էլ կանգ առավ։ Իսկ Պանդուխտի հեծյալ ջոկատը, Ներքին Կալակուտից հարավ հարձակման անցնելով, Կոշի ջոկատի և Խզնաուզի՝ օգնության հասած վաշտերի հետ միասին հաղթահարեց թուրքական ուժերի դիմադրությունը, ապա խորը ճեղքում իրականացրեց դեպի հյուսիս-արևմուտք։ Մայիսի 27-28-ին, ճնշելով հակառակորդի մանր ջոկատները, Պանդուխտի ջոկատը սրընթաց ռազմարշավով՝ Թալինի, Գյոզլուի և Ղրմըզլուի վրայով հասավ մինչև Սոգյութլու, որտեղ նրան միացավ տեղի 1000-հոգանոց ջոկատը։ Հակառակորդից գրավվեց մեկ հրանոթ, մեծ թվով գերիներ վերցվեցին[17]։

[17] Նույն տեղում, էջ 181։

Այսպիսով մայիսի 27-ի վճռական մարտերի ընթացքում թուրքերը կատարյալ պարտություն կրեցին՝ խուճապահար նահանջելով դեպի Ղարաբուրուն կայարան-Ղարաբուրուն լեռ գիծը: Ճակատամարտը շահած, սակայն հանգստի կարիք ունեցող Սարդարապատի ջոկատին հրամայվեց կանգ առնել և ամրանալ Մաստարա կիսակայարանի բարձունքներում: Այդ օրվա ընթացքում Մարգարայի մոտ հետ մղվեց նաև Արաքսը գետանցել փորձող քրդական 100-հոգանոց մի հրոսակախումբ:

Մայիսի 27-28-ի գիշերը հայկական ուժերն առաջանալով հասան Ղարաբուրուն կայարան-Կարմրասար լեռ գծին: Իսկ մայիսի 28-ի ցերեկը Ղարաբուրուն-Աշնակ բնագծում տեղի ունեցած կարճատև մարտից հետո, դարձյալ չդիմանալով հայկական կողմի գրոհներին, թուրքերը սկսեցին նահանջել դեպի Արագած կայարան - Ղրմըզլու - Վերին Աղջաղալա, բայց այդ բնագծում ևս չդիմանալով՝ շուտով հետ մղվեցին դեպի ավելի հյուսիս: Այդ օրվա մարտերի արդյունքում հայկական կողմը գրավեց Ղարաբուրուն և Արագած կայարանները, ինչպես նաև Ներքին ու Վերին Թալինները և Մաստարան, իսկ հայկական հետախուզական ջոկատները հասան մինչև Անի կայարան՝ պարզելով, որ մինչև Անի և Աղին կայարաններ թուրքական ուժեր չկան, բոլորը նահանջել են: Սակայն հաջորդ օրը՝ մայիսի 29-ին, զգալի համալրում ստանալով, թուրքերը հակահարձակման անցան Արագած կայարանի վրա: Հայկական առաջապահ ուժերը, թուրքական հրետանու ճնշման, ինչպես նաև թուրքական հեծելազորի կողմից ձախ թևի շրջանցման վտանգի տակ ստիպված նահանջեցին և ամրացան Ղարաբուրուն կայարանում: Մինչդեռ ռազմաճակատի աջ թևում հայկական ուժերն ամբողջ օրը ծանր մարտեր մղեցին Շիրվանջուղ գյուղի մոտ: Հենց այդ օրը՝ մայիսի 29-ին, երևանյան զորախմբի հրամանատար գեներալ Մովսես Սիլիկյանը երկրորդ անգամ կոչով դիմեց զորքին ու ժողովրդին՝ դեպի Ալեքսանդրապոլ հաղթական մարտերը շարունակելու վերաբերյալ: Սակայն Բաթումում հայկական պատվիրակության կողմից թուրքական եռօրյա ժամկետով (մայիսի 26-29) վերջնագրի ընդունման կապակցությամբ նույն օրը զինադադար հաստատվեց: Գեներալ Թովմաս Նազարբեկյանի հրամանով հայկական բոլոր զորքերի հարձակումները դադարեցին: Դա ազդարարեց Սարդարապատի ճակատամարտի ավարտը: Զինադադարի և հարձակման դադարեցման մասին լուրը խիստ դժգոհությամբ ընդունվեց ինչպես Սարդարապատի ճակատի

զինվորների, այնպես էլ հրամանատարական կազմի շրջանում[18]։ Հայկական հրետանու հրամանատար գնդապետ Քրիստափոր Արարատյանի հաղորդմամբ, թեև զինադադարի հաստատման պահին երևանյան զորախմբի դրությունը մեծապես նպաստավոր էր, սակայն Ղարաքիլիսայի ճակատում հայերի կրած լիակատար անհաջողությունը ստիպեց դադարեցնել հարձակումը, քանի որ Երևանը բաց կմնար հյուսիս-արևելքից հակառակորդի ներխուժման առջև։ Որոշ տեսակետների համաձայն՝ Սարդարապատի ճակատում հարձակման դադարեցումը պայմանավորված էր նաև հայկական կողմի զինապահեստների գրեթե դատարկ լինելու և մյուս կողմից, թուրքական ուժերի՝ թարմ համալրումներ ստանալուց հետո հակահարձակման անցնելու վտանգով։

Բաթումում զինադադարի հաստատումից հետո Սարդարապատի ճակատում որոշ հատվածներում մարտական գործողությունները շարունակվեցին, սակայն էական փոփոխություններ տեղի չունեցան։ Բաթումի հաշտության պայմանագրի կնքումից հետո՝ հունիսի 14-ին, հայկական բոլոր ուժերը զբաղեցրած դիրքերից հետ քաշվեցին պայմանագրով նախատեսված սահմանագիծ։ Սարդարապատի ճակատամարտում թուրքական կողմի կորուստները կազմեցին շուրջ 3 500 սպանված և վիրավոր, մինչդեռ հայերի կորուստներն անհամեմատ ավելի պակաս էին, թեև հստակ տվյալներ չկան։

Սարդարապատի 9-օրյա ճակատամարտն ավարտվեց հայերի լիակատար հաղթանակով, որի արդյունքում հակառակորդը ջախջախվեց ու հետ շպրտվեց 50-65 կմ, վերացվեց Երևանին սպառնացող անմիջական վտանգը։ Հաղթանակը վճռական դեր խաղաց Արևելյան Հայաստանի դեմ թուրքական զորքերի արշավանքի մասնակի ձախողման և, մասնավորապես մյուս ճակատներում՝ Բաշ-Ապարանում հաղթական հակահարվածի և Ղարաքիլիսայում հերոսական պաշտպանության ապահովման գործում։ Սարդարապատի հերոսամարտը տեղի բնակչությանն ու արևմտահայ գաղթականներին փրկեց անխուսափելի ջարդերից։ Կազմակերպչական մեծ ջանքերի գնով տարած հաղթանակը նպաստեց նաև Երևանում գործող քաղաքական ու հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև տեղի ղեկավար մարմինների ու առաջատար

[18] Աֆանասյան Ս., Սարդարապատի հաղթանակը..., էջ 55։

գործիչների դերի ամրապնդմանը. փաստացի հիմք դրվեց նորահռչակ Հայաստանի Հանրապետության կայացման համար:

8. **Բաշ Ապարանի ճակատամարտը**

Մայիսի 23-ից Սիլիկյանն իր մարտակազմի մի ջոկատ ուղարկվեց Բաշ-Ապարանի ճակատ՝ Դրոյի գլխավորությամբ: Սարդարապատում մնացին Պողոս Բեկ-Փիրումյանի՝ կամավորներից կազմված 5-րդ մահապարտների գունդը, 2 հեծյալ գունդ, Թռուցիկ Հովսեփի և Պանդուխտի (Միքայել Սեյրան) հեծյալները (1000 ձիավոր), աշխարհազորայինների նորակազմ վաշտերը (ավելի քան 1000 կռվող) և այլ զորամասեր:

Մայիսի 20-ին, գրավելով Համամլուն (այժմ՝ Սպիտակ), թուրքական 39-րդ դիվիզիան (9-10 հազար զինվոր) շարժվեց դեպի Բաշ Ապարան՝ Աշտարակ-Եղվարդ-Կոտայք գիծ դուրս գալու և Քանաքեռի գրավումով Երևանը շրջափակելու նպատակով:

Մայիսի 24-ին Դրոյի զորաջոկատը (շուրջ 5 հազար մարդ) մտավ Ալի Քուչակ՝ Էսադ փաշայի հրամանատարությամբ դեպի Բաշ Ապարան գնացող թուրքերին դիմակայելու նպատակով գավառապետ Սեթոյի (Սեդրակ Ջալալյան, 1884-1959) հավաքագրած աշխարհազորին (շուրջ 9 000 մարդ և 3 000 դրսեկ ու տեղացի քրդեր) օգնելու համար: Մայիսի 26-ին թուրք, զորամասերն անցան ընդհանուր հարձակման: Կատաղի մարտերը շարունակվել են մինչև մայիսի 29-ը: Այդ օրը Բաշ Ապարանի ճակատում ջախջախվել է հակառակորդի 2 գունդ և ոչնչացվել ծանր հրետանին: Թշնամին, մարտադաշտում թողնելով 200-ից ավելի սպանված և մեծաքանակ ռազմավար, նահանջեց: Դրոյի զորքի կազմում թուրքերի դեմ կռվել է եզդիների 1500-հոգանոց հեծյալ ջոկատը՝ Ջհանգիր աղայի գլխավորությամբ: Ճակատամարտում զոհվել է հայտնի հարյուրապետ Զեմլյակը (Հարություն Նանամյան):

9. Ղարաքիլիսայի ճակատամարտը

Թուրք-հայկական պատերազմի վճռական տեղամասերից էր նաև Ղարաքիլիսայի ճակատը։ Ալեքսանդրապոլի անկումից հետո Ղարաքիլիսայի ուղղությամբ շարժվող թուրք. զորամասը մայիսի 20-ին գրավեց Ջաջուռը, Աղբուլաղը (Լուսաղբյուր), Ղալթաղչին (Հարթագյուղ), մայիսի 21- ին՝ Վորոնցովկան (Տաշիր)։ Մայիսի 22-ին Հայկական կորպուսի հրամանատարը (գեներալ Թովմաս Նազարբեկյան) և սպայակույտը տեղափոխվեցին Դիլիջան։ Ջալալօղլիի (Ստեփանավան) մոտ մայիսի 21-22-ի մարտերից հետո Անդրանիկի ջոկատը կենտրոնացավ Դսեղ գյուղում և հետագա գործողություններին չի մասնակցել։ Գեներալ Նազարբեկյանի հրամանով կորպուսի 1-ին դիվիզիան (հրամանատար՝ գնդապետ Աթաբեկ Բեյ-Մամիկոնյան) և 2 լեռնային մարտկոցներ փոխադրվել են Շահալի (Վահագնի), մնացածները կենտրոնացել են Դիլիջանի մոտ։ Հայկական զորքն ունեցել է 6 հազար զինվոր, 10 հրանոթ և մոտ 20 գնդացիր, թուրքական, զորքը (հրամանատար՝ Ջավադ բեյ)՝ 10 հազար զինվոր, 70 հրանոթ և 40 գնդացիր։ Ճակատամարտին մասնակցել է նաև Գարեգին Նժդեհը՝ իր հեծյալ գնդով (100 հեծյալ)։ Հայկական ուժերը հիմնական հարվածները թուրքերի գերակշիռ ուժերին հասցրել են Ղշլաղ (Դարպաս) գյուղի մոտ, Բզովդալի (Բազում) մատույցներում և Մայմեխ լեռան լանջերին։ Մարտերում աչքի ընկան գնդապետ Նիկոլայ Ղորղանյանի (Կորզանով) զորամասը, հերոսաբար զոհված շտաբս-կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանի հրետանավորները և ուրիշներ։ Հայերը կրեցին զգալի կորուստներ (սպանված, վիրավոր և գերի)։ Մեծ էին նաև թուրքերի կորուստները, սակայն համալրում ստանալով՝ նրանք անցան հակահարձակման և մայիսի 30-ին ներխուժել Ղարաքիլիսա։ Հայկական ուժերը հարկադրված նահանջեցին Դիլիջան։ Ղարաքիլիսայում և շրջակա գյուղերում թուրք ջարդարարները կոտորել են հայ բնակչությանը (շուրջ 5 հազար մարդ), ավերել բնակավայրերը։ Ղարաքիլիսայի ճակատամարտում մեծ կորուստներ պատճառելով թշնամուն՝ կասեցվել է նրա գերակշիռ զորքի առաջխաղացումը դեպի Դիլիջան և Թիֆլիս։ Սարդարապատում աչքի են ընկել նաև հեծելազորային դասակի հրամանատար Հովհաննես Բաղրամյանը, գնդապետ Դոլուխանյանը, գրող Ակսել Բակունցը, լեզվաբան Գրիգոր Ղափանցյանը, ռուս զինվորականներ Վասիլի

Պերեկրեստովը, Սիլինը, հույն սակելարին, բազմաթիվ հոգևորականներ՝ Գարեգին եպիսկոպոս. Հովսեփյանի գլխավորությամբ, և ուրիշներ։ Մայիսյան հերոսամարտերը ձախողել են հայերին վերջնականապես բնաջնջելու երիտթուրքերի ծրագիրը։ Այդ մարտերի շնորհիվ Արևելյան Հայաստանի մի մասում վերականգնվել է հայկական պետականությունը. 1918 թ.-ի մայիսի 28-ին հռչակվել է Հայաստանի առաջին հանրապետությունը, դրվել է ամբողջական հայրենիքի վերականգնման ճանապարհի սկիզբը։

Գեներալ Թովնաս Նազարբեկյան Գեներալ Քրիստափոր Արարատյան

10. Ցանկ օգտագործված գրականության

1. Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. հատոր 1, Երևան, 2005։
2. Ասրյան Ա., Արամ Մանուկյանի գործունեությունը Սարդարապատի հերոսամարտի օրերին // Կանթեղ. — հատ. 2. 2017, էջ 164-172
3. Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա: 1918 թ. մայիսյան հերոսամարտերը, Երևան 1998:
4. Կարապետյան Մ., Հայկական ազգային բանակային կորպուսի ստեղծման պատմությունից, 1 (82), «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան 1994, էջ 6-12։
5. Աֆանասյան Ս.,, Սարդարապատի հաղթանակը, Հայաստան, մայիս 1918, Երևան 1991։

«ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՐԿԱ՝ ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԶԻՆՎՈՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ, ԾԱՎԱԼՈՒՆ ԵՎ ԵՐԹԱՅԻՆ ՇԱՐՔԵՐ: ՇԱՐՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ:

ԴՊՐՈՑ՝ «ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՌՈՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….. . 3

Գլուխ 1 Շարային պատրաստության դերը զինվորի կյանքունմ ,ծավալուն և երթային շարք……. .6

Գլուխ 2 Շարքի կառավառում……...……...…12

Եզրակացություն……..……..……20

Օգտագործված գրականության ցանկ……....21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լինելով մարտական պատրաստության ինքնուրույն առարկա՝ շարային պատրաստությունն օրգանապես կապված է մյուս առարկաներին և զգալիորեն նպաստում է ժամանակակից մարտում անձնակազմի անհրաժեշտ գիտելիքների ունակությունների, հմտությունների ձեռքբերմանը, կայուն հոգեբանության զարգացմանը: Սպաների, ենթասպաների ու սերժանտների շարային վարժվածության մակարդակը վճռորոշ նշանակություն ունի շարային պատրաստության բնագավառում հաջողությունների հասնելու համար, «Շարային կանոնադրությամբ» նախատեսված վարժաձևերն ու գործողությունները օրինակելի կատարելու, ենթականերին մեթոդապես ճիշտ ուսուցանելու գործում: Հայտնի է, որ մարդկային ճանաչողության սահմանները հարաբերական են, ուստի անհրաժեշտ է հասնել այն բանին, որ ենթակաները չբարդույթավորվեն, չամաչեն այսօրվա չիմացությունից (չկարողանանալուց) :

Շարային պատրաստությունը մարտական պատրաստության խիստ կարևոր է: Այն անցկացվում է ՀՀ ԶՈՒ շարային կանոնադրության դրույթների ու կանոնների համապատասխան, կոփում է զինվորին, նրա մեջ դաստիարակում դիտողունակություն, ուշադրություն, կատարողականություն և համախմբվածություն:

Շարային կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ անխզելիորեն կապված է մարտական պատրաստության բոլոր առարկաների հետ: Վերջիններիս ուսուցումն առանց շարային ունակությունների ու հմտությունների հնարավոր չէ:

Շարային պատրաստության պարապմունքներն անցկանցնելիս պետք է ուշադրություն դարձնել հրամանների ճիշտ ու հստակ արտասանության վրա և հետևել, որ կարողանան պահպանել հրամանների արտասանության կանոնադրական պահանջները:Այդ գործողությունները միայն տեսականորեն բացատրելը բավարար լինել չի կարող: Անհրաժեշտ է կատարել վարժությունը սկզբում դանդաղ, ապա նորմալ տեմպով:

Շարային կեցվածքը զինծառայության ամենակարևոր տարրերից մեկն է: Դա զինծառայողների կամ հրամանատարների փոխադարձ հարգանքն է ազգային խորհրդանիշերի և բարձրաստիճան զինծառայողների նկատմամբ: Շարային կեցվածքի ընդունումը զինվորի մեջ դաստիարակում է կուռ կարգապահություն, ուշադրություն, զգոնություն: Կատարողական և այլ շարային ստուգատեսը անցկացվում է զինծառայողների միայնակ շարային մարզվածության և ստորաբաժանումների շարային ներդաշնակման աստիճանը որոշելու նպատակով:





Շարային ստուգատեսի ժամանակ նաև ստուգվում են զինծառայողների արտաքին տեսքը, հանդերձանքի մեջ սպառազինության և ռազմական տեխնիկայի առկայությունը և վիճակը: Շարային ստուգատես անցկացվում է ուղղակի պետերի կամ տեսչական ստուգումները ղեկավարելու համար նշանակված անձանց կողմից: Շարային ստուգատեսն անցկացնող անձանց թույլատրվում է սահմանել ստուգատեսի անցկացման կարգը՝ ելնելով դրա նպատակից, խնդիրներից և մարտական պատրաստության ծրագրի կատարումից:

Յուրաքանչյուր շարային ստուգատես ավարտվում է ստորաբաժանման զորամասի հանդիսավոր երթով, իսկ մարտական դրոշը տանելուց հետո՝ շարային երգի կատարմամբ: Ստուգատեսը անցկացնող պետը ստորաբաժանման զորամասի պետին նախօրեին հայտնում է ստուգատեսի անցկացման ժամանակը, տեղը, շարվելու կարգը,

համազգեստի տեսակը, ստուգատեսին դուրս բերվող սպառազինությունն ու ռազմական տեխնիկան:

Շարք: Շարքի տեսակները, նրա բաղկացուցիչ մասերը:

1) Շարք -ծառայողների, ստորաբաժանումների՝ կանոնադրությամբ սահմանված դասավորությունը հետիոտն ու մեքենաներով՝ համատեղ գործողությունների համար:

2) Տողան -շարք, որտեղ ծառայողները տեղավորված են մի գծի վրա, կողք կողքի՝ սահմանված տարածությամբ:

3) Մեքենաների գիծ-շարք, որտեղ մեքենաները դասավորված են կողք կողքի՝ մի գծի վրա:

4) Թև -շարքի աջ (ձախ) վերջավորությունը: Շարքի դարձումների դեպքում թևերի անվանումները չեն փոխվում.

5) Ճակատ -շարքի այն կողմը, որին ծառայողները դարձված են դեմքով (մեքենաները՝ ճակատամասով):

6) Շարքի թիկունքային կողմ -ճակատի հակադիր կողմն է:

7) Տարածություն (ինտերվալ) -ծառայողների (մեքենաների), ստորաբաժանումների միջև ճակատային գծով եղած տարածությունն է:

8) Հեռավորություն (դիստանցիա) -ծառայողների (մեքենաների), ստորաբաժանումների միջև դեպի խորքն ընկած հեռավորությունն է:

9) Շարքի լայնություն -թևերի միջև եղած հեռավորությունն է:

10) Շարքի խորություն -առաջին տողանի (առաջին շարքում կանգնած ծառայողի) և վերջին տողանի (վերջին շարքում կանգնած ծառայողի) միջև եղած հեռավորությունը, իսկ մեքենաներով գործելու դեպքում՝ մեքենաների առաջին գծի (առջևում կանգնած մեքենայի) և մեքենաների վերջին գծի (հետևում կանգնած մեքենայի) միջև եղած հեռավորությունն է:

11) Միատողան շարք -շարքի այն տեսակն է, որտեղ ծառայողները տեղավորված են սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով:

12) Երկտողան շարք -շարքի այն տեսակն է, որտեղ տողաններից մեկում կանգնած ծառայողները մեկ քայլ հեռավորությամբ դասավորված են մյուս տողանի ծառայողների թիկունքում՝ առաջ մեկնած ձեռքի ափը դնելով դիմացը կանգնած ծառայողի ուսին և նայելով առջևի կանգնածի ծոծրակին: Տողանները կոչվում են *առաջին և երկրորդ*: Դարձումների դեպքում տողանների անվանումները չեն փոխվում:

13) Կարգը երկտողան շարքում կանգնած երկու ծառայողներն են՝ մեկը մյուսի թիկունքում: Եթե առաջին տողանի ծառայողի թիկունքում (երկրորդ տողանում) ծառայող չկա, ապա այդպիսի կարգը կոչվում է ոչ լրիվ: Երկտողան շարքի հետդարձի ժամանակ ոչ լրիվ կարգի ծառայողն անցնում է առաջին տողան:

14) Միատողան ու երկտողան շարքերը կարող են լինել խիտ և նոսր: Խիտ շարքում ծառայողները տողաններում տեղավորված են ճակատով, կողք կողքի՝ մեկը մյուսի արմունկից ձեռքի ափի լայնության վրա: Նոսր շարքում ծառայողները տողաններում տեղավորված են ճակատով՝ մեկը մյուսից մեկ քայլ կամ հրամանատարի (պետի) նշած հեռավորության վրա.

15) Շարասյունը շարք է, որտեղ ծառայողները տեղավորված են մեկը մյուսի թիկունքում՝ ծոծրակի ուղղությամբ, իսկ ստորաբաժանումները (մեքենաները)՝ իրար հետև՝ կանոնադրությամբ կամ հրամանատարի (պետի) կողմից սահմանված հեռավորության վրա: Շարասյունները կարող են լինել միաշարասյուն, երկշարասյուն,

եռաշարասյուն և ավելի: Շարասյուները կիրառվում են ստորաբաժանումները երթային կամ ծավալուն շարքով շարելու համար:

16) Ծավալուն շարքում ստորաբաժանումները շարված են ճակատով մի գծի վրա՝ միատողան կամ երկտողան շարքով (մեքենաների գծով), կամ շարասյուների գծով՝ կանոնադրությամբ կամ հրամանատարի (պետի) կողմից սահմանված հեռավորության վրա: Ծավալուն շարքը կիրառվում է ստուգումների, հաշվարկների, ստուգատեսների, շքերթների (զորահանդեսների) ժամանակ և այլ անհրաժեշտ դեպքերում:

17) Երթային շարքում ստորաբաժանումը շարված է շարասյունով կամ ստորաբաժանումները՝ շարասյուներով, մեկը մյուսի հետևում՝ կանոնադրությամբ կամ հրամանատարի (պետի) կողմից սահմանված հեռավորության վրա: Երթային շարքը կիրառվում է ստորաբաժանումների հանդիսավոր երթի, երգով անցնելու, ինչպես նաև այլ անհրաժեշտ դեպքերում:

18) Ուղղապահը այն ծառայողն է (ստորաբաժանում, մեքենա), որը շարժվում է շարասյան առջևից՝ նշված ուղղությամբ: Ուղղապահի հետևից իրենց շարժումը համաձայնեցնում են մյուս ծառայողները (ստորաբաժանումները, մեքենաները):

19) Վերջապահը այն ծառայողն է (ստորաբաժանում, մեքենա), որը շարժվում է շարասյան վերջում:

Գլուխ 1
Շարային պատրաստության դերը զինվորի կյանքում, ծավալուն և երթային շարքեր



Շարային կանոնադրությունը հանդիսանում է զինծառայողների կարգապահության ամրապնդմանն ուղղված նորմատիվ-իրավական փաստաթուղթ:
Շարային կանոնադրությունը սահմանում է՝

1. շարքի տեսակները, նրա բաղկացուցիչ մասերը, շարային վարժաձևերն ու շարժումները զենքով և առանց զենքի,
2. զինծառողների պարտականությունները շարվելուց առաջ և հետո,
3. զինվորական ողջույնի նշանակությունն ու կատարման կարգը,
4. զորամասերի ու ստորաբաժանումների շարքերը հետիոտն կարգով ու մեքենաներով,
5. պետին (հրամանատարին) մոտենալը և նրանից հեռանալը,
6. շարային ստուգատեսի անցկացման կարգը:

Շարային կանոնադրության համապատասխան ՀՀ զինված ուժերում կազմակերպվում ու անցկացվում է շարային պատրաստությունը: Շարային պատրաստությունը հանդիսանում է մարտական պատրաստության բաղկացուցիչ մաս և ներազդում է զորքերի առօրյա և ընդհանուր գործունեության վրա՝ կոփում է զինծառայողներին, կատարելագործում է նրանց շարային կեցվածքը, զարգացնում է դիտողականությունը, որոնք նպաստում են կարգապահության ամրապնդմանը:

Շարային պատրաստության առարկայի շրջանակներում զինծառայողները սովորում են ինչպես ճիշտ ու ներդաշնակ գործել ոչ միայն շարքում, այլև մարտական գործողությունների ժամանակ: Առանց շարային պատրաստության ճիշտ ուսուցման հնարավոր չէ ժամանակակից մարտում հասնել հստակ գործողությունների:

Շարային վարժվածությունը ամրապնդում է զինծառայողների կարգապահությունը, օգնում տիրապետելու տարբեր վարժաձևերի ու գործողությունների, ինչպես նաև ձեռք բերելու այնպիսի հմտություններ, որոնք անրաժեշտ են մարտավարական, կրակային, մասնագիտական պատրաստության և այլ առարկաների պարապմունքների համար:

ԾԱՎԱԼՈՒՆ ՇԱՐՔ -Ծավալուն շարքը կարող է լինել միատողան կամ երկտողան: Միատողան կամ երկտողան շարվելու հրաման տալիս տրվում է «Շարվի՛ր» հրամանը: Հրամանատարը հրաման տալիս, ընդունելով շարային կեցվածք ,կանգնում է դեմքով դեպի շարքի ճակատ, ջոկը շարվում է հաստիքների համաձայն՝ հրամանատարից ձախ, ինչպես ցույց է տրված:

Շարքը տեղում հավասարեցնելու դեպքում տրվում է «Հավասա՛ր» հրամանով: Բոլորը, բացի աջթևայինից, գլուխները շրջում են աջ, աջ ականջի դիրքը՝ ձախից բարձր, կզակը՝ վեր և հավասարվում են, որ յուրաքանչյուր զինծառայող տեսնի չորրորդի կուրծքը՝ հաշվարկը կատարելով իրենից սկսած: «Ձախ հավասա՛ր» հրամանով բոլորը, բացի ձախթևայինից, գլուխները շրջում են ձախ, ձախ ականջի դիրքը՝ աջից բարձր, կզակը՝ վեր: Հավասարվելու ժամանակ զինծառայողները կարող են փոքր-ինչ շարժվել առաջ, ետ կամ կողք: Կարաբինը «Ոտքին ԱՌ» դրությունում հավասարվելիս՝ կատարողական հրամանով զինծառայողը սվինը (փողաբերանը) թեքում է դեպի իրեն և սեղմում աջ կողքին: Հավասարվելուց հետո տրվում է «Զգաստ» հրամանը, որից հետո բոլոր զինծառայողները արագորեն ուղղում են գլուխները և կարաբինը (գնդացիրը) բռնում նախկին դիրքով: Ետդարձից հետո ջոկը հավասարեցնելու համար նշվում է հավասարեցման կողմը: Օրինակ՝ «Աջ դարձ-հավասար»:

«ԱՋԱՏ» և «ԿԱՐԳԻ ԲԵՐԵԼ» հրամաններով զինծառայողները պետք է վարվեն այնպես, ինչպես նշված է 28 հոդվածում:

«Ջոկ, ՑՐՎԻ՛Ր» հրամանով զինծառայողները դուրս են գալիս շարքից:

Ջոկը հավաքելու համար տրվում է «ՋՈԿ, ԻՆՁ ՄՈՏ» հրամանը, որից հետո զինծառայողները վազքով հավաքվում են հրամանատարի մոտ և շարք կանգնում նրա լրացուցիչ հրամանով:

Ջոկի դարձումները բոլոր զինծառայողները կատարում են միաժամանակ՝ հավասարությունը պահպանելով ըստ 30, 38 և 54 հոդվածներում նշված հրամանների ու կանոնների: Երկտողան շարքով ջոկի աջդարձի (ձախդարձի) ժամանակ ջոկի հրամանատարը կես քայլ աջ (ձախ), իսկ ետդարձի դեպքում՝ մի քայլ առաջ է գնում: Տեղում ջոկի նոսրացման համար տրվում է՝ «Ջոկ, դեպի աջ (ձախ, կենտրոնից), այսքան «Քայլով, ԲԱՑԱՋԱՏՎԻՐ», «Վազքով, ԲԱՑԱՋԱՏՎԻՐ» հրամանը: Կատարողական հրամանով բոլոր զինծառայողները, բացի նրանից, ումից սկսվում է նոսրացումը, շրջվում են նշված կողմը, ոտքերը միացնելու հետ միաժամանակ գլուխը շրջում են շարքի ճակատի կողմը և գնում են արագացված կիսաքայլով (վազքով)՝ ուսի վրայից նայելով ետևից եկողին: Նրանից ետևից եկողի կանգնելուց հետո ամեն մեկը կատարում է ևս այնքան քայլ, որքան նշված է հրամանում և շրջվում է ձախ (աջ): Կենտրոնից նոսրացման դեպքում նշվում է, թե ով է կենտրոնը: Զինծառայողը, լսելով

իր ազգանունը, պատասխանում է «Ես եմ» և
առաջ է պարզում ու ցած իջեցնում ձախ ձեռքը:
Ջոկը հավասարվելիս պահպանվում է նոսրացման ժամանակ սահմանված
տարածությունը:
Տեղում ջոկի խտացման համար տրվում է «Ջոկ, դեպի աջ (դեպի ձախ, դեպի կենտրոն)
ԽՏԱՑԻ՛Ր» հրամանը:
Կատարողական հրամանով բոլոր զինծառայողները, բացի նրանից, դե-
սլի ում է կատարվում խտացումը, շրջվում են խստացման կողմը, որից հետո
արագացված կիսաքայլով (վազքով) մոտենում են խիտ շարքի համար սահ-
մանված տարածությանը և ինքնուրույն կանգնում ու շրջվում են ձախ (աջ):
80. Ջոկի շարժման համար տրվում են հետևյալ հրամանները՝ «Ջոկ, փոկին Ա՛Ռ, ուսին
շարային քայլով, վազքով/ ՄԱՐՇ»: Եթե անհրաժեշտ է, նշվում է, շարժման
ուղղությունը և հավասարությունը պահելու կողմը: «Ջոկ, փոկին ԱՌ,ուսին ԱՌ»:
«Դեպի այսինչ առարկան, հավասարությունը աջ (ձախ),
քայլով (շարային քայլով, վազքով) ՄԱՐՇ»:
«ՄԱՐՇ» հրամանով բոլոր զինծառայողները միաժամանակ սկսում են
շարժումը ձախ ոտքով՝ պահպանելով հավասարությունը, տարածությունն
ու հեռավորությունը:
Եթե հավասարություն պահպանելու կողմը նշված չէ, ապա հավասարությունը
պահվում է՝ հայացքն ուղղելով դեպի աջ թևը՝ առանց գլուխը թեքելու:
Ջոկի կանգնելու համար տրվում է «Ջոկ, կանգ Ա՛Ռ» հրամանը:
81. Զինծառայողների մոտ զենքի տարբեր տեսակների առկայության
և դրանք մի դրությունից մյուսը փոխադրելու անհրաժեշտության դեպքում
նշվում է զենքի անունը:
Օրինակ՝ «Ավտոմատը կրծքին Ա՛Ռ», «Գնդացիրը փոկին
ԱՌ», «Կարաբինը ուսին Ա՛Ռ» և այլն:
82. Տեղում կանգնած շարքում մի քանի քայլ այս կամ այն կողմ տեղափոխվելու համար
տրվում է՝ «Ջոկ, աջ ԴԱՐՁ (ձախ ԴԱՐՁ)», որից հետո՝
«Այսքան քայլ առաջ, քայլով ՄԱՐՇ» հրամանը:
ԴԱՐՁ (աջ)՝ զինծառայողները կատարում են այնքան քայլ, որքան անհրաժեշտ
է, «Ջոկը ձախ դարձ», «Աջ ԴԱՐՁ» հրամանով շրջվում և ընդունում է
նախնական դիրքը:
Մի քանի քայլ առաջ կամ ետ տեղափոխությունը կատարվում է այնպես, ինչպես նշված
է, 37 հոդվածում:
83. Ոչ համաքայլ /ազատ/ քայլելու համար տրվում է «ՈՉ ՀԱՄԱ-ՔԱՅԼ», իսկ համաքայլ
քայլելու անհրաժեշտության-դեպքում՝ «ՀԱՄԱ-ՔԱՅԼ» հրամանը (վերջինիս դեպքում
քայլում են այնպես, ինչպես ուղղապահը կամ հրամանատարի տված հաշվով):
84. ՈՒսն առաջ բերելով՝ ուղղությունը փոխելու համար տրվում է «Ջոկ, աջ/ձախ/ ուսն
առաջ,քայլով-ՄԱՐՇ» (ընթացքում՝ ՍԱՐՇ») հրամանը:
Այլ հրամանով ջոկը շարժվում է՝ աջ /ձախ/ ուսն առաջ բերելով, առաջ
եկող թևի թևայինը, գլուխը թեքելով ճակատի երկայնքով, շարժվում է լրիվ
քայլով այնպես, որ մյուսներին չսեղմի դեպի անշարժ թևի: Անշարժ թևի
թևայինը տեղում քայլելով՝ աստիճանաբար շարժվում է ձախ (աջ)՝ հարմարվելով
առաջ եկող թևի շարժմանը: Մյուսները, ճակատով պահպանելով հավասարությունը՝
հայացքն ուղղելով առաջ եկող թևի կողմը /առանց գլուխը թեքելու/ և արմունկով

շոշափելով անշարժ թևի կողքի հարևանին՝ անշարժ թևին մոտենալու համեմատ աստիճանաբար փոքրացնում են քայլերը։
Երբ ջոկն առաջ շարժվելիս թեքվում է այնքան, որքան պետք է, տրվում է «ՈՒՂԻՂ» կամ «Ջոկ, կանգ Ա՛Ռ» հրամանը։
85. Ջոկը միատողան շարքից երկտողան շարքի վերադասավորելու համար նախապես կատարվում է հաշվարկ՝ մեկ, երկու։
Օրինակ՝ «Ջոկ, մեկից երկու ՀԱՇՎԻ՛Ր»։
Այս հրամանով յուրաքանչյուր զինծառայող, սկսած աջ թևից, հերթով զլուխն արագորեն շրջում է իրենից ձախ կանգնած զինծառայողի կողմը, ասում է իր համարը և կտրուկ ուղղում է գլուխը (ձախթևայինը գլուխը չի շրջում)։
Նույն ձևով է կատարվում նաև ընդհանուր հաշվումն ըստ հերթական համարների, որի համար տրվում է «Ջոկ, հերթով ՀԱՇՎԻ՛Ր» հրամանը։
Երկտողան շարքում երկրորդ տողանի ձախթևայինը շարքի ընդհանուր համարանշումն ավարտելուց հետո զեկուցում է՝ «Լրիվ» կամ «Ոչ լրիվ»։
86. Ջոկը տեղում միատողան շարքից երկտողան շարքի վերադասավորելու համար տրվում է՝ «Ջոկ, երկտողան ՇԱՐՎԻ՛Ր» հրամանը։
Կատարողական հրամանով երկրորդ համարները ձախ ոտքով մի քայլ աջ՝ կանգնելով առաջին համարի ետևը և ձախ ոտքը միացնելով աջին։
87. Ջոկը տեղում երկտողան խիտ շարքից միատողան շարքի վերադասավորելու համար նախապես նոսրացվում է մեկ քայլով, որից հետո տրվում է «Ջոկ, միատողան ՇԱՐՎԻ՛Ր» հրամանը։
Կատարողական հրամանով երկրորդ համարները ձախ ոտքով մի քայլ անելով դեպի ձախ և աջ ոտքը չմիացնելով ձախին՝ մի քայլ առաջ են գալիս, ձախ ոտքը միացնելով աջին՝ կանգնում են առաջին համարների գծի վրա։
88. Զենքը գետնին է դրվում «Ջոկ, դնել ԶԵՆՔԸ» հրամանով։
«Դնել» նախնական հրամանով ավտոմատն ու ձեռքի նռնականետը բռնում են աջ ձեռքով, կարաբինն ու գնդացիրը՝ «Ոտքին ԱՌ» դրությամբ՝ բացելով գնդացրի հենակները։
Կատարողական հրամանով առաջին տողանը երկու քայլ առաջ է գալիս և ոտքերը միացնում իրար, այնուհետև երկու տողանները միաժամանակ ձախ ոտքով մի քայլ առաջ են գալիս և զենքը դնում են գետնին՝ փակաղակի /փակաղակի շրջանակի/ բռնակը դեպի ներքև, կթրի ծոծրակալը աջ ոտնամատի մոտ /աջ ծունկը չի ծալվում/, որից հետո ձախ ոտքը միացնում են աջին։
Ձեռքի նռնականետը գետնին է դրվում՝ բռնակը դեպի ձախ, իսկ գնդացիրը դրվում է հենակներին։
Միատողան շարքում կատարողական հրամանով կատարվում է միայն վերջին երկու գործողությունները։
89. Զենքը գետնից վերցնելու համար տրվում են հետևյալ հրամանները՝ «Ջոկ, ԶԵՆՔԻ ՄՈՏ» և հետո՝ «Ի ԶԵՆ»։
Առաջին հրամանով ջոկը շարժվում է զենքի մոտ։ Երկրորդ հրամանով զինծառայողները ձախ ոտքով մի քայլ գալիս են առաջ, աջ ձեռքով վերցնում զենքը և, ետ գալով, ձախ ոտքը միացնում են աջին։ Երկրորդ տողանը երկու քայլ գալիս է առաջ, որից հետո երկու տողաններն էլ զենքը միաժամանակ

վերցնում են «Փոկին ԱՌ» դրության: Գնդացիրների հենակները նախօրոք ծալում են: Շարքից դուրս գալու համար ծառայողին տրվում է հետևյալ հրամանը՝ սերժանտ Պետրոսյան, շարքից դուրս գալ այսքան քայլ» կամ « ծառայության սերժանտ Պետրոսյան, ինձ մոտ (Վազքով ինձ մոտ)»:

92. Ծառայողը, սույն կանոնադրության 91-րդ կետին համապատասխան տրված հրամանի դեպքում, լսելով իր ազգանունը, պատասխանում է՝ «Ես եմ», իսկ շարքից դուրս գալու (կանչվելու) դեպքում պատասխանում է՝ «Լսում եմ»՝

1) առաջին հրամանով ծառայողը շարային քայլով դուրս է գալիս շարքից՝ նշված քայլերի թիվը հաշվելով առաջին տողանից, կանգնում և դեմքով շրջվում է դեպի շարքը.

2) երկրորդ հրամանով ծառայողը, առաջին տողանից ուղիղ դուրս գալով մեկ-երկու քայլ, ընթացքից շրջվում է պետի կողմը, ամենակարճ ճանապարհով շարային քայլով մոտենում (վազում) է նրա մոտ և, կանգնելով երկու-երեք քայլ հեռավորության վրա, զեկուցում է իր գալու մասին: Օրինակ՝ «Պարոն լեյտենանտ, սերժանտ Պետրոսյանը ներկայացել է Ձեր հրամանով».

3) ծառայողը երկրորդ տողանից դուրս գալու դեպքում թեթևակիորեն ձեռքը դնում է իր առջև կանգնած ծառայողի ուսին, որը մի քայլ առաջ է գալիս և, աջ ոտքն առանց ձախին մոտեցնելու, տանում է մի քայլ դեպի աջ, ձախ ոտքը միացնում է աջին, շարքից դուրս գալու հնարավորություն է տալիս ծառայողին, այնուհետև կանգնում է իր տեղում.

4) առաջին տողանից ծառայողի դուրս գալուց հետո այդ տեղը զբաղեցնում է երկրորդ տողանում նրա հետևում կանգնած ծառայողը.

5) երկշարասյուն, եռաշարասյուն (քառաշարասյուն) շարքից ծառայողը դուրս է գալիս մոտակա թևի կողմը՝ նախապես կատարելով աջ դարձ (ձախ դարձ): Եթե նրա կողքին ծառայող է կանգնած, ապա վերջինս աջ (ձախ) ոտքով մեկ քայլ է անում դեպի աջ (ձախ) կողմը և, առանց աջ (ձախ) ոտքը մյուս ոտքի մոտ դնելու, մի քայլ հետ է գնում՝ ոտքերը միացնելով իրար, ծառայողին շարքից դուրս գալու հնարավորություն է տալիս, այնուհետև կանգնում է իր տեղում.

6) ծառայողի՝ զենքը ձեռքին շարքից դուրս գալու դեպքում զենքի դիրքը չի փոխվում:

93. Շարք վերադառնալու համար ծառայողին պետք է տրվի հետևյալ հրամանը՝ « սերժանտ Պետրոսյան, կանգնել շարք» կամ ուղղակի «Կանգնել շարք»: «Փրկարարական ծառայության սերժանտ Պետրոսյան» հրամանով դեմքով դեպի շարքը կանգնած ծառայողը, լսելով իր ազգանունը, դեմքով շրջվում է դեպի պետը և պատասխանում է՝ «Ես եմ», իսկ «Կանգնել շարքում» հրամանով, եթե առանց զենքի է կամ զենքով՝ «Մեջքին-ԱՌ» դրությունում, ձեռքը մոտեցնում է գլխարկին և պատասխանում՝ «Լսում եմ», ապա շրջվում է շարժման կողմը, առաջին քայլի հետ միաժամանակ իջեցնում ձեռքը, շարային քայլով ամենակարճ ճանապարհով կանգնում է իր տեղում:

94. «Կանգնել շարքում» հրաման տրվելու դեպքում ծառայողը պետք է վերադառնա շարք՝ առանց նախապես շրջվելու դեպի պետը:

95. Սույն կանոնադրության 92-րդ, 93-րդ և 94-րդ կետերով նախատեսված հրամանները զենքով կատարելու դեպքում, շարք վերադառնալուց հետո, ծառայողը պետք է զենքը պահի այն դիրքում, ինչպես շարքում գտնվող ծառայողները:

96. Շարքից դուրս պետին մոտենալիս՝ նրանից հինգ-վեց քայլ հեռու, ծառայողը պետք է անցնի շարային քայլի, երկու-երեք քայլ հեռու կանգնի պետի առջև, ոտքերն իրար միացնելու հետ միաժամանակ աջ ձեռքը մոտեցնի գլխարկին և զեկուցի իր մոտենալու մասին, իսկ զեկույցն ավարտելուն պես ձեռքն իջեցնի:

97. Պետին զենքով մոտենալիս՝ ծառայողը զենքի դիրքը չպետք է փոխի՝ բացառությամբ կարաբինի «ՈՒսին-ԱՌ» դրությունից, որը «Ոտքին-ԱՌ» դրության է բերվում, երբ ծառայողը կանգնում է պետի առջև՝ ձեռքը գլխարկին չի մոտեցնում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ զենքը գտնվում է «Մեջքին-ԱՌ» դրությամբ:

98. Պետից ստանալով հեռանալու թույլտվություն՝ ծառայողը պետք է աջ ձեռքը մոտեցնի գլխարկին և պատասխանի՝ «Լսում եմ», ապա շրջվի շարժման կողմը, առաջին քայլի հետ իջեցնի ձեռքը և, կատարելով երեք-չորս շարային քայլ, շարժումը շարունակի երթային քայլով: Զենքը ձեռքին պետից հեռանալիս՝ զենքի դիրքը չի փոխվում՝ բացառությամբ կարաբինի, որը «Ոտքին-ԱՌ» դրությունից, եթե անհրաժեշտ է, ծառայողը «Լսում եմ» պատասխանից հետո փոխադրում է այլ դրության:

99. Ծառայողին կարգադրելով շարք վերադառնալ կամ թույլատրելով գնալ՝ պետը ձեռքը պետք է մոտեցնի գլխարկին և իջեցնի ցած:

100. Թվով 5-12 ծառայողներից բաղկացած ստորաբաժանման ծավալուն շարքը կարող է լինել միատողան կամ երկտողան:

101. Միատողան (երկտողան) շարվելու համար ստորաբաժանմանը տրվում է «Ստորաբաժանում, միատողան (երկտողան)-ՇԱՐՎԻ՛Ր» հրամանը: Ստորաբաժանման հրամանատարը (պետը), հրաման տալիս, ընդունելով շարային կեցվածք, պետք է կանգնի դեմքով դեպի շարքի ճակատը, ստորաբաժանման ծառայողները շարվեն հրամանատարից ձախ՝ սույն կանոնադրությամբ սահմանված տարածությամբ և հեռավորությամբ, միաժամանակ բոլոր ծառայողների ոտնաթաթերի ծայրերը պետք է գտնվեն մեկ ուղիղ գծով:

102. Շարք կանգնելն սկսելուն պես ստորաբաժանման հրամանատարը (պետը) պետք է շարային քայլով դուրս գա շարքից և հետևի, թե ինչպես է կատարվում հրամանը: Չորս և ավելի պակաս ծառայողից բաղկացած անձնակազմը միշտ կանգնում է միատողան:

103. Թվով 12-ից ավելի ծառայողներից, այդ թվում՝ ներքին կառուցվածքային ստորաբաժանումներից բաղկացած ստորաբաժանումը, ինչպես նաև այն ստորաբաժանումը, որի ներքին կառուցվածքային ստորաբաժանումները (բաժին, ջոկատ, խումբ, օղակ, ջոկ և այլն) բաղկացած են չորս կամ երեք ծառայողից, կանգնում է երկտողան շարքով կամ ներքին կառուցվածքային ստորաբաժանումների շարասյուների գծով:

104. Երկտողան (ստորաբաժանումների շարասյուների գծով) շարվելու համար ստորաբաժանմանը պետք է տրվի «Ստորաբաժանում, երկտողան-ՇԱՐՎԻՐ» կամ «Ստորաբաժանում, եռաշարասյուն (քառաշարասյուն) կառուցվածքային ստորաբաժանումների շարասյուների գծով-ՇԱՐՎԻ՛Ր» հրամանը:

105. Սույն կանոնադրության 104-րդ կետում նշված ստորաբաժանման (հիմնական) ծառայողների շարումն սկսվում է առաջին կառուցվածքային ստորաբաժանումից՝ հաստիքների համաձայն՝ հրամանատարից (պետից) ձախ, սույն կանոնադրության 103-րդ կետով նշված կանոններով, ընդ որում՝

1) հիմնական ստորաբաժանման հրամանատարի (պետի) տեղակալները կանգնում են նրանից ձախ.

2) երկտողան շարքում վերջին կարգը յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանումում պետք է լինի լրիվ:

106. Շարքը տեղում հավասարեցնելու անհրաժեշտության դեպքում պետք է տրվի «ՀԱՎՍԱ՛Ր» կամ «Ձախ ՀԱՎՍԱ՛Ր» հրամանները՝

1) «ՀԱՎՍԱՐ» հրամանով բոլորը, բացի աջթևայինից, գլուխները պետք է շրջեն աջ (աջ ականջի դիրքը ձախից բարձր, կզակը՝ վեր) և հավասարվեն այնպես, որ յուրաքանչյուր ծառայող տեսնի իրենից հետո երրորդ ծառայողի կուրծքը.

2) «Ձախ ՀԱՎՍԱՐ» հրամանով բոլորը, բացի ձախթևայինից, պետք է գլուխները շրջեն ձախ (ձախ ականջի դիրքը՝ աջից բարձր, կզակը՝ վեր).

3) հավասարվելու ժամանակ ծառայողները կարող են փոքր-ինչ շարժվել առաջ, հետ կամ կողքի.

4) կարաբինը (ավտոմատը) «Ոտքին - ԱՌ» դրությունում հավասարվելիս, սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված գործողությունները կատարելիս, կատարողական հրամանով ծառայողը սվինը (փողաբերանը) պետք է թեքի դեպի իրեն և սեղմի աջ կողքին:

107. Հավասարվելուց հետո տրվում է «ԶԳԱՍՏ» հրամանը, որի դեպքում բոլոր ծառայողներն արագորեն պետք է ուղղեն գլուխները և կարաբինը (ավտոմատը) բռնեն նախկին դիրքով:

108. Հետ դարձից հետո ստորաբաժանումը հավասարեցնելու համար պետք է նշվի հավասարեցման կողմը, օրինակ՝ «Աջ (ձախ)-ՀԱՎՍԱ՛Ր»:

109. «ԱՋԱՏ» և «ԿԱՐԳԻ ԲԵՐԵԼ» հրամաններով ծառայողները պետք է կատարեն սույն կանոնադրության 28-րդ և 29-րդ կետերով սահմանված գործողությունները:

110. «Ստորաբաժանում-ՑՐՎԻՐ» հրամանով ծառայողները պետք է դուրս գան շարքից:

111. Ստորաբաժանումը հավաքելու համար պետք է տրվի «Ստորաբաժանում-ԻՆՁ ՄՈ՛Տ» հրամանը, որից հետո ծառայողները պետք է վազքով հավաքվեն հրամանատարի մոտ և շարք կանգնեն նրա լրացուցիչ հրամանով:

112. Ստորաբաժանման դարձումները բոլոր ծառայողները պետք է կատարեն միաժամանակ՝ հավասարությունը պահպանելով սույն կանոնադրությամբ դարձումների համար սահմանված հրամանները և կանոնները: Երկտողան շարքով ստորաբաժանման աջ դարձի (ձախ դարձի) ժամանակ ստորաբաժանման հրամանատարը (պետը) պետք է կես քայլ աջ ձախ), իսկ հետ դարձի դեպքում՝ մի քայլ առաջ գնա:

113. Տեղում ստորաբաժանման նոսրացման համար պետք է տրվի «Ստորաբաժանում, դեպի աջ (ձախ, կենտրոնից), այսքան քայլով-ԲԱՑԱԶԱՏՎԻ՛Ր (վազքով-ԲԱՑԱԶԱՏՎԻՐ) հրամանը՝

1) կատարողական հրամանով բոլոր ծառայողները, բացի նրանից, ումից սկսվում է նոսրացումը, պետք է շրջվեն նշված կողմը, ոտքերը միացնելու հետ միաժամանակ գլուխը շրջեն շարքի ճակատի կողմը և գնան արագացված կիսաքայլով (վազքով)՝ ուսի վրայից նայելով հետևից եկողին և չկտրվելով նրանից.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված գործողության կատարումից հետո՝ հետևից եկողի կանգնելուց հետո, յուրաքանչյուր ծառայող պետք է ևս կատարի այնքան քայլ, որքան նշված է հրամանում, և շրջվի ձախ (աջ).

3) նոսրացումը պետք է կատարվի մեկ քայլով, եթե հրամանում նշված չէ տարածությունը.

4) կենտրոնից նոսրացման դեպքում պետք է նշվի, թե ով է կենտրոնը, և կենտրոնի ծառայողը, լսելով իր ազգանունը, պետք է պատասխանի՝ «Ես եմ», ձախ ձեռքը պարզի առաջ ու ցած իջեցնի.

5) ստորաբաժանման հավասարվելու ժամանակ պետք է պահպանվի նոսրացման ժամանակ սահմանված տարածությունը:

114. Տեղում ստորաբաժանման խտացման համար պետք է տրվի «Ստորաբաժանում, դեպի աջ (դեպի ձախ, դեպի կենտրոն)-ԽՏԱՑԻ՛Ր» (վազքով-ԽՏԱՑԻ՛Ր) հրամանը: Կատարողական հրամանով բոլոր ծառայողները, բացի նրանից, դեպի ում կատարվում է խտացումը, շրջվում են խտացման կողմը, որից հետո արագացված կիսաքայլով (վազքով) մոտենում են խիտ շարքի համար սահմանված տարածությանը և ինքնուրույն կանգնում ու շրջվում են ձախ (աջ):

115. Ստորաբաժանման շարժման համար պետք է տրվեն հետևյալ հրամանները՝ «Ստորաբաժանում, քայլով (շարային քայլով, վազքով)-ՄԱ՛ՐՇ»: Անհրաժեշտության դեպքում, պետք է նշվի շարժման ուղղությունը և հավասարությունը պահելու կողմը: Օրինակ՝ «Ստորաբաժանում, դեպի այսինչ առարկան, հավասարությունը աջ (ձախ), քայլով (շարային քայլով, վազքով)-ՄԱՐՇ»: «ՄԱՐՇ» հրամանով բոլոր ծառայողները միաժամանակ սկսում են շարժումը ձախ ոտքով՝ պահպանելով հավասարությունը, տարածությունն ու հեռավորությունը: Հավասարություն պահպանելու կողմը չնշվելու դեպքում հավասարությունը պահվում է՝ հայացքն ուղղելով դեպի աջ թևը՝ առանց գլուխը թեքելու:

116. Ստորաբաժանման կանգնելու համար պետք է տրվի «Ստորաբաժանում, կանգ-Ա՛Ռ» հրամանը:

117. Ծառայողների մոտ զենքի տարբեր տեսակների առկայության և դրանք մի դրությունից մյուսը փոխադրելու անհրաժեշտության դեպքում պետք է նշվի զենքի անունը: Օրինակ՝ «Ավտոմատը կրծքին-Ա՛Ռ», «Կարաբինը ուսին-Ա՛Ռ» և այլն:

118. Տեղում կանգնած շարքում մի քանի քայլ այս կամ այն կողմ տեղափոխվելու համար պետք է տրվի «Ստորաբաժանում, աջ-ԴԱ՛ՐՁ (ձախ-ԴԱ՛ՐՁ)», որից հետո՝ «Այսքան քայլ առաջ, քայլով-ՄԱ՛ՐՇ» հրամանը: Ծառայողների կողմից գործողությունը կատարվելուց հետո, շրջվելու և նախնական դիրքն ընդունելու համար, ստորաբաժանմանը պետք է տրվի «Ձախ-ԴԱՐՁ (աջ-ԴԱՐՁ)» հրամանը:

119. Ոչ համաքայլ (ազատ) քայլելու համար պետք է տրվի «ՈՉ ՀԱՄԱՔԱՅԼ», իսկ համաքայլ քայլելու անհրաժեշտության դեպքում՝ «ՀԱՄԱՔԱՅԼ» հրամանը (վերջինիս դեպքում քայլում են այնպես, ինչպես ուղղապահը կամ հրամանատարի տված հաշվով):

120. ՈՒսն առաջ բերելով՝ ուղղությունը փոխելու համար պետք է տրվի «Ստորաբաժանում, աջ (ձախ) ուսն առաջ, քայլով-ՄԱ՛ՐՇ» (ընթացքում՝ ՄԱՐՇ») հրամանը:

121. Սույն կանոնադրության 120-րդ կետում նշված հրամանով՝

1) ստորաբաժանումը պետք է շարժվի աջ (ձախ)՝ ուսն առաջ բերելով, առաջ եկող թևի թևայինը, գլուխը թեքելով ճակատի երկայնքով, շարժվի լրիվ քայլով այնպես, որ մյուսներին չսեղմի դեպի անշարժ թևը.

2) անշարժ թևի թևայինը տեղում քայլելով՝ աստիճանաբար պետք է շրջվի ձախ (աջ)՝ հարմարվելով առաջ եկող թևի շարժմանը, մյուսները, ճակատով պահպանելով հավասարությունը՝ հայացքն ուղղելով առաջ եկող թևի կողմը (առանց գլուխը թեքելու) և արմունկով շոշափելով անշարժ թևի կողքի հարևանին, անշարժ թևին մոտենալու համեմատ աստիճանաբար փոքրացնում են քայլերը.

3) ստորաբաժանումն առաջ շարժվելիս՝ թեքվելու համար պետք է տրվի «ՈՒՂԻ՛Ղ» կամ «Ստորաբաժանում, կանգ-Ա՛Ռ» հրամանը:

122. Ստորաբաժանումը միատողան շարքից երկտողան շարքի վերադասավորելու համար նախապես պետք է կատարի հաշվարկ՝ մեկ, երկու. տրվում է հրաման, օրինակ՝ «Ստորաբաժանում, մեկից երկու-ՀԱՇՎԻ՛Ր», որի դեպքում յուրաքանչյուր ծառայող, սկսած աջ թևից, հերթով գլուխն արագորեն շրջում է իրենից ձախ կանգնած ծառայողի կողմը, ասում է իր համարը և կտրուկ ուղղում է գլուխը (ձախթևայինը գլուխը չի շրջում):

123. Սույն կանոնադրության 122-րդ կետով սահմանված ձևով է կատարվում նաև ընդհանուր հաշվումը՝ ըստ հերթական համարների, որի համար տրվում է «Ստորաբաժանում, հերթով-ՀԱՇՎԻ՛Ր» հրամանը: Երկտողան շարքում երկրորդ տողանի ձախթևայինը շարքի ընդհանուր համարանշումն ավարտելուց հետո զեկուցում է՝ «Լրիվ» կամ «Ոչ լրիվ»:

124. Ստորաբաժանումը տեղում միատողան շարքից երկտողան շարքի վերադասավորելու համար պետք է տրվի «Ստորաբաժանում, երկտողան-ՇԱՐՎԻ՛Ր» հրամանը: Կատարողական հրամանով երկրորդ համարները ձախ ոտքով կատարում են մի քայլ հետ՝ չմիացնելով աջ ոտքը, այն տանում են մի քայլ աջ՝ կանգնելով առաջին համարի հետևը և ձախ ոտքը միացնելով աջին:

125. Ստորաբաժանումը տեղում երկտողան խիտ շարքից միատողան շարքի վերադասավորելու համար անհրաժեշտ է նախապես նոսրացնել մեկ քայլով, որից հետո տալ «Ստորաբաժանում, միատողան-ՇԱՐՎԻ՛Ր» հրամանը: Կատարողական հրամանով երկրորդ համարները ձախ ոտքով մի քայլ անելով դեպի ձախ և աջ ոտքը չմիացնելով ձախին՝ մի քայլ առաջ են գալիս, ձախ ոտքը միացնելով աջին՝ կանգնում են առաջին համարների գծի վրա:

126. Զենքը գետնին է դրվում «Ստորաբաժանում, դնե՛լ-ԶԵՆՔԸ» հրամանով, որի ժամանակ՝

1) «Դնել» նախնական հրամանով ավտոմատը բռնում են աջ ձեռքով, կարաբինը՝ «Ոտքին-ԱՌ» դրությամբ.

2) կատարողական հրամանով առաջին տողանը երկու քայլ առաջ է գալիս և ոտքերը միացնում իրար, այնուհետև՝ երկու տողանները միաժամանակ ձախ ոտքով մի քայլ առաջ են գալիս.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված գործողությունը կատարելուց հետո զենքը դնում են գետնին՝ փակաղակի (փակաղակի շրջանակի) բռնակը դեպի ներքև, կոթի ծոծրակալը՝ աջ ոտնամատի մոտ (աջ ծունկը չի ծալվում), որից հետո ձախ ոտքը միացնում են աջին.

4) միատողան շարքում կատարողական հրամանով կատարվում է միայն սույն կետի 3-րդ ենթակետում նշված գործողությունը:

127. Զենքը գետնից վերցնելու համար պետք է տրվեն հետևյալ հրամանները՝ «Ստորաբաժանում, ԶԵՆՔԻ ՄՈՏ» և հետո՝ «Ի ԶԵՆ»՝

1) առաջին հրամանով ստորաբաժանումը շարժվում է զենքի մոտ.

2) երկրորդ հրամանով ծառայողները ձախ ոտքով մի քայլ գալիս են առաջ, աջ ձեռքով վերցնում զենքը և, հետ գալով, ձախ ոտքը միացնում են աջին: Երկրորդ տողանը երկու քայլ գալիս է առաջ, որից հետո երկու տողաններն էլ զենքը միաժամանակ վերցնում են «Փոկին-ԱՌ» դրության:

128. Ստորաբաժանման երթային շարքը կարող է լինել միաշարասյուն կամ երկշարասյուն:

129. Ստորաբաժանումը տեղում միաշարասյուն (երկշարասյուն) շարելու համար պետք է տրվի «Ստորաբաժանում, միաշարասյուն (երկշարասյուն)-ՇԱՐՎԻՐ» հրամանը:

Ստորաբաժանման հրամանատարը (պետը), շարային կեցվածք ընդունելով և հրաման տալով, կանգնում է դեմքով դեպի շարժման կողմը, իսկ ստորաբաժանումը (ենթակա ծառայողները) շարվում է միաշարասյուն (երկշարասյուն)՝ հաստիքի համաձայն:

130. Չորս և պակաս ծառայողից բաղկացած ստորաբաժանումը կանգնում է միաշարասյուն:

131. Մի քանի կառուցվածքային ստորաբաժանումներից բաղկացած ստորաբաժանման երթային շարքը կարող է լինել քառաշարասյուն, եռաշարասյուն, երկշարասյուն կամ միաշարասյուն:

132. Տեղում ստորաբաժանման ծառայողներին եռաշարասյուն (քառաշարասյուն) շարելու համար պետք է տրվի հետևյալ հրամանը՝ «Ստորաբաժանում, եռաշարասյուն (քառաշարասյուն)-ՇԱՐՎԻՐ», որի դեպքում կառուցվածքային ստորաբաժանումների ծառայողները շարվում են եռաշարասյուն (քառաշարասյուն)՝ ըստ հաստիքի:

133. Ծավալուն շարքից շարասյան վերադասավորելու համար պետք է տրվի հետևյալ հրամանը՝ «Ստորաբաժանում, աջ-ԴԱ՛ՐՁ»: Երկտողան շարքի դարձման դեպքում ստորաբաժանման հրամանատարը կես քայլ աջ է կատարում:

134. Շարասյունից ծավալուն շարքի վերադասավորելու համար ստորաբաժանմանը պետք է տրվի «Ստորաբաժանում, ձախ-ԴԱ՛ՐՁ» հրամանը: Երկշարասյուն ստորաբաժանման դարձման դեպքում ստորաբաժանման հրամանատարը կես քայլ առաջ է գալիս:

135. Միաշարասյուն ստորաբաժանումը երկշարասյան վերադասավորելու համար պետք է տրվի «Ստորաբաժանում, երկշարասյուն, քայլով-ՄԱ՛ՐՇ» (քայլելիս՝ «ՄԱ՛ՐՇ») հրամանը: Կատարողական հրամանով ստորաբաժանման հրամանատարը (ուղղապահը) շարժվում է կես քայլ անելով. երկրորդ համարները, շարժվելով դեպի աջ, քայլի տակտով շարասյան մեջ զբաղեցնում են իրենց տեղերը: Ստորաբաժանումը շարժվում է կես քայլ անելով, մինչև «ՈՒՂԻՂ» կամ «Ստորաբաժանում, կանգ-ԱՌ» հրամանը:

136. Երկշարասյուն ստորաբաժանումը միաշարասյան վերադասավորելու համար պետք է տրվի «Ստորաբաժանում, միաշարասյուն, քայլով-ՄԱ՛ՐՇ» (քայլելիս՝ «ՄԱՐՇ») հրամանը: Կատարողական հրամանով ստորաբաժանման հրամանատարը (ուղղապահը) շարժվում է լրիվ քայլով, իսկ մյուսները՝ կես քայլ անելով, երկրորդ համարները, իրենց տեղերի ազատմանը զուգընթաց, քայլին համաչափ անցնում են առաջին համարների հետևը և շարունակում շարժվել լրիվ քայլով:

137. Միատողան ծավալուն շարքից ստորաբաժանման վերադասավորումը միաշարասյուն շարքի (երկտողան շարքից՝ երկշարասյուն շարքի) կատարվում է «Ստորաբաժանում, աջ-ԴԱ՛ՐՁ» հրամանով: Երկտողան շարքի դարձման դեպքում ստորաբաժանման հրամանատարը կես քայլ աջ է կատարում:

138. Երկտողան ծավալուն շարքից ստորաբաժանման վերադասավորումը միաշարասյուն շարքի (միատողան շարքից՝ երկշարասյուն շարքի) պետք է կատարվի «Ստորաբաժանում, աջ-ԴԱ՛ՐՁ», «Միաշարասյուն (երկշարասյուն), քայլով-ՄԱ՛ՐՇ» (քայլելիս՝ «ՄԱ՛ՐՇ») հրամաններով՝

1) «ՄԱՐՇ» հրամանով առաջին ստորաբաժանման ծառայողներն ընթացքից վերադասավորվում են միաշարասյան՝ սույն կանոնադրության 136-րդ կետով, իսկ երկշարասյան՝ սույն կանոնադրության 135-րդ կետով սահմանված կարգով.

2) մյուս ստորաբաժանումների ծառայողները, հաջորդաբար վերադասավորվելով միաշարասյան (երկշարասյան), իրենց ստորաբաժանումների կազմում գնում են առաջին ստորաբաժանման ծառայողների հետևից:

139. Երկտողան ծավալուն շարքից ստորաբաժանման վերադասավորումը եռաշարասյուն (քառաշարասյուն) շարքի, պետք է կատարվի «Ստորաբաժանում, աջ-

ԴԱ՛ՐՁ», «Եռաշարասյուն (քառաշարասյուն), քայլով-ՄԱ՛ՐՇ» (ընթացքում՝ «ՄԱՐՇ») հրամաններով՝

1) «ՄԱՐՇ» հրամանով առաջին ստորաբաժանման ծառայողները շարժվում են կիսաքայլ՝ ընթացքում վերադասավորվելով միաշարասյան.

2) մյուս ստորաբաժանումների ծառայողները շարժվում են դեպի ձախ, առաջին ստորաբաժանման գիծ՝ պահպանելով սահմանված տարածությունը և նույնպես վերադասավորվելով միաշարասյան, որից հետո ստորաբաժանման հրամանատարը տալիս է «ՈՒՂի՛ղ» կամ «Ստորաբաժանում, կանգ-Ա՛Ռ» հրամանը:

Երթային ՇԱՐՔ

Ջոկի երթային շարքը կարող է լինել միաշարասյուն կամ երկշարասյուն ջոկը տեղում միաշարասյուն շարելու համար տրվում է ջոկը միաշարասյուն երկշարասյուն շարվիր հրամանով Ջոկի հրամանատարը, շարային կեցվածք,ընդունելով և,հրաման տալով՝ կանգնում է դեմքով դեպի շարժման կողմը, իսկ ջոկը շարվում է հաստիքի համաձայն: Չորս և պակաս մարդուց բաղկացած ջոկը կանգնում է միաշարասյուն:

91. Ծավալուն շարքից շարասյան վերադասավորելու համար տրվում է հետևյալ հրամանը «Ջոկ, աջ ԴԱՐՁ»: Երկտողան շարքի դարձման դեպքում ջոկի հրամանատարը կես քայլ աջ է կատարում:

92. Շարասյունից ծավալուն շարքի վերադասավորելու համար ջոկին տրվում է «Ջոկ, ձախ ԴԱ՛ՐՁ» հրամանը: Միաշարասյուն-երկշարասյուն,ջոկի հրամանատարը կես քայլ առաջ է գալիս:

93. Միաշարասյուն ջոկը երկշարասյան վերադասավորելու համար տրվումէ «Ջոկ, երկշարասյուն քայլով ՄԱՐՇ»/քայլելիս«ՄԱՐՇ» հրամանը: Կատարողական հրամանով ջոկի հրամանատարը /ուղղապահը/ շարժվում է՝ կես քայլ անելով, երկրորդ համարները, շարժվելով դեպի աջ, քայլի տակտով շարասյան մեջ զբաղեցնում են իրենց տեղերը, : Ջոկը շարժվում է կես քայլ անելով, մինչև «ՈՒՂԻՂ» կամ «Ջոկ, կանգ — ԱՌ» հրամանը:

94. Երկշարասյուն ջոկը միաշարասյան վերադասավորելու համար տրվում է «Ջոկ, միաշարասյուն քայլով ՄԱ՛ՐՇ քայլելիս՝«ՍԱՐՇ>>հրամանը: Կատարողական հրամանով ջոկի հրամանատարը /ուղղապահը/շարժվում է լրիվ քայլով, իսկ մյուսները՝ կես քայլ անելով: Երկրորդ համարները, իրենց տեղերի ազատմանը զուգընթաց, քայլին համաչափ անցնում են առաջին համարների ետևը և շարունակում շարժվել լրիվ քայլով:

95. Շարայան շարժման ուղղությունը փոխելու համար տրվում են հետևյալ հումանեը՝ «Ջոկ, աջ ձախ ուսն առաջ ՄԱՐՇ», ուղղապահը մինչև «ՈՒՂԻՂ» հրամանը անցնում է ձախ /աջ/, մյուսների հետևում են նրան. «Ջոկ, իմ ետևից — ՄԱՐՇ վազքով ՍԱՐՇ/», և ջոկը հետևում է հրամանատարին:

Զինվորական ողջույնի կատարումը շարքի մեջ՝ տեղում և շարժման ընթացքում

96.Շարքի մեջ՝ տեղում զինվորական ողջույնի համար, երբ պետը մոտենալով՝ գտնվում է 10-15 քայլի վրա, ջոկի հրամանատարը հրաման է տալիս՝ «Ջոկ, ԶԳԱՍՏ, հավասարությունը դեպի ԱՋ, դեպի ՁԱԽ, դեպի ԿԵՆՏՐՈՆ»: Ջոկի զինծառայողներն ընդունում են շարային կեցվածք, միաժամանակ գլուխները շրջում են աջ ձախ և հայացքով ուղեկցում պետին: Երբ պետը մոտենում է շարքի թիկունքի կողմից, ջոկի հրամանատարը ջոկին տալիս է ետդարձի, ապա՝ ողջունելու հրամանները:

97. Ջոկի հրամանատարը, զինվորական ողջույնի հրաման տալով, եթե նա առանց զենքի է կամ զենքը գտնվում է «Մեջքին -ԱՌ» դրությունում, ձեռքը մոտեցնում է գլխարկին, իսկ եթե զենքով է, և զենքը գտնվում է «Փոկին - ԱՌ», «ՈՒսին -ԱՌ» կամ «Կրծքին —ԱՌ» դրությունում, վարվում է այնպես, ինչպես նշված է 71 հոդվածում՝ շարունակելով շարժել զենքից ազատ ձեռքը, շարային քայլով մոտենում է պետին, նրանից երկու-երեք քայլ հեռավորության վրա կանգնում և զեկուցում է՝ «Պարոն լեյտենանտ, երկրորդ ջոկը զբաղվում է այս-այս,գործով: Ջոկի հրամանատար՝ սերժանտ Հովհաննիսյան»: Ողջույնն ընդունող պետը ձեռքը գլխարկին է մոտեցնում զինվորական ողջույնի կատարման հրամանից հետո: Վերջացնելով զեկույցը՝ ջոկի հրամանատարը, ձեռքը չհեռացնելով գլխարկից, ձախ քաջ/ ոտքով մի քայլ շարժվում է կողքի՝ միաժամանակ շրջվելով աջ /ձախ/ և, պետին առաջ թողնելով մեկ-երկու քայլ հեռավորությամբ, շարքի արտաքին կողմով գնում է նրա ետևից:
Պետի անցնելուց կամ «ԱՋԱՏ» հրամանից հետո ջոկի հրամանատարը տալիս է «ԱՋԱՏ» հրամանը և իջեցնում է ձեռքը:
Եթե պետը շարքում գտնվող զինծառայողին դիմում է զինվորական կոչումով և ազգանունով, ապա զինծառայողը պատասխանում է՝ «Ես եմ», իսկ եթե դիմում է միայն զինվորական կոչումով, զինծառայողը ներկայանում է՝ նշելով իր պաշտոնը, կոչումը և ազգանունը: Ընդ որում, զենքի դիրքը չի փոխվում, և ձեռքը գլխարկին չի մոտեցվում:
98. Շարքով շարժման ժամանակ զինվորական ողջույնի համար պետից 10-15 քայլ հեռավորության վրա ջոկի հրամանատարը հրաման է տալիս՝«Ջոկ, ԶԳԱՍՏ, հավասարությունը դեպի աջ /ձախ/»: «ԶԳԱՍՏ» հրամանով բոլոր զինծառայողներն անցնում են շարային քայլի, իսկ «Հավասարությունը դեպի ԱՋ/ձախ/» հրամանով միաժամանակ գլուխները շրջում են պետի կողմը և դադարեցնում ձեռքերի կամ զենքից ազատ ձեռքի շարժումը: Կարաբինը «ՈՒսին -ԱՌ» դրության ժամանակ,զենքից ազատ ձեռքի շարժումը չի դադարեցվում: Ջոկի հրամանատարը, եթե առանց զենքի է կամ զենքը գտնվում է «Մեջքին--ԱՌ» դրությունում, գլուխը շրջելով՝ ձեռքը մոտեցնում է գլխարկին: Պետի անցնելուն պես կամ «ԱՋԱՏ» հրամանով ջոկի հրամանատարը հրաման է տալիս՝ «ԱՋԱՏ» և իջեցնում է ձեռքը:
99. Պետի ողջույնին կամ շնորհակալություն հայտնելուն զինծառայողները պատասխանում են միասին, բարձրաձայն, հստակ: Քայլելիս զինծառայողները պատասխանը սկսում են ձախ ոտքը գետնին դնելու հետ միաժամանակ՝ հաջորդ ամեն մի բառը արտասանելով յուրաքանչյուր քայլի հետ միասին:

ԳԼՈՒԽ2

ՇԱՐՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3. Շարքի ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ իրականացվում է հրամանատարի (պետի) հրամաններով և կարգադրություններով, որոնք տրվում են ձայնով, ազդանշաններով, անձնական օրինակով, ինչպես նաև տեխնիկական ու շարժական միջոցների օգնությամբ: Հրամաններն ու կարգադրությունները շարասյանը կարող են հաղորդվել ստորաբաժանումների հրամանատարների (պետերի, մեքենաների ավագների) միջոցով:

4. Մեքենաների շարքի ղեկավարումն իրականացվում է ներքին կապի միջոցներով տրվող հրամաններով ու կարգադրություններով:

5. Շարքում ավագ հրամանատարը (վերադաս պետը) գտնվում է այնտեղ, որտեղից ավելի հարմար է հրամաններ տալ: Մյուս հրամանատարները (պետերը) հրաման են տալիս՝ մնալով կանոնադրությամբ կամ ավագ հրամանատարի (վերադաս պետի) կողմից սահմանված տեղերում:

6. Ստորաբաժանումների հրամանատարներին (պետերին) երթային շարքում թույլատրվում է շարքից դուրս գալ միայն հրաման տալու և դրանց կատարումն ստուգելու համար:

7. Շարային հրամանները կարող են լինել նախնական և կատարողական կամ միայն կատարողական:

8. Նախնական հրամանը տրվում է հստակորեն, բարձրաձայն, ձգելով, որպեսզի շարքում կանգնածները հասկանան, թե հրամանատարն ինչ գործողություններ է պահանջում իրենցից: Ցանկացած նախնական հրամանի դեպքում շարքում գտնվող ծառայողներն ընդունում են շարային կեցվածք, շարժման մեջ գտնվելիս՝ անցնում են շարային քայլի, իսկ շարքից դուրս գտնվելիս՝ շրջվում են պետի կողմը և ընդունում շարային կեցվածք:

9. Ստորաբաժանման կամ առանձին ծառայողի ուշադրությունը գրավելու նպատակով նախնական հրաման տալիս, անհրաժեշտության դեպքում, տրվում է

ստորաբաժանման անվանումը կամ ծառայողի կոչումը և ազգանունը: Օրինակ՝ «Ջոկատ, կանգ-Ա՛Ռ», «Փրկարարական ծառայության սերժանտ Սիմոնյան, հետ-ԴԱՐՁ»:

10. Զենքով վարժաձևերի կատարման ժամանակ նախնական հրամանի մեջ անհրաժեշտության դեպքում նշվում է զենքի տեսակը: Օրինակ՝ «Ավտոմատը կրծքին-Ա՛Ռ» և այլն:

11. Կատարողական հրամանը (կանոնադրությունում նշված է գլխատառերով) տրվում է դադարից հետո՝ բարձրաձայն, հատ-հատ և հստակ: Կատարողական հրամանին հաջորդում է դրա անհապաղ և ճշգրիտ կատարումը:

12. Հրաման տալիս ձայնը պետք է համապատասխանեցվի շարքի լայնությանն ու խորությանը, իսկ զեկույցն արտասանվի հստակորեն՝ առանց ձայնի կտրուկ բարձրացման:

13. Մեքենաների ղեկավարման հրամանները, ազդանշանները կիրառվում են ՀՀ պաշտպանության նախարարի 2001 թվականի ապրիլի 29-ի N 307 հրամանով հաստատված ՀՀ զինված ուժերի շարային կանոնադրությանը (այսուհետ՝ զինված ուժերի շարային կանոնադրություն) համապատասխան: Անհրաժեշտության դեպքում ստորաբաժանման հրամանատարը (պետը) նշանակում է շարքի ղեկավարման լրացուցիչ ազդանշաններ:

14. Բոլոր ստորաբաժանումներին վերաբերող հրամաններն ընդունում և անմիջապես կատարում են ստորաբաժանումների հրամանատարները (պետերը) և մեքենաների հրամանատարները (ավագները):

15. Հրամանն ազդանշանով հաղորդելիս՝ նախ տրվում է «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ» ազդանշանը, իսկ եթե հրամանը վերաբերում է ստորաբաժանումներից միայն մեկին, ապա ազդանշանի հետ միասին տրվում է նաև այդ ստորաբաժանման անվանումը:

16. Ազդանշանով հրամանն ընդունելուն պատրաստ լինելը դարձյալ նշվում է «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ» ազդանշանով: Ազդանշանի ընդունումը հաստատվում է՝ այն կրկնելով կամ իր ստորաբաժանմանը համապատասխան ազդանշան տալով:

17. Վարժաձևերի կատարումը չեղյալ համարելու կամ դադարեցնելու համար տրվում է «ԹՈՂՆԵԼ» հրամանը: Այդ հրամանով ընդունվում է նախնական դիրքը:

18. Սովորեցնելիս թույլատրվում է կանոնադրությունում նշված շարային վարժաձևերը կատարել մասերի բաժանելով, ինչպես նաև նախապատրաստական վարժությունների օգնությամբ: Դրա համար տրվում են համապատասխան հրամաններ: Օրինակ՝ «Ավտոմատը կրծքին-Ա՛Ռ, մասերի բաժանելով, կատարի՛ր՝ ՄԵԿ, կատարի՛ր՝ ԵՐԿՈՒ, կատարի՛ր՝ ԵՐԵՔ»: «Աջ-ԴԱ՛ՐՁ, մասերի բաժանելով, կատարի՛ր՝ ՄԵԿ, կատարի՛ր՝ ԵՐԿՈՒ»:

19. Համահավաք անձնախմբեր կազմավորելու համար կատարվում է շարային հաշվարկ՝ ըստ ստորաբաժանումների՝

1) ծառայողները կանգնում են միատողան կամ երկտողան և հաշվում են ընդհանուր հերթականությամբ.

2) սույն կետի 1-ին ենթակետի պահանջը կատարելուց հետո, ելնելով անձնախմբի թվից, ըստ հերթականության կատարվում է ստորաբաժանումների հաշվարկ, և նշանակվում են այդ ստորաբաժանումների հրամանատարներ:

20. Շքերթներին (զորահանդեսներին) մասնակցելու համար, ինչպես նաև այլ դեպքերում հրամանատարի հրամանով ստորաբաժանման անձնակազմը կարող է

ընդհանուր շարասյամբ շարվել երեքական, չորսական և ավելի: Այդ դեպքում, որպես կանոն, շարք են կանգնում ըստ հասակի:

21. Ստորաբաժանումները շարք են կանգնում «ՇԱՐՎԻՐ» հրամանով, դրանից առաջ նշվում է շարք կանգնելու կարգը: Օրինակ՝ «երկտողան-ՇԱՐՎԻ՛Ր»: Այդ հրամանով ծառայողը պետք է արագորեն շարքում զբաղեցնի իր տեղը, պահպանի սահմանված տարածությունն ու հեռավորությունը, ընդունի շարային կեցվածք:

22. Ստորաբաժանումներին հրաման տալու համար նշվում են այդ ստորաբաժանումների անվանումները

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Շարային պատրաստությունը, լինելով մարտական պատրաստության բաղկացուցիչ մաս, զգալիորեն ներազդում է զորքերի առօրյա և ընդհանուր գործունեության բոլոր կողմերին՝ կոփում է զինծառայողների կամքը, կատարելագործում իրենց մարմնին տիրապետելու ունակությունը, շարային կեցվածքը, զարգացնում ուշադրությունը,դիտողականությունը,համախմբվածության զգացողությունը, համառությունը, որոնք նպաստում են զինվորական կարգապահության ամրապնդմանը: Արդի պայմաններում, երբ ստորաբաժանումներն ու զորամասերը համալրված են բարդ տեխնիկայով, երբ զգալիորեն աճել է կոլեկտիվ զենքի դերը մարտում, շարային պատրաստության մակարդակը պետք է լինի էլ ավելի բարձր: Վարժաձևերի հստակ, համաձայնեցված և միաժամանակյա կատարումը ոգեշնչում է զինծառայողներին, վստահություն ներշնչում սեփական գործողությունների նկատմամբ, ամրապնդում կատարողական կարգապահությունը: Առանց շարային պատրաստության ճիշտ ուսուցման հնարավոր չէ ժամանակակից մարտում հասնել հստակ գործողությունների:

Ստորաբաժանումների անձնակազմին համատեղ գործողությունների նախապատ-րաստելու հիմքը եղել և մնում է շարքը: Ուսուցման ոչ մի այլ ձև պետի կարգադրությունն ու հրամանը այնքան արագ, հստակ ու միասնաբար կատարելու հնարավորություն չի ընձեռում,որքան շարքը: Շարային պատրաստությունը հիմնված է կոլեկտիվ վարժաձևերի կատարման ժամանակ զինծառայողների հստակ գործողությունների անհրաժեշտության խորը ընկալման վրա: Շարային վարժվածությունն ամրապնդում է զինծառայողների կարգապահությունը, օգնում տիրապետել ու տարբեր վարժաձևերի ու գործողությունների, ինչպես նաև ձեռք բերելու այնպիսի հմտություններ, որոնք անհրաժեշտ են մարտավարական,կրակային,մասնագիտական պատրաստությանն այլ առարկաների պարապմունքների համար:

Շարային պատրաստությունն ընդգրկում է անհատական շարային ուսուցումը՝ առանց զենքի և զենքով, ջոկերի (հաշվարկների, անձնակազմերի), դասակների, վաշտերի (մարտկոցների), գումարտակների (դիվիզիոնների) և գնդերի շարային ներդաշնակումը հետիոտն կարգով ու մեքենաներով գործելիս:

Շարային պատրաստության ուսուցումն իրականացվում է պլանային պարապմունքների և կատարելագործվում մյուս բոլոր պարապմունքների ընթացքում, ինչպես նաև առօրյա կյանքում։
Փորձը վկայում է, որ զինծառայողների շարային վարժվածության բարձր մակարդակին կարելի է հասնել նպատակասլաց ճիշտ պլանավորմամբ, բոլոր պարապմունքների հստակ կազմակերպմամբ և մեթոդապես ճիշտ անցկացմամբ։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ ԶՈՒ շարային կանոնադրություն, Երևան 2001թ 126 էջ
2. http://www.hayzinvor.am/33256.html
3. http://www.ysu.am/files/6-1544603150-.pdf
4. https://www.dasaran.net/apps/wiki/view/id/14224
5. Շարային պատրաստության մեթոդիկա, ՀՀՊՆ Երևան 2005

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ , ԳԻՏՈՒԹՅԱՆ , ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասնթացներ

Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

ԹԵՄԱ՝ Հայկական ռազմական կազմավորումները 17-18-րդ դարերում Արցախում և Սյունիքում

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Էդվարդ Ոսկանյան

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ Նախնական զինվորական պատրաստություն

ՂԵԿԱՎԱՐ՝ Անդրանիկ Սարգսյան

Վ Ա Ն Ա Ձ Ո Ր – 2022

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներածություն - Ազատագրական պայքարի պատմական նախադրյալները

Գլուխ 1 - Ազատագրական պայքարը Արցախում

1.1- Հայկական զորամիավորումների ստեղծումը Արցախում

1.2 - Թուրքական արշավանքը և Արցախի հերոսամարտերը

Գլուխ 2- Ազատագրական պայքարը Սյունիքում

2.1- Դավիթ Բեկի ժամանումը Սյունիք և նրա գործունեությունը

2.2- Թուրքական արշավանքը Սյունիք: Հայկական իշխանության գոյամարտը

Եզրակացություն

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

/ Ազատագրական պայքարի պատմական նախադրյալները /

18-րդ դարի սկզբին Ռուսաստը հզորացել էր և ձգտում էր հաստատվել Անդրկովկասում, որը գտնվում էր Պարսկաստանի, Թուրքիայի տիրապետության ներքո: Դեռ Հյուսիսային պատերազմի ընթացքում (1700-1721թթ.) Պետրոս Առաջինը հետաքրքրվում էր Պարսկաստանում և Թուրքիայում տեղի ունեցող իրադարձություններով: Այդ նպատակով նա Վոլինսկու գլխավորությամբ դեսպանություն ուղարկեց Պարսկաստան 1915թ.՝ ուսումնասիրելու այդ երկիրը: Հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական դրության մասին մանրամասն տեղեկություններ ստանալու համար Հայաստան ուղարկվեց Իսրայել Օրու օգնական Մինաս վարդապետ Տիգրանյանը: 18-րդ դարի առաջին քարորդում Պարսկաստանը քաղաքական ճգնաժամ էր ապրում, միջֆեոդալական պայքարը ընդգրկել էր ամբողջ երկիրը: Պարսկական տիրապետության ներքո գտնվող ժողովուրդները, այդ թվում և հայերը, որոշեցին ազատագրվել պարսից գերիշխանությունից՝ օգտվելով վերոնշյալ նպաստավոր պայմաններից: Առաջինը պայքարի դիմեցին աֆղանները. նրանք 1722թ. գրավեցին մայրաքաղաք Սպահանը, գահընկեց արեցին շահ Հուսեինին: Օսմանյան Թուրքիան, ելնելով Պարսկաստանի ծանր դրությունից, իրեն հայտարարեց Անդրկովկասի և Ատրպատականի «օրինական ժառանգորդ»: Պետրոս Առաջինը, հաղթանակով ավարտելով Հյուսիսային պատերազմը շվեդների դեմ, 1722թ. սկսեց իր ծրագրած «Կասպիական» կամ պարսկական արշավանքը, որի նպատակն էր գրավել Անդրկովկասը, հատկապես՝ Կասպից ծովի արևմտյան և հարավային ափերը, որոնք հռչակված էին մետաքսի արտադրությամբ և խնդիր էր դրել կանխել Թուրքիայի արշավանքը և հաստատվելը Անդրկովկասում: Պարսից շահ Հուսեինին՝ ապստամբությունից պաշտպանելու նպատակով, Պետրոս առաջինը սկսեց Կասպիական արշավանքը: Ռուսական զորքերը գրավեցին Դերբենդը, մերձկասպյան որոշ շրջաններ: Դրանից հետո ռուս ցարը, ներքին և արտաքին մի շարք անբարենպաստ պայմանների հետևանքով, դադարեցրեց իր զորքերի առաջխաղացումը: Պարսկաստանի ներքին անկայունությունը, թուլացումը, Ռուսաստանի հետաքրքրությունը Կովկասի նկատմամբ մեծ հույսեր առաջացրեց հայ և վրաց ժողովրդի մոտ, որոնք պատեհ առիթի էին սպասում՝ ապստամբելու պարսկական և թուրքական տիրապետության դեմ: Վրաց թագավոր Վախթանգ 6-րդը, մինչ կասպիական արշավանքը, բանակցություններ էր վարել Պետրոս 1-ի հետ՝ Ռուսաստանից օգնություն ստանալու համար: Ցարը նրան հայտնել էր ռուսական զորքերի Անդրկովկաս արշավելու մտադրության մասին և խոստացել օգնել

Վրաստանին՝ համատեղ պայքարել Պարսից տիրապետության դեմ: Վրաց թագավորը այդ մասին տեղեկացնում է Արցախի և Սյունիքի հայ ազատագրական գործիչներին, հատկապես՝ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանին. վերջիններս առաջարկեցին Վախթանգ 6-րդին համագործակցել: Եսայի Հասան-Ջալալյանը մոտ 12000 զորաբանակով մեկնեց Գանձակի մոտ գտնվող Չոլակ վայրը՝ Վախթանգ 6-րդի 30000 բանակի հետ սպասելու Պետրոս 1-ի զորքերի ժամանմանը և նրանց հետ միավորմանը Շամախիում: Հայ վրացական ուժերը Չոլակի մոտ 2 ամիս ռուսական բանակին սպասելուց հետո իմացան կասպիական արշավանքի դադարեցման մասին, ուստի, վերադարձան իրենց երկրները: 1720թ. արցախցիները՝ Եսայի Հասան-Ջալալյանի գլխավորությամբ, վերադառնալով Չոլակից, ապստամբեցին Պարսկաստանի դեմ: Դեռևս 1718-1720-ական թթ. Արցախում արտաքին թշնամիներից, առանձնապես՝ լեռնային լեզգիների հարձակումներից պաշտպանվելու համար, կազմակերպեցին ամրացված ռազմական ճամբարներ, պաշտպանական ամրոցներ՝ սղնախներ (սղնախ բառը մոնղոլերեն բառ է, որը նշանակում է ամրացնել): Այդ ժամանակ Արցախը բաժանված էր մելիքությունների, որոնք ունեին իրենց սղնախները: Սղնախներից հատկապես հայտնի էին Գյուլիստանի, Շոշի Քարագլխի, Ջրաբերդի, Կաչաղակաբերդի, Գտիչ-Գորոզի: Նրանց միացյալ զորքի թվաքանակը հասնում էր մինչև 50000-ի, որից 30000-ը՝ հեծելազոր, 20000-ը՝ հետևակ: Դրանք ղեկավարվում էին մեծ սղնախի կողմից: Սղնախների հրամանատարներն էին Ավան (Յուզբաշի), Թարխան, Սարգիս հարյուրապետերը, իսկ արցախյան կազմակերպիչը Եսայի Հասան-Ջալալյանն էր: Սղնախները մեծ դեր կատարեցին 1722-1730թթ. ազատագրական պայքարի ժամանակ: Արցախյան ազատագրական պայքարը 1722-1730-ական թթ. ընթացել է 2 էտապներով՝

1. 1722-1724թթ. պայքարը ուղղված էր Պարսկական տիրապետության դեմ և ավարտվեց հայերի հաղթանակով և Արցախի ինքնիշխանության ամրապնդումով:

2. 1725-1731թթ., երբ ազատագրական պայքարը ընթանում էր թուրքական նվաճման դեմ, ավարտվեց արցախահայերի պարտությամբ և Թուրքերի կողմից Արցախի նվաճմամբ:

1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ 18-ՐԴ ԴԱՐԻ 20-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1.1 Պարսկաստանի թուլացումը, աֆղանների կողմից Սպահանի գրավումը ռուսական զորքերի արշավանքը Անդրկովկաս նպաստավոր պատրվակ էին Թուրքիայի նվաճողական քաղաքականության և արշավանքների համար, որը խնդիր էր դրել նվաճել Պարսկաստանի արևմտյան նահանգները, ամբողջ Անդրկովկասը: Միաժամանակ Օսմանյան պետությունը ձգտում էր ճնշել հայերի, վրացիների ազատագրական պայքարը, ինչպես նաև ցանկանում էր խոչընդոտել Ռուսաստանի հաստատումը Անդրկովկասում: 1723թ. հունիսին թուրքական բանակը ներխուժեց Վրաստան, գրավեց Թիֆլիսը և շարժվեց Գանձակ: 1724թ. գարնանը թուրքական մեկ այլ բանակ՝ Աբդուլլահ փաշայի գլխավորությամբ, ներխուժեց Արարատյան դաշտ: Հայերը համառ դիմադրություն ցույց տվեցին թուրք նվաճողներին: Հատկապես համառ էր 40-օրյա Կարբի գյուղի բնակիչների դիմադրությունը Սարգիսի և Պողոսի գլխավորությամբ: Կարբեցիները պայքարը դադարեցրին այն պայմանով, որ թշնամու բանակը չմտներ Կարբի: Դրանից հետո Օսմանյան Թուրքիան գրավում է Աշտարակը, Էջմիածինը և շարժվում դեպի Երևան: 1724թ. հունիսի 7-ին թուրքերը պաշարում են Երևանը: Քաղաքի պաշտպանության համար ոտքի է կանգնում ինչպես Երևանի, այնպես էլ՝ շրջակա գյուղերի բնակչությունը: Երևանը վերածվում է ռազմական ճամբարի: Քաղաքը պաշտպանող հայկական ուժերը բաժանված էին զորամասերի, որոնցից յուրաքանչյուրը ուներ իր հրամանատարը: Հրամանատարներից առանձնապես աչքի էին ընկնում Հովհաննես Հունդիբեկյանը, Դավիթ Միրզաջանյանը, Պողոս Քեչիբեկյանը: Երևանում Աբդուլլահ փաշան, հանդիպելով համառ դիմադրության, պահանջում է օժանդակ ուժեր: Սուլտանի հրամանով Գանձակի ուղղությամբ թուրքական բանակը շարժվում է Երևան՝ համալրելու օսմանյան բանակի ռազմական ուժերը, որի հետևանքով թշնամու զորքերի թիվը հասնում է 70000-ի, իսկ պաշտպանների՝ հայերի թիվը, ընդամենը 10000 էր: Դա ծանրացրեց Երևանի պաշտպանների վիճակը: 2 անգամ նրանք Սբ. Սարգսի եկեղեցում հրավիրում են խորհրդակցություն՝ վարդապետ Գրիգորի գլխավորությամբ, որպեսզի միջոցներ որոնեն Երևանի պաշտպանության համար: Երևանի պաշտպանությունը տևեց 3 ամիս, քանի որ ուժերը անհավասար էին, պարենի, զինամթերքի պակասը զգալի էր, ուստի, 1724թ. սեպտեմբերի 26-ին Երևանը գրավվեց թուրքերի կողմից: Աբդուլլան Երևանի գրավման համար կորցրեց 20000 թուրք ասկյար: Երևանի պաշտպանությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարի ամենահուզիչ, հերոսական էջերից է, որին է նվիրված Աբրահամ Երևանցու «Պատմություն պատերազմացն» աշխատությունը:

1.2 Թուրքական զորքերը ավելի համառ և կազմակերպված դիմադրության հանդիպեցին Արցախում: 1725թ. գարնանը թուրքական 3 զորամաս ներխուժեց Արցախ: Վարանդայի մելիքության հայերը շուրջ 6000 թուրք զինվորների կերակրելու և օթևան տալու պատրվակով, տեղավորելով Արցախի 33 գյուղերում, ընդհանուր ահազանգով հարձակվում և ոչնչացնում են թուրք զինվորներին. սպանվում են 2 թուրք փաշա, իսկ 3-րդը գերեվարվում է: 1726թ. թուրքական բազմահազարանոց բանակը կրկին ներխուժում է Արցախ և պաշարում է Քարագլխի (Շոշի) բերդը: Արցախցիները 8 օր համառ ճակատամարտերում ծանր հարված են հասցնում թշնամուն, որը, կորցնելով 800 զինվոր, ստիպված նահանջում է Գանձակ:

Չիմանալով Ռուսաստանի և Թուրքիայի միջև 1724թ. հունիսի 12-ի Կ. Պոլսի պայմանագրի մասին, արցախցիները սպասում էին ռուսական բանակի օգնությանը: Հիշյալ պայմանագրով Թուրքիան ճանաչել էր մերձկասպյան շրջանների միացումը Ռուսաստանին, իսկ ռուսական կողմը Թուրքիային էր թողել Հայաստանի, Վրաստանի, Գանձակի, Ատրպատականի և Պարսկաստանի մյուս անդրկովկասյան տարածքները: Այնպես որ, հայ ժողովուրդը երկար ժամանակ չէր կարող դիմանալ թուրքերին: Թուրքական զորամասերը ծանր պարտություն կրեցին նաև 1727թ. ամռանը: Սակայն Արցախի հայերի դրությունը ավելի ծանրացավ, երբ թշնամին համալրեց իր ռազմական ուժերը, պարզ էր, որ առանց օգնության անհնար էր պայքարը շարունակել: Ազատագրական ուժերի մի մասը, հուսախափ լինելով ռուսական խոստումներից, հետագա արյունահեղությունները կանխելու համար գերադասում են Թուրքիայի հետ բանակցելու և հպատակվելու ուղին: Նման քաղաքագիծ չընդունող հայ զինվորների մի մասը նախընտրեց հեռանալ Արցախից: 1729թ. սկզբներին Ավան հարյուրապետը մեկնեց ռուսական բանակ օգնություն ստանալու, սակայն, այն չստանալով և ծառայության անցնելով ռուսական բանակում, այլևս չվերադարձավ Արցախ: 1729-1731թթ. թուրքական նվաճման դեմ պայքարը շարունակեց միայն Գյուլիստանի սղնախը՝ Աբրահամ հարյուրապետի գլխավորությամբ: 1728թ. մահացել էր Եսայի Հասան-Ջալալյանը: 1730-ական թթ. օսմանյան բանակը նվաճեց Արցախը:

2. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ 18 - ՐԴ ԴԱՐԻ 20-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

2.1 18-րդ դարի 20-ական թվականների սկզբներին ազատագրական շարժումներ են սկսվում նաև Սյունիքում: Նախապես պետք է նշել, որ Սյունիքի և Արցախի միջև կային մի շարք էական տարբերություններ, որոնք էլ իրենց կնիքը թողեցին ազատագրական պատերազմների ամբողջ ընթացքի վրա: Ի տարբերություն Արցախի, որի բնակչությունը մաքուր հայկական էր, Սյունիքում որոշ թիվ էին կազմում մահմեդականները, մասնավորապես՝ թուրք և քուրդ քոչվոր ելուզակները, որոնք վաղ գարնանից մինչև խոր աշուն, իրենց անասունների հոտերով Կուրի հարթավայրային շրջաններից բարձրանալով, հաստատվում էին տեղի ալպյան արոտավայրերում: Ի տարբերություն Արցախի, որտեղ կազմավորվեց 40 հազարանոց հայկական կանոնավոր զորաբանակ, Սյունիքում այդպիսի ռազմական ուժեր չկային: Այստեղ մելիքների առանձին փոքրաթիվ ջոկատները ցաքուցրիվ էին, և զինվորականությունը համախմբված չէր ընդհանուր հրամանատարության ներքո: Եվ, վերջապես, ի տարբերություն Արցախի, որն ուներ պայքարը գլխավորող 2 առաջնորդներ՝ Եսայի Հասան-Ջալալյան ու Ավան հարյուրապետ, Սյունիքում այդպիսի հեղինակավոր գործիչներ չկային, որ կարողանային շարժումը համախմբել և ժողովրդին տանել իրենց հետևից: Այս ամենը նշանակում էր, որ ազատագրական շարժման համար Սյունիքում պայմաններն անբարենպաստ էին, և այստեղ այն սկսելու համար պետք է հաղթահարվեին ավելի շատ խոչընդոտներ: Սյունիքի ազատագրական պայքարի գործիչները լավ էին ըմբռնում այս բոլորը և հենց սկզբից համապատասխան միջոցներ էին փնտրում այդ խոչընդոտները հաղթահարելու համար:

Առաջին և կարևորագույն խնդիրը ազատագրական շարժման մյուս կենտրոն-ների հետ կապ հաստատելն էր, ինչպես օրինակ՝ Արցախի և Վրաստանի հետ: Կա-պերի հաստատումն ինքնանպատակ չէր, անհրաժեշտ էր ազատագրական ճիգերը փոխհամաձայնեցնել և հարկավոր օգնություն ստանալ: Ահա այս նպատակով է, որ 1722թ. սկզբներին մեղրեցի Ստեփանոս Շահումյանը՝ Սյունիքի մելիքների և տանու-տերերի հանձնարարությամբ, մեկնում է Թիֆլիս՝ Վրաստանի թագավոր Վախթանգ 6-րդի հետ հանդիպելու: Վախթանգի հանձնարարությամբ Ստեփանոս Շահումյանի հետ բանակցություններ է վարում թագաժառանգ Շահնավազը: Այդ ժամանակ վրա-ցական բանակում մեծ թվով հայ զինվորականներ կային: Հայերն աչքի էին ընկնում իրենց խիզախությամբ ու հայտնի էին որպես կարգապահ զինվորականներ: Նրանց մի մասը բնիկ վրաստանցիներ էին, քիչ չէին նաև Հայաստանի տարբեր շրջաններից Վրաստան տեղափոխվածները: Եվ ահա Շահնավազը Ստեփանոս Շահումյանին է ներկայացնում

նրանցից մեկին՝ Դավիթ Բեկին, որը լավագույնս կարող էր պայքարը համախմբել Սյունիքի ազատագրական ուժերն ու գլխավորել պայքարը պարսիկների դեմ:

Դավիթ Բեկը Վախթանգ թագավորի մերձավոր զորականներից էր ու նշանավոր էր վրացական բանակում իր հեղինակությամբ ու քաջագործություններով: Ենթադրելի է, որ նա ծագումով սյունեցի էր, և պատահական չէր հենց նրան Սյունիք ուղարկելը: Վախթանգը այդքան պատասխանատու գործ կարող էր հանձնարարել միայն վստահելի ու գիտակ մարդու, ինչպիսին և հանդիսանում էր Դավիթ Բեկը:

Իր մերձավորագույն զինակիցներից ստեղծելով 30 հոգանոց ջոկատ, որի մեջ էին Բայինդուրը, Գորգին, Ավթանդիլը, Հովհաննեսը և ուրիշներ, 1722թ. վերջերին Դավիթ Բեկը ժամանեց Սյունիք: Նա հաստատվեց Հաբանդ գավառի ամենամեծ ավանում՝ Շինուհայրում, և սկսեց վերակառուցել տեղի ավերված ամրոցը, որը դարձավ նրա առաջին զորակայանը: Իմանալով Դավիթ Բեկի գալստյան մասին, Սյունքի մելիքների ու տանուտերերի մեծ մասը գալիս է Շինուհայր, ներկայանում նրան և պատրաստականություն հայտնում աջակցելու ապագա ապստամբության կազմակերպմանը: Առաջինն իրենց ջոկատներով եկան և ներկայացան Չավնդուրի Թորոս իշխանը, Գողթնի ու Հին Ձուղայի տանուտերերը, Պապ Պալի հարյուրապետերը, Մխիթար սպարապետը և ուրիշներ: Որոշ տատանումներից հետո նրան են միանում Հալիձորի մելիք Փարսադանն ու Տեր Ավետիսը: Կարճ ժամանակամիջոցում նրա շուրջն են հավաքվում մոտ 2000 մարտիկներ, ստեղծվում է կանոնավոր ու կարգապահ բանակ: Դավիթ Բեկն իր մոտ է հրավիրում նաև Սյունիքի հոգևոր առաջնորդ, Տաթևի վանքի վանահայր Հովակիմ եպիսկոպոսին, որը հավաստում է, թե հոգևոր դասն ամբողջությամբ պաշտպանում է ապստամբության գաղափարը և աջակից է լինելու շարժմանը:

Ինչպես նշեցինք, Սյունիքի պայմանները բավականին բարդ էին. երկրամասի բնակչության մեջ զգալի տոկոս էին կազմում քոչվոր թուրք և քուրդ ցեղերը, որոնք կատարյալ պատուհաս էին հայ բնակչության համար և խանգարում էին ապստամ-բության կազմակերպմանը: Ահա թե ինչու Դավիթ Բեկն առաջինն իր գործողություն-ները սկսեց հենց այս ցեղերի դեմ: Համառ և արյունալի կռիվներից հետո նա ջախջա-խեց կարաչոռլու և ջիվնշիր քոչվորական ցեղախմբերին: Հատկապես տպավորիչ էր Ուչթափա սարահարթում ջիվանշիր 32 ցեղերի դեմ տարած հաղթանակը, երբ Դավիթ Բեկն ընդամենը 400 ընտիր ռազմիկներով պարտության մատնեց հակառակորդի մի քանի հազարանոց հրոսակախմբին: Այսպիսով, վերացվեցին ապստամբական ուժերի միավորմանն ու համագործակցությանը մեծապես խանգարող այդ խոչընդոտները: Վաչկատուն ցեղերից խլված ամբողջ գույքը, երիվարներն ու անասունները

բաժանվեցին հայ գյուղացիներին: Այս առաջին հաղթանակները նպաստեցին Դավիթ Բեկի հեղինակության բարձրացմանն ու նրա փառքի տարածմանը: Շատ հայ գյուղացիներ եկան Շինուհայր և մտան նրա դրոշի ներքո: Կային նաև տատանվողներ, կրավորական դիրքորոշում որդեգրածներ և ուղղակի դավաճաններ: Զորավարն անողոքաբար պատժում է անջատողականներին, դավաճաններին և ուրացողներին: Այսպես, մելիք Բաղիրը, որը որդիների հետ մահմեդականություն էր ընդունել՝ ամրանալով Տաթևում, փորձում էր թիկունքից հարվածել ապստամբներին: Երկօրյա մարտերից հետո Դավիթ Բեկը գրավում է Տաթևը և մահվան դատապարտում ուրացող մելիքին, իսկ նրա գույքը՝ բռնագրավելով բաժանում բնակչությանն ու զինվորներին: Նա գլխատել է տալիս նաև Երիցվանիկի (Արծվանիկի) մահմեդականացված մելիք Ֆրանգյուլին և էլի մի քանի ուրիշ դավաճանների: Անպատիժ չէին մնում նաև այն զինակիցները, որոնք զանցանքներ էին թույլ տալիս կամ չէին ենթարկվում կարգապահությանը: Վախկոտություն և խուճապ տարածելու համար զորավարը գլխատել է տալիս իր մտերիմ Պապին, կարճատև կալանքի ենթարկում ազդեցիկ Սեր Ավետիսին, անգամ՝ Մխիթար սպարապետին: Նման քայլերից հետո Սյունիքում հաստատվում է ամուր կարգ ու կանոն, ստեղծվում մարտունակ և օրինապահ բանակ:

Այնուհետև Դավիթ Բեկը լայնածավալ պայքար սկսեց ավելի կազմակերպված ու վտանգավոր ուժերի՝ պարսկական տեղական և հարևան խաների, տարբեր կարգի ավատերերի ու բեկերի դեմ: Ազատագրական պատերազմի առաջին մեծ հաղթանակը հայերը ձեռք բերեցին 1723թ. Չավնդուրի ճակատամարտում, երբ գիշերային հանդուգն հարձակումով ջախջախիչ պարտության մատնեցին Բարգուշատի և Ղարադաղի խաների 18 հազարանոց միացյալ բանակին: Դավիթ Բեկը պատերազմեց նաև Կապանի, Օրդուբադի և Նախիջևանի խաների դեմ: Տպավորիչ էր հատկապես Զեյվա անառիկ ամրոցի գրավումը Մխիթար սպարապետի և Տեր Ավետիսի զորամասերի կողմից, որի ժամանակ հակառակորդը կորցրեց 4000 մարդ: Մեկ տարի անց՝ 1724թ. մարտի 29-ին, Դավիթ Բեկը պաշարում է ռազմական կարևոր նշանակություն ունեցող Որոտնա բերդը և չորսօրյա արյունալի մարտերից հետո գրավում այն:

Ապստամբական ուժերի հաջողությունները պարսից խաներին ստիպում են վերջ տալ ներքին երկպառակտություններին և իրենց ուժերը միավորել Դավիթ Բեկի դեմ: Նրանց է միանում մյուս ափին գտնվող Ղարադաղի խանը: Իր հերթին պարսից Թահմազ 2-րդ շահը ապստամբների դեմ է ուղարկում կանոնավոր բանակի մի քանի զորամասեր՝ հրահանգելով միացյալ ուժերով հայերին վանել ու ոչնչացնել:

Սյունիքի համար այս օրհասական պահին՝ 1724թ. մայիսին, Արցախից օգնական ուժեր են գալիս՝ Իվան Կարապետի և Ավան հարյուրապետի հրամանատարու-

թյամբ: Դա հայ ազատագրական ուժերի համագործակցության հիանալի օրինակ էր, որը բերելու էր փայլուն հաղթանակներ: Անհրաժեշտ էր շարունակել ու խորացնել հայոց անկախության այս երկու պատվարների՝ Արցախի և Սյունիքի համագործակ-ցությունը, որը կարող էր ավելի նշանակալից արդյունքների հանգել:

Սյունիքի ազատագրական վերջին մարտերը տեղի ունեցան 1725թ. Գողթնում և Մեղրիում: Ականատես պատմիչի վկայությամբ պարսիկներն այստեղ տալով հազարավոր սպանվածներ՝ հեռանում են Արաքսի մյուս ափը: Անշուշտ, եղան նաև ցավալի պարտություններ և անհաջողություններ, ինչպես օրինակ՝ Սիսիանի և Եղվարդի ճակատամարտերի ժամանակ, սակայն, դրանք չկարողացան կասեցնել հայկական իշխանության հետագա ամրապնդման գործընթացը: Ազատագրական քառամյա պայքարի արդյունքում ամբողջ Սյունիքն ու մերձակա մի քանի շրջաններ ազատագրվեցին: Անշուշտ, Դավիթ Բեկն ու իր զինակիցները վերջնական հաղթանակի հույսը կապում էին Ռուսաստանից սպասվելիք օգնության հետ, որով նրանց հուսադրում էր Իվան Կարապետը:

Այս հաղթանակներից հետո ազատագրված Սյունիքում Դավիթ Բեկը ստեղծում է անկախ Հայկական իշխանություն: Բոլոր մելիքներն ու տանուտերերը անվերապահորեն ենթարկվում են նրա իշխանությանը և կատարում իրենց պարտավորությունները: Հետաքրքիր է, որ ժառանգական իշխանություն ունեցող մելիքական շատ տների ներկայացուցիչներ ներկայանում են Դավիթ Բեկին, և նրա կողմից հաստատվում իրենց նախկին իրավունքների մեջ: Ակնբախ է, որ Սյունիքի մելիքները նրան ճանաչում էին գերագահ և ընդունում նրա տիրապետությունը լեռնաշխարհում հաստատված անկախ իշխանության ողջ տարածքում:

Զորապետի հրամանով ամրացվում են բերդերն ու ամրոցները, կառուցվում են նորերը, որոնցում հաստատվում են բերդապահ կայազորներ: Այսպես, Շինուհայրը ուներ 550, Չավնդուրը՝ 2000, Կալերը՝ 700, Մեղրին՝ 400, Սիսիանը՝ 500, Տաթևը՝ 400 զինվորներ ունեցող կայազորներ: Իշխանությունում զինվորների ընդհանուր թիվը հասնում էր 7000-ի: Զորաբանակների հրամանատարներ են նշանակում ինչպես Դավիթ Բեկի հետ Վրաստանից ժամանած Ավթանդիլը, Գորհին, այնպես էլ՝ բնիկ մելիքներն ու տանուտերերը՝ Տեր Ավետիսը, Թորոս Նուբարը, Ադամը, Վարդանը և ուրիշներ: Զորքերի հրամանատար (սպարապետ) է նշանակվում Մխիթարը, ստեղծվում են ռազմական խորհուրդ և շտաբ: Զորամասերն ունեին իրենց մարտական դրոշները: Փաստորեն, Արցախի օրինակով, Դավիթ Բեկը Սյունիքում կազմակերպում է սղնախ՝ այն դարձնելով հզոր ու անառիկ ամրացված երկրամաս: 1724 թվականից հայկական նորաստեղծ իշխանության կենտրոնատեղին է դառնում Կապանի Հալիձոր

բերդը, որտեղ կառուցվում են լրացուցիչ պաշտպանական բնագծեր, նոր աշտարակներ, ամբարվում է մեծ թվով զենք, զինամթերք, պարեն:

Այսպիսով, 1722-1725թթ. ընթացքում համառ ու արյունալի կռիվներից հետո Դավիթ Բեկին հաջողվեց երկրամասը ազատագրել քոչվորներից, պարսկական վարչակազմից, հակահարված տվեց խանական դաշնակցային ուժերին և Սյունիքում ստեղծեց Հայկական անկախ իշխանություն: Պայմաններ ստեղծվեցին համագործակցելու հայկական մյուս անկախ իշխանության՝ Արցախի հետ, և միասնական ուժերով կերտելու դարեր առաջ կործանված հայկական պետականությունը, սակայն, իրադարձությունների զարգացումը այլ ընթացք ստացավ:

2.2 ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՍՅՈՒՆԻՔ :ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԸ

Սյունիքում պարսկական տիրապետության թոթափման և հայկական անկախ իշխանության ստեղծման ժամանակ, ինչպես արդեն ասվել է, Օսմանյան Թուրքիան սկսել էր Անդրկովկասի ռազմակալման իր ծրագրի իրականացումը: Թուրքերը գրա-վել էին Թիֆլիսը, Երևանը, Գանձակը և ձգտում էին ներխուժել Արցախ և Սյունիք: Առաջին անգամ նրանք փորձեցին Սյունիք ներխուժել դեռևս 1725թ. գարնանը, սա-կայն, մեծ թվով զոհեր տալով՝ հետ շպրտվեցին: 1726թ. ընթացքում թուրքերը, այնու-ամենայնիվ, կարողացան աստիճանաբար հաստատվել երկրամասի հարավից անց-նող առևտրական մայրուղու երկայնքով և ռազմակալման ենթարկելով Նախիջևանը, Օրդուբադը, Ագուլիսը, Մեղրին, սկսեցին թափանցել Սյունիքի ներքին գավառները: Տեղացի թուրքերը և պարսից խաները աջակցում էին նրանց:

Հայկական իշխանությունը, չորս կողմերից շրջապատված, օրհասական կռիվ տվեց մի քանի անգամ թվական գերակշռություն ունեցող նվաճողների դեմ: Հայերն ունեցան տարածքային և ռազմական նկատելի կորուստներ: Միաժամանակ սկսեց ջլատվել Սյունյաց զինվորականության միասնությունը: Ապստամբական ուժերի շար-քերում նկատվեցին վհատության և հուսալքության դեպքեր: Նման պայմաններում՝ Մխիթար սպարապետի նախաձեռնությամբ, 1726թ. մարտի 24-ին, 8 մելիքների և հարյուրապետերի ստորագրությամբ մի խնդրագիր է ուղարկվել ռուսական կառավարությանը: Այստեղ նշված էր. «Մնացել ենք չորս կողմերից շրջապատված բերդի մեջ, ինչպես թռչունը՝ վանդակի, աղաչում ենք Ձեզ՝ հանուն Քրիստոսի սիրո, շուտափույթ օգնության հասնել և փրկել մեզ»: Սակայն, ինչպես նախորդ աղերսագրերը, սա ևս մնաց անարդյունք: Դա պատահական չէր, քանի որ 1724թ.

Թուրքիայի հետ կնքված պայմանագրի համաձայն՝ Անդրկովկասի մյուս տարածքների հետ միասին Սյունիքն էլ գտնվելու էր վերջինիս տիրապետության ներքո, իսկ Ռուսաստանը՝ տվյալ քաղաքական իրադրությունում ի վիճակի չէր միջամտելու: Ուստի, մնում էր միայն ապավինել սեփական ուժերին: Որոշ գործիչներ էլ հանդես էին գալիս թուրքերի հետ բանակցություններ սկսելու օգտին, եղան նաև այնպիսիները, որ լքեցին Դավիթ Բեկին և անցան թուրքերի կողմը:

1727թ. փետրվարին թուրքական-հայկական բանակը լայնածավալ գործողու-թյուններ սկսեց Հայկական իշխանության դեմ: Հայկական զինված ուժերը, ծանր կո-րուստներ կրելով, արյունալի մարտերով հետ էին նահանջում: Նրանք ամրացան իրենց վերջին հենակետ Հալիձորում: Թուրքական զորաբանակները, որոնց միացան Դավիթ Բեկի կողմից ոչ վաղ անցյալում պարտություն կրած Բարկուշատի և Ղարադաղի խաների, կարաչոռլու քուրդ քոչվորների, տեղական թուրք և քուրդ մյուս ավատատերերի բազմահազար զորքերը, 1727թ. փետրվարի 26-ին շրջապատեցին Հալիձորը: Վեց օր շարունակ թուրքական բանակները կատաղի գրոհներով փորձում էին գրավել ամրոցը: Շնորհիվ բերդի անառիկության՝ նրա պաշտպանները քիչ կորուստներ ունեցան, ինչպես գրում է ականատեսը, օրական մեկ կամ երկու հոգի, իսկ հակառակորդի կողմից՝ 200, երբեմն՝ 300-ից 400 զոհ էր լինում: Պաշարման 7-րդ օրը՝ մարտի 4-ի լուսադեմին, թուրքերը, պարսպակործան 26 մեքենաների ու սանդուղքների օգնությամբ 3 կողմից բուռն գրոհների դիմելով, տեղ-տեղ բարձրացան պարիսպների վրա: Թեև պաշտպանները կարողացան հետ շպրտել այս գրոհը, սակայն, վիճակը գնալով օրհասական էր դառնում: Նման 1-2 գրոհից հետո անհնարին կդառնար հետագա դիմադրությունը:

Օրվա երկրորդ կեսին Դավիթ Բեկը հանդուգն ու անսպասելի որոշում ընդունեց. դուրս գալ շրջապատված ամրոցից և հանկարծակի հարձակումով հակառակորդին ստիպեց հետ նահանջել: Հակահարձակումը գլխավորում էին Մխիթար Սպարապետն ու Տեր Ավետիսը: Դիմելով զինվորներին՝ նրանք հորդորում էին. «Արիացե՛ք, մի երկնչեք, հետևեցե՛ք մեզ, եթե հասել է մեր վախճանը՝ քաջաբար մեռնենք, որովհետև մեզ համար ավելի լավ է արիությամբ պարիսպներից դուրս մեռնել, քան այստեղ, մեր աչքերի առաջը տեսնել մեր ընտանիքների ու բարեկամների մահը և այլ դժնդակություններ»:

Շփոթահար ու հանկարծակի եկած հակառակորդը՝ չդիմանալով հայ զինվորների հարձակման թափին, սկսեց խուճապահար նահանջել և ջախջախիչ պարտություն կրեց: Հալիձորի ճակատամարտում թուրքերը կորցրեցին 13000 զինվոր, հայերի ձեռքն ընկան 143 մարտական դրոշներ, հսկայական ռազմավար: Կրնկակոխ հետապնդելով

սարսափահար փախչող թշնամուն՝ հայկական ուժերն սկսեցին ազատագրել օսմանյան զորքերից և շարժվել դեպի Գողթն:
Այս փայլուն հաղթանակը նոր ուժ և եռանդ հաղորդեց հայ ազատագրական շարժմանը: Վհատված, կրավորական կեցվածք ընդունած շատ մելիքներ դարձյալ վերադարձան իրենց զորավարի մոտ: Երկրորդ տպավորիչ հաղթանակը թուրքերի դեմ հայերը շահեցին Մեղրիի ճակատամարտի ժամանակ: Մխիթար սպարապետի և Տեր Ավետիսի զորաջոկատները, ապստամբ մեղրեցիների օգնությամբ անսպասելիորեն ներխուժելով Մեղրու բերդ, հանկարծակի եկած թուրքերին ստիպում են նահանջել: Հայերը թուրքերին քշում են դեպի Արաքսի կիրճը, որի մյուս կողմում դարանակալել էին հայկական այլ զորաջոկատներ: Թուրքերն ընկնում են թակարդը: 2 կողմերից նրանց առնելով կրակի տակ, հայերը թուրքերին ստիպում են անցնել Արաքսը: Գետանցի ժամանակ շատ թուրքեր խեղդվում են գետի վարար ջրերում: Բացի ռազմավարից, հաղթողների ձեռքն էին ընկել նաև Սյունիքի 32000 հարկաթղթերը, որոնք անմիջապես այրվեցին: Հակառակորդը պարտություն կրեց նաև Բեխ գյուղում, Օրդուբադի մոտ և այլուր: Փաստորեն ամբողջ Սյունիքն ազատագրված էր, իսկ Հայկական անկախ իշխանությունը՝ վերականգնված:
Թուրքերի դեմ տարած հայերի փայլուն նոր հաղթանակները մեծ տպավորություն թողեցին պարսկական քաղաքական շրջանակներում: Թուրքերի կողմից ջախջախված Թահմազ 2-րդ շահն ու նրան հավատարիմ մնացած խաները փոխում են իրենց թշնամական անհանդուրժող վերաբերմունքը հայերի նկատմամբ: Ինքը՝ Դավիթ Բեկը, ցուցաբերելով դիվանագիտական ճկունություն, շրջահայացություն և նոր քաղաքական պայմանների համեմատ նոր կողմնորոշման իրատեսություն, որոշում է համագործակցել պարսկական իշխանություններին հետ, հասկանալով, որ ռուսական օգնությունը տվյալ պահին անհնարին է, իսկ ռուսների խոստումները՝ քաղաքական երկդիմի խաղ: Դավիթ Բեկն այժմ փորձում է ստեղծել հայ-պարսկական միացյալ ճակատ ընդդեմ ընդհանուր թշնամու՝՝ թուրքերի: Շուտով Մազանդարանում ապաստանած պարսից Թահմազ շահը Դավիթ Բեկին հղում է. «Քաջ Դավիթ Բեկդ և Հայոց քաջարի զորականներին» ուղերձը, ազնվացեղ նժույգներ, թանկարժեք նվերներ: Շահը դրվատում է նրանց թուրքերի դեմ տարած զարմանալի հաղթանակների համար և ի նշան գնահատման՝ հրամայում է. «Եվ ահա այսօր քեզ կարգեցի իշխան և գլուխ մեր բոլոր խաների, որ այդ կողմերում են Կապանի երկիրը, որ վերցրիր քաջությամբ, քե՛զ լինի»: Փաստորեն, շահը Դավիթ Բեկին նշանակում է տարածաշրջանի (Կապան, Ղարադաղ, Բարկուշատ, Նախիջևան և այլն) կուսակալ և այնտեղ գտնվող պարսկական զորքերի հրամանատար: Հատկապես տպավորիչ էր այն, որ Դավիթ

Բեկին իրավունք էր տրվում հատելու սեփական դրամ, որն անկասկած ինքնավար իշխանության կարևորագույն խորհրդանիշներից մեկն էր:
Այսպիսով, Սյունիքի ազատագրական պատերազմներն աննախընթաց արդյունքի հանգեցին: Հայկական իշխանության անկախությունը ճանաչվեց Պարսկաստանի կենտրոնական ղեկավարության կողմից, որը երաշխիք էր նրա հետագա ամրապնդման և զարգացման համար:
Սակայն, այս բախտորոշ պահին է, որ Դավիթ Բեկը ծանր հիվանդանում է և 1728թ. կեսերին մահանում Հալիձորում: Անփոխարինելի կորստից ընկճված զորականներն իրենց առաջնորդ են ընտրում Մխիթար սպարապետին: Մխիթարը ուժեղ անհատականություն էր, մասնակցել էր Դավիթ Բեկի բոլոր նշանավոր ճակատամարտերին, աչքի ընկել ռազմավարական հմտությամբ և հերոսական խիզախումներով: Հավատարիմ ազատագրական շարժման մեծ ղեկավարի թողած վեհ ավանդներին՝ Մխիթար սպարապետը հաջողությամբ շարունակեց պայքարը թուրքական նվաճողների դեմ: Սակայն, գնալով ուժեղանում էին ներհակություններն ապստամբական շարժման ղեկավարների միջև: Տեր Ավետիսն ու նրան հետևող մյուս զորականները, այլևս չհավատալով վերջնական հաղթանակին և համոզվելով, որ ռուսական օգնությունը հնարավոր չէ, հուսալքվեցին և այլ ելք չգտնելով՝ որոշեցին բանակցել թուրքերի հետ: Այդ ժամանակ արդեն սկսվել էր թուրքական նոր արշավանքը և նրանք երկրորդ անգամ պաշարել էին Հալիձորը: Մխիթարը չկարողացավ համոզել զինակիցներին շարունակելու պայքարը: Մնալով գրեթե մենակ, նա իր փոքրաթիվ կողմնակիցներով մի գիշեր հեռացավ պաշարված ամրոցից: Թեև, Տեր Ավետիսը նախապես երաշխիքներ էր ստացել թուրք փաշայից, որ Հալիձորը հանձնելու դեպքում նրա բնակիչները չեն տուժելու, երդմնազանց թուրքը հրամայում է կոտորել բերդում եղած բոլոր տղամարդկանց, իսկ կանանց ու երեխաներին գերի տանել: Հալիձորը հիմնահատակ ավերվեց: Այս դեպքերը տեղի են ունեցել 1729 թվականի սկզբներին: Տեղի ունեցածից ցնցված՝ Տեր Ավետիսը հեռանում է Հայաստանից և գնում է Երուսաղեմ ապաշխարհելու:
Իսկ աննկուն ու եռանդով լի սպարապետը մոտ երկու տարի շարունակում է պայքարը թուրք նվաճողների դեմ: Նրան հաջողվում է հավաքել հայկական ցրված ուժերը և անգամ հասնել որոշ հաջողությունների: Մխիթարի դրոշի ներքո համախմբված, հայկական զորքը ազատագրում է բազմաթիվ բնակավայրեր, տանում փայլուն հաղթանակներ: 1730թ. սպարապետը թուրքերին ծանր պարտության է մատնում Օրդուբադի մոտ և մեծ ռազմավարով հետ վերադառնում Սյունիք՝ Խնձորեսկի բերդում միաժամանակ հանգիստ առնելու մտադրությամբ: Սակայն, Մխիթարի ուղեգիծը

չպաշտպանող խնձորեսկցի մի խումբ հաշտվողականներ, վախենալով, որ իրենց ավանը ևս կարող է արժանանալ Հալիձորի ճակատագրին, թուրքերին սիրաշահելու միտումով դավաճանաբար սպանում են սպարապետին: Թավրիզի թուրք փաշան, որի մոտ էին ուղարկել Մխիթարի կտրած գլուխը, հրամայում է գլխատել հայոց սպարապետին սպանողներին:

Մխիթարի սպանությունից հետո հայ ապստամբական ուժերը զենքը վայր են դնում և աստիճանաբար ցրվում: Նրանց մի մասը ռուսների հրավերով տեղափոխվում է ռուսական տիրապետության սահմանները: Չկար մեկը, որ շարունակեր Դավիթ Բեկի գործը:

Թեև ապստամբությունը պարտություն կրեց, սակայն, Սյունիքի հայության առանձին զինված ջոկատներ, ապավինած լեռնային անմատչելի վայրերին, մինչև 30-ական թվականների կեսերը դեռ շարունակում էր պարտիզանական պայքարը, մինչև որ Նադիր խանը ի վերջո ջախջախեց թուրքերին և նրանց դուրս քշեց Ատրպատականից ու Անդրկովկասից:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ազատագրական պայքարը Արցախում ավարտվեց անհաջողությամբ հետևյալ պատճառներով՝

1.Հայերը չունեին դաշնակիցներ, Վրաստանը նվաճված էր, իսկ Ռուսաստանը խոստացած օգնությունը չտրամադրեց:

2.Հուսահատությունից և ներքին տարաձայնություններից հայկական զորամասերը կազմալուծվեցին. նրանցից մի մասը անցան մերձկասպյան տարածքներ:

3.Թշնամու ուժերը մի քանի անգամ գերակշռում էին արցախցիներին:

Չնայած պարտությանը՝ ազատագրական պայքարը Արցախում ունեցավ պատմական խոշոր, մեծ նշանակություն՝

1.Ստիպեց զավթիչներին որոշ զիջումներ կատարել և զգայուն քաղաքականություն վարել,

2.Բարձրացավ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը և հավատ ներշնչեց ապագա հաղթանակի նկատմամբ,

3.Եսայի Հասան-Ջալալյանը՝ իրենց հայրենասիրությամբ, անձնական քաջությամբ, անձնազոհությամբ օրինակ հանդիսացան հետագա սերունդների համար: Այդ է վկայում 1991-1994թթ. Արցախյան ազատագրական պայքարը ադրբեջանցիների դեմ, որի ժամանակ հայ ժողովուրդը, համախմբվելով 1 գաղափարի շուրջ, կարողացավ փայլուն հաղթանակ տանել թշնամու դեմ, որի արդյունքը եղավ Արցախի Հանրապետության ստեղծումը: Անշուշտ, 18-րդ դարի 20-ական թվականների Արցախի և Սյունիքի ազատագրական պատերազմները հայ ազատագրական շարժման ամենանշանակալից իրադարձություններից են: Հայերն առաջին անգամ փորձեցին զենքի միջոցով հասնել իրենց ազատությանը: Այդ փորձը պսակվեց աննախադեպ հաջողությամբ. կերտվեցին Արցախի և Սյունիքի Հայկական անկախ իշխանությունները: Սակայն, չնայած տարած հաղթանակներին և ունեցած հաջողություններին, միայնակ, զրկված դաշնակիցներից, այդ իշխանությունները չկարողացան շարունակել հետագա պայքարը և տեղի տվեցին Օսմանյան կայսրության ռազմական ահռելի ուժերի առջև: Այդ ժամանակ հայերի վերջնական ազատագրումը կարող էր տեղի ունենալ միմիայն ռուսական կողմի ռազմական գործուն միջամտության շնորհիվ, որը չեղավ: Հայաստանի ազատագրության խնդիրը դարձյալ անորոշ ժամանակով հետաձգվեց:

Օգտագործված գրականության ցանկը

1.Աշոտ Մելքոնյան, «Հայոց պատմություն»,1998 թ. հրատարակչություն / էջ 112 – 117 /

2.Սարգսյան Ա., Հակոբյան Ա., «Հայոց պատմություն հնագույն շրջանից մինչև մեր օրերը», 2004 թ. հրատարակչություն / էջ 129 – 133 /

3.Սիմոնյան Հ., «Հայոց պատմություն. հիմնահարցեր», 2000 թ. հրատարակչություն / էջ 101 – 121 /

4.Ն Ձ Պ դասագիրք 9 – րդ դասարան , 2015 թ, հրատարակչություն / էջ 17 – 19 /

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման

ենթակա ուսուցիչների վերապատրաստում

ՀԵՏԱԶԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Տեխնածին ԱԻ-ներ՝ հրդեհներ, պայթյուններ, թունավոր նյութերի արտանետում, կենսաապահովման և հիդրոդինամիկ վթարներ»

Կատարող՝ Արթուր Ռաֆիկի Չատինյան

Մասնագիտությունը՝ Նախնական զինվորական պատրաստության ուսուցիչ

Խմբի պատասխանատու՝ Անդրանիկ Սարգսյան

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բովանդակություն ---------- 2
2. Ներածություն---------- 3
3. Հրդեհներ ---------- 4
3.1.Պաշտպանությունը հրդեհներից---------- 8
4. Պայթյուններ ---------- 13
4.1.Պաշտպանությունը պայթյուններից ---------- 16
5. Թունավոր նյութերի արտանետումներ ---------- 17
5.1. Պաշտպանությունը ՈՒՆԹՆ-երի արտանետումներից ---------- 20
6. Կենսաապահովման և հիդրոդինամիկ վթարներ ---------- 21
7. Եզրակացություն ---------- 23
8. Օգտագործված գրականություն ---------- 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշվում է <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> ՀՀ օրենքում՝ արտակարգ իրավիճակը որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի, բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության, զենքի տեսակների կիրառման հետևանքով առաջացած իրավիճակ է, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի և վիրավորների, շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման (N-1)։ Ըստ ծագման արտակարգ իրավիճակները լինում են բնածին, տեխնածին, կենսաբանական, մարդածին։ Մարդկության զարգացման ողջ ընթացքում աղետները հազարավոր մարդկային զոհերի, զրկանքների և նյութական կորուստների պատճառ են դարձել։ Դրանք մինչև օրս էլ ներկայացնում են զարգացող և մեծացող վտանգ՝ պետության և մարդկային հասարակության կողմից պահանջելով մեծ ուշադրություն։ Մարդկության զարգացման ողջ ընթացքում աղետները հազարավոր մարդկային զոհերի, զրկանքների ե նյութական կորուստների պատճառ են դարձել։ Դրանք մինչև օրս էլ ներկայացնում են զարգացող և մեծացող վտանգ՝ պետության և մարդկային հասարակության կողմից պահանջելով մեծ ուշադրություն։ Աշխարհում բնական և տեխնածին աղետներից տարեկան մահանում է 2.5 մլն. մարդ, իսկ նյութական վնասը կազմում է մոտ 40 մլդ. դոլար։ Աղետներից հաճախակի տուժող երկրներում խաթարվում և դանդաղում է տվյալ պետության զարգացման ընթացքը, և տուժած բնակչությունը դժվարանում է ստեղծված իրավիճակից ինքնուրույն դուրս գալ՝ դիմելով հաճախ դրսի օգնությանը։ Աղետը մարդկային հասարակության կենսագործունեության բնականոն ընթացքի ընդհատումն է, որը բերում է մարդկային զոհերի, նյութական արժեքների կորստի և մեծ վնաս է հասցնում շրջակա միջավայրին։ Աղետների հետևանքով ստեղծված արտակարգ իրավիճակներն, ըստ ազդեցության չափերի, լինում են՝

. Տեղային, երբ աղետը տեղի է ունեցել որևէ կառույցի (գործարան, ձեռնարկություն և այլն) մի հատվածում, և աղետի սահմանները դուրս չեն գալիս այդ տարածքից։

• Տեղական, երբ աղետն ընդգրկում է ամբողջ կառույցը կամ նրա մի քանի հատվածները:

• Համայնքային, երբ աղետի սահմանները դուրս չեն գալիս համայնքի տարածքից:

• Մարզային, երբ աղետի սահմանները դուրս չեն գալիս մարզի տարածքից:

• Հանրապետական, երբ աղետի սահմանները դուրս չեն գալիս հանրապետության տարածքից:

• Մերձսահմանային, երբ աղետը տեղի է ունեցել որևէ պետության սահմաններում, բայց հետևանքներն առկա են մեկ այլ պետությունում կամ' ընդհակառակը:

Տեխնածին աղետներն այն վթարներն ու աղետներն են, որոնք անմիջականորեն կապված են հասարակության զարգացման և մարդու տնտեսական գործունեության ակտիվացման հետ: Իր ողջ պատմական ճանապարհին մարդկությունն ակամայից ստեղծել և ստեղծում է տեխնածին աղետների առաջացման և զարգացման պայմաններ: Արդյունաբերության մեջ, տրանսպորտում, հիդրոտեխնիկական կառույցներում, բնակարանային ե կոմունալկենցաղային բնագավառներում, էներգետիկ համակարգում ամեն օր տեղի են ունենում պայթյուններ, հրդեհներ, տրանսպորտային և արտադրական պատահարներ, շրջակա միջավայր են արտանետվում թունավոր թափոններ: Այդ և այլ նմանատիպ երևույթները մարդկային զոհերի և նյութական արժեքների կորստի պատճառ են դառնում: Անիվի, շարժիչի հայտնադործումը, ատոմի ճեղքումը, մարդու թռիչքը տիեզերք և գիտատեխնիկական նման այլ գյուտերն իրականում օգուտից բացի մարդկությանը բերել են նաև մեծաքանակ զրկանքներ: Մարդկությունը մեծ գնով է վարձահատույց լինում գիտատեխնիկական առաջընթացի համար: Այժմ աղետների 75-80%-ը կազմում են տեխնածին աղետները:

3.ՀՐԴԵՀՆԵՐ

Երկրագնդի վրա տարեկան տեղի ունեցող հրդեհների քանակը հասել է 6,5 միլիոնի, յուրաքանչյուր 5 վայրկյանը մեկ ինչ-որ տեղ հրդեհ է բռնկում: Հրդեհներ առաջանում են ձեռնարկություններում, հիվանդանոցներում, հյուրանոցներում, հանրախանութներում, ռեստորաններում, վարչական շենքերում ու բնակելի տներում,

այրվում են գնացքներ, ինքնաթիռներ և նավեր: Կրակը չի խնայում թանգարաններն ու գրադարանները, տաճարներն ու մշակույթի հուշարձանները, թատրոններն ու մարզասրահները: Ամենածանր հետևանքները կապված են խոշոր հրդեհների հետ, որոնք տեղի են ունենում արդյունաբերական համալիրներում, տրանսպորտային մայրուղիներում, բարձրահարկ շենքերում և այլն: Հրդեհների քանակի, պատճառված վնասի ու զոհերի թվի վրա ազդող բազմաթիվ օբյեկտիվ գործոններից կարելի է առանձնացնել մի քանի հիմնական խմբեր: Նախ դա հրդեհավտանգավորության իրական ու լիովին հասկանալի աճն է աշխարհում՝ պայմանավորված այնպիսի նոր նյութերի կիրառմամբ, որոնք ստեղծվել են գիտության նվաճումների շնորհիվ՝ մեծ քանակությամբ նավթի ու նավթամթերքների, բնական ու արհեստական գազերի օգտագործմամբ, արտադրությունում բարդ և էներգատար տեխնոլոգիական գործընթացների ներդրմամբ: Ժամանակակից նյութերի մեծ մասն այրվելիս արձակում է ավելի շատ ջերմություն և մի քանի անգամ ավելի շատ այրման թունավոր արգասիքներ՝ քան փայտանյութը: Ժամանակակից տեխնոլոգիական գործընթացներում հաճախ օգտագործվում են չափազանց բարձր ճնշումներ ու ջերմաստիճաններ, բարձր կալորիականության հումք, ինչի հետևանքով դրանք ունեն խիստ մեծ պոտենցիալ հրդեհավտանգավորություն: Տնտեսության բոլոր ոլորտներում առկա էներգիայի հոսքերը, վերահսկողությունը փոքր ինչ թուլացնելու դեպքում, ձգտում են <<ազատության>>՝ վերածվելով կործանարար հրդեհի: Դրա հետ մեկտեղ պողպատը, բետոնը, ապակին, որոնք շինարարության մեջ փոխարինել են փայտանյութին, ստեղծել են հրդեհից հուսալի պաշտպանության խաբուսիկ տպավորություն: Բոլոր այս պատճառները հիմնականում նպաստում են հրդեհների քանակական աճին: (N-6) Հրդեհներն ամենատարածված և ամենավտանգավոր տեխնածին աղետներից են: Աշխարհում գրեթե ամեն օր տեղի են ունենում հրդեհներ, որոնք շատ հաճախ հանգում են աղետալի հետևանքների:

Այն չվերահսկվող այրումը, որն ուղեկցվում է նյութական արժեքների ոչնչացմամբ և կարող է սպառնալ մարդկանց կյանքին ու առողջությանը, կոչվում է հրդեհ: Կախված վառվող նյութի քանակից և որակից, բռնկման տարածքից, այրմա

ժամանակից և պատճառած վնասից' հրդեհները գնահատվում են հինգ բալանոց սանդղակով: Կախված բռնկման վայրից' հրդեհները լինում են 3 տեսակի'

. տնտեսական

• արտադրական

• բնական:

Դյուրավառ նյութերի օքսիդացումը և բռնկման օջախները պարտադիր պայման են հրդեհի բռնկման համար: Այն տարածքները, որտեղ բռնկվում են հրդեհները, բաժանվում են երեք գոտիների'

• այրման գոտի

• ջերմային գոտի

• ծխահարման գոտի:

Տարածության այն մասը, ուր գտնվում են այրվող նյութերն ու իրերը, և անմիջապես տեղի է ունենում այրում, կոչվում է այրման գոտի:

Այն տարածքը, որն անմիջապես շրջապատում է այրման գոտուն, կոչվում է ջերմային ազդեցության գոտի:

Այն գոտին, որը կից է այրման գոտուն,. լցված է ծխով և ջերմության ազդեցությունից քայքայվող նյութերով, կոչվում է ծխահարման գոտի:

Հրդեհի բաղկացուցիչ մասերն են' բաց կրակը ,կայծերը, ջերմային բռնկումները, ծուխը, թթվածնային ծանր խառնուրդները, թունավոր գազերը, ընկնող առարկաները և կառույցները: Հրդեհների ժամանակ ծուխն ու մուրն ավելի վտանգավոր են, քան կրակը, քանի որ մարդիկ ավելի շուտ շնչահեղձ են լինում ծխից ու մրից, քան այրվում կրակից: Դա բացատրվում է նրանով, որ սինթետիկ նյութերը, որոնք օգտագործվում են վարագույրների, գորգերի, կահույքի և այլ իրերի արտադրության մեջ, այրվելիս թունավոր ծուխ են արձակում, որն էլ, ընկնելով մարդու շնչառական ուղիներ,

շնչահեղձության պատճառ է դառնում: Հրդեհները մեծամասամբ առաջանում են ոչ արտադրական միջավայրերում: Ցավալի հետհանքների են հանգում մարդաշատ տարածքներում բռնկված հրդեհները՝ հյուրանոցներ, հանրախանութներ, կինոթատրոններ, հիվանդանոցներ և այլն: Այստեղ հետևանքների ծանրությունը պայմանավորված է նրանով, որ մարդիկ խուճապի են մատնվում՝ անկարող դառնալով կազմակերպել անվտանգ հեռանալու գործողություններ: Բացի այդ, երբ տեղափոխման ուղիները պատված են ծխով և բոցով, փրկարարական աշխատանքները դժվարանում են: Հրդեհին նպաստող հիմնական գործոններն են՝ կրակը, ծուխը, մոխիրը: Ամենից հաճախ հանդիպում են կենցաղային հրդեհները, որոնք հիմնականում առաջանում են այն պատճառով, որ մարդիկ չեն պահպանում հակահրդեհային կանոնները, օգտագործում են անսարք կամ վնասված էլեկտրական սարքավորումներ, դյուրավառ հեղուկներ և այլն: Հրդեհների առաջացման ամենավտանգավոր ժամանակահատվածը ձմեռն է: Ձմռանը մարդիկ օգտագործում են վառարաններ և ջեռուցող սարքեր: Փայտի մանր տաշեղները և մեծ կտորները դրվում են վառարանի տակ կամ նրա վրա, որպեսզի շուտ չորանան, որն էլ հրդեհի պատճառ է դառնում: Ձմռանը նաև էլեկտրականության գերբեռնվածության պատճառով հաճախ են տեղի ունենում կարճ միացումներ, որոնցից էլ հրդեհ է բռնկվում: Աղետալի հետևանքներ են ունենում այն դեպքերը, երբ վերոհիշյալ սարքերի մոտ լինում են դյուրավառ նյութեր և հեղուկներ (բենզին, նավթ, սպիրտ և այլն): Կենցաղային հրդեհների առաջացման գործում մեծ է երեխաների դերը: Երեխաները շատ են սիրում խաղալ կրակի հետ, որի համար նրանք ընտրում են ամենավտանգավոր և նման գործողություններին չհամապատասխանող տարածքներ՝ բնակարան, շենքի տանիք, մուտքերի սանդղահարթակներ և այլն: Ցավոք, մեծերը շատ հաճախ անտեսում են այդ վտանգը և երեխաներին թողնում են միայնակ, որից հետո ստիպված են լինում կանչել հրշեջների: Այսպիսի աղետների առաջացման պատճառները շատ պարզ են: Մեծերը երեխաներին հասանելի տեղերում թողնում են լուցկի, կրակվառիչներ և հրդեհավտանգ այլ պարագաներ: Հաճախ պատահում է, որ ծնողները տնից դուրս են գալիս՝ առանց գազի ծորանները փակելու: Հրդեհի առաջացման համար վտանգավոր են նաև վերջին ժամանակներս օգտագործվող «բենգալյան կրակները» և նմանատիպ սարքերը, որոնք շատ հաճախ չեն համապատասխանում անվտանգության սահմանված պահանջներին: Որպես երկրորդածին աղետներ՝ հրդեհներ կարող են առաջանալ նաև

տարբեր աղետներից՝ երկրաշարժից, ջրհեղեղից, փոթորկից, պայթյունից և այլն: Հրդեհները հիմնականում նյութական արժեքների կորստի, մարդկային զոհերի և այլ աղետների առաջացման պատճառ են դառնում (պայթյուն, քիմիական նյութերի արտահոսք և այլն) (N-5):

3.1.Պաշտպանությունը հրդեհներից

Պաշտպանվածությանր Հրդեհների առաջացման պատճառները բազմազան են, սակայն դրանցից կարելի է խուսափել՝ պահպանելով հակահրդեհային տարրական, պարզագույն կանոնները: Ի՞նչ անել հրդեհից խուսափելու համար: Բոլոր դյուրավառ առարկաները և նյութերը պետք է առնվազն 80սմ. հեռավորության վրա գտնվեն ջեռուցող, տաքացնող ցանկացած սարքավորումներից և վառարաններից: Կրակի մոտ չթողնել պայթյունավտանգ նյութեր: Վառարանները վառելու համար չօգտագործել պայթյունավտանգ հեղուկներ: Հայկական. Կարմիր խաչի ընկերություն 32 Փայտը չչորացնել վառարանների վրա: Ջեռուցող, տաքացնող սարքավորումները և վառարանները պետք է գտնվեն չհրկիզվող առարկաների վրա: Միացրած ջեռուցող և տաքացնող սարքավորումները, հատկապես էլեկտրական և գազային, չթողնել առանց հսկողության: Չօգտագործել վնասված մեկուսացումով էլեկտրալարեր: Միաժամանակ չմիացնել մի քանի բարձր լարում ունեցող սարքավորումներ: Չօգտագործել ինքնաշեն ապահովիչներ: Երեխաներին չթողնել խաղալ հրդհհավտանգ առարկաների հետ և բացատրել դրանց հետ կապված վտանգը: Հրդեհավտանգ բոլոր առարկաները պահել երեխաներին անհասանելի վայրում: Երեխաներին այրվող կրակի մոտ չթողնել առանց հսկողության (մոմ, վառարան, նավթավառ հ այլն): Երեխաներին առանց հսկողության թույլ չտալ խաղալ «բենգալյան կրակների» ե նմանատիպ սարքերի հետ: Սպիտակեղենը չչորացնել կրակի և ջեռուցիչների վրա: Անկողնում չծխել:

Մեզանից ոչ ոք չի կարող համոզված լինել, որ հրդեհները կշրջանցեն մեզ և մեր երեխաներին: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ պետք է իմանալ և երեխաներին սովորեցներ թե հրդեհի ժամանակ ինչպես վարվել: Գործելակերպը կախված է ստույգ իրավիճակից և հրդեհի տարածումից, սակայն ամեն դեպքում պետք չէ խուճապի մատնվել և կորցնել ինք նատիրապետումը: Հրդեհի առաջացման դեպքում պետք է՝ շտապ ահազանգել հրշեջ ծառայություն՝ 101: Շատ դեպքերում, երբ հրդեհը նոր է

բռնկվել, այն կարելի է հանգցնել նույնիսկ մեկ բաժակ ջրով կամ ավազով, խոնավ, հրդեհակայուն խիտ ծածկոցով: Եթե զգում եք, որ չեք կարող հանգցնել, պետք է ամենակարճ ճանապարհով շտապ լքել շինությունը: Հրդեհի դեպքում չի կարելի օգտվել վերելակից: Եթե շինության ներսն արդեն լցված է ծխով, ապա դուրս գալուց առաջ բերանը և քիթը պետք է փակել խոնավ թաշկինակով, դեմքը պահել հատակին մոտ: Եթե չեք կարող դուրս գալ շինությունից, ապա պետք է դռան ճեղքերը փակել թաց սավանով, ծածկոցով կամ այլ գործվածքով' ծխի մուտքը դեպի սենյակ կանխելու համար: Առաջին և երկրորդ հարկերից տարահանումը կարելի է կատարել ինքնուրույն' պատուհանից ցատկելով: Եթե ցատկելը վտանգավոր է, ապա ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով պետք է պատրաստել պարան' իրար կապելով սավան, ծածկոց կամ այլ հարմար գործվածքներ, ստուգել կապերի ամրությունը և պարանի օգնությամբ իջնել: Եթե Ձեր հագուստը բռնկվել է, ապա պետք է հիշել «կանգնիր, ընկիր և գլորվիր» սկզբունքը, դադարեցնել ցանկացած գործողություն, ընկնել հատակին և գլորվել այնքան, մինչև կրակը հանգչի: Եթե բռնկվել է մեկ ուրիշի հագուստը, ապա չպետք է թողնել, որ նա վազի, ա յլ նրան գցել հատակին և որևէ գործվածքով հանգցնել կրակը: Այրվող շինություն չմտնել, մինչև չիմանաք, թե որտեղ է գտնվում օգնության կարիք ունեցող տուժածը: Եթե առանց վնասվելու կարող եք մտնել շինություն, ապա Ձեր իրանի շուրջ պետք է կապել պարան և վերցնել ազդանշանային համակարգ, որպեսզի անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի Ձեզ դուրս բերել այնտեղից: Յուրաքանչյուր դուռ բացելուց առաջ այն պետք է շոշափել ձեռքի ափով և ստուգել դռան տակից դուրս եկող օդը. եթե դուռը տաք է, այն չի կարելի բացել: Եթե ներս մտնելն անվտանգ է, ապա պետք է խորը շունչ քաշել և նոր միայն բացել դուռը, դեմքը պահպանել ձեռքով: Ի՞նչ անել հրդեհից հետո: Տուժածին դուրս բերել անվտանգ տեղ և նոր միայն առաջին օգնություն ցուցաբերել: Ահազանգել շտապ օգնության ծառայություն' 103: Այրվածք ստացած մասերը սառեցնել միայն ջրով, ցանկալի է' հոսող: Վարակումից խուսափելու համար չի կարելի այրված մասի վրա դնել այլ հեղուկներ (ձեթ, մածուն, ձու, կարտոֆիլ և այլն): Չի կարելի ջրով սառեցնել խորը թափանցող այրվածքները, որոնք ընդգրկում են մաշկի երկու շերտերը և խորանիստ հյուսվածքները: Տուժածին տալ հետևյալ հեղուկից' մեկ լիտր ջրին մեկ թեյի գդալ աղ և 3-4 թեյի գդալ

շաքարավազ: Տուժածի մոտ մնալ մինչև շտապ օգնության ժամանումը կամ նրան տեղափոխել հիվանդանոց(4):

Շատերը տեղյակ չեն հրդեհի դեպքում գործելակարգից, տարհանման ձևերից ու միջոցներից: Դա բնորոշ է հատկապես բնակելի հատվածին, որտեղ տեղի է ունենում զոհերով հրդեհների մեծ մասը:

Իսկ ի՞նչն է հանդիսանում հրդեհի ժամանակ մարդկանց զոհվելու պատճառը, ի՞նչ պետք է իմանալ հրդեհի մասին, որպեսզի չտուժեք դրա հետևանքներից և կենդանի մնաք:

1. Հրդեհը կուրացնում է, դուք չեք կարող տեսնել կրակի մեջ.

Եթե դուք երբեք չեք զգացել հրդեհի իրական գործոնների ազդեցությունը, ապա կլինեք լիակատար շոկային վիճակում: Դուք հանկարծ կիմանաք, որ իրական հրդեհում չեք կարող ոչինչ տեսնել: Բոցը ամեն ինչ դարձնում է սև, ոչինչ չի երևում, սարսափելի մթություն է: Դուք բացարձակապես չեք կարողանում կողմնորոշվել և գտնել ձեզ այնքան ծանոթ ելքի դուռը: Այս ամենին գումարած խուճապը և ծանր հետևանքներն անխուսափելի են:

Այդ ամենից հնարավորինս խուսափելու համար շենքերում օգտագործում են՝

- վթարային լուսավորություն,

- <<տարհանման (պահեստային) ելք >> լուսային ցուցիչներ,

- տարհանման ուղիներում օգտագործվող հրդեհային անվտանգության նշաններ, այդ թվում՝ մթության մեջ լուսարձակող,

- էլեկտրական լապտերներ:

Սպանում են ծուխն ու գազը, այլ ոչ թե բոցը.Ժամանակակից բնակարանը ծանրաբեռնված է տարատեսակ նյութերով ու առարկաներով, որոնք այրվելիս առաջացնում են 70-ից ավելի թունավոր արգասիքներ (ածխածնի օքսիդ, ածխաթթու

գազ, դիֆոսգեն, ֆոսգեն, ցիանական ջրածին և այլն): Նման միջավայրում անգամ վայրկյաններ գտնվելն արդեն լուրջ վտանգ է ներկայացնում կյանքի համար: Հիմնականում մարդիկ զոհվում են ոչ թե կրակից կամ փլվող կառուցատարրերից, այլ ծխից ու թթվածնի անբավարարությունից, ընդ որում՝ հիմնականում հենց հրդեհի վայրում: Կենդանի մնացած տուժածների 40%-ից ավելին ստանում է ծանր թունավորումներ, նրանցից յուրաքանչյուր երրորդը՝ գիտակցության չգալով, մահանում է հիվանդանոցում: Զոհերի շուրջ 70%-ը մահանում է ծխի ազդեցությունից, ընդ որում դրա տարածման արագությունը չափազանց բարձր է: Տասը հարկանի շենքում բավական է 2-3 րոպե՝ միջանցքի, 1-1,5 րոպե՝ աստիճանավանդակի ծխապատման համար: Շատ վտանգավոր է, երբ հրդեհն առաջանում է բնակելի տանը գիշերը: Դուք մտածում եք, թե կարթնանաք և կսկսեք գործել, սակայն սարսափելի փաստն այն է, որ ծխի հոտից չեք արթնանա, այլ ավելի խորը կքնեք: Դուք չեք կարողանում շարժվել, ծուխը մեռցնում է ձեր ուղեղը: Հրշեջների կողմից ծխապատված գոտում հայտնաբերած մարդկանց 90%-ն այնպիսի տեսք ունեն, կարծես քնած լինեն: Եթե դուք գտնվում եք ծխով լցված սենքում, ապա չեք կարող ոչ միայն տեսնել, այլ նաև շնչել: Դա նման է նրան, երբ խեղդվում եք և ձեր գլուխը ջրի տակ է: Դուք վախենում եք և մոռանում այն ամենը, ինչն ըստ ձեզ, գիտեք հրդեհի մասին: Դուք մոլորվում և խուճապի եք մատնվում, անկանխատեսելի եք պահում ձեզ, քանի որ հոգեբանորեն պատրաստ չեք նման էքստեմալ իրավիճակի:

Ծխի դեմ պայքարի համար նախատեսվում են.

- չծխապատվող աստիճանավանդակներ (օդի դիմհարի կամ հարկ առ հարկ մուտքերի հաշվին),

- ծխահեռացման ինքնաշխատ բացվող կափույրների միջով հզոր օդաքարշ օդափոխիչների միացման շնորհիվ սենքերից ու միջանցքներից ծխի հեռացում,

- ծխի տարածմանը խոչընդոտող ինքնափակվող դռների տեղադրում աստիճանավանդակներում,

- հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգի (ծխային և ջերմային տվիչների, ձեռքի հրդեհի ազդարարման կոճակի, հրդեհային տագնապի զանգերի, հրդեհային ազդարարման կայանքների) մոնտաժում,

- մարդկանց ազդարարման և տարհանման կառավարման համակարգեր,

- հրդեհի դեպքում շնչառական օրգանների պաշտպանության անհատական միջոցներ,

- բնակելի շենքերի բնակարանների համար՝ մարտկոցով աշխատող ինքնավար հրդեհի ազդարարիչներ,

- խմբակային և անհատական փրկարարական լրակազմեր, պարանային աստիճաններ:

Բարձր ջերմաստիճանը կարող է վայրկենական մահ առաջացնել: Այն կարող է սպանել հաշված վայրկյանների ընթացքում: Դա շատ դժվար է նկարագրել բառերով: 650C ջերմաստիճանի դեպքում մարմինը դադարում է գործել, թոքերը բառացիորեն գոլորշիանում են, մարդը կորցնում է գիտակցությունը: Մոտ մեկ րոպե տևող հրդեհը սենյակում առաջացնում է 3700C-ի ջերմաստիճան՝ ծխապատ շերտում: Եթե գլուխը պաշտպանված չէ, վրա է հասնում վայրկենական մահ: Վերևում ջերմաստիճանը և ծխի խտությունը ավելի բարձր են: Երբ սենյակում սկսի այրվել այն ամենը, ինչն ընդունակ է այրվելու, ջերմությունը կհասնի իր կիզակետին: Ծուխն ինքը պատրաստ է պայթելու, թվում է՝ ողջ կառույցն օդ կթռչի: Այս պայմաններում ողջ մնալու հնարավորություն չկա:

Հրդեհը մտածելու ժամանակ չի թողնում: Պետք է հասցնել կրակից դուրս պրծնել: Մարդկանց մեծամասնությունը կարծում է, որ հրդեհի դեպքում դեռ ժամանակ կա: Սակայն դա այդպես չէ, հրդեհի դեպքում ժամանակ չկա: Հրդեհը սկսվում է աղբամանում: Այն մնում է աննկատ: Րոպե անց բազմոցը բռնկվում է և ծուխը տարածվում է սենյակով: Ջերմաստիճանն աճում է և արդեն ոչ ոք չի կարող ողջ մնալ: 4 րոպե հետո միջանցքներն անանցանելի կդառնան: Պահանջվում է ընդամենը 5 րոպե, որպեսզի տան ներսի հրդեհը բոլոր բնակիչների մահվան պատճառ դառնա: Այսպիսով,

3-ից 5 րոպե, և վերջ ամեն ինչին: Պարզվում է հրդեհի դեպքում ժամանակը կարող է դառնալ ձեր վատագույն թշնամին:

Որքան ժամանակ է հարկավոր խոհանոցի հրդեհում ողջ մնալու համար: Մարդկանց մեծամասնությունը կարծում է, որ 10 րոպե: Իրականում, 30 վայրկյան հետո կրակը անկառավարելի է դառնում: Պետք է հասցնել դուրս պրծնել՝ չհապաղելով և չմտածելով իրերի մասին, փակել դուռը (ոչ բանալիով) և ահազանգել հրշեջ ծառայությունը: Գոյություն ունի տարհանման անփոփոխելի կանոն. մանկական հաստատություններում փոքր և նախադպրոցական խմբերի երեխաներին չեն հագցնում, այլ փաթաթում են վերմակով (ծածկոցով) և դուրս են բերում վտանգավոր տարածքից: Դպրոցների աշակերտներին դուրս են բերում ուսուցիչների կամ դաստիարակների ղեկավարությամբ, որոնք անձնական պատասխանատվություն են կրում իրենց խմբի երեխաների համար: Հյուրանոցներում արագ տարհանման նկատառումներից ելնելով արգելում են ճամպրուկները հավաքել, և այլն:

Հրդեհի ժամանակ հնարավոր է խուճապի առաջացում: Խուճապի մատնված մարդիկ անկանխատեսելի են պահում իրենց: Երբեմն խուճապից մահանում է ավելի շատ մարդ, քան հրդեհի վտանգավոր գործոններից: Միանգամայն ակնառու է, որ հոգեբանորեն պատրաստված և ուսուցանված անհատը նմանատիպ էքստրեմալ իրավիճակում կվարվի այլ կերպ: Մարդկանց զոհվելը հրդեհների ժամանակ մեծ մասամբ պայմանավորված է բնակչության մոտ հակահրդեհային գիտելիքների և ինքնապաշտպանության հմտությունների բացակայությամբ(5):

4. ՊԱՅԹՅՈՒՆՆԵՐ

Հրդեհները հաճախ ուղեկցվում են պայթյունով, կամ կարող է տեղի ունենալ հակառակը' պայթյուններից առաջանան հրդեհներ: Սահմանափակ ծավալում մեծ քանակությամբ էներգիայի ակնթարթային անջատումը կոչվում է պայթյուն: Պայթյունը խիստ տաքացած և շատ բարձր ճնշում ունեցող գազ է առաջացնում (պլազմա), որն

ընդարձակվելիս քայքայիչ մեխանիկական ազդեցություն է ունենում շրջակա միջավայրի վրա՝ շարժման մեջ դնելով այն: Այն շարժումը, որի դեպքում տեղի է ունենում միջավայրի ճնշման, խտության և ջերմաստիճանի կտրուկ աճ, կոչվում է հարվածող ալիք: Որքան ալիքը հեռանում է պայթյունի վայրից, այնքան թուլանում է նրա մեխանիկական ազդեցությունը: Ամուր, պինդ միջավայրում պայթյուններն ուղեկցվում են դրանց փլուզմամբ և մասնատմամբ, իսկ ջրային կամ օդային միջավայրում առաջացնում են ջրային կամ օդային հարվածող ալիքներ, որոնք էլ հենց շրջապատում գտնվող շինությունների վնասման եւ փլուզման պատճառ են դառնում: Պայթյունները հիմնականում առաջանում են՝ քիմիական էներգիայի անջատումից (հիմնականում պայթուցիկ նյութեր) ներքին ատոմային էներգիայից (ատոմային պայթյուն) մեխանիկական էներգիայից (երկնաքարերի անկում) սեղմված գազի էներգիայից (գազատար խողովակ, գազի բալոնի ճնշման մեծացում) էլեկտրամագնիսական էներգիայից (կայծակ, դետոնատոր և այլն): Հսարավոր հիտևասքսերը Պայթյունները նյութական վնասի պատճառ են դառնում, վնասում և փլուզում շինությունները, առաջացնում մարդկային զոհեր և այլ աղետներ (հրդեհ, թունավոր և ռադիոակտիվ նյութերի արտահոսք և այլն): Ցավոք, պայթյունները հազվադեպ չեն նաև բնակելի տներում: Բնակիչների մեղքով կոմունալ - էներգետիկ տնտեսություններում գազի արտահոսքը պատճառ է դառնում շատ լուրջ վթարային իրավիճակի կամ աղետի(4) Պայթյուն հանգեցնում է խիստ տաքացած և շատ բարձր ճնշում ունեցող գազի (պլազմայի) առաջացման, որն ընդարձակվելիս քայքայիչ մեխանիկական ազդեցություն է գործում շրջապատող միջավայրի վրա՝ շարժման մեջ դնելով այն: Պայթյունի առաջացրած այդ շարժումը, որի դեպքում տեղի է ունենում միջավայրի ճնշման, խտության և ջերմաստիճանի կտրուկ աճ, կոչվում է պայթյունային ալիք: Վերջինիս մեխանիկական ազդեցությունը թուլանում է պայթյունի վայրից հեռանալիս:

Պայթյունի բազմազան տեսակները տարբերվում են էներգիայի աղբյուրի ֆիզիկական բնույթով և այդ էներգիայի անջատման եղանակով: Պայթյունի բնորոշ օրինակ է քիմիական պայթուցիկ նյութերի պայթյունը: Պայթուցիկ նյութերն ընդունակ են քիմիապես արագ քայքայվելու, որի դեպքում միջմոլեկուլային կապերի էներգիան անջատվում է ջերմության ձևով: Պայթուցիկ նյութերի համար բնորոշ է

քիմիական քայքայման արագության մեծացումը՝ ջերմաստիճանի բարձրացմանը զուգընթաց։ Քիմիական փոխակերպումը պայթուցիկ նյութում տարածվում է հաջորդաբար, շերտից շերտ ալիքի ձևով։ Այդպիսի ալիքի՝ մեծ արագությամբ շարժվող առջևի ճակատը ստեղծում է հարվածային ալիք։ Պայթուցիկ նյութի քիմիական փոխակերպման պրոցեսը, որն սկիզբ է առնում հարվածային ալիքից և ուղեկցվում էներգիայի արագ անջատմամբ, կոչվում է դեպոնացում։ Պայթուցիկ նյութի հատուկ ձևի լիցքերի կիրառությամբ կարելի է ուժեղացնել պայթյունի ազդեցությունը որոշակի ուղղությամբ։

Նյութերի ավելի հիմնարար փոխակերպումների հետ կապված պայթյուններից են միջուկային պայթյունները, որոնց դեպքում ստացվող հսկայական էներգիայի աղբյուրը ուրանի կամ պլուտոնիումի իզոտոպների միջուկների տրոհման կամ ծանր ջրածնի միջուկների սինթեզի պրոցեսներն են։ Միջուկային պայթյունից, բացի հզոր պայթյունային ալիքից, ուղեկցվում է նաև լույսի ինտենսիվ առաքումով և թափանցող ճառագայթումով։ Պայթյունների վերոնշյալ տեսակներում անջատված էներգիան մոլեկուլային կամ միջուկային կապի էներգիայի ձևով նախապես պարունակվում էր նյութում։ Կան նաև այնպիսի պայթյուններ, որոնց դեպքում անջատվող էներգիան մատուցվում է արտաքին աղբյուրից։ Այդպիսի պայթյունի օրինակ է հզոր էլեկտրական պարպումը որևէ միջավայրում։ Պայթյունի երևույթ կարող է առաջանալ նաև նյութի վրա կիզակետված լազերային ճառագայթման ազդեցության դեպքում։ Մեծ արագությամբ միմյանց ընդառաջ շարժվող պինդ մարմինների բախումը նույնպես հանգեցնում է պայթյունի։

Բնության մեջ տեղի են ունենում պայթյունով ուղեկցվող բազմազան երևույթներ։ Հզոր էլեկտրական պարպումները մթնոլորտում ամպրոպի (կայծակի) ժամանակ, հրաբուխների հանկարծակի ժայթքումը, խոշոր երկնաքարերի անկումը Երկրի մակերևույթի վրա պայթյունի տարբեր տեսակների օրինակներ են։ Իրենց մասշտաբով հսկայական պայթյուններ են գունոլորտային բռնկումները Արեգակի վրա, որոնց դեպքում անջատվող էներգիան հասնում է ~1017 ջոուլի։ Տիեզերական տարածությունում տեղի ունեցող ահռելի պայթյունի բնույթ ունեն նոր աստղերի բռնկումները, երբ մի քանի ժամվա ընթացքում անջատվում է 1038-1039

ջոուլ էներգիա (այդքան էներգիա Արեգակը ճառագայթում է 10-100 հազար տարվա ընթացքում)։

Վերջապես, մարդու երևակայության սահմաններից դուրս եկող պայթյուններ են գերնոր աստղերի բռնկումները (էներգիան հասնում է ~1043 ջոուլի) և որոշ գալակտիկաների միջուկներում տեղի ունեցող պայթյունները (1050 ջ)։ Պայթյունների բնորոշ առանձնահատկությունը էներգաանջատման բացառիկ կարճատևությունն է։ Եթե, օրինակ, պայթյունը տեղի է ունենում հոծ միջավայրում, ապա էներգիան անջատվում է նախքան միջավայրի շարժում ստանալը։ Պայթյունի կարևոր բնութագրերից է էներգաանջատման խտությունը, որը հավասար է պայթյունի էներգիայի և այն ծավալի հարաբերությանը, որտեղ ընթանում է էներգիայի անջատումը։ Պայթյունները խաղաղ նպատակներով լայն կիրառություն են գտել գիտական հետազոտություններում և արդյունաբերության մեջ։ Պայթյունի ազդեցությամբ նյութը կարող է հանդես գալ այնպիսի վիճակներում, որոնք անհասանելի են հետազոտման այլ եղանակների դեպքում, ուստի այն հնարավորություն է տվել զգալի առաջընթացի հասնել բարձր ճնշման և ջերմաստիճանի պայմաններում գազերի, հեղուկների և պինդ մարմինների հատկությունների ուսումնասիրման ասպարեզում։

Պայթյունների հետազոտությունը կարևոր նշանակություն ունի անհավասարակշիռ պրոցեսների ֆիզիկայի զարգացման համար, որն ուսումնասիրում է տարբեր միջավայրերում զանգվածի, իմպուլսի և էներգիայի փոխանցման երևույթները, նյութի ֆազային անցումների մեխանիզմները, քիմիական ռեակցիաների կինետիկան են։ Քիմիական պայթուցիկ նյութի պայթյունի դեպքում առաջացող ուժեղ լուսառաքումը կարող է օգտագործվել լազերի մղման համար։ Պայթուցիկ նյութի դետոնացման ժամանակ ստեղծվող բարձր ճնշման ազդեցությամբ են իրականացնում պայթյունային դրոշմումը, եռակցումը և մետաղների ամրացումը։ (N-4)

4.1.Պաշտպանությունը պայթյուններից

Դեռևս լայն կիրառություն է գտել բնակարաններում բալոնով հեղուկ գազի օգտագործումը։ Սակայն միշտ չէ, որ բնակիչները գիտեն դրա շահագործման կանոնները, որոնք շատ պարզ են։ Այդ կանոնները պետք է իմանալ և սովորեցնել երեխաներին։ Գազի բալոնը պետք է տեղադրել պատշգամբում, իսկ դրա

հնարավորության բացակայության դեպքում՝ գազօջախից առնվազն 80սմ. հեռավորության վրա վառարաններից և ջեռուցիչներից 1 մետրից ոչ պակաս հեռավորության վրա: Չի կարելի գազի բալոնը միացնել բնական գազ օգտագործող սալիկին: Չի կարելի գազի բալոններ օգտագործել բարձրահարկ շենքերում: Գազը վառելիս սկզբում այրիչին մոտեցնել լուցկին և հետո միայն բացել գազի ծորակը: Գազով աշխատող սարքավորումները չթողնել առանց հսկողության, հատկապես, եթե դրանք հասանելի են երեխաներին: Լվացք չորացնելու համար գազատար խողովակներից պարաններ չկապել: Գազօջախը չօգտագործել ջեռուցման համար, գազի ոչ լրիվ այրումն առաջացնում է օրգանիզմի թունավորում: Չփորձել ինքնուրույն վերացնել գազօջախի անսարքությունները, քանի որ որևէ գործիքով աշխատելիս կարող է կայծ առաջանալ, որը ճակատագրական հետևանքներ կունենա: Գազի արտահոսքի տեղը կարելի է հայտնաբերել օճառաջրով, երբ ի հայտ են գալիս պղպջակներ: Գազի արտահոսք կարող է լինել՝ երբ գազօջախի բոցը հանգչում է հեղուկից կամ քամուց մեխանիկական անսարքությունների կամ միացումների վնասվածքների պատճառով գազի բալոնի վրա տեղադրված կարգավորող սարքի միացման անսարքությունից: Գազի արտահոսքի ժամանակ՝ կրակ չվառել չմիացնելս չանջատել լուսավորման հ էլեկտրական սարքավորումներ փակել գազի մատակարարման ծորակը շնչուղիները փակել շորով բացել պատուհանները կանչել վթարային ծառայություն՝ (N-5)

5. ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ

Գիտության և տեխնիկայի բուռն զարգացումը հանգեցրել է կյանքի բոլոր ոլորտներում քիմիական նյութերի ակտիվ օգտագործման: Նման ինտենսիվ քիմիացումն իր հերթին հանգեցրել է ուժեղ ներգործող թունավոր նյութերի(ՈՒՆԹՆ) լայն կիրառման:

Վթարների հետևանքով ՈՒՆԹՆ-ը արտահանվում է մթնոլորտ՝ առաջացնելով վարակվածության գոտիներ: Գետնամերձ քամու ուղղությամբ շարժվելով, վտանգավոր նրութի ամպը կարող է ձևավորել մինչև տասնյակ կիլոմետրեր խորությամբ վարակման գոտի՝ առաջացնելով օբյեկտի, հարևան ձեռնարկությունների չպաշտպանված

բանվորների ու ծառայողների, ինչպես նաև մոտակայքում ապրող բնակչության վնասման վտանգը: Ընդ որում, վարակման գոտու տակ հասկացվում է այն տարածքը, որի սահմաններում կարող է ի հայտ գալ վտանգավոր նյութի վնասակար ազդեցությամբ, իսկ գոտու խորության տակ՝ հեռավորությունը վարակման աղբյուրից մինև վարակման գոտու սահմանները:

Կախված վտանգավոր նյութի ֆիզիկա-քիմիական հատկություններից և ագրեգատային վիճակից, վարակման գոտու մասշտաբները որոշվում են ըստ առաջնային և (կամ) երկրորդային ամպի՝

- Հեղուկ գազերի համար՝ ըստ առաջնային և երկրորդային ամպի,
- Սեղմված գազերի համար՝ ըստ առաջնային ամպի,
- Հեղուկների համար՝ ըստ երկրորդային ամպի:

Առաջնային ամպի տակ հասկացվում է վտանգավոր նյութի ամպը, որն առաջանում է տարողության ավերման արդյունքում՝ դրա պարունակության գազային ֆազի, մինչև 1-3 րոպեի ընթացքում, մթնոլորտ անցման հետևանքով, իսկ երկրորդային ամպի տակ՝ այն ամպը, որը գոյանում է գետնին թափված նյութի գոլորշիացման հետևանքով:

Վարակման գոտու մասշտաբների կանխատեսման համար անհրաժեշտ են հետևյալ ելակետային տվյալները՝

1. վտանգավոր նյութի անվանումը և ագրեգատային վիճակը.
2. օբյեկտում վտանգավոր նյութի ընդհանուր քանակը տարողություններում և խողովակագծերում.
3. տարողությունից արտանետված նյութի քանակը և արտահոսքի բնույթը (ազատ, թմբապատի մեջ կամ պատնեշատի մեջ).
4. նյութի պարունակող տարողության կամ խողովակագծի ծավալը.
5. օդերևութաբանական պայմանները՝

- Օդի ջերմաստիճանը.

- Գետնամերձ քամու արագությունը.
- Մթնոլորտի ուղղաձիգ կայունության աստիճանը՝ ինվերսիա, իզոթերմիա, կոնվեկցիա: Կայունության աստիճանի և քամու արագության տվյալները վերցվում են վթարի պահի դրությամբ:
- հեղուկ նյութի գոլորշիացման տեսակարար ջերմությունը գոլորշիացման ջերմաստիճանում.
- Նյութի տեսակարար ջերմունակությունը.
- Եռման ջերմաստիճանը.
- Հեղուկ նյութի խտությունը.
- Գազային նյութի խտությունը.
- Գազի ճնշումը.
- Գոլորշիացման մակերեսի վրա հագեցած գոլորշիների ճնշումը.
- Նյութի մոլեկուլյար կշիռը:

7. նյութի սահմանային թունադոզան.
8. վթարից հետո անցած ժամանակը.
9. օբյեկտի հեռավորությունը քաղաքի կառուցապատման սահմանից:

Արտադրական վթարի հետևանքով վարակման մասշտաբների կանխատեսման համար որպես ելակետային տվյալներ վերցվում են նյութի առավելագույն քանակները, օդերևութաբանական պայմանները՝ ինվերսիա, գետնամերձ քամու արագությունը՝ 1-2մ/վրկ, շրջակա միջավայրի ջերմաստիճանը՝ 200 C:

Կանխատեսման արդյունքում ստանում ենք՝

1. առաջնային և (կամ) երկրորդային ամպերով տարածքի վարակման խորությունները, ինչպես նաև վարակման առավելագույն խորությունները, որը հաշվի է առնում առաջնային և երկրորդային ամպերի գումարային ազդեցությունը.

2. առաջնային և երկրորդային ամպերով տեղանքի վարակման մակերեսները, որոնց սահմաններում քամու ուղղության փոփոխության ազդեցության տակ նյութի ամպը կարող է տեղափոխվել (N-7)

5.1. Պաշտպանությունը ՈՒՆԹՆ-երի արտանետումից

Շատ ՈՒՆԹՆ-ի համար չեզոքացման մատչելի եղանակներից մեկը համարվում է տեղանքի թրջումը (լվացումը) ջրով: Այդ եղանակի թերությունը կայանում է նրանում, որ շատ ջուր և չեզոքացուցիչներ են պահանջվում, բացի դրանից՝ ջուրը ռեակցիայի մեջ մտնելով ՈՒՆԹՆ-ի հետ, ինքը դառնում է թունավոր, դրա համար էլ դրանց թափման տեղերն անհրաժեշտ է թմբապատել (պատնեշապատել), իսկ այնուհետև այն տեղափոխել և լցնել համապատասխան տարողություններում կամ չեզոքացնել մինչև վերջ:

Գոյություն ունի ՈՒՆԹՆ-ի մակերեսի վրա կայուն փրփուրի շերտ ստեղծելու եղանակը, որի արդյունքում կտրուկ կերպով փոխվում է թունավոր նյութերի գոլորշիների մթնոլորտ դուրս գալու արագությունը:Վարակված օդի ամպի տարածումը սահմանափակելու համար լավ արդյունք է տալիս ջրային վարագույրի ստեղծումը՝ օգտագործելով հրշեջ, ջրցան մեքենաներ և տարբեր պոմպակայաններ: Ջրային վարագույրի ջրագիծը, ինչքան հնարավոր է, պետք է անցնի վարակման աղբյուրին մոտ տարածության մեջ:

Բժշկական օգնություն ցույց տալը համարվում է քիմիական վտանգավոր օբյեկտում վթարի հետևանքների վերացման հիմնական միջոցառումներից մեկը, քանի որ բժշկական օգնությունը ժամանակին ցույց չտալու դեպքում տուժածների 60%-ը մահանում են թունավորման առաջին երեք ժամերի ընթացքում:

Վարակման գոտուց տուժածների տարահանումը դիտվում է որպես առաջին բժշկական օգնության կարևորագույն բաղադրիչ: Առաջին բուժօգնությունը

կազմակերպվում է ՈՒՆԹՆ-ի վարակման գոտուց դուրս, անվտանգ շրջանում, որտեղ հավաքվում են տուժածները: Այդտեղ գործում են շտապ բուժօգնության բրիգադները և բուժսանիտարական հիմնարկների աշխատակիցները: Նրանք տեսակավորում են տուժածներին և տարահանում՝ համապատասխան բուժհիմնարկներ: Աշխատանքները ղեկավարում են բժիշկ մասնագետները, որոնց գործունեությունը կանոնակարգվում է այդ բրիգադների մասին հատուկ կանոնադրությամբ:

6. ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՀԻԴՐՈԴԻՆԱՄԻԿ ՎԹԱՐՆԵՐ

Բնակչության կենսաապահովման կոմունալ համակարգերում հնարավոր վթարները բազմաբնույթ են և բազմազան: Կանխարգելման հաջողության գրավականը բնակչության և մասնագիտացված ծառայությունների սերտ համագործակցությունն է :

Ջրամատակարարման համակարգի բաղկացուցիչ օղակներն են՝ ջրաղբյուրները, գլխամասային կառուցվածքները, մայրուղի ջրատարները, ներքաղաքային և ներքին ցանցերն իրենց մղման, կուտակման, վնասազերծման Հանգույցներով: Այստեղ խաթարումների պատճառ կարող են հանդիսանալ բնական վտանգները, ջրագծերի վնասվածքները, մաշվածությունը, պոմպակայանները և այլն:

Կոյուղու համակարգում վթարները, շահագործման նորմերի խախտումները կարող են բերել համաճարակների և հակասանիտարական վիճակի, վնաս հասցնել շրջակա միջավայրին, գյուղատնտեսությանը և այլն: Այստեղ կարևոր է կանխարգելման միջոցառումները ժամանակին կատարել:

Գազամատակարարման համակարգի բոլոր օղակներում վթարները հանգեցնում են պայթյունների, հրդեհների, ավերածությունների, թունավորումների, մարդկային զոհերի: Դրանց պատճառներից են՝

- Ներշենքային ցանցում հերմետիկության խախտման հետևանքով գազի արտահոսքը և կուտակումները,

- Գազի ճնշման հանկարծակի տատանումները, բոցի կտրվելը և ինքնամարումը,
- Օդափոխման պայմանների խախտումը,
- Գազասպառողների կողմից համակարգի ինքնագլուխ ձևափոխումները, նոր միացումները, գազասարքերից օգտվելու կանոնների խախտումը,
- Հեղոքկ գազ օգտագործող բնակարաններում գազի բալոնների շահագործման կանոնների խախտումները:

Առանձնապես խոցելի են շենքերի նկուղները և ընդհանուր օգտագործման տարածքները, որոնցով անցնում են շենքերի ճարտարագիտական հաղորդակցության ուղիները: Բնակարանում գազի արտահոսքի դեպքում հարկավոր է փակել գազի ծորակը, բացել լուսամուտները, չօգտագործել կայծ առաջացնող սարքեր և ահազանգել գազի վթարային ծառայություն: (N-2)

Հիդրոդինամիկական վթարը կապված է հիդրոտեխնիկական կառուցվածքի կամ նրա մի մասի ավերման հետ, ոթրի հետևանքով առաջանում է ջրի հսկայական ծավալների անկառավարելի շարժում: Հիդրոտեխնիկական կառուցվածքներն են՝ պատվարը, պատնեշը, ոռոգման համակարգերը, ջրանցքները և այլն:

Ոչ ճիշտ շահագործման պատճառով պատվարի մարմնում առաջացած անցքի միջով ջրամբարից ջրի շիթային արտահոսք է տեղի ունենում, որի ճակատային ալիքը անվանում են ճեղքման ալիք. Այն ունենում է նշանակալից բարձրություն, արագություն և ավերիչ ուժ: Բացի ավերածություններից, հիդրոդինամիկական վթարները առաջացնում են ջրհեղեղներ, սելավներ:

Հիդրոդինամիկական վթարներների կանխարգելման հիմնական պահանջը այդ կառուցվածքների մշտական խնամքն է, վերանորոգումը և ճիշտ շահագործումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աղետ (հին հունարեն՝ καταστροφή «հեղաշրջում, գահավիժում, մահ»), պատահար է, որն առաջանում է բնական կամ տեխնածին արտակարգ իրավիճակների արդյունքում՝ իր հետ բերելով մարդկանց մահ կամ այս կամ այն օբյեկտի պատմության մեջ անուղղելի հետևանքներ։

Արտակարգ իրավիճակներում մարդկանց մոտ առաջանում են ռեակտիվ վիճակներ, ոչ ադեկվատ վարք, աֆեկտային վիճակում են գտնվում մարդիկ։ Սթրեսի պատճառները բաժանվում են երկու խմբի.

1. Առաջին խմբի պատճառները կապված են մարդու կյանքի, առողջության, ֆիզիկական ոչնչացման վտանգի հետ՝ պայթյուն, հրդեհ, երկրաշրժ, ռադիացիա։
2. Երկրորդ խմբի պատճառները կապված են ինֆորմացիայի բացակայության հետ։ Այս իրավիճակում առանձնացվում են երեք շրջան.

- Արտակարգ իրավիճակի առաջին 5 ժամը՝ հզոր սթրես, խուճապ, տագնապ։
- Արտակարգ իրավիճակի երկրորդ շրջանը կապված է մտերիմների, բարեկամների կորստի հետ։
- Արտակարգ իրավիճակի երրորդ շրջանը կոչվում է հետսթրեսային շրջան, երբ մարդը գիտակցում է պատահածը, ընկնում է ընկճախտի մեջ, կորցնում է վստահությունը ապագայի հանդեպ։

Տուժածին պետք է ցույց տալ հոգեբանական օգնություն։

Արտակարգ իրավիճակներում կատարվում է ռիսկի գնահատում, որոշում։ Ռիսկը հավանականությունների և հետևանքների համադրումն է։ Սեյսմիկ ռիսկի նվազեցման ծրագիրը.

- Տարածքի սեյսմիկ գնահատում։
- Բնակարանների և շինությունների սեյսմիկ ռիսկի գնահատում։
- Վթարային շինությունների ուժեղացում, ամրացում։
- Կարևոր նշանակության օբյեկտների սեյսմակայունության բարձրացում:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ օրենքը <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>>

2.Նախնական զինվորական պատրաստություն դասագիրք 9-րդ դասարան, Երևան

3. http://mtad.am/hy/masnageti-ankyun/item/2015/05/25/zoher/(15.11.2021թ.)

4. https://hy.wikipedia.org/wiki/Պայթյուն

5.Բնական և տեխնածին աղետներ, Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) 1998թ.

6. Հրդեհը և նրա զոհերը, ԱԻ հանրագիտարան. 2015 թ.

7. http://www.usum.org/load/153-1-0-696 (14.11.2021թ.)

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վանաձորի Հ. Թումանյանի անվան Պետական համալսարան

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

Զինվորական կոչումները: Պետեր և ենթականեր:

ԿԱՏԱՐՈՂ՝

ՀՀ Լոռու մարզի, Աքորու միջմակարգ դպրոցի զինղեկ՝ Ռուդիկ Սիմոնյան

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝

ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..

Հիմնական մաս……

Եզրակացություն……

Գրականության ցանկ, հղումներ……..

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զինվորական կոչում — պահեստազորում (պաշտոնաթող) զինծառայողի կամ զինապարտի կոչումը, որը սահմանում է զինծառայողների դրույթը (իրավունքներն ու պարտականությունները) այլ զինծառայողների նկատմամբ, անհատապես շնորհվում է զինվորական ծառայություն անցնող (զինվորական ուսումնական հաստատություններում զինվորական ծառայություն անցնելու եւ նրանց հավասարեցված յուրաքանչյուր քաղաքացու) զինված ուժերում (ԶՈՒ) ՝ իր ծառայողական դիրքին, զինվորական կամ հատուկ պատրաստվածությանը, ԶՈՒ տեսակին, ԶՈՒ տեսակի զորքերի (ուժերի) տեսակին կամ ծառայության տեսակին (տեսակին), ինչպես նաեւ պետական (ծառայողական) արժանիքներին համապատասխան:

Յուրաքանչյուր պետությունում զինվորական կոչումների շնորհման կարգը սահմանվում է տվյալ պետության իրավական համակարգով:

Տարբեր պետությունների զինված ուժերում զինվորական կոչումներով զինծառայողներին տարբերելու համար կիրառվում են զինվորական կոչումների տարբերանշաններ, որոնց թվին են դասվում ուսադիրները, ձեռնաշղթաները, կրծքանշանները (խորհրդանշաններ, գալուններ, շևրոններ), հազվադեպ ՝ կոկարդը, կոճակները, զինվորական համազգեստով այլ տարրեր և, երբեմն, հագուստի ձևի տարրերը (օրինակ ՝ ֆուրաժկա, պիլոտկա, պապա, գալունաներ, լամպասներ և քանտաներ, ոճ եւ հագուստի առարկաների կտորի տեսակը և այլն):

Որոշ զինվորական կոչումներ ունեն նույն անվանումները շատ պետություններում: Միևնույն ժամանակ, երբեմն կան դեպքեր, այսպես կոչված, օմոնիմիայի, երբ հավասարապես (կամ շատ մոտ) հնչեղության անվանումները նշանակում են զինվորական հիերարխիայի տարբեր աստիճանների վրա գտնվող կոչումներ:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐ

Զինվորական կոչումներ, անհատապես շնորհվում են զինված ուժերի ծառայողներին և զինապարտներին՝ համաձայն նրանց ծառայողական դրության, ռազմական և մասնագիտական պատրաստականության, զորատեսակի կամ ծառայության ձևի պատկանելության, ինչպես նաև վաստակի և արժանիքների։

Հայաստանում վաղնջական ժամանակներից գոյություն են ունեցել ռազմական կոչումներ։ Միջնադարյան հայկական աղբյուրներում հանդիպում է զինված ուժերի բարձր հրամանատարական կազմի կոչումների հետևյալ դասակարգումը։

1. Սպարապետ
2. Գնդապետ
3. Հազարապետ

Ընդհանրապես, Հայոց հին և միջնադարյան ռազմական կոչումները կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով։

1. Սպարապետ
2. Բյուրապետ
3. Գնդապետ
4. Հազարապետ
5. Հարյուրապետ
6. Հիսնապետ
7. Տասնապետ
8. Զինվոր

Հայկական պետականության բազմադարյան կորստի և դրա հետևանքով՝ հայկական ազգային բանակների բացակայության հետևանքով, հայկական ռազմական տերմինաբանությունը խիստ հետընթաց է ապրել։ Դրա արդյունքը պետք է համարել ռազմական տերմինաբանության մեջ օտարերկրյա բացատրությունների ի հայտ գալը և ստուգաբանության հայկական արմատների չընկալումը։ Մասնավորապես, Արևմտահայ բառարանագիրներից մեկը տալիս է՝հարյուրապետ՝ռազմական կոչման հետևյալ ստուգաբանությունը. ՝հարիւրապետ գոյական Հռոմայեցի սպայ հարիւր զինուորի հրամայող։՝ Հայ բառարանագրի համար Հարյուրապետը պարզապես հռոմեացի սպա է, այսինքն՝ ցենտուրիոն

Զինվորական կոչումների հիմք են ծառայում զինծառայողների միջև կրտսեր-ավագ (պետ) փոխհարաբերություններ ստեղծելու։

Ներկայումս Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողների զինվորական կոչումների ցանկը հետևյալն՝ Հայաստանի Հանրապետության Զինծառայողների և զինապարտների կազմի ռազմական կոչումները.

Զինծառայողների և զինապարտների կազմի ռազմական կոչումները.

Հայաստանի Հանրապետության ներկայիս բանակի՝ 1991-2020թթ.	Հայաստանի Առաջին Հանրապետության բանակի՝ 1918-1921թթ.
Զինվորներ	***Զինվորներ***
Շարքային	Շարքային
Եֆրեյտոր	Եֆրեյտոր
Սերժանտներ	***. . . . . .***
Կրտսեր սերժանտ	. . . . .
Սերժանտ	. . . . .
Ավագ սերժանտ	. . . . .
Ավագ	. . . . .
Ենթասպաներ	***Ենթասպաներ***
Ենթասպա	Վառատար
Ավագ ենթասպա	Ավագ վառատար
Կրտսեր սպաներ	***Կրտսեր սպաներ***
Կրտսեր լեյտենանտ	Փոխտեղակալ
Լեյտենանտ	Տեղակալ

Ավագ լեյտենանտ	Փոխգլխապետ
Կապիտան	Գլխապետ
Ավագ սպաներ	***Ավագ սպաներ***
Մայոր	. . . . .
Փոխգնդապետ	Փոխգնդապետ
Գնդապետ	Գնդապետ
Գեներալներ	***Զորավարներ***
Գեներալ-մայոր	Դեր-Զորավար
Գեներալ-լեյտենանտ	Փոխ–Զորավար
Գեներալ-գնդապետ	Զորավար
Բանակի գեներալ	Ավագ Զորավար

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս՝

1. Քիմիական, երկաթուղային, ավտոմոբիլային և ճանապարհային, տեղագրական ծառայության, նյութական և նյութատեխնիկական ապահովման ու ֆինանսական ծառայությունների սպայական կազմի համար բարձրագույն զինվորական կոչումը գնդապետն է։

2. Ռազմաբուժական ծառայության սպայական կազմին շնորհվում են բժշկական ծառայության զինվորական կոչումներ։

3. Ավիացիայի ինժեներական կազմին, որն ունի ինժեներաավիացիոն պատրաստություն, շնորհվում են ավիացիայի սպայական կազմի համար սահմանված զինվորական կոչումներ։

4. Պահեստազորի սպայական կազմի անձանց զինվորական կոչմանն ավելացվում է «պահեստազորի» բառը (պահեստազորի կապիտան, բժշկական ծառայության պահեստազորի կապիտան և այլն), իսկ սպայական կազմի պաշտոնաթող անձանց զինվորական կոչումներին ավելացվում է «պաշտոնաթող» բառը (պաշտոնաթող մայոր, բուժծառայության պաշտոնաթող մայոր և այլն)[13]։

ԽՍՀՄ զինված ուժերի զինծառայողների ռազմական կոչումներ[խմբագրել | խմբագրել կոդը]

ԽՍՀՄ զինված ուժերի զինծառայողներին և զինապարտների կազմին շնորհվում էին հետևյալ ռազմական կոչումները

ԽՍՀՄ զինված ուժերի զինծառայողների զինվորական կոչումները

Խորհրդային բանակի	**Ռազմածովային նավատորմի**
Զինվորներ	***Նավաստիներ և զինվորներ***
Շարքային	Նավաստի, շարքային
Եֆրեյտոր	Ավագ նավաստի, եֆրեյտոր
Սերժանտներ	***Ավագներ և սերժանտներ***
Կրտսեր սերժանտ	2-րդ կարգի ավագ, կրտսեր սերժանտ
Սերժանտ	1-ին կարգի ավագ, սերժանտ
Ավագ սերժանտ	Գլխավոր ավագ, ավագ սերժանտ
Ավագ	Նավի գլխավոր ավագ, ավագ

Ենթասպաներ և միչմաններ	
Ենթասպա	Միչման
Կրտսեր սպաներ	
Կրտսեր լեյտենանտ	Կրտսեր լեյտենանտ
Լեյտենանտ	Լեյտենանտ
Ավագ լեյտենանտ	Ավագ լեյտենանտ
Կապիտան	Նավապետ-լեյտենանտ, կապիտան
Ավագ սպաներ	
Մայոր	3-րդ կարգի նավապետ, մայոր
Փոխգնդապետ	2-րդ կարգի նավապետ, փոխգնդապետ
Գնդապետ	1-ին կարգի նավապետ, գնդապետ
Գեներալներ, ծովակալներ և մարշալներ	
Գեներալ-մայոր, ավիացիայի գեներալ-մայոր	Դեր-ծովակալ, գեներալ-մայոր
Գեներալ-լեյտենանտ, ավիացիայի գեներալ-լեյտենանտ	Փոխծովակալ, գեներալ-լեյտենանտ
Գեներալ-գնդապետ, ավիացիայի գեներալ-գնդապետ	Ծովակալ, գեներալ-գնդապետ

Զորատեսակի մարշալ, ավիացիայի մարշալ, բանակի գեներալ	Նավատորմի ծովակալ
Զորատեսակի գլխավոր մարշալ, ավիացիայի գլխավոր մարշալ	
Խորհրդային Միության մարշալ	Խորհրդային Միության նավատորմի ծովակալ
Խորհրդային Միության գեներալիսիմուս	

Տարբեր զորատեսակների և գեներալների կոչումներին ավելացվում է համապատասխան անվանում (օրինակ՝ տանկային զորքերի գեներալ-մայոր, հրետանու գեներալ-գնդապետ և այլն)։ Տեխնիկական կրթություն ունեցող սպաներին և գեներալներին տրվում են հետևյալ զինվորական կոչումներ՝ տեխնիկական ծառայության լեյտենանտ, տեխնիկ-ավագ-լեյտենանտ, ինժեներ-կապիտան, ինժեներ-գեներալ-մայոր և այլն։ Վարշավյան պայմանագրի մասնակից սոցիալիստական երկրների բանակների զինվորական կոչումները հիմնականում նման են ԽՍՀՄ-ի զինված ուժերի զինվորական կոչումներին, բայց ունեն որոշ յուրօրինակություններ։

Ներկայումս Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողների զինվորական կոչումների ցանկը հետևյալն է.

Սերժանտներ



Կրտսեր սերժանտ

Սերժանտ

Ավագ սերժանտ

Ավագ

Ենթասպաներ

Ենթասպա

Ավագ ենթասպա

Կրտսեր սպայական կազմ

Լեյտենանտ

Ավագ լեյտենանտ

Կապիտան

Բարձրագույն սպայական կազմ

Գեներալ-մայոր

Գեներալ-լեյտենանտ

Գեներալ-գնդապետ

Բանակի գեներալ

Զինծառայողների կազմերը, զինվորական կոչումները և դրանց կրման ժամկետները

1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում սահմանվում են զինծառայողների հետևյալ կազմերը և զինվորական կոչումները.

1) շարքային կազմ՝ «շարքային» և «եֆրեյտոր» զինվորական կոչումներով.

2) ենթասպայական կազմ, որն իր հերթին բաղկացած է՝

ա. կրտսեր ենթասպայական կազմից՝ «կրտսեր սերժանտ», «սերժանտ», «ավագ սերժանտ», «ավագ» զինվորական կոչումներով,

բ. ավագ ենթասպայական կազմից՝ «ենթասպա», «ավագ ենթասպա» զինվորական կոչումներով.

3) սպայական կազմ, որն իր հերթին բաղկացած է՝

ա. կրտսեր սպայական կազմից՝ «լեյտենանտ», «ավագ լեյտենանտ», «կապիտան» զինվորական կոչումներով,

բ. ավագ սպայական կազմից՝ «մայոր», «փոխգնդապետ» «գնդապետ» զինվորական կոչումներով,

գ. բարձրագույն սպայական կազմից՝ «գեներալ-մայոր», «գեներալ-լեյտենանտ», «գեներալ-գնդապետ», «բանակի գեներալ» զինվորական կոչումներով:

Զինվորական կոչումների կրման ժամկետներն են՝

1) կրտսեր սերժանտ՝ 1 տարի.

2) սերժանտ, ավագ սերժանտ, ավագ՝ 2 տարի.

3) ենթասպա՝ 3 տարի.

4) լեյտենանտ՝ 2 տարի.

5) ավագ լեյտենանտ՝ 2 տարի.

6) կապիտան՝ 3 տարի.

7) մայոր՝ 3 տարի.

8) փոխգնդապետ՝ 4 տարի:

«Շարքային», «եֆրեյտոր», «ավագ ենթասպա», «գնդապետ» և բարձր մյուս զինվորական կոչումների կրման համար ծառայության ժամկետ չի սահմանվում:

Զինվորական կոչումները (բացառությամբ բարձրագույն սպայական կազմի) լինում են առաջին և հերթական: Շարքային կազմի համար առաջին զինվորական կոչում է համարվում «շարքային» զինվորական կոչումը, ենթասպայական կազմի համար՝ «կրտսեր սերժանտ» զինվորական կոչումը, սպայական կազմի համար՝ «լեյտենանտ» զինվորական կոչումը: Ենթասպայական և սպայական կազմերի (բացառությամբ բարձրագույն սպայական կազմի) մյուս զինվորական կոչումները համապատասխան կազմերում համարվում են հերթական զինվորական կոչումներ:

Կոչումների կրման ժամկետը հաշվարկվում է կոչում շնորհելու օրվանից: Այդ ժամկետում ներառվում են նաև՝

1) զինծառայողին ոչ իրավաչափ քրեական պատասխանատվության ենթարկելու, զինվորական կոչումից զրկելու կամ զինվորական կոչումն իջեցնելու կամ կարգապահական տույժ ստացած լինելու կամ հանցագործության դեպքի կամ արարքում հանցակազմի բացակայության հիմքով կարճված քրեական վարույթով ձերբակալման կամ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման, ինչպես նաև անօրինական զորացրելու և հետագայում վերականգնելու հետևանքով ընդհատված ժամանակահատվածները.

2) պահեստազորում գտնվելու ժամանակաշրջանը, ընդ որում, պահեստազորում հաշվառված անձանց համար տվյալ զինվորական կոչումը կրելու ժամկետը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետներից մեկ տարով ավելի է:

Պահեստազորից զինվորական ծառայության ընդունված զինծառայողների՝ ունեցած զինվորական կոչումով ծառայության ժամկետում հաշվարկվում է պահեստազորում շնորհված զինվորական կոչումը կրելու ժամանակը:

Ծառայողական դիրքով ու զինվորական կոչումով պայմանավորված՝ ըստ ենթակայության զինծառայողները կարող են լինել պետեր կամ ենթականեր:

Պետն իրավունք ունի ենթակային հրամաններ տալ և պահանջել դրանց կատարումը: Բայց և այնպես, դրանք չեն կարող անցնել ՀՀ Սահմանադրության ու օրենքների, ՀՀ զինվորական կանոնագրքերի ու հրահանգների, պաշտպանության նախարարի հրամանների ու կարգադրությունների սահմաններից դուրս:

Պետը ենթակայի համար պետք է լինի զսպվածության, պատվի ու արժանապատվության լավագույն օրինակ և երբեք չպետք նվաստացնի ենթակայի ինքնասիրությունն ու արժանապատվությունը: Հակառակ դեպքում պետը պատասխանատվություն է կրում ենթակայի մարդկային արժանապատվությունը ստորացնող գործողությունների համար:

Ենթական պարտավոր է անվերապահորեն և ճիշտ ժամանակին կատարել պետի հրամանները: Եթե անգամ ենթական համարում է, որ իր նկատմամբ անարդար են վարվել, ապա դա իրեն չի ազատում հրամանը կատարելու պարտականությունից: Նա իրավունք ունի բողոքարկելու հրամանը՝ միայն այն կատարելուց հետո:

Ուղղակի պետերը այն պետերն են, որոնց զինծառայողները ենթարկվում են ծառայության բերումով, թեկուզ և ժամանակավորապես: Իսկ ենթակային ամենամոտ ուղղակի պետը կոչվում է անմիջական պետ:

Եթե զինծառայողներն իրենց ծառայողական դիրքով և զինվորական կոչումով պայմանավորված մյուս զինծառայողների նկատմամբ պետեր կամ ենթականեր չեն, ապա կարող են լինել ավագներ կամ կրտսերներ: Ավագությունը որոշվում է զինծառայողների զինվորական կոչումներով:

Իրավական հիմքեր՝
ՀՀ ԶՈՒ Ներքին ծառայության կանոնագիրք
Հոդված 31-35

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ

Հոդված 9. Զինվորական ծառայության պաշտոնների դասակարգումը

1. Զինվորական ծառայության պաշտոնները դասակարգվում են հրամանատարական և ոչ հրամանատարական կազմերի:
2. Հրամանատարական կազմի պաշտոնները բաժանվում են հետևյալ խմբերի.
1) բարձրագույն հրամանատարական.
2) ավագ հրամանատարական.
3) միջին հրամանատարական.
4) կրտսեր հրամանատարական:
3. Ոչ հրամանատարական կազմի պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.
1) բարձրագույն սպայական.
2) ավագ սպայական.
3) կրտսեր սպայական.
4) ավագ ենթասպայական.
5) կրտսեր ենթասպայական.
6) շարքային:

4. Զինվորական ծառայության պաշտոնների առանձին խմբերում ընդգրկվող հիմնական պաշտոնների անվանացանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Զինվորական ծառայության բարձրագույն հրամանատարական և բարձրագույն սպայական հիմնական պաշտոններին հավասարեցված պաշտոնների անվանացանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ մյուս հիմնական պաշտոններին հավասարեցված պաշտոնների անվանացանկը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:

5. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմինների համակարգերում զինվորական ծառայության հիմնական պաշտոնների, քրեակատարողական և փրկարար ծառայությունների հիմնական պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանում է Կառավարությունը:

6. Զինվորական պաշտոնները միմյանց նկատմամբ կարող են համարվել հավասար կամ բարձր կամ ցածր՝ ըստ պաշտոնների խմբերում իրենց զբաղեցրած դիրքի:

(9-րդ հոդ. փոփ. 21.01.20 ՀՕ-21-Ն օրենք)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Զինվորական կոչումներ, անհատապես շնորհվում են զինված ուժերի ծառայողներին և զինապարտներին՝ համաձայն նրանց ծառայողական դրության, ռազմական և մասնագիտական պատրաստականության, զորատեսակի կամ ծառայության ձևի պատկանելության, ինչպես նաև վաստակի և արժանիքների:

Ծառայողական դիրքով ու զինվորական կոչումով պայմանավորված՝ ըստ ենթակայության զինծառայողները կարող են լինել պետեր կամ ենթականեր:

Պետն իրավունք ունի ենթակային հրամաններ տալ և պահանջել դրանց կատարումը: Բայց և այնպես, դրանք չեն կարող անցնել ՀՀ Սահմանադրության ու օրենքների, ՀՀ զինվորական կանոնագրքրեի ու հրահանգների, պաշտպանության նախարարի հրամանների ու կարգադրությունների սահմաններից դուրս:

Եթե զինծառայողներն իրենց ծառայողական դիրքով և զինվորական կոչումով պայմանավորված մյուս զինծառայողների նկատմամբ պետեր կամ ենթականեր չեն, ապա կարող են լինել ավագներ կամ կրտսերներ: Ավագությունը որոշվում է զինծառայողների զինվորական կոչումներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

1) ՆԶՊ 8- րդ դասարան – Վ. Օհանյան, Ս. Մարգարյան, Վ. Առաքելյան

2) https://hy.wikipedia.org/

3) https://ru.wikipedia.org/

4) https://lib.armedu.am/search

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝	Կամավորական շարժում
Կատարող՝	Ռազմիկ Մադարյան Վանաձոր թիվ 17 ավագ դպրոցի ռազմագիտության ուսուցիչ
Մասնագիտություն՝	Ռազմագիտություն
Ղեկավար՝	Վաղինակ Նազարյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
2. ՄԱՍԵՐ
3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
4. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կանցնեն տասնամյակներ ու հարյուրամյակներ ժամանակը հիշողությունից կջնջի հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի շատ մանրամասները, սակայն հավերժ կպահպանվի ազգի նվիրյալ զավակների անձնաձոռ պայքարի պատմությունը հանուն հայրենի հողի, հայի ինքնության ու ազատ ապրելու իրավունքի, ովքեր կամավոր անդամագրվեցին այդ սուրբ գործին 1914-1918 թվականներին և շարունակեցին 1980-ական թվականների վերջին և 90-ական թթ.-ին նվիրվելով ազգային ազատագրական պայքարի և Արցախի անկախության հերոսամարտերին, որոնցմիջոցով Երկիր Նաիրին պաշտպանում է իր հայրենիքի ազատությունն ու անկախությունը: Ժամանակը իրհետքերըկթողնի այդ մեծ պատմական իրադարձությունների մասնակիցների վրա: Ապագա պատմաբաններն ու գրողները դեռ երկար, շատ երկար են իրենց քննախույզ հայացքով վերադառնալու հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժումներին և Արցախի դյուցազնամարտերին, բոլոր ինքնապաշտպանական և կամավորական ջոկատների մղած հերոսական կռիվներին՝ վիճելով, հաստատելով, ժխտելով, առաջադրելով տասնյակ հարցեր: Նրանք կաշխատեն խորամուխ լինել Հայաստանի ու Արցախի սահմանների պաշտպանության համար մղած հերոսամարտերի ու դեռևս ազգային բանակ չունեցող հայ ժողովրդի հերոսական ու անընկճելի կամքով օժտված առաջին ինքնապաշտպանական կամավորական ջոկատների կողմիցհող հայրենին պաշտպանելու հարցերի էության մեջ: Արցախյան պայքարն սկսվեց 1988թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի մարզային խորհրդի որոշման ընդունումով, ըստորի ԼՂԻՄ-ը դուրս էր բերվում Ադրբեջանի կազմից և դրվելու էր Հայկական ԽՍՀ կազմի մեջ: Իսկ փետրվարի 21-ին Աղդամում տեղի ունեցած ադրբեջանական կուսակցության ակտիվի նիստըկոչերհինչեցրեցներխուժել Լեռնային Ղարաբաղ և հողին հավասարացնել ամեն ինչ: 1990թ. վիճակն ավելի սրվեց. ադրբեջանական զինված ուժերը, խորհրդային բանակի աջակցությամբ, հարձակման անցան Հայաստանի սահմանակից գյուղերի վրա: Այդ սահմանայինգոտիների պաշտպանության գործը սկզբնական շրջանում իրականացվում էր Ներքին գործերի հատուկ ջոկատների և տեղի բնակչության միջոցով: Չկար պետական աջակցություն և կանոնավոր բանակ, ուստի և անհրաժեշտություն էին կամավորական ջոկատները, որոնք էլ մասնակցեցին սահմանամերձ շրջանների

պաշտպանությունը: Կիրովականցիները ևս սկսեցին ձևավորել կամավորական ջոկատներ: Այո, Երասխավանի, Հայաստանի հյուսիսային շրջանների, Լեռնային Ղարաբաղի բնակչությունը կարող են վկայել, որ անգնահատելի է առաջին ջոկատների դերը հայրենի երկրի պաշտպանության գործում: Պատմությունը անաչառ դատավորի իր արժանի գնահատականը կտա բոլոր հերոսացած ազատամարտիկներին: Կանցնեն ժամանակներ, Հայաստանը դուրս կգա պատերազմական իրավիճակից, կբարելավվեն կյանքի պայմանները, անկախության ուղին բռնած Հայոց Երկիրը համաշխարհային քաղաքակրթությանը կշարունակի ասել իր փառահեղ խոսքը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ 1914-1918ԹԹ.

Հայկական կամավորական շարժում 1914-1918, հայրենասիրական շարժում՝ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական բանակը համալրելու և Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու նպատակով: Հայ հասարակա-քաղաքական շրջանները դեռևս պատերազմից առաջ, ելնելով ցարական կառավարության 1914-ի հուլիսի 23-ի՝ ռուսական բանակը կամավորներով համալրելու մասին որոշումից, և հույս ունենալով, որ ռուս, բանակում հայկական զինված ջոկատների ստեղծմամբ կնպաստեն արևմտյան Հայաստանի ազատագրմանը, բանակցություններ սկսեցին Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի հետ: Ցարական կառավարությունը, հետամուտ լինելով իր շահերին Մերձավոր Արևելքում և Արևմտյան Հայաստանում և վստահ Ռուսաստանի հանդեպ հայ ժողովրդի համակրանքին:

Կամավորական ջոկատների կազմավորում

Առաջին կամավորական ջոկատի հրամանատարը՝ Անդրանիկ Օզանյանը

Երկրորդ կամավորական ջոկատի հրամանատարը՝ Դրաստամատ Կանայանը

1914-ի սեպտեմբերին թույլատրեց կազմակերպել հայկական կամավորական ջոկատներ՝ անորոշ խոստումներ տալով Արևմտյան Հայաստանի ապագա ինքնավարության մասին: Հայկական ազգային կուսակցությունները, հավատալով ցարական կառավարության հավաստիացումներին և ելնելով հայ ժողովրդի շահերից, եռանդուն գործունեություն ծավալեցին այդ ուղղությամբ: Ռուսական կայսրության մեջ բնակվող 2 մլն 54 հազար հայերից ցարական բանակ էր զորակոչվել 250 զինվոր: Հայ աշխարհիկ և հոգևոր շրջանների ներկայացուցիչները փոխարքայի խորհրդով Անդրկովկասում և հայկական գաղթավայրերում իրենց հայրենակիցներին կոչ էին անում Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու նպատակով կամավորներով համալրել նաև Անտանտի երկրների բանակները: Կամավոր, ջոկատները կազմակերպելու, նրանց զենքով և զինամթերքով ապահովելու համար ստեղծվել էր ռազմական խորհուրդ, որն իր ներկայացուցիչներն ուներ Ռուսական կայսրության բազմաթիվ հայաբնակ վայրերում, իսկ Հայոց ազգային բյուրոն իր ենթաբաժիններն ուներ Մոսկվայում, Պետերբուրգում, Նոր Նախիջևանում,

Մարիուպոլում, Բաքվում և այլուր։ Հայկական կամավորական շարժմանը նյութական զգալի օգնություն ցույց տվեցին հատկապես Մոսկվայի, Պետերբուրգի, Բաքվի, Թիֆլիսի, նաև Նյու Յորքի, Փարիզի, Լոնդոնի հայկական կոմիտեները, իսկ զենքով, ռազմահանդերձանքով՝ ցարական կառավարությունը։ Սկզբնական շրջանում կազմակերպվեց կամավորական չորս ջոկատ։ Հրամանատարներ նշանակվեցին Անդրանիկը (1-ին ջոկատ), Դրաստամատ Կանայանը (Դրո. 2-րդ ջոկատ). Համազասպ Սրվանձտյանը (3-րդ ջոկատ), Քեռին (Արշակ Գաֆավյան, 4-րդ ջոկատ)։ Ավելի ուշ ստեղծվեցին 5-րդ (հրամանատար՝ Ա. Ջանփոլադյան), 6-րդ և 7-րդ ջոկատները։ 1915-ի վերջին կամավորների ընդհանուր թիվը հասավ մոտ 10 հազար։ 6-րդ ջոկատի հրամանատարն էր Գրիգոր Ավշարյանը, որի զոհվելուց (1915-ի հունվարին) հետո նրան փոխարինեց Հայկ Բժշկյանը (Գայ)։ 7-րդ ջոկատը կազմակերպվեց 1915-ի աշնանը՝ Հովսեփ Արղությանի հրամանատարությամբ։

Անդրանիկ | Դրաստամատ Կանայան | Համազասպ Սրվանձտյան | Քեռի | Գրիգոր Ավշարյան | Հայկ Բժշկյան | Հովսեփ Արղության

Կամավորական ջոկատների մարտեր

Կամավորական առաջին ջոկատները ռազմաճակատ մեկնեցին 1914-ի նոյեմբերին։ 1-ին ջոկատը կռվում էր Խոյ-Դիլման-Վան, 2-րդը Իգդիր-Բայազետ-Բերկրի-Վան, 3-րդը Կաղզվան-Ալաշկերտ-Մանազկերտ-Բաղեշ, 4-րդը՝ Սարիղամիշ-Էրզրում ուղղություններով։ Հայ կամավորները կռվում էին քաջությամբ։ Մարտական սխրանքներով հատկապես աչքի ընկավ կամավորական 1-ին ջոկատը։ 1915-ի ապրիլին այն հաղթական մարտեր մղեց Սալմաստ գավառի կենտրոն Դիլման քաղաքի մատույցներում՝ Վանի ուղղությամբ, և ռուս, զորքերի հետ գլխովին ջախջախեց Խալիլ բեյի 12 հոգանոց բանակը։ Այդ հաղթանակով կանխվեց թուրքերի ներխուժումը Անդրկովկաս։ Անդրանիկի ջոկատը, հետապնդելով Խալիլ բեյին, անցավ թուրք-պարսկական սահմանը, նոր հարված հասցրեց թուրքերին Խանասորի լեռնանցքում և մտավ Բաշկալե։ Դրանով իսկ խափանվեց Վանի վրա գրոհող Ջևդեթ բեյի զորամասին

օգնության հասնելու թուրք, ծրագիրը։ 1915-ի մայիսի 17-ին Արարատյան գունդը, Վարդանի հրամանատարությամբ, գեներալ Նիկոլանի զորախմբի կազմում, առաջինը մտավ Վան։ Վանի ազատագրումից հետո հայկական կամավորական չորս ջոկատները գեներալ Տրուխինի զորաբանակի կազմում համառ մարտեր մղեցին Վանա լճի հարավային մասում և, հաղթահարելով հակառակորդի դիմադրությունը, շարժվեցին Մուշի և Բաղեշի ուղղությամբ։ 1915-ի հուլիսի 9-ին թուրքական 3-րդ բանակի աջ թևում ստեղծված հարվածային զորախումբը (մոտ 11 դիվիզիա) հարձակման անցավ ռուսական զորքերի Կովկասի 4-րդ կորպուսի դեմ Կոփ-Մանազկերտ-Ալաշկերտ-Կաղզվան ուղղությամբ, ճեղքեց ռուսների պաշտպանությունը, առաջ շարժվեց ստեղծելով Վանի շրջապատման լուրջ վտանգ հյուսիս-արևմուտքից։ Ռուս զորքերը նահանջեցին։ Սկսվեց Վասպուրականի հայերի գաղթը Անդրկովկաս։ Այդ օրհասական պահին օգնության հասան կամավորները, որոնք Վասպուրականի նահանգի 200 գաղթականներին հասցրին ռուս-թուրքական սահմանը։ 1915-1916-ին կամավոր, ջոկատները շոշափելի ծառայություն մատուցեցին ռուսական զորքերի Կովկասյան բանակին Արևմտյան Հայաստանի մեծ մասը ազատագրելիս։

Կամավորական ջոկատների հետագա ճակատագիրը

Ռուսական բանակի հրամանատարությունը, բարձր գնահատելով հայ կամավորների օժանդակությունն ու նվիրվածությունը, միաժամանակ անվստահությամբ էր վերաբերվում նրանց։ Ցարական իշխանությունների ծրագրերի մեջ չէր մտնում արևմտյան Հայաստանը ինքնուրույն տեսնելու հեռանկարը։ Այդ պատճառով էլ նրանք դեմ էին հայկական կամավորական ջոկատների միավորմանը։ Ավելին՝ 1915-ի դեկտեմբերին գլխավոր հրամանատարությունը ցրեց կամավոր, ջոկատները և դրանց հիման վրա ռուս, զորամասերի կազմում ստեղծեց հայկական հրաձգային գումարտակներ։ Այս քաղաքականությունը խիստ դժգոհություն առաջ բերեց հայ կամավորների շարքերում։ Այդուհանդերձ, նորաստեղծ հայկական գումարտակները, որոնք հավատում էին ռուսական զենքի հաղթանակին, գործուն մասնակցություն ունեցան 1916-1917-ին Արևմտյան Հայաստանում և Իրանում մղված մարտերին։ Հայկական կամավոր, ջոկատները հերոսաբար էին մարտնչում նաև Անտանտի երկրների բանակներում։ Հայ կամավորներից կազմված Հայկական լեգեոնը (կամ Արևելյան լեգեոնը) մասնակցեց Մերձավոր Արևելքում Թուրքիայի դեմ մղված

ռազմական գործողություններին և իր առաջին մարտական մկրտությունը ստացավ Արարայի ճակատամարտում (1918)՝ նպաստելով թուրք, զորքերի վերջնական ջախջախմանը։ Ապա մասնակցեց Սիրիայի և Լիբանանի համար մղված մարտերին և Կիլիկիայում մղված ռազմական գործողություններին։

1917-ի Փետրվարյան հեղափոխությունից հետո ռուսական բանակի հրամանատարությունը, ելնելով ռազմաճակատը պահելու անհրաժեշտությունից, լրացուցիչ միջոցներ ձեռնարկեց հայկական գումարտակները համալրելու և սպառազինելու ուղղությամբ։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանը դուրս եկավ պատերազմից և իր զորքերը դուրս բերեց Կովկասի ռազմաճակատից։ Նախկին կամավորական ջոկատներից և ռուսական բանակում ծառայող հայ զինվորականներից (մասամբ նաև ռուսներից) ստեղծված հայկական կանոնավոր զորաջոկատները մի որոշ ժամանակ անհավասար մարտերում դիմադրեցին թուրքերին։ Խախտելով 1917-ի դեկտ. 5-ին կնքված Երզնկայի զինադադարը՝ թուրք, զորքերը հարձակման անցան և վերագրավեցին Արևմտյան Հայաստանը։

1918-ի աշնանը առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց Անտանտի հաղթանակով, Թուրքիայի պարտությամբ։ Հայ բոլշևիկները դեմ էին հայկական կամավորական շարժմանը՝ այն դիտելով որպես հայ բուրժուազիայի և նրա կուսակցությունների արկածախնդրության արգասիք, նրանց կողմից թուրք, լծից արևմտահայերի ազատագրման՝ ժողովրդի մեջ լայն արձագանք գտած գաղափարի չարաշահում։ Հայկական կամավորական շարժման այսպիսի գնահատականը բխում էր բոլշևիկյան այն թեզից, որ հայ և մյուս ժողովուրդների ազատագրման միակ ուղին սոցիալական հեղափոխությունն է, իսկ Հայկական կամավորական շարժման օբյեկտիվորեն նպաստում էր ռուսական բանակի հաղթանակին, հետևապես և ցարիզմի ամրապնդմանը։

Մինչդեռ իրականում հայկական կամավորական ջոկատների և հետագայում ստեղծված հայկական կանոնավոր զորամասերի հիմնական նպատակը հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանումն ու Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր։

ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ 1989-2020ԹԹ.

«ՎԱՆԱՁՈՐ» ՋՈԿԱՏ

Հատվածներ Արսեն Սարգսյանի «Չհայտարարված պատերազմ» գրքից

(Երևան 2007թ.)

Կիրովական-Վանաձորում ևս կատարվեցին բանակաշինության առաջին հաստատուն քայլերը: Թեև դժվարությամբ, բայց Վազգեն Սարգսյանը վերջապես տվեց իր համաձայնությունը՝ կազմավորելու «ՎԱՆԱՁՈՐ» ջոկատը, որի կայացման աշխատանքներին իրենց արդյունավետ մասնակցությունն ունեցան քաղաքի ղեկավարներից Հովհաննես Մատինյանը, Աշոտ Մանուկյանը, Վանիկ Մանուկյանը, Մայիս Խաչատրյանը, Անդրանիկ Հարությունյանը, Արամ Նազարյանը:

Հրամանատար նշանակվեց Վարդան Ասլոյանը, տեղակալ՝ արցախցի Ռոման Կարապետյանը: Նրա եղբայրը՝ Ռավիկը և փեսան՝ Վալերիկը ևս ընդգրկվեցին ջոկատի կազմում: Մարտիկներն էին՝ Գևորգ Դադայանը, Սեյրան Մելքումյանը, Սոս Թումանյանը, Վազգեն Տեր-Հովսեփյանը, Ստեփան Սահակյանը, Կամո Հովհաննիսյանը, Վարդևան Կարապետյանը, Յուրա Ստեփանյանը, Գագիկ Խոսրովյանը, Տրդատ Իսմաիլյանը, Բաբկեն Հախոյանը, Արթուր Ոսկանյանը, Աշոտ Խոյեցյանը, Ռազմիկ Պողոսյանը:

Մարտի 26-ին, 27-ին թշնամու կողմից ուժգին հրետակոծության ենթարկվեցին հայկական դիրքերը և Վալեր Սահակյանը, Սեյրան Սարգսյանը վիրավորվեցին, իսկ Չախալը՝ ԱՐՏԱՎԱԶԴ ՍԻՄՈՆՅԱՆԸ զոհվեց: Անանցանելի ձյունե պատնեշը հնարավորություն չէր տալիս առաջխաղացման համար, թեև ազերիները մի քանի անգամ փորձեցին գրոհել, բայց՝ ապարդյուն: Տալով բազմաթիվ սպանվածներ՝ նրանք անկանոն նահանջեցին: Այդ նույն օրերին Ադրբեջանի ղեկավարությունը փորձեց ետ բերել իր կորցրած դիրքերը՝ անցնելով հարձակման ու պարբերաբար ռմբահարել Հայաստանի սահմանային բնակավայրերը՝ Կապանը, Մեղրին, Գորիսը: Արցախյան

զորամիավորումները սրընթաց ու շեշտակի հարվածներով թշնամուց ազատագրեցին Քելբաջարի բնակավայրերից Չարեքտարը, Նրեշտարը, Աղդաբանը, Թազաքենդը, Զայղոչանը, ոչնչացվեցին նույնանուն շրջանում գտնվող Աղջաքենդի, Ենիքենդի, Նաղդալիի ռազմական հենակետերը: Զարգացնելով սկսած հարձակումը, այնուհետև ազատգրվեցին Զորման, Ղզլղայա, Վանք գյուղերը: Իսկ ապրիլի 1-ին ազատագրվեց Քելբաջարը և դարաբաղյան զինվորական կազմավորումները ջախջախելով թշնամու քելբաջարյան զորախումբը ապրիլի 5-ին գրավեցին Օմարի լեռնանցքը: Եվ ազերիների քարոզչական մեքենան արագացնելով իր պտույտները ամենուրեք հաղորդում էր հայ ագրեսորների նորանոր նվաճումների մասին: Քելբաջար-Քարվաճարի ազատագրման օրն էլ առաջին անգամ լույս տեսավ ՀՀ Պաշտպանության նախարարության պաշտոնաթերթը՝ «ԶԻՆՎՈՐ» (հետագայում՝ «ՀԱՅ ԶԻՆՎՈՐ») շաբաթաթերթը:

Վարդենիսյան ռազմաճակատում ազերիների գործերը նույնքան վատ և անմխիթար էին, ինչպես մնացած բոլոր ուղղություններում: Թշնամական կրակակետերը հաջողությամբ չեզոքացնելուց հետո, երբ գումարտակի մարտիկները վերադառնում էին դեպի սեփական բազայավորման վայր, ընկան թշնամու կրակի տակ և Հայրենիքի անկախության զոհասեղանին իրենց կյանքը դրեցին

հրամանատարի առաջին տեղակալ	ԼԻՊԱՐԻՏ	ՂՈՒԼՅԱՆԸ
դասակի հրամանատար	ԷԴՈՒԱՐԴ	ՊԵՏՐՈՍՅԱՆԸ
զինվորներ	ԽԱՉԱՏՈՒՐ	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ
	ԳԱԳԻԿ	ԽՈՍՐՈՎՅԱՆԸ
	ԱՀԱՐՈՆ	ԳԵՎՈՐԳՅԱՆԸ
	ԱՀԱՐՈՆ	ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ
ենթասպա	ՍԵՐՅՈԺԱ	ՄԱՐԳԱՐՅԱՆԸ:

Հավերժ փառք Հայրենիքի համար նահատակված հերոսներին...

Այդ նույն մարտերում վիրավորվեցին 18 զինվորականներ, բայց ի վերջո, ազերիները մինչև վերջին ասկյարը իրենց կյանքով հատուցեցին գումարտակի այս անդառնալի կորուստների դիմաց: Ապրիլի 8-ին զոհվեց ԿԱՄՈ ՔՈՉԱՐՅԱՆԸ՝ Ժորա Մեժինյանի վաշտից: Գումարտակը չնայած այս կորուստներին կարողացավ ամրանալ նվաճված բնագծերում՝ ապահովելով շրջանների բնակչության անվտանգությունը:

«ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ» ՋՈԿԱՏ



1990թ.: Վանաձորի ԴՕՍԱՖ-ի բազայի վրա ստեղծվում է «Զորավար Անդրանիկ» ջոկատը: Բնականաբար, ջոկատի կայացման պատասխանատվությունը դրվում է արդեն փորձառու Խաչիկ Բալայանի ուսերին, ով մինչ այդ եղել էր Արցախում՝ մասնակցել Ստեփանակերտը, շրջկենտրոնները և Արցախի մյուս կարևորագույն տեղամասերը միմյանց հետ, Հայաստանի հետ մեկ ընդհանուր ռադիոկապի ցանցի ստեղծմանը: Ջոկատի առաջին քայլերի մասին, որովհետև հետագայում Խաչիկ Բալայանին հանձնարարվում է մարզել նաև «Վանաձոր-1, 2» ջոկատները, «Լոռին Բերդ»-ին ներկայացրեց վաստակաշատ հայորդին:

-Նախաձեռնող խումբը 18 կամավորից էր: Մեզ առաջին իսկ օրվանից օժանդակում էր Վանաձորի քաղսովետի կոմունալ տնտեսության պետ Հենրիկ Շահբազյանը: Նման մարդկանց վաստակը պետք չէ ուրանալ: ԽՍՀՄ պետական կառույցներում նույնպես կային հայրենանվեր պաշտոնյաներ, ովքեր եթե ոչ բացահայտ, ապա գաղտնի օժանդակում էին թե՞ նյութապես, թե՞ բարոյապես:

Իմ ղեկավարությամբ Մայմեխի փեշերին ստեղծեցինք զինվորական ճամբար, որն ապահովված էր ռադիոկայանով, գործում էին հրամանատարական կետնու զորանոցը: Ջոկատի ակտիվ անդամներն էին՝ Շմավոն Գալստյանը, Ֆելիքս Ավետյանը, Խաչիկ Հարությունյանը, Լիպարիտ Ղուլյանը, Վովա Աբովյանը, Գրիգոր Քամալյանը, Կարո Գինոսյանը, Ռազմիկ Մադարյանը, Ռուսլան Հարությունյանը, Զոհրապ Փափազյանը, Ասատուր Զատիկյանը, Վահագն Քոչինյանը...

Տեխնիկայով նյութապես և բարոյապես զորակցում էին նաև «Ավտոմատիկայի» տնօրեն Խաչատուր Խաչատրյանը, «Մորթու մուշտակի» տնօրենՄելս Կարապետյանը, Հակոբ Մանյանը, ով «ԱՍԱԼԱ»-ի անդամ, Փարիզի դեսպանատունը գրավող Վազգեն Սիսլյանին հյուրընկալեց Վանաձորում, կամավորների հետ հանդիպում կազմակերպեց: Հանդիպումը հայ ազատագրական շարժման նվիրյալի հետ, իհարկե, ահռելի բարոյական լիցք էր: Նա Գևորգ Գյուզալյանի և Աշոտ Խաչատրյանի հետ, Արծվանիստում մարզում էին մեր ջոկատը: Աշոտ Խաչատրյանը հետագայում ստանձնեց ԼՂՀ ՊԱԿ-ի պետի պաշտոնը:

Մինչև Ոսկեպարի դեպքերը՝ տղաներից շատերն անձնական նախաձեռնությամբ արդեն եղել էին սահմաններում: Ոսկեպարից հետոմենքորպես ջոկատ ներկայացանք

Նոյեմբերյանում գտնվող կոորդինացիոն կետին, որնըստ անհրաժեշտության կազմակերպում էր ջոկատների տեղաբաշխումը սահմանամերձ գյուղերում: 1990-914թթ.-ին մենք հաճախակի եղել ենքԿոթի, Ոսկեպար, Բարեկամավան, գյուղերի դիրքերում: Փառք Աստծո, այդ ժամանակ զոհեր չունեցանք: Եվ դա, ինչխոսք, Մայմեխի փեշերում անցկացված երկամսյա զինավարժությունների արդյունքն էին: Անչափ կարևոր էր նաև միմյանց նկատմամբ տղերքի հոգատար վերաբերմունքը: Հրամանատարները ոչ մի անգամ որևէ մեկին կասկածելի առաջադրանքի չէին ուղարկում: Մերմեջ գործում էր «մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի» ոսկյա կանոնը:

-Դեռ առաջին օրերն էին, որքան էլ զորավարժված դեռ «խամություն» կար մեջներս: Ոսկեպարում հրամանատարի՝ Կարո Գինոսյանի հետ դիրքերն ստուգում էինք: Թուրքերը հրետանակոծում էին: Հերթական պայթյունից հետո Կարոն շրջվեց ինձ ումյուսընկերոջը դիտողություն արեց՝ թե ինչո՞ւ չեք պայթյունի ժամանակ գետնին փռվում: Խոսքը դեռ բերանում գրչից երկար մի բեկոր զուտ իր գլխավերևով ֆռռալով խրվեց ծառի մեջ: Բա՛, փոխանակ առաջինը ինքը փռվեր, մեզ էր համոզում, որցեխերիմեջ պառկեինք...

1992 թվականի հունվարի սկզբին Արցախում դրությունը խիստ լարված էր: Շտապ Արցախ մեկնելու անհրաժեշտությունն առաջացավ: Ֆելիքս Ավետյանի նախաձեռնությամբ և ակտիվ միջնորդությամբ մենք ԱԻՄ-ի «Նժդեհ» ջոկատի հետ ՀՀ Պաշտպանության նախարարությունից զենք ու զինամթերք ստացանք: Հունվարի 15-ին արդեն Հադրությում էինք, մասնակցում էինք Էդիլու, Հախլու, Աղբուլաղ, Դուդուկչի, Մելիքաշեն, Բլութան, Խրմնջուխ (վերջին երկուսըթուրքերը մեկ անգամ գրավել էին, ավերել ու այրել) գյուղերի պաշտպանություններին: Մեկ ամիս անց «Զորավար Անդրանիկ» մարտական խմբի հրամանատարությունը վստահվեց ինձ:

Մինչև հունիսի կեսերը մենք Հադրութում էինք: Վերադարձանք, երբ մեզ փոխարինող ուժեր ուղարկվեցին Հայաստանից: Եթե տանը մնայինք, կհասցնեինք հասկանալ ու գնահատել: Այդ ժամանակ արդեն Մարտակերտում իրադրությունը սրվել էր: Վանաձորում իմացանք, որ «ԱՍԱԼԱ»-ի անդամ, մեր մարզիչ Գևորգ Գյուզալյանը կազմավորում է «Մեծն Մուրադ» ջոկատը: «Զորավար Անդրանիկից» նորաստեղծ «Մեծն Մուրադին» անդամագրվեցին Խաչիկ Հարությունյանը, Վալտեր Սահակյանը, Սերգեյ Հովհաննիսյանը (Նայոմնիկ), Աշոտ Գրիգորյանը, Անդրանիկ Քսմալյանը, Ռոբերտ Օհանյանը, Ֆրունզիկ Թորոսյանը, Գագիկ Եփրեմյանը, Կարեն Սաֆարյանը, Անդրանիկ Խանաղյանը, Շահեն Մադարյանը, Էդիկ Խաչատրյանը, Գալուստ Սաֆարյանը և իհարկե՝ ես:

Փաստորեն, մենք ընդամենը մեկ օր մնացինք տանը, վերադարձանք Արցախ մասնակցելու Մարտակերտի պաշտպանությանը:

Ինչխոսք, կռվողներընույնն էին՝ թե՞ ՀՀ-ի սահմաններում, թե՞ Արցախում: Այդ հիմա՝ խաղաղ պայմաններում մարդիկ կարող են հայրենասիրության մասին խոշոր «բրդել»:

Առանց նմանների անհնարին էր հաղթանակի կռումը: Սահման կամ Արցախ մեկնած յուրաքանչյուր ազատամարտիկ մտովի արդեն նվիրաբերել էր իր կյանքը...

Բացի ազատամարտիկներից հարկ է նշել նաև նրանց, ովքեր տարիքի կամ առողջության պատճառով չէին մասնակցում մարտական գործողությունների, սակայն իրենցինչքը, վաստակը կամավոր դնում էին որևէ ջոկատի տրամադրության տակ։ Երևանցի Գևորգ Գեղամյանը Կոմիտասի փողոցիիր սեփական առանձնատունը սիրահոժար դարձրել էր «Մեծն Մուրադի» շտաբ։ Բազմիցս ֆինանսապես, նյութապես հոգացել էր ջոկատի կարիքները։ Հիշատակման արժանի է նաև սփյուռքահայ Հովհաննես Մարտիկյանի նվիրատվությունները մեր ջոկատին։

Դա ողջ Արցախյան ազատամարտի ամենաբարդ էջերից մեկն է, որը միանշանակ չես կարող գնահատել։ Ինչ-որ անբացատրելի խուճապ էր համակել շատերին։ Զինվորով, ժողովրդով ահաբեկված էին... Մենք Լեոնիդ Ազգալդյանի «Ազատագրական բանակի» հետ համագործակցելով պաշտպանում էինք թե դիրքերը, թե՞ ժողովրդի տեղաշարժը դեպի թիկունք։ Հուլիսի 3-ին մեծաքանակ թշնամուց ատամներով պահեցինք Մարտակերտը՝ մինչև վերջին բնակիչը կարողացավ հեռանալ։ Անհավասար էին մերուժերը։

Չնայած մեր քչությանը Մոխրաթաղը, որը կարևոր ռազմավարական դիրք էր, երկու անգամ հետ ենքվերցրել «Ազատագրական բանակի» և «Վանաձոր» ջոկատի հետ միասին։ Մոխրաթաղի երկրորդ գրավման ժամանակ ես կրկինոտքից վիրավորվեցի։ Ոտքից էին վիրավորվել նաև Գալուստ Սաֆարյանը, Սերգեյ Հովհաննիսյանը, երևանցի Արմենը։ Տարօրինակ զուգադիպություն։ Մոխրաթաղում թուրքերից առգրավեցինք «Գրադ» կայանք, մի քանի բեռնատար մեքենաներ՝ զինամթերքով և սննդամթերքով լեցուն։

Համալրում ստանալով՝ Մոխրաթաղից հետո ազատագրեցինք Հարությունագոմերը, վջերցրինք Վաղուհասը, որտեղթուրքերին անակնկալի բերելովխլեցինք լրիվությամբ մարտական վիճակում գտնվող մեկական տանկ ու շիլկա։

Հրաշք տղերք էին «Մեծն Մուրադ»-ի ամբողջ անձնակազմը։ Մեզնից՝ վանաձորցիներից բացի երևանից էին, Արթիկից էին, Էջմիածնի Զվարթնոց, 4-րդ սովխոզ, Խաթունարխ, Գայ գյուղերից էին։ Բոլորն արդեն փորձառու, հրով և սրով անցած, արյուն և մահ տեսած, բայց հոգատար, ընկերասեր, մարդկային հատկանիշները պահպանած։ Երբ Գևորգ Գյուզալյանը փոխհրամանատարի իմ թեկնածությունը առաջադրեց, ոչոք չառարկեց, թեև տարիքով շատերից կրտսեր էի։ Մարտական գործողությունների ժամանակ անվերապահ ենթարկվում էին հրամաններիս։ Իսկ հանգստի պահին ես արդեն իրենց ընկերն էի։

Պատերազմը նոր փուլ էր թևակոխում։ Լայնամասշտաբ ռազմական գործողությունները կամավորական ջոկատներով անհնար էր իրականացնել։ Հազարամյա պարզ ճշմարտություն գոյությունունի. «Բանակի դեմ բանակ է անհրաժեշտ»։

Ուստի, երբ կազմավորվում էի Վանաձորի պայմանագրային գումարտակները՝ մենք զինվորագրվեցինք դրանց։ «Զորավար Անդրանիկի», «Մեծն Մուրդի» իմ զինակիցների մի մասը ծառայության անցավ առաջին պայմանագարային գումարտակում, որը

ղեկավարում էր Արշալույս Փյտյանը: Մյուսները, որոնց թվում նաև ես՝ համալրեցինք երկրորդ պայմանագրային գումարտակի շարքերը, որի հրամանատարը Կամո Հովհաննիսյանն էր: Այդ գումարտակների կազմում էլ հասանք մինչև 1994 թվականի մայիսի Հաղթական զինադադարը: Ցավոք, մերսուրբ ընկերների արյան գնով: Քելբաջարում մեր նախկին ջոկատի կամավորներից հերոսի մահով զոհվեցին՝ Լիպարիտ Աթաբեկի Ղուլյանը և Խաչիկ Համլետի Հարությունյանը: Հավերժ փառք նրանց անմահ հիշատակներին: **Ռազմիկ Մաղարյան**

«ԱՆԻ» ՋՈԿԱՏ

1990 թվականին էր: Խնձորուտցիները ստեղծում են «Անի» ջոկատը... Սակայն մինչև ջոկատի ստեղծումն էլ տղերքից շատերը հաճախակի էին տարերային գնացել սահման ու զգացել կազմակերպության, կազմակերպված ձևի անհրաժեշտությունը: Առաջին մեծ ժողովի ժամանակ միանգամից 67 հոգի անդամագրվեց ջոկատին: Ես խոսքով հանդես եկա, զարգացրի «ուժը միասնության մեջ է» թեզը ու ... կարելի է ասել կրակն ընկա: Տղերքը՝ թե այդքան սիրուն ճառում ես, ուրեմն՝ «վիզ առ»: Ու հարկադրված դարձա «Անի» ջոկատի հրամանատարը: Ջոկատի գործերի հրամանատարը: Ջոկատի գործերի քարտուղար ընտրվեց Սամվել Դուրինյանը: Տեղում ջոկատը լրիվ զինվորական օրակարգով էր ապրում: Զինուսուցման դասերն անց էին կացնում խնձորուտցի նախկին որսորդներ՝ Սամվել Սարգսյանը և Սամվել Բաղդասարյանը: Ֆիզ. պատրաստվածության բարձրացման պարապմունքները վարում էին բռնցքամարտիկներ Գալուստ Գալստյանը և Ազատ Բաղդասարյանը: Խնձորուտում հերթապահություն էինք կազմակերպել նաև մեր զինպահեստներին: Ո՞չ մի հիմնարկ¬ձեռնարկությունից մեքենա չենք առգրավել: Գործում էր մեքենաների տրամադրման կարգը՝ ըստ երկկողմանի փոխհամաձայնության: Ջոկատի կարգապահությանը և ընդհանրապես գործունեությանը բազմաթիվ օգտակար խորհուրդներով օժանդակել է գրականագետ Մելս Սանթոյանը:Քաջությունը և կարգապահությունը զուգակցած իմ զինակիցներից են Մարտուն Աղաբաբյանը, Արարատ Մկրտչյանը, Լյովա Բուլղադարյանը, Բաբկեն

Գոգորյանը, Արտակ Աթոյանը, Ռաֆիկ Աքուլյանը, Ռուշան Մխիթարյանը, Հովիկ Սահակյանը, Հովիկ Կիրակոսյանը, ո՞չ անհայտ «Ռեմբոն»՝ Ռոբերտ Կարապետյանը...

«ԷՐԶՐՈՒՄ» ՋՈԿԱՏ

Ջոկատը կազմավորվել է 1988 թ. մարտի 1-ին: Ջոկատը բաղկացած է եղել 30 անդամներից, մարտական գործողություններին մասնակցել են 15 ազատամարտիկ:

1990 թ. հունվարին Զավեն Էվոյանի հետ հինգ ազատամարտիկներ առանձնացան և կազմավորեցին «ՎԱՆ» ջոկատը: «Էրզրում» ջոկատի հրամանատարը եղել է Էդիկ Մարտիրոսյանը:

Մարտական ուղին

1988 թ. նոյեմբեր – Խնձորուտ «Վարդանլու», 1989 թ. մարտ - Բաղանիս-Այրում

1990 թ. մարտ-օգոստոս - Բաղանիս-Այրում, 1990 թ. մայիս – Ոսկեպար, Կիրանց

1990 թ. օգոստոս - Բաղանիս, Ղուշչի Այրումներ, 1991 թ. նոյեմբեր – Կիրանց

Անվանացանկ

1. Մարտիրոսյան Էդիկ – հրամանատար, 2. Էվոյան Արսեն, 3. Էվոյան Զավեն,
4. Ղարագյոզյան Ավետիք, 5. Մարտիրոսյան Հարություն, 6. Սարգսյան Հայկ
7. Բեկչյան Սիրակ, 8. Հակոբյան Հրաչիկ, 9. Հակոբյան Հովհաննես
10. Հակոբյան Գևորգ, 11. Հարությունյան Սարգիս, 12. Գրիգորյան Նիկոլ,
13. Հարությունյան Ջեմմս, 14. Ալավերդյան Հայկազ, 15. Ղաբուզյան Վահան,
16. Զալյան Նորիկ, 17. Առաքելյան Աշոտ, 18. Զուրաբյան Հելբերտ,
19. Թունյան Արամո, 20. Եղշատյան Համլետ:

«Նժդեհ ԱԻՄ» ջոկատ

1989 թվականի դեկտեմբերի 20-ին Վանաձորի «Նժդեհ» ԱԻՄ կազմակերպության ռազմաքաղաքական խորհրդի որոշմամբ կազմավորվեց «Նժդեհ ԱԻՄ» ջոկատը: Մինչ ջոկատի ստեղծման որոշումը, 1989 թվականի

դեկտեմբերի սկզբին Սոս Նալղրանյանը և Գագիկ Մարիկյանը Գյումրիից ՀԱԿ-40 ինքնաթիռի հատուկ չվերթով մանկական սննդի տուփերում և նպարեղենի պարկերում թաքցրած զինամթերքը Արցախ տեղափոխելու ընթացքում իրենց աչքերով տեսնելով ազեր օմոնականների դաժան ոտնձգություններն ու արցախցիների գրեթե անօգնական վիճակը, Խորհրդի առջև հարց էին բարձրացրել՝ հավատարիմ մնալով «Նժդեհ» ԱԻՄ-ի նշանաբանին («Նպատակի և ուժի միաբանությամբ առաջ, դեպի անկախություն») ստեղծել ռազմական ջոկատ: Լազմաքաղաքական խորհուրդը, որը փաստորեն համարվում է «Նժդեհ ԱԻՄ» ջոկատի հիմնադիրը, ուներ հետևյալ կազմը՝ Սոս Նալղրանյան, Սեյրան Մազմանյան, Լևոն Գրիգորյան, Գագիկ Մարիկյան, Վահան Հովհաննիսյան, Արշալույս Փայտյան, Սամվել Մազմանյան, Հակոբ Ղուկասյան, Քերոբ Սարուխանյան: Որոշ ժամանակ անց նրանց միացավ նաև Գևորգ Զաքարանը: Հարկ է նշել, որ և՞ «Նժդեհ» ԱԻՄ կազմակերպության հիմնադրումը (1989թ. նոյեմբերի 26), և՞ «Նժդեհ ԱԻՄ» ջոկատի հիմնադրումը տեղի է ունեցել Գագիկ Մարիկյանի բնակարանում, որն ի դեպ 1988-1989թթ. ծառայել է որպես ինքնաշեն զենք-զինամթերքի պատրաստման ու պահպանման գաղտնավայր, իսկ 1989-1990թթ. նաև որպես ռազմական շտաբ:

Կազմակերպության ռազմական կառույցի ղեկավար է ընտրվում Գագիկ Մարիկյանը, իսկ գործող ջոկատի հրամանատար Սոս Նալղրանյանը:Առաջին փուլում ջոկատի կազմում ընդգրկվեցին Սեյրան Մազմանյանը, Սոս Նալղրանյանը, Գագիկ Մարիկյանը և զենք-զինամթերքի հայթհայթման և պատրաստման իրենցկողմից ղեկավարած խմբի անդամներ Արմեն Բաբաջանյանը (դաշնակ), Գուրգեն Զաղացպանյանը, Արմեն Սաղոյանը, եղբայրներ Գագիկ (Մալխաս) և Հարություն (Ուզբո) Մալխասյանները, Հարություն Քեշիշյանը, Արթուր Կարայանը (Ժոզեֆ), ինչպես նաև Արտակ Գրիգորյանը, Երեմ Հարությունյանը, Անդրանիկ Քամալյանը, Արթուր Ալոյանը, Վալերիկ Անտոնյանը:

«ՍԱՄՍՈՆ» ՋՈԿԱՏ

Ջոկատը կազմավորվել է 1989 թ.: Ջոկատը բաղկացած է եղել 20 անդամից, մարտական գործողություններին մասնակցել է 10 ազատամարտիկ: Ջոկատի հրամանատարը եղել է Սամսոն Խաչատրյանը:

Մարտական ուղին

1988 թ. նոյեմբեր – Խնձորուտ (Վարդանլու), 1989 թ. մարտ - Բաղանիս-Այրում

1990 թ. մարտ - Բաղանիս-Այրում, 1990 թ. մայիս – Ոսկեպար, Կիրանց

1990 թ. օգոստոս - Բաղանիս, Ղուշչի Այրումներ, 1991 թ. մայիս – Ոսկեպար

Անվանացանկ

1. Խաչատրյան Սամսոն – հրամանատար,
2. Մաշուրյան Աշոտ – հրամանատարի տեղակալ, 3. Խաչատրյան Սոս
4. Սահրադյան Բաբկեն, 5. Պապյան Լեոնիկ, 6. էքմեջյան Ժիրայր
7. Ասուլյան Վաչիկ, 8.Սարդարյան Աշոտ, 9. Խաչատրյան Արմո – թիկունքի պետ

«ՎԱՆ» ՋՈԿԱՏ

1990 թ-ին «Էրզրում» ջոկատից առանձնացավ և կազմավորվեց «Վան» ջոկատը՝ Զավեն և Արսեն Էվոյանների, Սարգիս Հարությունյանի, Նիկոլայ Գրիգորյանի, Միրակ Բեկչյանի (որը հետագայում հետ վերադարձավ) նախաձեռնությամբ և մասնակցությամբ, հրամանատարը ես էի, տեղակալը՝ Արսենը: Ջոկատին միացան նաև Ջեմմս Հարությունյանը, Գևորգ և Սամվել Այվազյանները, Միքայել Մելիքյանը և ուրիշներ: Չնայած, որ «Էրզրում» ջոկատից առանձնացանք, սակայն շատ մարտական գործողությունների միասին ենք մասնակցել:

Վրեժ ջոկատ

1990-ին Վանաձորում ձևավորվեցին «Վրեժ» մարտական ջոկատը: Անկուսակցական ջոկատ էր, որն ստեղծեցին 7 ընկերներով: խաղաղ պայմաններում իրար ճանաչել էին, իրար հավատացել: Երեքը մասնակցել էին աֆղանական պատերազմին: Հրամանատար ընտրեցին Կարեն Սարիբեկյանին, որն այն ժամանակ 27-ամյա երիտասարդ էր, իսկ 1982-3-ին անցել էր աֆղանական բովով: Գոյության երեք տարիների ընթացքում ջոկատը բազում պաշտպանական ու գրոհային փորձություններ անցավ, թվակազմն էլ նվազ չմնաց, շատ շուտով 36 կամավորի էր ընդգրկում:

***

Գագիկ Անտոնյան

Տպ. Է «ՀՀ» եւ «Լոռու մարզ» թերթերթում 2021թ.

Իսկ դիրքերը կոչվեցին «Լոռի» , «Վանաձոր»

Հայոց սահմաններում «Վանաձոր» ջոկատի երկրապահ կամավորականներն էին

«Բանակային կորպուսի հրամանատարությունը բարձր է գնահատում Հայրենիքի հանդեպ իրենց պարտքը կատարած «Վանաձոր» կամավորական ջոկատի մարտիկների հայրենանվեր ծառայությունը: Մեր խորին շնորհակալությունն ու երախտագիտությունն ենք հայտնում Ձեզ եւ ջոկատի մարտիկներին՝ մարտական գործողություններին անձնվիրաբար մասնակցելու եւ միասնաբար հաջողություններ ունենալու համար». Բանակային 2-րդ կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Արայիկ Հարությունյանի ստորագրությամբ այս Շնորհակալագիրը օրերս հանձնվեց «Վանաձոր» կամավորական ջոկատի հրամանատար Կարեն Սարիբեկյանին: Այն «պարզ շնորհակալությունից» բացի խոսում է նաեւ Հայոց բանակ-կամավորական մարտիկներ միասնության, մեր երկրի պաշտպանունակության գործում այդ համագործակցության հույժ անհրաժեշտության ու կարեւորության մասին:

Իսկ ի՞նչ գործունեություն են ծավալել լոռեցի կամավորականները: ՀՀ պաշտպանության բանակի Ն զորամասի հրամանատար Վիգեն Սարգսյանն է բացահայտում, ով իր հերթին է ընդգծել ջոկատի ունեցած կարեւորագույն դերը եւ պարգեւատրել է Պատվոգրով, որից պարզ է դառնում՝ **«Մարտական հերթապահության գործընթացի կազմակերպման, նաեւ մարտական դիրքը կահավորելում նյութական աջակցություն ցուցաբերելու համար»:**

Առավել հասկանալի լինելու համար միանգամից ասենք՝ ամրացված մարտական դիրքերում /Քարվաճառի մատույցներում/ ջոկատի մարտիկները ձմռան բուք ու բորանին, 2600 մետր բարձրության վրա, ադրբեջանական բանակի աչքի առաջ, մի քանի օրում կառուցեցին անվտանգ, հարմարավետ, ամրակուռ, հողի հաստ շերտի տակ թաքնված գետնափոր տնակ՝ լուսավորությամբ, լամինատե հատակով, վառարանով, քնել-հանգստանալու, ճաշելու եւ կենցաղային այլ լավագույն պայմաններով: Չեն մոռացվել զուգարանները: Ընդ որում, ամեն ինչ արվել, նյութական, շինարարական բոլոր միջոցները ձեռք են բերվել անձնական միջոցներով եւ ընկեր-բարեկամների

օգնությամբ: Համապատասխան կահույքն արդեն պատրաստ է, օրերս տեղ կհասցվի այն մղանով/տրակտոր/, որ ձեռք կբերվի ու կնվիրվի մեր բանակին: Ժամկետային մեր զինծառայողները, ովքեր այդ օրերին կարճատեւ արձակուրդի մեջ էին, վերադարձան ու զարմանքով տեսան, որ այլեւս չեն քնելու սառցե հաստ հատակով թեթեւ վրաններում, տաք կերակուր չեն պատրաստի, չեն ուտի դրսում՝ քամու, սառնամանիքի տակ: Իզուր չէ, որ հրամանատար Կարեն Սարիբեկյանը, փոխհրամանատար Ռազմիկ Մադարյանը անթաքույց ուրախությամբ ասում են, թե նման կահավորմամբ գետնափոր անվտանգ տնակ մինչ այդ չի եղել մեր սահմանների որեւէ դիրքերից մեկում: Նշեցինք՝ կառուցեցին թշնամու աչքի առաջ: Ասենք, որ թշնամին էլ իր հենակետն էր ուզում կառուցել …փորձելով ներս խցկվել Հայոց ու ադրբեջանական սահմանի դեմարկացիոն /սահմանազատող/ նշաձողից այս կողմ: Մեծ լարում եղավ, վտանգն անչափ մեծ էր: Լավ է՝ բանը զենքին չհասավ. վերջապես սահմանը հսկող մեր 33քաջերի կայունության, համարձակության, արդարամիտ պահանջի /կառուցել՝ միայն նշագծից այն կողմ/ շնորհիվ թուրքերը տեղի տվեցին, հեռու քաշվեցին: Այս ամենի արժանի գնահատանք է նաեւ այն, որ Քարվաճառի ուղղությամբ մեր պաշտպանական երկու հսկիչ կետեր կորպուսի հրամանատարության որոշումով այսուհետ կոչվում են «Լոռի» եւ «Վանաձոր» հենակետեր:

Ուրախությամբ պատմեցի այս ամեն լավն ու դրականը, միաժամանակ մեծ, շատ մեծ ցավ եմ ապրում, թե ինչու՞ մեր ամբողջ սահմանի երկայնքով չենք ունեցել, չենք կահավորել նման հենակետեր. Ի՞նչ պայմաններում են իրենց հերթափոխն անցկացրել ու անց են կացնում մեր զինվորները, ինչպիսի հիվանդություններ ձեռք կբերեն, վերջապես, գետնափոր տնակները առավել ապահով կլինեին, քան փալասից վրանները, եւ ամենագլխավորը՝ թռչող սարքերը ի զորու չէին լինի այդքան շատ կորուստներ պատճառել: Մինչդեռ… Մի խելոք կենդանու ականջին քնած՝ մեզ համար, մեզ բնորոշ «համեստությամբ» «անմեղ գործով»՝ դղյակաշինությամբ էինք զբաղված: Այդպիսի մի դղյակաշինության մասին օրերս հեռուստատեսային մի հարցազրույցում լսեցի: Կարճ ասեմ՝ հարցազրույցի հրավիրվածը նկարագրեց կոռուպցիոն սահմռկեցուցիչ, ցնցող մի սխեմա. Մեր քաաձզուն բանակի մի գեներալ բանակի նյութական միջոցներով, զինվորների ստրկական աշխատանքով քաղաքացիների աչքը հանելով՝քաղաքի կենտրոնում իր դղյակն է վեր տնկում: Հետո այդ դղյակը վաճառում է

իր իսկ Պաշտպանության Բանակին՝ իբր՝ բանակի հույժ անհրաժեշտ կարիքների համար: Ամիսներ անց՝ Նախարարությունը, չգիտենք՝ որ գովելի գործը նկատի ունենելով, կամ՝ «բանակի հույժ անհրաժեշտ կարիքների համար» այդ դրյակը նվիրմամբ վերադարձնում է նույն գեներալին: Մաթեմատիկոս լինել պետք չէ, որ կարողանանք հաշվել, թե այդ քամուն տրված փողերով քանի գետնափոր տնակ կկառուցեինք սահմանի երկայնքով /ոմանք պնդում են՝ կկառուցվեր մոտ 100 գետնափոր տնակ/, քանի պատանի զինվորի մատաղ կյանք կփրկեինք անմիտ կործանումից: Այս էլ ասենք՝ մեր նարկայացրած հրապարակային հայտարարությունը, որ արվել է հազարավոր հեռուստադիտողների առջեւ, առայժմ ոչ մի արձագանքի չի արժանացել «համապատասխան մարմինների» կողմից: **Ու քանի դեռ չի արժանացել, մենք դեռ երկար ժամանակ չենք ունենա պաշտպանական հզոր գիծ, վեր կհառնեն նոր դրյակներ, ասել է, թե՝ մեր պաշտպանունակության ավելացման հեգսերի նկատմամբ նման հանցավոր անտարբեր վերաբերմունքով այսօր իսկ մենք «կերտում ենք» ապագա հնարավոր պատերազմի անխուսափելի ելքը՝միայն եւ միայն անվերապահ պարտությամբ:**

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Որպեսզի գնանք այն ճանապարհով, որը նախանշել են Հայ Գաղտնի Բանակի քաջազուն անդամները

Հունվարի 20-ին Վանաձորի Սուրբ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցուՆահատակաց պուրակում, Հայաստանի ազատագրության հայ գողտնի բանակի նահատակ մարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողի մոտ, լոռեցիները հանդիսավորությամբ նշեցին ՀԱՀԳԲ-ի /ԱՍԱԼԱ/ հիմնադրման օրը: Այն նախաձեռնել էին «Ինտերկապ» ԲԿ-ի /նախագահ՝ Նորայր Զուլոյան/ ղեկավարությունը, համակիրները, Գաղտնի բանակի նվիրյալները: Հիշում ենք ազատագրական բանակի առաջին գործողությունը, որն իրականացվեց 1975 թ. հունվարի 20-ին: Որպես թիրախ ընտրվեց եւ պայթացվեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Բեյրութի գրասենյակը, որի հովանու ներքո գործում էր ԱՆՉԱ-ն՝ Անհայրենիք հայերի ամերիկյան ազգային կոմիտեն: ԱՆՉԱ-ն բազմաթիվ կենտրոններով ամեն կերպ հայությանը հրապուրում էր դեպի Արեւմուտք, մասնավորապես՝ Միացյալ Նահանգներ,որով նպաստում էր Միջին Արեւելքի երկրներից դեպի Արեւմուտք հայության գաղթը, դատարկելով պատմական

Հայաստանին սահմանամերձ շրջանների հայությունը: Կատարված գործողության պատասխանատվությունը ստանձնել է «Գերի Գուրգեն Յանիկյան Խմբակ» անունը կրող կազմակերպությունը՝ ԱՍԱԼԱ-ի կորիզը: Պատմաբան Ռուբեն Պարսամյանը ներկայացրաց կազմակերպության հերոսական գործունեությունը, նրա դերն ու նշանակությունը ցեղասպանության համաշխարհային ճանաչման, հայոց պահանջատիրության արդարացիության ընկալման պարտադրման կարեւոր գործընթացում: «Հարգանքի տուրք ենք մատուցում մի կազմակերպության,-ասաց նա,- որն այսօր, դժվարին մեր ժամանակներում մեզ ուժ ու զորություն է հաղորդում, որ շտկենք մեր մեջքը, գնանք այն ճանապարհով, որը նախանշել են նրա քաջազուն անդամները»: Պատմաբան, Վանաձորի փոխքաղաքապետ Արման Բասենցյանը կարեւոր համարեց նոր ժամանակներում նահատակների սխրանքն ու նրանց հիշատակը ավելի բարձր պահելու անհրաժեշտությունը, նա վստահ է, որ «հայոց արգանդը դեռ ծնելու է նման որդիներ, ովքեր վառ կպահեն քաջերի պարզած ջահը»: Ստամբուլի ծածկած շուկայում հանրահայտ պատժիչ գործողությունների մասնակից Մկրտիչ Մադարյանի հորեղբորորդի, ազատամարտիկ, Լոռու կամավորականների միության անդամ Ռազմիկ Մադարյանը համոզմունք հայտնեց, որ **Նրանց** բոցավառ ուղիով են ընթանում ոչ միայն ինքն ու իր որդին, այլեւ հազարավոր կամավորականներ, այսօրվա մեր բանակում ծառայող մատղաշ երիտասարդ հայորդիներ: Նա բերեց Սպիտակի կամավորականների ջոկատի անդամներ Քյասիմյանների գերդաստանի օրինակը. հայր Սամվել Քյասիմյանը, որպես փոխհրամանատար, հերոսաբար կռվել է Արցախյան առաջին պատերազմում, որդի՝ Մանվելը, թոռնիկը՝ Հովհաննեսը՝ կռվեցին այս նոր պատերազմում, որում էլ զոհվեցին հանուն հայրենիքի: Առանց հուզմունքի անհնարին էր լսել որդեկորույս հոր՝ Արցախյան պատերազմի մասնակից, Վանաձորի թիվ 5 դպրոցի ռազմագիտության ուսուցիչ Վովա Զորաբյանի խոսքը, ում որդի Սեւակը, հիշյալ դպրոցի եւս 8 սաներ, իրոք սխրանքներ գործելով , չերկնչելով թշնամուց՝ կռվել ու մատաղվել են այս վերջին պատերազմում: «Ես իմ աշակերտներին ասում եմ,- ասաց նա, - Ես իմ հայրենիքին տվեցի իմ ունեցած ամենաթանկը՝ որդուս, եւ ոչ միայն ՝ ես, բայց ձեզ ասում եմ՝ արի եղեք, չխուսափոք բանակից, պատրաստ եղեք ամեն տիպի թշնամիների դեմ. մենք տերը տալու երկիր չունենք»: Անշուշտ, նահատակների ոգին էր թեւածում Նահատակաց պուրակում, նրանց անմար ոգին է թեւածում նաեւ այս եւ

մյուսների խոսքերում: Մենք տեսանք, որ այս վերջին պատերազմը մեր մշակույթի ու ինքնության դեմ էր: Հնչեցվեց համոզմունք՝ նոր սերունդն էլ պիտի պատգամ ընդունի Գրիգոր Յանիկյանի գործը եւ այն որպես դրոշ միշտ վեր պարզած ընթանա թշնամու եւ ամեն տեսակ հողմերի դեմ՝ անսասան:

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայոց պատմության հազարամյակների ընթացքում ազգի պահպանման և գոյատևման առհավատչյան նվիրյալ զավակների արյան ու բազկի ուժով ձեռք բերված ու պահպանված հայոց հողն է, մեր լեզուն, հավատքը, մշակույթն ու պատմությունն է։ Այդ զավակները հայրենիքի պաշտպանության գործին նվիրվել են կամավոր, սրտի թելադրանքով, անշահախնդիր և անմնացորդ։

Սկսած 20-րդ դարի սկզբից, ռուսական և օտար բանակներում հայ կամավորներն անդամագրվեցին նպատակ ունենալու, որ իրենց պայքարի գնով նաև կնպաստեն իրենց հայրենիքի ազատագրմանն ու պահպանմանը, անկախության հաստատմանը։ Կամավորական շարժումը և այդ նվիրյալ ցանկությունը պահպանվեց և հասավ մեր օրեր։ Հայոց կանոնավոր բանակի ստեղծման հիմքում էլ կամավորական ջոկատներն էին, այդ շարժումը՝ իր նվիրյալներով։

4. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայ ժողովրդի պատմություն, հատոր 6, Երևան, 1981 թ. :

2. Ս ա ր գ ս յ ա ն Ե. Ղ, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918 թթ, Երևան, 1964 թ. :

3. Կիրակոսյան Ջ. Ս., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1965 թ. :

4. Արզումանյան Մ. Վ, Հայաստան 1914-1917, Ե., 1969:

5. Ա ղ այ ա ն Ծ. Պ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, ե., 1976:

6. Ա. Հ. Հարությունյան, Կովկասյան ճակատ, 1914-1918 թթ. ., Երևան, 1971 թ.:

7. Սահակյան Ռ., Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը /1914 թ. հուլիս-1917 թ. փետրվար/, Երևան, 2015,

8. Sahakyan R. O., From the history of the Armenian volunter movement on the Russian-Turkish front during World War I, www.fundamentalarmenology.am, Саакян Р. о., Армянское добровольческое движение на русско-турецком фронте (1914-1916 гг.), Историко-филологический журнал, Ереван, 2017, № 1. с. 3-25.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ՆԱԶԱՐՅԱՆ ԺՈՐԱ ՌԱԶՄԻԿԻ

Թեմա՝ ՄՀՁ-ի կազմը և մարտական հնարավորությունները

Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Ղեկավար՝ Անդրանիկ Սարգսյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ՄՀՋ-ի կազմը և մարտական հնարավորությունները 4

Եզրակացություն 17

Օգտագործված գրականության ցանկ 18

Ներածություն

Թեման իրազեկում է ՄՀՋ-ի կազմի և մարտական հնարավորությունների մասին և տալիս է որոշակի գիտելիքներ։ Հաշվի առնելով այն, որ մեր օրերում մոտոհրաձգային զորքերը աշխարհի բանակների մեծ մասի , ինչպես նաև մեր բանակի ողնաշարն են այն շատ է կարևորվում։ Իմանալով ՄՀՋ-ի մարտական հնարավորությունների մասին կարելի է որոշակի պատկերացում կազմել մոտոհրաձգային մյուս ստորաբաժանումների՝ դասակի , վաշտի գումարտակի մարտական հնարավորությունների մասին։

Զորակոչիկները ձեռք բերելով մոտորրաձգային ջոկի կազմի և մարտական հնարավորությունների մասին որոշակի գիտելիքներ կարեղ են պատկերացում կազմել նաև այլ զորատեսակների ջոկերի մասին։ ՄՀՋ-ն մոտոհրաձգային ամենափոքր ստորաբաժանումն է, այսինքն այն կազմում է մոտոհրաձգային միավորումների կորիզը։ Աշխահի մոլոր երկրների բանակներում մոտոհրաձգային զորամասերը մեծ քանակ են կազմում։ Այս ստորաբաժանումները պաշտպանությունում լուծում են հակառակորդի հարձակումները հետ մղելու, հակառակորդ զորքի կենդանի ուժին և տեխնիկային խոցելու և զբաղեցրած դիրքերի պահպանության խնդիրները։

Նախազորակոչիկները և զորակոչիկները պատկերացում կազմելով մոտոհրաձգային ջոկի մարտական հնարավորությունների մասին տեսական գիտելիքներ է ձեռք բերում զինվորի գործողությունների մասին ինչպես պաշտպանությունում այնպես էլ հարձակման ժամանակ։

ՄՀՋ-ի ԿԱԶՄԸ և ՄԱՐՏԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՀՋ-ի կազմը

Մոտոհրաձգային ջոկը մարտական պարզագույն ստորաբաժանում է այն մտնում է մոտոհրաձգային, մոտոհետևակային, հետևակային ականանետային, սակրային, կապի և այլ դասակների կազմի մեջ: Երեք մոտոհրաձգային ջոկը կազմում է մեկ դասակ:/1 /

Մոտոհրաձգային ստորաբաժանումները , քանակը և հրամանատարների կոչումները		
ստորաբաժանումներ	քանակ	հրամանատարի կոչումներ
ջոկ	8–12	կրտսեր սերժնտ,սերժանտ
դասակ	15–30	լեյտենանտ, ավագ լեյտենանտ
վաշտ	80–150	կապիտան/մայոր
գումարտակ	300–800	փոխգնդապետ
զորագունդ, բրիգադ	3,000–5,000	գնդապետ/ գեներալ-մայոր
դիվիզիա	10,000–30,000	գեներալ-մայոր, գեներալ-լեյտենանտ
կորպուս	30,000–50,000	գեներալ-լեյտենանտ,գեներալ-գնդապետ

Ինչպես երևում է վերն նշված աղյուսակից ամենաքիչ թվաքանակով ստորաբաժանում է և հրամանատարը ամենակրտսեր կրտսեր հրամանատարական կոչումն ունի, մտնում է դասակի

և հետևապես նաև ավելի մեծ ստորաբաժանման՝ մոտոհրաձգային միավորումների

(զորամասերի) կազմի մեջ և կազմում են համապատասխան զորատեսակների դասակների հիմնական կառուցվածքային միավորը:

Մոտոհրաձգային զորամասերը գտնվելով մոտոհրաձգային զորքերի կազմում - Զինված ուժերի համակարգում ցամաքային զորքերի տեսակ է, որը նախատեսված է մարտական գործողություններ վարելու ինչպես ինքնուրույն, այնպես էլ այլ զորատեսակների հետ համատեղ: Մոտոհրաձգային զորքերը պայմանավորված են մոտոհրաձգային ստորաբաժանումներով, զորամասերով, զորամիավորումներով, որոնցում ընդգրկվում են նաև տանկային, հրետանային, զենիթահրթիռային ստորաբաժանումներ, ինչպես նաև մասնագիտական ու թիկունքային զորքերի ստորաբաժանումներ: Ժամանակակից մոտոհրաձգային զորքերը հագեցած են հզոր սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով:

/ 4 /

Մոտոհրաձգային ջոկի կազմում ընդգրկված յուրաքանչյուր զինծառայող ունի առանձնահատուկ խնդիրներ՝ իր զբաղեցրած պաշտոնով պայմանավորված:

Մոտոհրաձգային ջոկի ղեկավարը ջոկի հրամանատարն է: Բացի հրամանատարից ջոկի կազմում են նաև՝ ավագ հրաձիգը, նռնականետորդը, նռնականետորդի օգնականը, նշանառու օպերատորը, նշանառու գնդացրորդը, գնդացրորդը, վարորդը, հրաձիգը:

Մոտոհրաձգային ջոկի կազմում զինվորական կոչումով ջոկի հրամանատարը լինում է կրտսեր հրամանատարական կազմից՝ կրտսե սերժանտ կամ սերժանտ, ավագ զինվորը՝ եֆրեյտոր , իսկ մնացած զինվորները լինում են շարքայիններ: Այսպիսով մոտոհրաձգային ջոկը կազմված է 8-12 հոգուց, որոնք համապատասխանաբար լինում են նշված պաշտոնյաներ /1 /

- ջոկի հրամանատար /Հ /
- ավագ հրաձիգ / ԱՀ /
- նռնականետորդ / Ն /
- նռնականետի օգնական / ՆՕ /
- նշանառու օպերատոր, նշանառու գնդացրորդ / ՆՇՕ, ՆԳ /
- գնդացրորդ / Գ /
- վարորդ / Վ /
- հրաձիգներ / Հ /

Ջոկի հրամանատարը

Ջոկի հրամանատարը խաղաղ և պատերազմի ժամանակ պատասխանատու է ջոկի մարտական առաջադրանքների հաջող կատարման, ենթակաների ուսուցման, դաստիարակության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի,

շարային կեցվածքի և արտաքին տեսքի, ինչպես նաև սպառազինության, ռազմական տեխնիկայի, սարքավորման, համազգեստի և կոշկեղենի ճիշտ օգտագործման ու խնայողության, դրանք կարգին և անվնաս, սարքին վիճակում պահելու համար: Նա ենթարկվում է դասակի հրամանատարին և նրա տեղակալին (խմբի ավագին) և ջոկի անձնակազմի անմիջական պետն է: /2 /

Ջոկի հրամանատարը պարտավոր է՝

- ուսուցանել և դաստիարակել ջոկի զինվորներին, իսկ մարտական առաջադրանքների կատարման ժամանակ հմտորեն ղեկավարել ջոկը.

- գիտենալ յուրաքանչյուր ենթակայի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, անձնական հատկանիշները, զբաղմունքը մինչև ծառայությունը, ընտանեկան դրությունը, մարտական պատրաստության մեջ ունեցած հաջողություններն ու թերությունները.

- հետևել օրվա կանոնակարգի կատարմանը, ջոկում մաքրության և ներքին կարգուկանոնի պահպանմանը, ենթականերից պահանջել զինվորական կարգապահության պահպանում.

- գիտենալ ջոկի նյութական մասը, զենքի, ռազմական տեխնիկայի և այլ գույքի շահագործման կանոնները, հետևել դրանց առկայությանը, ամեն օր ստուգել և սարքին վիճակում պահել դրանք.

- ծառայության նկատմամբ սեր, զենքի և ռազմական տեխնիկայի նկատմամբ հոգատար վերաբերմունք պատվաստել ջոկի զինվորի մեջ.

- ջոկի զինվորի մեջ շարային կեցվածք և զինվորական տոկունություն մշակել.

- հոգ տանել ենթակաների մասին և խորամուխ լինել նրանց կարիքների մեջ, հետևել ենթակաների համազգեստի և կոշիկների սարքինությանն ու կոկիկությանը, հանդերձանքի ճիշտ հարմարեցմանը, նրանց անձնական հիգիենայի պահպանմանը և հագուստ կրելուն.

- ամեն օր հետևել կոշիկների, համազգեստի մաքրությանը, ոտքի փաթաթանների, գուլպաների չորացմանը, ինչպես նաև կոշիկների և համազգեստի ժամանակին նորոգմանը.

- հետևել, որպեսզի հրաձգությունից կամ պարապմունքներից հետո ենթակաները չունենան մարտական և ոչ մարտական փամփուշտներ, նռնակներ, բռնկիչներ և պայթուցիկ նյութեր.

- դասակի հրամանատարի տեղակալին զեկուցել բոլոր հիվանդների, ենթակաների բողոքների ու դիմումների, նրանց զանցանքների և դրանց կանխման նպատակով ձեռնարկված միջոցների, խրախուսանքների և կարգապահական տույժերի, ինչպես նաև սպառազինության և այլ նյութական միջոցների կորստի կամ անսարքության դեպքերի մասին.

- մշտապես տեղյակ լինել, թե որտեղ են գտնվում և ինչ են անում ենթակաները:

Զինվորը պարտավոր է՝

- խորապես գիտակցել զինված ուժերի մարտիկի պարտքը, օրինակելիորեն կատարել իր ծառայողական պարտականությունները, տիրապետել այն ամենին, ինչ ուսուցանում են հրամանատարները (պետերը).

- իմանալ իր անմիջական և ուղղակի պետերի պաշտոնները, զինվորական կոչումները և ազգանունները.

- հարգանք ցուցաբերել հրամանատարների (պետերի) և ավագների նկատմամբ, հարգել ընկերների պատիվն ու արժանապատվությունը, պահպանել զինվորական քաղաքավարություն, վարքի և զինվորական ողջույնի կանոնները.

- ամեն օր կոփել իրեն, կատարելագործել իր ֆիզիկական պատրաստականությունը, պահպանել անձնական հիգիենայի կանոնները.

- մշտապես լինել համազգեստով և կոկիկ հագնված.

- կատարելապես տիրապետել և ունենալ մշտապես սարքին, մաքրված և մարտի պատրաստ զենք և ռազմական տեխնիկա.

- հոգատար կրել հագուստն ու կոշիկները, ժամանակին և խնամքով նորոգել դրանք, ամեն օր մաքրել ու պահել սահմանված տեղերում.

- զենքն օգտագործելիս, տեխնիկայի հետ աշխատելիս և այլ դեպքերում խստագույնս կատարել անվտանգության, ինչպես նաև հրդեհային անվտանգության պահանջները.

- գնդի տեղաբաշխման սահմաններում իր դիրքից հեռանալու անհրաժեշտության դեպքում թույլտվություն ստանալ ջոկի հրամանատարից, իսկ վերադառնալիս զեկուցել նրան ժամանելու մասին.

- գնդի տեղաբաշխման սահմաններից դուրս գտնվելու դեպքում իրեն պահել պատվով ու արժանապատվությամբ, թույլ չտալ հասարակական կարգի խախտում և անվայել արարքներ քաղաքացիական բնակչության հանդեպ: / 2 /

Մոտոհրաձգային ջոկը լինում է հետևակի մարտական մեքենայով / ՀՄՄ / կամ զրահապատ փոխադրիչով / ԶՓ /

Մոտոհրաձգային ջոկը ՀՄՄ-ով և ԶՓ-ով

ՀՄՄ-ն , սա զրահապատ թրթուռավոր մեքենա է, որի հիմնական ֆունկցիան հակառակորդի հարձակման ճնշումն է: Նրա վրա տողադրված է հակատանկային ական և հրթիռային համալիր: Վերին մասում գնդացիր և հրանոթ: ՀՄՄ-ն պատված է հակագնդակային և հակաբեկորային զրահով և ունի հակամիջուկային համակարգ, որը պաշտպանում է ամբողջ մեքենանն և հակատանկային ականի հնարավոր պայթյունը:

ԶՓ-ն անվավոր մարտական մեքենա է , որը նախատեսված է զինծառայողների և բարձրաստիճան այրերի մի տեղից մյուս տողը տեղափոխելուհամար:Զրահափոխադրիչի վրա տեղադրված է գնդացիր և մի շարք գիշերային տեսասարքեր:ԶՓ-ն պահպանում է կրակոցներից և միջուկային զենքի ճառագայթներից: / 5 /

Այսպիսով իմացանք, որ մոտոհրաձգային ջոկը մոտոհրաձգային ամենափոքր

ստորաբաժանումն է, իսկ մոտոհրաձգային ստորաբաժանումները կազմում են մոտոհրաձգային միավորումների (զորամասերի) հիմքը և լուծում են հետևյալ խնդիրները. պաշտպանությունում՝ հակառակորդի հարվածները ետ մղելը, հարձակվող զորքերին խոցելը, զբաղեցրած շրջանները, բնագծերը և դիրքերը պահպանելը, հարձակման ժամանակ հակառակորդի պաշտպանությունը ճեղքելը, նրա պաշտպանվող ստորաբաժանումները ջախջախելը, կարևոր շրջաններ, բնագծեր և օբյեկտներ գրավելը, ջրային արգելքների մարտանցումը, նահանջող հակառակորդին հետապնդելը, հանդիպական մարտ վարելը: / 4 /

Դրան հասնում են.

- Բարձր մարտական հմտավարժությամբ:

- Զինվորական պարտքի գիտակից կատարմամբ, տոկունությամբ, քաջությամբ, խիզախությամբ և անձնակազմի՝ ցանկացած պայմաններում հակառակորդի նկատմամբ լիակատար հաղթանակի հասնելու պատրաստակամությամբ:
- Պետերի՝ ենթականերին ճանաչելով, նրանց հետ անձնական շփումներով, նրանց ամենօրյա մարտական կյանքի ու կարիքների հանդեպ ուշադրությամբ, բարձր պահանջկոտությամբ:
- Մեր գործի արդարության, հայրենիքի և ժողովրդի հանդեպ ենթակաների նվիրվածության դաստիարակմամբ:

Ժամանակակից համազորային մարտի բարդ պայմաններում հաջողության գրավականը բարձր մարտական հմտավարժությունն է: Դրան հասնում են լարված մարտական պատրաստության ընթացքում, որը խաղաղ պայմաններում զորքի ամենօրյա գործունեության հիմնական բովանդակությունն է և շարունակվում է մարտի նախապատրաստման ու մարտական գործողությունների միջև ընկած դադարների ժամանակ: /6/

Մոտոհրաձգային ջոկի մարտական հնարավորությունները

Մոտոհրաձգային ջոկի մարտական հնարավորությունները պետք է ճիշտ գնահատվեն, քանի որ հենց դրանցով են բնորոշվում սահմանված ժամկետում և իրադրության տվյալ պայմաններում որոշակի մարտական խնդիր կատարելու կարողությունները:

Մոտոհրաձգային ջոկի մարտական հնարավորությունները բնորոշվում են կրակային հզորությամբ և զորաշարժային (խուսանավելու) ունակությամբ:

Կրակային հզորությունը հնարավորություն է տալիս հակատանկային միջոցներով և հրաձգային

զենքի կրակով հակառակորդին կորուստ պատճառել: Եթե ջոկը լրիվ սպառազինված է, ապա նա կարող է պայքարել հակառակորդի տանկերի, զրահամեքենաների, ցածր թռչող ուղղաթիռների դեմ և ոչնչացնել նրա կրակային միջոցներն ու կենդանի ուժը:

Կրակի խտությամբ է որոշվում հրաձգային զենքի կրակային հզորությունը, որը ճակատի 1 մ-ի վրա 1 րոպեում արձակված գնդակների թիվն է: Դա կախված է զենքի քանակից, տեսակից, արագաձգությունից և նաև ճակատի այն հատվածից, որի ուղղությամբ կրակ է բացվում: Մոտոհրաձգային ջոկը կարող է 1 րոպում արձակել 1000 գնդակ, ինչը նշանակում է, որ կրակի խտությունը հարձակման ժամանակ կկազմի 20, իսկ պաշտպանության ժամանակ 6-7 գնդակ: Հարձակման դեպքում կրակի այսպիսի խտությունը կարող է ապահովել հակառակորդի ոչնչացումը, իսկ պաշտպանության դեպքում կարող է հաջողությամբ հետ մղել հակառակորդի գրոհը:

Մոտոհրաձգային ջոկի հնարավորությունները տանկերի և զրահամեքենաների դեմ պայքարելու համար ջոկն ունի հակատանկային հրթիռային համակարգ , ձեռքի հակատանկային նռնականետ, ձեռքի կուտակային հակատանկային նռնակ և ՆՄՄ-ի հրանոթ: Այս հակատանկային միջոցների մարտական հնարավորությունները բնորոշվում են իրենց զրահարությամբ, հեռավորությամբ , դիպուկ և արագ կրակելու կարողությամբ: /1 /

Հակատանկային հրթիռային համալիրը հզոր կրակային միջոց է հակառակորդի զրահատեխնիկայի ոչնչացման համար: Հրաձգու թյունը կարող է կատարել 100 մ մինչև 4000 մ: Տեղադրվում է ՀՄՄ-2,3 (ԶՓ80)-ի վրա, ունի 16 մարտալրակազմ (12՝ ԶՓ-ի վրա): Հրթիռները կառավարվում են մինչև նշանակետի խոցումը: ՀՄՄ-1-ի վրա տեղադրված է 73 մմ տրամաչափի հարթափող թնդանոթ, արդյունավետ կրակի հեռավորու թյունը մինչև 1300 մ է, մարտական լրակազմը՝ 40 արկ: ՀՄՄ-ի հրանոթը և հակատանկային նռնականետը գործնականորեն խոցում են ժամանակակից ցանկացած տանկի զրահը: Ձեռքի հակատանկային նռնակը, դիպչելով նշանա կե տին՝ պայթում է ակնթարթորեն, այդ ժամանակ առաջանում է կուտակային շիթ, որն էլ ծակում է զրահը կամ ջարդում թրթուրը, վնասում սարքավորումներն ու սպառազինու թյունը, ինչպես նաև այրում է վառելանյութը: Նռնակի քաշը 1070 գրամ է:

Մոտոհրաձգային ջոկը, ունենալով վերը նշված հակատանկային միջոցները, կարող է ոչնչացնել. հարձակվելիս՝ 1–2 տանկ (2–3 զրահափոխադրիչ) և զինվորների խումբ, պաշտպանու թյունում՝ 2–3 տանկ, 1–2 և հակառակորդի 12–15 զինվոր: Հակառակորդի տանկերի և զրահամեքենաների դեմ պայքարի հաջողու թյունը մեծ մասամբ կախված է անձնակազմի մարտական ու բարոյական հոգեվիճակից: Բացառված չէ, որ առանձին տանկեր և զրահամեքենաներ կարող են ճեղքել պաշտպանու թյան առջևի գիծը: Եթե տանկը մոտենում է խրամատին, ապա զինվորը սպասում է, որ այն մոտենա 30–25 մ և, օգտվելով տանկի «մեռյալ» տարածու թյունից՝ նետում է հակատանկային նռնակը: Եթե տանկը չի ոչնչացել և դեռ շարունակում է շարժվել առաջ, ապա զինվորը պառկում է խրամատի հատակին կամ ցատկում կողքի՝ մինչև տանկի անցնելը, հետո արագ վեր է կենում և վնասում դրա խոցելի տեղերը: Խփված տանկի անձնակազմը փախուստի դիմելու ժամանակ ոչնչացվում է ավտոմատի կրակով: Հակատանկային նռնակը պետք է նետել անպայման թաքստոցից, որը նռնականետորդին կպաշտպանի պայթյունի ալիքից ու պայթած նռնակի բեկորներից: Նռնակը նետելիս պետք է հաշվի առնել, որ նռնակի թռչելու ընթացքում տանկն անցնում է 5–10 մ:

Մոտոհրաձգային ջոկերը նախատեսված են դասակի կազմում հարձակման և պաշտպանության մարտական խնդիրներ իրականացնելու համար։

Մարտական հնարավորությունները ցուցանիշներ են, որը բնորոշ է մարտական խնդիրը լուծելուն։

Մարտական հնարավորությունների ցուցանիշները լինում են քանակական և որակական։ Մարտական հնարավորությունները կազմված են մոտոհրաձգային ջոկի

- քանակությունից
- պատրաստակամությունից
- բարոյաքաղաքական վիճակից
- սպառազինությունից
- հրամանատարական կազմից

Մարտական հնարավորությունների վրա ազդող էական գործոններն են

- գործողությունների բնույթը
- ժամը
- տեղանքը
- մթնոլորտային պայմանները
- անվտանգ կենսագործունեությունը

Մոտոհրաձգային ջոկի մարտական հնարավորության բնորոշող գծերն են

- կրակային հզորություն
- զորաշարժային հզորություն

Կրակային հզորությունը ներառում է

- հակատանկային և հակահետևակային ականները
- զենք զինամթերքը
- համաօդային ներուժը
- համաջրային ներուժը

Կրակային հզորությունը հակատանկային ականների միջոցով և ինքնաձիգների միջոցով տված կորուստների հնարավորությունն է: Լրիվ սպառազինված մոտոհրաձգային ջոկը ընդունակ է

պայքար մղել մարտական մեքենայի, ուղղաթիռների և ոչնչացնել նրանց արտադրողական ձեռնարկությունը (շտաբը): / 5 /

Հակատանկային և հակահետևակային ականները / 5/

Ականը ինժեներական զինամթերք է և նախատեսված է հակառակորդի կենդանի ուժը, մարտական տեխնիկան, ռազմական ճանապարհները և այլ ենթակառուցվածքները ոչնչացնելու, հակառակորդի զորքերի առաջխաղացումը կասեցնելու, խոչընդոտելու նպատակով ցամաքային և ծովային պայթյունային արգելափակոցների ստեղծման համար:

Ականները ըստ իրենց նշանակության լինում են հիմնական և հատուկ:
Հիմնական ականները լինում են ծովային և ցամաքային: Ծովային ականները նախատեսված են հակառակորդի ռազմանավերի, կենդանի ուժի ոչնչացման և ռազմածովային ուժերի շարժմանը խոչընդոտելու համար: Ցամաքային ականները իրենց հերթին բաժանվում են երկու հիմնական խմբի՝ հակատանկային և հակահետևակային: Հակատանկային ականները նախատեսված են հակառակորդի զրահատեխնիկայի դեմ պայքարելու համար և ըստ իրենց աշխատանքային սկզբունքի լինում են ֆուգասային և կումուլյատիվ: Հակահետևակային ականները նախատեսված են հակառակորդի կենդանի ուժին վնասելու, վիրավորելու և ոչնչացնելու համար: Հակահետևակային ականները ըստ իրենց աշխատանքային սկզբունքի լինում են ֆուգասային և բեկորային: Բեկորային հակահետևակային ականնետը լինում են ուղղորդված և շրջագծային գործողության:

Հատուկ ականները հիմնականում ունենում են փոքր չափեր, նրանց թվին են պատկանում դիվերսիոն ականները՝ նախատեսված դիվերսիոն նպատակների համար, որոնք

արտաքուստ նման են որևէ կենցաղային առարկայի, *ծուղակ ականները* որոնք տեղադրվում են տեղանքում որևէ առարկային հետ և դետոնացվում այդ առարկան տեղաշարժելուց և *ազդանշանային ականները*, որոնք նախատեսված են տեղանքում որևէ շարժի դեպքում նախազգուշացման համար։

Ականները կարող են տեղադրվել ականադաշտերի տեսքով, ինչպես նաև առանձին հատուկենտ, վերջինս կատարվում է հատուկ կարևորության օբյեկտների, ենթակառուցվածքների ականապատման համար։ Ականադաշտերի ականապատումը կարող է կատարվել ձեռքով և մեխանիզացված։ Ձեռքով տեղադրումը կատարվում է ինժեներական զորքերի անձնակազմի միջոցով, իսկ մեխանիզացված տեղադրման դեպքում կարող են օգտագործվել ՊՄԶ-4 և ՈՒՄԶ քարշակային ականա-տեղադրիչներ, ԳՄԶ թրթուրավոր ականա-տեղադրիչներ, ՎՄՌ-1 ուղղաթիռային ականա-տեղադրիչներ ու նաև ինքնաթիռից տեղանքի ռմբակոծումով և հրետանու կրակով ռմբային ԿՍՖ-1, ԿՍՕ-1, ԿՊՏՄ-1, ԿՊՕՄ-2 ականային կասետների տեսքով։

Մոտոհրաձգային ջոկի զենք զինամթերքը

ԱԿ-74, 7,62-մմ Կալաշնիկովի ինքնաձիգ , տեսակավորող կրակային, գազով վարված, 7,62x39մմ գրոհային հրացան, որն առաջին առաջին անգամ նախագծվել է Խորհրդային Միությունում՝ Միխայիլ Կալաշնիկովի կողմից։ Պաշտոնապես հայտնի է որպես Ավտոմատ Կալաշնիկովա (Կալաշնիկովի ինքնաձիգ)։ ։

Վաղ տարբերակներից էր **ԱԿՍ-74** (Ս - Սկլադնոյ կամ «ծալովի»), որը ունի ստորին ծալովի մետաղական ուսի ագուստով։ Վաղ արտադրության ԱԿ-74-ը առաջին իսկական գրոհային հրացաններից մեկն էր։ Նույնիսկ վեց տասնամյակ անց, ԱԿ-74 մոդելը և դրա տարբերակներ ամենաշատ օգտագործվող և ամենահայտնի գրոհային հրացաններից են աշխարհում՝ իրենց դիմացկունությանը, ցածր արտադրական ծախսերի և հեշտ օգտագործման շնորհիվ։ Կրակելով 7,62x39մմ փամփուշտները՝ ԱԿ-74-ը պատճառում է զգալի վնասվածքներ, հատկապես, երբ

գնդակը պայթում է մաշկի ներսում: Այն համեմատաբար ավելի փոքր վերքեր է առաջացնում, երբ գնդակը դուրս է գալիս մարմնից: /6 /

Գնդացիր

Գնդացիրը խմբային կամ անհատական աջակցման հրաձգային ավտոմատ զենք է, որը նախատեսված է տարբեր վերերկրյա, վերջրյա և օդային թիրախների խոցելու համար: Հրաձգությունը գնդացիրից սովորաբար կատարվում է երկճղի հենակից կամ հաստոցից: Նույն տրամաչափի այլ հրաձգային զենքերից գնդացիրը տարբերվում է ավելի մեծ հեռահարությամբ և կրակի ավելի բարձր հաճախությամբ (ռոպեում 500-1200 կրակոց)՝ շնորհիվ ավելի երկար ու ավելի զանգվածեղ փողի, ինչպես նաև ավելի տարողունակ պահեստատուփի կամ ժապավենի, ինչպես նաև ավելի հզոր գնդացիրները հաճախ նաև տեղադրվում են ավիատեխնիկայի, զրահատեխնիկայի, նավերի և մեքենաների վրա՝ որպես լրացուցիչ սպառազինություն: Ժամանակակից ձեռքի և միասնական գնդացիրների նշանառության հեռավորութ յունը

Սովորաբար կազմում է մինչ և կիլոմետր՝ օգտագործելով բաց նշանառություն և մինչև երկու կիլոմետր օպտիկական՝ նշանառությամբ էներգիայի մատակարարումով:

:

Գնդացրային կրակակետ

Ժամանակակից բանակներում մեծ տարածում ունի հետևակային զորքերում օգտագործվող Կալաշնիկովի ձեռքի գնդացիրը՝ (РПК), իսկ մոտոհրաձգային և զրահատեխնիկական ստորաբաժանումներում՝ Կալաշնիկովի գնդացիրը (ПК)։

Ձեռքի գնդացիր

Ձեռքի գնդացիրը, աջակցության համար հրաձգային ավտոմատ զենք է, որը հնարավոր է տեղափոխել միայնակ, հնարավորություն է տալիս վարել կրակը առանց հաստոցը տեղափոխելու և նախատեսված է տարբեր ցամաքային, ջրային և օդային նշանակետերը խոցելու համար։ Ձեռքի գնդացիրների օրինակ են սովետական РПК/РПК-74, **/ 6/**

Ձեռքի հակատանկային նռնականետը (ՁՀՆ-7) նախատեսված է հակառակորդի զրահատեխնիկայի դեմ պայքարելու համար՝ 150–300 մ հեռավորու թյան վրա կարող է ոչնչացնել նաև կառույցները և մարդկանց։ Նռնականետի քաշը 6,3 կգ է։ Զենքի փամփուշտը նռնակն է։

Բաժանվում է խողովակային նռնականետ, ինքնաձիգ նռնականետ, ձեռքի նռնականետ, ամրացված նռնականետ և ռեակտիվ նռնականետ տեսակների։

Խողովակային նռնականետ

Խողովակային նռնականետը կրակում է պտուտակաձև նռնակներ դատարկ կամ մարտական փամփուշտների կրակոցի օգնությամբ։ /6/

Ջոկի զորաշարժի հնարավորությունը

Ջոկի զորաշարժի հնարավորությունը պայմանավորված է ջոկի հարձակման թափով, որը որոշվում է ինչպես ջոկի տեղաշարժման և ծավալման ունակությամբ այնպես էլ ՀՄՄ-ի կամ ԶՓ-ի տեղաշարժման արագությամբ, իսկ պաշտպանությունում՝ որոշակի ժամանակում դիրքերը փոխելու ունակությամբ:

Զորաշարժը հնարավորություն է տալիս առավել նպաստավոր դիրքեր զբաղեցնել հակառակորդի ուղղությամբ կրակ բացելու, հակառակորդի թևերն ու թիկունքը գրոհելու

համար: Զորաշարժ տեղի է ունենում նաև այն դեպքերում, երբ անհրաժեշտ է դուրս գալ հակառակորդի գերազանցող ուժերի հարվածի տակից:Եթե զորաշարժը տեղի է ունենում հարձակման կամ հանդիպական մարտում , ապա այն կատարվում է հակառակորդին շրջանցելու և թևանցելու ձևով:

Հարձակումը հաջող կազմակերպելու համար անհրաժեշտ է ունենալ հակառակորդից 2-3 անգամ գերազանցող ուժ, իսկ հակառակորդի կազմակերպված պաշտպանությունը ճեղքելու համար անհրաժեշտ է 4-6 անագամ գերազանցող ուժեր և միջոցներ:

Զորաշարժերի ժամանակ մոտոհրաձգային ջոկը, որպես կանոն գործում է դասակի կազմում : Ջոկը ինքնուրույն կարող է գործել միայն հետախուզության նպահպանության ժամանակ: Բացառություն կարող է լինել լեռներում դասակի կազմում պաշտպանություն իրականացնել, որտեղ ջոկը կապված ռելեֆի բարդությունով պայմանավորված կարող է գործել ինքնուրույն , բայց պարտադիր մյուս ջոկերի հետ պետք է գտնվեն կրակային կապի մեջ ապահովելով շրջանաձև պաշտպանություն:

Լեռներում ջոկի հրամանատարը պարտավոր է՝

-ուսումնասիրել դիրքի մատույցները բոլոր ուղղություններով

- կազմակերպել դրանց դիտարկումը և պաշտպանությունը

- հաշվի առնել դիրքի մոտակայքի մեռյալ տարածքները

-դիրքում ստեղծել զինամթերքի հավելյալ պաշար

-միջոցներ ձեռնարկել ջոկերի դիրքերի միացման տեղերից հակառակորդի թևանցումները կանխելու համար:/1/

Եզրակացություն

Այս թեման յուրացնելուց հետո աշակերտները, որոնք մեր նախազորակոչիկներն են բանակ զորակոչվելուց առաջ ձեռք կբերեն բավարար տեսական գիտելիքներ ջոկի մասին, այն մասին, թե որտեղ և ինչպես են ծառայելու, հստակ պատկերացում կկազմեն մոտոհրաձգային ջոկի մասին : Իմանալով մոտոհրաձգային ջոկի կազմի և մարտական հնարավորությունների մասին նախազորակոչիկները մինչև բանակ զորակոչվելը ցանկության դեպքում կարող են այլ գրականությունների միջոցով ավելի խորացված ուսումնասիրեն ջոկի սպառազինությանը և մարտական հնարավորությունները:

Նախազորակոչիկը իմանալով , որ սպառազինության առկայությունից բացի շատ ավելի կարևոր է բարձր մակարդակի տիրապետել իրեն ամրակցված զենքին և այն ամենին ինչ կուսուցանեն հրամանատարները: Յուացնելով թեման նախազորակոչիկը կգիտակցի ստորաբաժանման բարոյահոգեբանական վիճակի և կարգապահության բարձր մակարդակի կարևորությունը խորապես կգիտակց հայ զինվորի պարտքը, գիտակցաբար, պատվով և օրինակելիորեն կկատարի իր ծառայողական պարտականությունները և իր ներդրումը կունենա հայոց բանակի խնդիրների կատարման գործում:

Ցանկալի կլիներ , որ ինչպես զինվորների և սերժանտների այնպես էլ սպայական կազի հետ պարապմունքների ժամանակ ռազմահայրենասիրական թեմաներ ուսուցանելուց բացի, բացատրական աշխատանքներ տանել ստորաբաժանումներում կարգապահությունը և բարոյահոգեբանական վիճակը բարձր մակարդակի վրա միշտ պահելու կարևորության մասին, առանց որի հնարավոր չի լինի կուռ և ամուր բանակ կառուցել է պահել:

Գրականություն

1. 8-րդ դասարանի Նախմական զինվորական պատրաստություն առարկայնի դասագիրք: էջ 45

Հեղինակներ՝ Վ. Օհանյան, Ս. Սարգսյան, Լ. Ղազարյան, Վ. Առաքելյան, Վ. Ասատրյա, Ռ, Ալավերդյան, Հ. Մաթևոսյան, Ս. Հովհաննիսյան, Ս. Վիրաբյան:

2 . ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ: հոդվածներ 155,156,158

3 . https://hy.wikipedia.org › wiki

4 .Jump to navigationJump to search

5. //hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%AF%D5%A1%D5%B6

6. Jump to navigationJump to search

7. 9-րդ դասարանի Նախմական զինվորական պատրաստություն առարկայնի դասագիրք: էջ 43, 103

Հեղինակներ՝ Վ. Օհանյան, Ս. Սարգսյան, Լ. Ղազարյան, Վ. Առաքելյան, Վ. Ասատրյա, Ռ, Ալավերդյան, Հ. Մաթևոսյան, Ս. Հովհաննիսյան, Ս. Վիրաբյան: